

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2014

ԳԻՐՔ 1

ԵՐԵՎԱՆ

**ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2014**

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЭКОНОМИКИ ИМЕНИ М. КОТАНЯНА**

**M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS
NATIONAL ACADEMY OF SCIENCES
REPUBLIC OF ARMENIA**

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ
СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2014

Книга 1

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC
DEVELOPMENT IN THE REPUBLIC OF ARMENIA**

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2014

Volume 1

Ереван

2014

Yerevan

2014

Рекомендовано к изданию решением
ученого совета Института экономики
НАН РА им. М. Котаняна

Approved for publishing by the decree of the
Scientific Council of M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences of the Republic of Armenia

Редакционный совет:

академик НАН РА

доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, профессор
доктор экономических наук, доцент
доктор экономических наук, доцент

Суварян Юрий Михайлович
Саринян Роберт Нерсесович
Баядян Ашот Акопович
Тавадян Ашот Агасиевич
Манасерян Татул Норайрович
Закарян Арарат Егишевич
Матевосян Ашот Вараздатович
Акопян Армен Ашматович

Editorial Board:

Yuri Mikael Suvaryan	<i>Academician of the National Academy of Sciences of the Republic of Armenia, Doctor of Sciences (Economics), Professor</i>
Robert Nerses Sarinyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Hakob Bayadyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Aghasi Tavadyan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Tatul Norayr Manaseryan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ararat Yeghish Zakaryan	<i>Doctor of Sciences (Economics), Professor</i>
Ashot Varazdat Matevosyan	<i>Doctor of Sciences (Economics), Associate Professor</i>
Armen Ashmat Hakobyan	<i>Doctor of Sciences (Economics), Associate Professor.</i>

Ответственный редактор сборника
член-корреспондент НАН РА,

доктор экономических наук, профессор **ВЛАДИМИР АРУТЮНЯН**

Responsible Editor

VLADIMIR HARUTYUNYAN, Doctor of Sciences (Economics), Professor
Correspondent Member of the National Academy of Sciences
Republic of Armenia

Современные проблемы социально-экономического развития в Республике Армения:

Сборник научных статей -2014/Институт экономики НАН РА им.М.Котаняна;

Отв.редактор В. Л. Арутюнян.- Ер., изд-во «Гитутюн» НАН РА, 2014, книга 1, 248 с.

The Contemporary Issues of Socioeconomic Development in the Republic of Armenia, Scientific journal of articles, 2014/

M. Kotanyan Institute of Economics of the National Academy of Sciences of the Republic of Armenia; Responsible

Editor: Vladimir L. Harutyunyan, Yerevan, "Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the
Republic of Armenia, 2014, Volume 1, 248p.

Национальная академия наук Республики Армения
Институт экономики имени м. Х. Котаняна

Республика Армения
0015, Ереван, ул. Григора Лусаворича 15
Тел. (+3741) 58-19-71,
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

Национальная академия наук Республики Армения
Издательство "Гитутюн"

Республика Армения
0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24
Тел. (+3741) 58-18-23,
E-mail: hovakimyan@sci.am

M. Kotanyan Institute of Economics of the National
Academy of Sciences of the Republic of Armenia

15 Grigor Lusavorich Street
Yerevan 0015, Republic of Armenia
Tel. (+3741) 58-19-71
E-mail: nas_ie@sci.am, economicjournal@sci.am

"Gitutyun" Publishing House of the National Academy of
Sciences of the Republic of Armenia

24 Marshal Baghramyan Ave.
Yerevan 0019, Republic of Armenia
Tel. (+3741) 58-18-23
E-mail: hovakimyan@sci.am

՝ à ì ² Ü , ² Î àò Â Ú àò Ü

Ø²ÎðàîÛ°è²Û ÐÆØÛ²ÊÛ ,ÆðÛ°ð ² ìÆÛ²ÛêÛ°ð

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Կ. ՄԱՐԳՍՅԱՆ	Բանկային համակարգի հակաճգնաժամային կարգավորման և ֆինանսական կայունության հիմնախնդիրները	11
Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Պարենային ապրանքների արտադրությունը և արտահանումը համաշխարհային շուկա	17
Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Մ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Պարենային ապրանքների գների փոփոխությունների միտումները համաշխարհային շուկայում, ՀՀ-ում և ԼՂՀ-ում.....	35
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ Հ. ՄԱՐԿՈՍՅԱՆ	Պետական պարտքի կառավարման նպատակները և դրա կարգավորման հիմնախնդիրները	45
Ս. ԱՆԱՏԱՍՅԱՆ	Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները ՀՀ-ում	50
Ս. ԱՆԱՏԱՍՅԱՆ	Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում	55
Լ.. ԳԱԼՈՅԱՆ	Պետական պարտքի օպտիմալ կառավարումը պարտքի օպերատիվ և ռազմավարական կառավարման մոդելների հիման վրա	61
Ն. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ	ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքի վիճակագրական վերլուծությունը	66
Ա. ՀԱՆԻՍՅԱՆ	Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա	72
Ա. ՀԱՆԻՍՅԱՆ	ՀՀ հիփոթեքային վարկավորման շուկան նախաճգնաժամային և հետճգնաժամային ժամանակահատվածներում.....	77
Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ	Հարկման արդյունավետության ազդեցությունը ՀՀ գործարար միջավայրի վրա...	82
Հ. ՉԱՏԻՆՅԱՆ	ՀՀ բանկային ներքին վերահսկողության կարգավորման մեխանիզմները	87
Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ	ՀՀ տնտեսության զարգացման զգայունության վերլուծությունը ԱԱՀ դրույքաչափի նվազեցման դեպքում	92
Տ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ	Հարկային վարչարարության գնահատման տեսական հարցադրումներն ըստ հարկերը չվճարելու և հարկային օրենքները խախտելու վարքագծային տեսության	96
Ի. ՀԱԿՈԲՅԱՆ	Ֆիզիկական անձանց եկամուտների և գույքի հարկման հիմնական սկզբունքները	100

ÛÛ°èàòÂÚ²Û Æð²Û Ð²î²Æ ÐÆØÛ²ÊÛ ,ÆðÛ°ð

Հ. ԱՎԱԳՅԱՆ	Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետևանքով սպասվող հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը	108
Հ. ԱՎԱԳՅԱՆ	Հազվագյուտ հողատարրերն Արվյանի երկաթի հանքավայրում	119
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	Հայաստանի գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման հետագա ապահովման հիմնահարցերը և դրանց լուծման ուղիները.....	127
Ա. ԲԱՅԱԴՅԱՆ, Տ. ՕՂԱՆՅԱՆ	Կլաստերային քաղաքականության միջազգային փորձը և դրա ներդրման հնարավորությունները ՀՀ-ում	132
Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, Տ. ՆԱՍՈՅԱՆ	Հեռահաղորդակցությունը որպես նոր տեխնոլոգիաների կիրառման, մրցակցության և մարքեթինգի գործիքակազմի խթանման ոլորտ	137
Շ. ԿՈՍՏԱՆՅԱՆ Լ. ԱԶԱՏՅԱՆ	Օրգանական գյուղատնտեսության զարգացման միտումները	144

Ե. ՀԱԿՈՐՅԱՆ	Կաթիլային ոռոգման տեխնոլոգիայի ներդրման արդյունավետության գնահատումը	150
Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	Մասնավոր հատվածի մասնակցությունը Երևան քաղաքի կառավարմանը	154
Ռ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ	Մասնակցային կառավարման գործընթացի կարգավորման կառուցակարգերը ՀՀ-ում.....	159
Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՀՀ ագրոարդյունաբերական համակարգի պարենամթերքի իրացման ենթակառուցվածքի հիմնահարցեր	166
Լ. ՍԱՐԳՍՅԱՆ, Ա. ՔԵՐՈՐՅԱՆ	ՀՀ արտաքին առևտրից ակնկալվող օգուտները մաքսային միությանն անդամակցելու պարագայում	172
Ի. ՏԱՐԱՆՅԱՆ	Ձանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից չկորզվող օգտակար տարրերի փոշիացման հարցերը	179
Ա. ՋԱՏԻԿՅԱՆ, Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ	Ներդրումների ֆինանսավորման աղբյուրները ՀՀ-փոքր և միջին ձեռնարկություններում	183
Տ. ՕՂԱՆՅԱՆ, Ռ. ԱԼՈՅԱՆ	ԱԱՀ ռազմավարության քաղաքականությունը ՀՀ-ում	190

Ի՞նչ Անձնավորություն է Ենթակառուցվածքի զարգացումը և ազդող գործոնները շուկայական տնտեսության պայմաններում

Է. ԲԱԲԱՅԱՆ, Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ	Ծառայությունների տնտեսագիտական էությունը, դասակարգումը և ազդող գործոնները շուկայական տնտեսության պայմաններում	195
Ա. ՋԱԽԱՐՅԱՆ	Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավման շուրջ.....	201
Ա. ՋԱԽԱՐՅԱՆ	Սոցիալական ներդրումները որպես բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման միջոց	210
Ռ. ՄԱՆԳԱՍԱՐՅԱՆ	Զբաղվածության կարգավորման հիմնախնդիրները ԼՂՀ-ում.....	217

Ի՞նչ է Մասնակցային կառավարման հիմնախնդիրները և ազդող գործոնները շուկայական տնտեսության պայմաններում

Ռ. ՍԱՐԻՆՅԱՆ	Խմբագրի իմ խոսքը	223
Մ. ԱՂԱՅԱՆ	Տնտեսագիտության տեսությունը նոր խնդիրների առաջ	228
Թ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի տեսական և պատմական հարցերի շուրջ	233
Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	Հայ տնտեսագիտական մտքի պատմությունից	240
Ս. ՄԿՐՏՉՅԱՆ	Կայուն զարգացման սահմանման շուրջ	244

СОДЕРЖАНИЕ

МАКРОЭКОНОМИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ И ФИНАНСЫ

В. АРУТЮНЯН, К. САРГСЯН	Проблемы антикризисного регулирования и финансовой стабильности банковской системы	11
Д. АРУТЮНЯН, Л. ХАЧАТРЯН, М. МАРКОСЯН	Производство и экспорт продовольственных товаров на мировом рынке.....	17
Л. ХАЧАТРЯН, Д. АРУТЮНЯН, М. МАРКОСЯН	Тенденции изменения цен на продовольственные товары на мировом рынке, в РА и НКР	35
А. БАЯДЯН, А. МАРКОСЯН	Цели управления государственным долгом и проблемы его регулирования	45
С. АНАСТАСЯН	Проблемы государственного регулирования налоговой политики и подходы к их решению в РА	50
С. АНАСТАСЯН	Проблемы государственного регулирования налоговой политики в РА в контексте развития экономики	55
Л. ГАЛОЯН	Оптимальное управление государственным долгом на основе моделей оперативного и стратегического управления.....	61
Н. ЕНГИБАРЯН	Статистический анализ структуры использования ВВП	66
А. АНИСЯН	Влияние мирового финансово-экономического кризиса на рынок недвижимости РА	72
А. АНИСЯН	Рынок ипотечного кредитования РА в предкризисные и послекризисные периоды.....	77
Г. НЕРСИСЯН	Влияние эффективности налогообложения на бизнес среду РА	82
Г. ЧАТИНЯН	Механизмы регулирования внутреннего банковского контроля в РА.....	87
А. ТЕР-ГЕВОНДЯН	Анализ чувствительности экономики РА к снижению ставки НДС.....	92
Т. ПАРСАДАНЯН	Теоретические аспекты оценки налогового администрирования согласно теории поведения налогоплательщиков при неуплате налогов и нарушении налоговых законов.....	96
И. АКОПЯН	Основные принципы налогообложения доходов и имущества физических лиц	100

ПРОБЛЕМЫ РЕАЛЬНОГО СЕКТОРА ЭКОНОМИКИ

Г. АВАКЯН	Оценка ожидаемых хвостов обогащения и их экологических последствий в результате разработки Техутского медно-молибденового месторождения	108
Г. АВАКЯН	Редкоземельные элементы в рудах Абовянского месторождения.....	119
А. БАЯДЯН, Л. ОГАНЕСЯН	Проблемы обеспечения дальнейшего формирования сельскохозяйственных кооперативов в сельских общинах Армении и пути их решения.....	127
А. БАЯДЯН, Т. ОГАНЯН	Зарубежный опыт кластерной политики и возможности его внедрения в РА	132
А. ТАДЕВОСЯН, Т. НАСОЯН	Телекоммуникации как область применения новых технологий, развития конкуренции и инструментария маркетинга	137
Ш. КОСТАНЯН Л. АЗАТЯН	Тенденции развития органического сельского хозяйства.....	144

Е. АКОПЯН	Оценка эффективности внедрения технологии капельного орошения	150
Р. АЙРАПЕТЯН	Участие частного сектора в управлении городом Ереван	154
Р. АЙРАПЕТЯН	Механизмы регулирования процесса партисипативного управления в РА	159
Л. ОГАНЕСЯН	Проблемы инфраструктуры реализации продовольственной продукции агропродовольственной системы РА.....	166
Л. САРКИСЯН, А. КЕРОБЯН	Ожидаемые выгоды внешней торговли РА при вступлении в таможенный союз	172
И. ТАРАНЯН	Вопросы распыления полезных элементов, не извлекаемых зангезурским медно-молибденовым комбинатом	179
А. ЗАТИКЯН, А. ДАНИЕЛЯН	Источники финансирования инвестиций в малом и среднем предпринимательстве РА	183
Т. ОГАНЯН, Р. АЛОЯН	Стратегическая политика агропромышленного комплекса РА.....	190

РАЗВИТИЕ СФЕРЫ УСЛУГ И СОЦИАЛЬНО-ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ

Э. БАБАЯН А. ГЕВОРГЯН	Экономическая сущность услуг, их классификация и воздействующие на них факторы в условиях рыночного хозяйства	195
А. ЗАКАРЯН	Об улучшении деятельности государственных компаний и компаний с государственным участием	201
А. ЗАКАРЯН	Социальные инвестиции как средство улучшения деятельности акционерных обществ	210
Р. МАНГАСАРЯН	Проблемы регулирования занятости в НКР	217

ИСТОРИЯ ТЕОРЕТИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ И ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

Р. САРИНЯН	Мое слово редактора	223
М. АГАЯН	Экономическая теория перед новыми задачами.....	228
Т. АРУТЮНЯН	О теоретических и исторических вопросах мировых финансово-экономических кризисов	233
Л. АРУТЮНЯН	Из истории армянской экономической мысли.....	240
С. МКРТЧЯН	Об определении устойчивого развития.....	244

CONTENTS

MACROECONOMIC ISSUES AND FINANCES

V. HARUTYUNYAN, K. SARGSYAN	Issues on Ensuring Financial Stability and Anti-Crisis Regulation of the Financial System	11
D. HARUTYUNYAN, L. KHACHATRYAN, M. MARKOSYAN	Production and Export of Food Items in the Global Market	17
L. KHACHATRYAN, D. HARUTYUNYAN, M. MARKOSYAN	The Trends of Food Prices on the World Markets, in the Republic of Armenia and Nagorno-Karabakh Republic.....	35
A. BAYADYAN, H. MARKOSYAN	Public Debt Management Objectives and Regulation Issues	45
S. ANASTASYAN	Issues on State Regulation of The Tax Policy and Approaches to Address Them in the Republic Of Armenia	50
S. ANASTASYAN	Issues on State Regulation of the Tax Policy in the Republic of Armenia In the Context of Development of the Economy.....	55
L. GALOYAN	The Optimal Management of Public Debt Based on the Operational and Strategic Models of Debt Management.....	61
N. YENGIBARYAN	Statistical Analysis of Composition of GDP (Expenditure by GDP Components).....	66
A. HANISYAN	The Impact of the Global Financial Crisis on the Real Estate Market In the Republic of Armenia.....	72
A. HANISYAN	Performance of the Mortgage Lending Market prior to and after the Crisis	77
G. NERSISYAN	The Impact of Tax Efficiency on the Business Climate of the Republic of Armenia	82
H. CHATINYAN	The Mechanisms of Regulating Internal Control In Banks	87
A. TER-GHEVONDYAN	Analysis of Sensitivity of the Economy of the Republic of Armenia to the Reduction of VAT Rate	92
T. PARSDANYAN	Theoretical Issues on Assessment of Efficiency of Tax Administration according to Economic Theory of Taxpayer Compliance Behavior with tax Laws.....	96
I. HAKOBYAN	Main Principles of Personal Income and Property Taxation	100

ISSUES ON THE REAL SECTOR OF THE ECONOMY

H. AVAGYAN	The Expected Estimates of the Enriched Wastes and Assessment of the Environmental Damage Caused by Them when Teghut Copper Molybdenum Ore Mine Is Exploited	108
H. AVAGYAN	Rare Earth Elements In the Abovyan Iron Mine.....	119
A. BAYADYAN, L. HOVHANNISYAN	Issues on Ensuring Further Forming of Cooperatives in Rural Communities of the Republic and Approaches to Address Them.....	127
A. BAYADYAN, T. OHANYAN	Cluster Policy Best Practices and Their Possible Application in the Republic of Armenia.....	132
A. TADEVOSYAN, T. NASOYAN	Telecommunications as a Sector that Promotes Application of New Technology, Competition and Utilization of Marketing Tools	137
S. KOSTANYAN L. AZATYAN	Trends of Organic Agriculture Development.....	144
Y. HAKOBYAN	Efficiency Assessment of Drip Irrigation System Being Introduced	150

R. HAYRAPETYAN	Private Sector Engagement in the Management of Yerevan City.....	154
R. HAYRAPETYAN	Mechanisms of Regulating Participatory Governance Process in the Republic of Armenia.....	159
L. HOVHANNISYAN	On Issues of Sales Infrastructure of the Food Products of the Agro-Food System of the Republic of Armenia.....	166
L. SARGSYAN, A. QEROBYAN	Expected Benefits of the Foreign Trade of the Republic of Armenia from Accession to the Customs Union	172
I. TARANYAN	The Issues on Losing Elements Due to not Extracting Useful Elements By Zangezur Copper Molybdenum Combine	179
A. ZATIKYAN, A. DANIELYAN	Sources of Financing for Investments in Small and Medium-Sized Enterprises in the Republic of Armenia.....	183
T. OHANYAN, R. ALOYAN	Policy of Agro-Industrial Complex Strategy in the Republic of Armenia	190

ISSUES ON DEVELOPING SERVICES SECTOR AND SOCIO-DEMOGRAPHIC STANCE

E. BABAYAN, A. GEVORGYAN	The Economic Meaning, Classification of Services and Factors that Affect the Development of Services Sector In the Market Economy.....	195
A. ZAKHARYAN	On Better and More Efficient Performance by State-Owned (Fully or Partially Owned) Enterprises.....	201
A. ZAKHARYAN	Social Investments as a Mean to Improve the Performance of Joint-Stock Companies	210
R. MANGASARYAN	Employment Regulation Issues In the Nagorno-Karabakh Republic	217

ECONOMIC RESEARCH AND THE HISTORY OF THE ECONOMIC THOUGHT

R. SARINYAN	My Word of Editor	223
M. AGHAYAN	New Challenges the Economic Theory Faces	228
T. HARUTYUNYAN	On History and Theories of Global Financial Crises	233
L. HARUTYUNYAN	From the History of Armenian Economic Thought	240
S. MKRTCHYAN	On Definitions of Sustainable Development.....	244

վճարումների և հաշվարկների իրականացում, ֆինանսական ռիսկերի արդյունավետ կառավարում, ինչպես նաև «շոկային» իրավիճակներում առաջացած հնարավոր ռիսկերի կլանում:

Ֆինանսական կայունությունն ինքնին ընդհանրական հասկացություն է և վերաբերում է ֆինանսական համակարգի տարբեր բաղկացուցիչներին՝ ֆինանսական հաստատություններին, ֆինանսական ենթակառուցվածքներին և ֆինանսական շուկաներին, որոնք խիստ փոխկապակցված են միմյանց: Ֆինանսական կայունությունը խաթարվում է, երբ ֆինանսական համակարգի բաղկացուցիչներից որևէ մեկուն անբարենպաստ զարգացումները էականորեն անդադառնում են ամբողջ ֆինանսական համակարգի բնականոն գործունեության և երկրի տնտեսական արդյունքների վրա: Ֆինանսական համակարգում ցնցումներն, իրենց հերթին, կարող են մակրոտնտեսական տատանումների արդյունք լինել, և հակառակը: Ֆինանսական կայունությունը ամենաընդհանուր սահմանմամբ ընկալվում է որպես ֆինանսական հաստատությունների և ֆինանսական շուկաների կայունություն, և ոչ թե առանձին վերցրած հաստատության սնանկության հայտանիշների և (կամ) ակտիվների գների տատանողականության բացակայություն:

Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտմանն ուղղված համապատասխան քաղաքականության իրականացում:

Հարկ է նշել, որ ֆինանսական կայունությունը չի կարող արտահայտվել որևիցե մեկ քանակական ցուցանիշով, ինչպես օրինակ, գների կայունությունը կամ գործազրկությունը: Ֆինանսական կայունության քանակական բնութագրման համար, սովորաբար, կիրառվում է ցուցանիշների սահմանված համախումբ, ընդ որում, յուրաքանչյուր ցուցանիշն, իր հերթին, բնութագրվում է ֆինանսական կայունության վրա ազդելու իր հավանականությամբ: Երկրի ֆինանսական համակարգի առանձնահատկություններից ելնելով՝ կարող են կիրառվել նաև ֆինանսական կայունությունը որոշակիորեն բնութագրող ցուցանիշների հատուկ (յուրօրինակ) խմբեր:

Բանկային վերահսկողության արդյունավետության միջազգայնորեն համընդհանուր ճանաչված պրակտիկան հիմնված է շրջանակային մի փաստաթղթի վրա, այն է՝ «Բանկային վերահսկողության արդյունավետության հիմնարար սկզբունքներ», որով սահմանվում են բանկային վերահսկողության և կարգավորման նվազագույն չափորոշիչները¹: Այս փաստաթղթում ամրագրված դրույթներին համապատասխան՝ Արժույթի միջազգային հիմնադրամը՝ երեք տարին մեկ գնահատում է բազմաթիվ երկրներում բանկային վերահսկողական համակարգի արդյունավետությունը և հրապարակում դրա արդյունքները համապատասխան եզրահանգումների տեսքով: Վերջիններս կրում են ավելի շատ որակական բնույթ՝ հանգելով նրան, թե ինչքանով է այս կամ այն երկրի բանկային վերահսկողությունը և կարգավորումը համապատասխանում բանկային արդյունավետ վերահսկողության որոշեցրած սկզբունքներին: Իրականում, պարզելու համար այն հարցը, թե ինչպիսի արդյունքների են բերում Բազելյան կոմիտեի կողմից բանկային վերահսկողության գծով սահմանած պահանջները, ինչպես նաև բանկային հատվածի վիճակի և կարգավորող մարմինների կողմից վերահսկողական գործառնությունների իրականացման որակի փոխկապվածության աստիճանը բնորոշելու համար՝ ԱՄՅ մասնագետները 2006 թվականին հետազոտություններ անցկացրեցին թվով 65 երկրների մակարդակով՝ պարզելու, թե արդյոք բանկային վերահսկողության սկզբունքների պահպանումը տալիս է որոշակի օգուտներ, թե ոչ²: Արդյունքում, հետազոտողները եկան մի եզրահանգման, ըստ որի՝ գոյություն ունի ուղղակի կապ՝ երկրի կողմից արդյունավետ բանկային վերահսկողության սկզբունքների կիրառման և տվյալ երկրի բանկային հատվածի առկա իրավիճակի միջև, դրանով իսկ ապացուցելով Բազելյան կոմիտեի պահանջների կիրառման արդյունավետությունը:

¹ Базовые принципы эффективного банковского надзора/ Базельский комитет по банковскому надзору, 2006.

² Does compliance with Basel core principles bring any measurable benefits?/ IMF staff papers, IMF, 2006, № 2.

Հարկ է նշել, որ բացի վերոգրյալից, բանկային կարգավորման ոլորտում որպես առանձին կարևոր հարց է դրված նաև բանկային գործունեության հակաճգնաժամային կարգավորման արդյունավետության գնահատումը: Հակաճգնաժամային կարգավորման գործընթացի զարգացման համատեքստում ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունների կազմումը, որը, սովորաբար, իրականացվում է կենտրոնական բանկերի կողմից, հանդիսանում է կարևոր գործիք՝ արտացոլելու տվյալ պետության ֆինանսաբանկային համակարգի առկա իրավիճակը, կարգավորող մարմինների քաղաքականությունը՝ հակաճգնաժամային կարգավորման ոլորտում և ֆինանսաբանկային ոլորտին առնչվող ռիսկերի մակարդակը: Փաստենք, որ հենց վերոթվարկյալների վերլուծության հիման վրա է հնարավոր դառնում գնահատել բանկային գործունեության հակաճգնաժամային կարգավորման արդյունավետությունը:

1. Ըստ ԱՄՅ տվյալների՝ 2012 թվականի դրությամբ ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվություններ են թողարկել շուրջ 80 երկրներ¹: Բազմաթիվ երկրներում ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունները հանդիսանում են ծրագրային փաստաթղթեր և իրենց նշանակությամբ համադրելի են դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունների մասին հայտարարգրի հետ: Հարկ է նշել նաև, որ միջազգային պրակտիկայում ոչ բոլոր երկրների կենտրոնական բանկերն են հրապարակում ֆինանսական կայունության մասին կանխատեսումները: Սակայն, միևնույն ժամանակ կան երկրներ, ինչպիսիք են օրինակ Կանադան, Նոր Զելանդիան, Հարավային Կորեան, որոնց կենտրոնական բանկերը իրենց հետագա գործունեության համար նպատակ են դրել ֆինանսական կայունության վերաբերյալ կանխատեսումների հրապարակումը:

Ֆինանսական կայունության հաշվետվության հիմնական նպատակն է՝ կարճաժամկետ հեռանկարում իրական և ֆինանսական հատվածներում ընթացիկ և սպասվելիք զարգացումների համատեքստում՝ երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի նկարագրումը: Հաշվետվությունում ներկայացվում է որոշակի ժամանակահատվածի համար ֆինանսական կայունության վերաբերյալ կենտրոնական բանկի գնահատականը, առկա ռիսկերը և դրանց կանխարգելմանը կամ չեզոքացմանն ուղղված միջոցառումները: Պարբերականի հրապարակումը թույլ է տալիս բարձրացնել ֆինանսական հաստատությունների, ձեռնարկությունների, տնտեսվարողների ու բնակչության տեղեկացվածության մակարդակը, միաժամանակ ապահովելով նաև կենտրոնական բանկի գործունեության թափանցիկությունը: Հավանական ռիսկերի աղբյուրների և ֆինանսական կայունության խոցելիության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումն, իր հերթին, նպատակ ունի կողմնորոշելու հասարակությանը՝ ստեղծված իրավիճակներում որոշումների կայացման առումով:

Ֆինանսական կայունության հաշվետվությունների հրապարակման և ֆինանսական կայունության վրա դրա թողած ազդեցության փոխկապվածությունը ուսումնասիրվել է մասնավորապես Բ.Բորնի կողմից²: Վերջինս ապացուցեց, որ ֆինանսական կայունության հաշվետվության հրապարակումը նվազեցնում է շուկայական անորոշությունը: Ֆինանսական կայունության հաշվետվությունների հրապարակման դրական ազդեցությունը ապացուցվել է նաև Մ.Չիակի ուսումնասիրությունների արդյունքում³: Վերջինիս կողմից մշակվել է նաև համապատասխան մեթոդաբանություն՝ ֆինանսական կայունության հաշվետվությունների գնահատման համար, որը կիրառվում է ԱՄՅ կողմից՝ անդամ-պետությունների ֆինանսական կայունության հաշվետվությունների գնահատման համար: Այն կիրառվում է նաև բազմաթիվ երկրների կենտրոնական

¹ www.imf.org

² Born B., Ehrmann M. and M. Fratzscher, 2011, "Central Bank Communication on Financial Stability", ECB Working Paper № 1332.

³ Cihak M. 2006, how do central Banks Write on financial Stability?, IMF Working Paper № 06/163.

բանկերի կողմից՝ ֆինանսական կայունության հաշվետվությունները կազմելիս և լայն հնարավորություններ է ընձեռում ֆինանսական կայունության համեմատական վերլուծությունների իրականացման համար: Նշված մեթոդով առանձնացվում են ֆինանսական կայունության հաշվետվությունների հինգ կարևոր տարրեր՝ «Նպատակներ», «Ընդհանուր գնահատական», «Լուսաբանվող հարցեր», «Տեղեկատվական բազա» և «Կառուցվածք», որոնցից յուրաքանչյուրի համար սահմանվում և գնահատվում են երեք հիմնական չափորոշիչներ. հստակություն (clarity), նկարագրության համակարգվածություն (consistency) և ամբողջականություն (coverage): Այս երեք բնութագրիչների առաջին տառերին համապատասխան՝ նշված մեթոդը ստացել է «Երեք C-երի սկզբունք» («CCC framework») անվանումը:

Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական կայունության ապահովման համար պատասխանատու նարմինը ՀՀ կենտրոնական բանկն է, ինչն ամրագրված է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածով, որպես ՀՀ կենտրոնական բանկի խնդիր, ի թիվս այլոց սահմանված է նաև՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունությունը և բնականոն գործունեության ապահովումը, այդ թվում Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ պայմանների ապահովելը¹: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նշված խնդիրն իրականացնում է ֆինանսական համակարգի ռիսկերի գնահատմանը և նվազեցմանն ուղղված իր աշխատանքների, ֆինանսական համակարգի վերահսկողության և կարգավորման գործառույթների իրականացման, վճարային համակարգի հսկողության, անհրաժեշտության դեպքում նաև արտակարգ իրավիճակներում վերջին ատյանի վարկատուի գործառույթի և սնանկ բանկերի վերակազմավորման, լուծարման գործընթացների իրականացման միջոցով:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ֆինանսական կայունության վերաբերյալ վերլուծությունների արդյունքները անմիջականորեն ներկայացնում է ֆինանսական կայունության հաշվետվություններում: Վերջիններս ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարկվում են 2007 թվականից սկսած՝ տարեկան կտրվածքով, իսկ արդեն 2010 թվականից՝ նաև կիսամյակային պարբերականությամբ: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բնորոշմամբ՝ ֆինանսական կայունության ապահովումը ֆինանսական համակարգը փլուզումից կամ խափանումից զերծ պահելն է, այնպես որ համակարգը շարունակի ապահովել անհրաժեշտ իրացվելիության մակարդակ, գործարքների և փոխանցումների անխափան իրականացում, տնտեսությունում խնայողությունների ներդրման ունակության պահպանում²:

Տարբեր երկրների ֆինանսական կայունության վերաբերյալ հաշվետվությունների վերլուծությունների հիման վրա դրանց կազմման գործընթացը կատարելագործելու և ֆինանսական համակարգի կայունությունը բարձրացնելու նպատակով, առաջարկում ենք.

1. Տնտեսության ընդլայնողականացման պայմաններում մեծապես կարևորվում է մշակել ֆինանսական կայունության հաշվետվությունների միասնական ձևաչափ, քանի որ բազմաթիվ երկրներում տարբեր ձևաչափերի կիրառումը և ժամանակի ընթացքում դրանց անընդհատ փոփոխությունը թույլ չի տալիս համադրել տվյալները՝ ըստ առանձին երկրների և գնահատել ֆինանսական կայունությունը համաշխարհային մակարդակով:
2. Հաշվետվություններում իրականացված վերլուծությունները ցանկալի է որպեսզի ընդգրկեն ավելի շատ թվով ցուցիչներ, որոնք կնկարագրեն բանկային հատվածի և ֆինանսական շուկայի կայունությունը, չսահմանափակվելով միայն ընդհանուր մակրոցուցանիշների կիրառմամբ:

¹ «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ԱԺՏ 1996/12.

² Cba.am

3. Այս հաշվետվություններում հիմնական շեշտը անհրաժեշտ է դնել համակարգային ռիսկերի հայտնաբերման վրա և նպատակահարմար կլինի ներկայացնել ֆինանսական կայունության վերաբերյալ կանխատեսումները կարճաժամկետ՝ մինչև 1 տարի և միջնաժամկետ՝ մինչև 3 տարի հատվածներում:
4. Անհրաժեշտ է բարձրացնել ֆինանսական կայունության հաշվետվությունների կարգավիճակը: Բազմաթիվ երկրներում, օրինակ՝ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում ֆինանսական հաշվետվությունների կազմումը ամրագրված է օրենսդրությամբ: ԱՄՆ-ի օրենսդրությունը պահանջում է ոչ միայն այս հաշվետվությունների կազմումը, այլև սահմանում է այն հարցերի շրջանակը, որոնք պետք է բացահայտվեն այս հաշվետվությունների մեջ: Բացի այդ, հաշվետվության համար պատասխանատու մարմնի ղեկավարը պարտավոր է ներկայացնել այդ հաշվետվությունը ԱՄՆ-ի Կոնգրեսում: Նշված փաստաթղթի կարգավիճակի բարձրացումը թույլ կտա իր վրա բեռել հանրության ուշադրությունը, նպաստելով այս փաստաթղթի ծրագրային դառնալուն՝ ներկայիս նկարագրողական փաստաթղթի փոխարեն: Արդյունքում այս փաստաթղթում կներկայացվի կարգավորող պետական մարմինների հստակ մշակված քաղաքականությունը և դրա շրջանակներում իրականացված գործողությունները, ինչպես նաև կտրվի կոնկրետ գնահատականներ՝ դրանց արդյունավետության վերաբերյալ:

վերլուծել միջազգային շուկայում պարենային ապրանքների արտադրության և արտահանման միտումները, բացահայտել պարենային ապրանքների հիմնական խոշոր արտադրողներին, ներկայացնելով վերջիններիս արտադրության ծավալների վիճակագրական ցուցանիշները և դրանց միտումները, բացահայտել պարենային ապրանքների խոշոր արտահանող երկրներին, ինչպես նաև վերջիններիս կողմից արտահանման վիճակագրական ցուցանիշների դինամիկան:

Այժմ հարկ ենք համարում ներկայացնել հիմնական 20 խոշոր երկրների կողմից պարենի հիմնական տեսականու արտադրության և արտահանման վիճակագրական ցուցանիշները 2009-2011թ.¹ և փորձենք վերլուծել դրանք:

Ուսումնասիրելով համաշխարհային շուկայում ցորենի արտադրության և արտահանման 2009-2011թթ. վիճակագրական ցուցանիշները (տե՛ս աղյուսակներ 1 և 2)՝ կարելի է փաստել, որ հիմնական խոշոր արտադրող և արտահանող երկրները հիմնականում կրկնվում են: Իսկ խոշոր ծավալներով ցորեն արտադրող հիմնական երկրներն են Չինաստանը, Յնդկաստանը, ԱՄՆ-ը, ՌԴ-ը, ինչպես նաև ԵՄ անդամ երկրները:

Այսպես, 2011թ. ցորենի արտադրության ծավալով Չինաստանի մասնաբաժինը վերը թվարկված 20 երկրների ընդհանուր² ցուցանիշների մեջ 2011թ. կազմել է 19.6% (117.4 մլն տ.), իսկ աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 101.9%, 2010թ. աճի տեմպը կազմել է 100%: Յնդկաստանը 2011թ. ցորենի արտադրության ծավալով ընդհանուրի մեջ համապատասխանաբար կազմել է՝ 14.5% (86.9 մլն տ.), աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 107.5%, իսկ 2010թ. աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 100.2%: Ցորենի արտադրության ծավալով երրորդ տեղը զբաղեցնող ՌԴ մասնաբաժինը ընդհանուրի մեջ 2011թ. կազմել է 9.4% (56.2 մլն տ.), աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 135.5%, իսկ 2010թ. 2009թ. նկատմամբ ծավալները նվազել են 32.8%-ով: Չորրորդ տեղը զբաղեցնող ԱՄՆ-ի մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմել է 9.1% (54.4 մլն տ), աճի տեմպը կազմել է 90.6%, իսկ 2010թ.՝ 99.5%: Վերջինիս հաջորդում է Ֆրանսիան, որի արտադրանքը 2011թ. կազմել է ընդհանուրի 6.3%-ը (36.0 մլն տ), աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 94.2%, 2010թ. աճի տեմպը կազմել է 99.7%:

Ցորենի արտահանման 2011թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որը ցորենի արտադրության շուրջ 60.3%-ը (32.8 մլն տոննա, 11.1 մլն ԱՄՆ դոլար) արտահանել է այլ երկրներ, որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 23.4%-ը, արժեքի՝ 25.2%-ը: Տվյալ երկրի 2011թ. արտահանման ծավալների աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ծավալով 117.8%, իսկ արժեքով՝ 164.9%, 2010թ. աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 125.9% և 125.5%: Ֆրանսիան 2011թ. արտահանել է արտադրանքի 53%-ը (20.3 մլն տոննա, 6.7 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 14.5%-ը, արժեքի՝ 15.3%-ը: Տվյալ երկրի աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 96.5%, արժեքով՝ 144.8%, իսկ 2010թ. աճի տեմպը կազմել է համապատասխանաբար 124.9% և 123.7%: Ավստրալիան 2011թ. արտահանել է արտադրանքի 64%-ը (17.6 մլն տոննա, 5.7 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 12.6%-ը, արժեքի՝ 12.9%-ը: Արտահանման աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ծավալով 111.1%, արժեքով՝ 148.5%, իսկ 2010թ. աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 105.9% և 139.0%: Կանադան 2011թ. արտահանել է արտադրանքի 65%-ը (16.3 մլն տոննա, 5.7 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 11.6%-ը, արժեքով՝ 13%-ը: Արտահանման աճի տեմպը 2011թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է 88.8%, արժեքով՝ 126.6%, իսկ 2010թ. աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 95.4% և 85.7%: ՌԴ-ը 2011թ. արտահանել է արտադրանքի 27%-ը (15 մլն տոննա, 3.6 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի

¹ Արտադրության և արտահանման վիճակագրական ցուցանիշներում ներառված են միայն 2009-2011թթ. քանի որ <http://faostat.fao.org/> տվյալների շտեմարանում բացակայում են 2012թ. և 2013թ. արտահանման ցուցանիշները:

² Այսուհետ, որպես «ընդհանուր» հարկ է հիմք ընդունել 20 երկրների կողմից համապատասխանաբար արտադրության կամ արտահանման վիճակագրական ցուցանիշների ընդհանուր գումարը:

10.8%-ը, արժեքի՝ 8.3%-ը: Տվյալ երկրի արտահանման աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 128.2%, արժեքով՝ 177.4%, սակայն 2010թ. արտահանման ծավալները նախորդ տարվա նկատմամբ կրճատվել են 29.6%-ով և 24.8%-ով: Հատկանշական է այն, որ ցորեն արտահանող շատ երկրներ արտահանման հետ մեկտեղ նաև ներմուծում են տվյալ ապրանքատեսակից՝ ցորենի տեսականին բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) նպատակով: 2011թ. ցորենի ամենաշատ արտահանում ունեցող 20 երկրներում ցորենի 1 տոննայի արժեքը ամենացածրը եղել է Ղազախստանում՝ 210.76 ԱՄՆ դոլար, իսկ ամենաբարձրը՝ Մեքսիկայում՝ 357.10 ԱՄՆ դոլար: 2010թ. վերոհիշյալ 20 երկրներում ցորենի արտահանման 1 տոննայի արժեքը ամենաբարձրը եղել է Կանադայում՝ 246.6 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Պակիստանում՝ 145.3 ԱՄՆ դոլար, իսկ 2009թ. ամենաբարձրը եղել է Պակիստանում՝ 263.2 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուկրաինայում՝ 138.0 ԱՄՆ դոլար:

Չվերամշակված շաքարավազի 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2009-2011թթ. ցուցանիշների համաձայն (տե՛ս աղյուսակ 3 և 4), շաքարավազի խոշոր արտադրողներից Բրազիլիան, Հնդկաստանը, Թաիլանդը, ԱՄՆ-ը, Մեքսիկան և մի շարք այլ երկրներ միաժամանակ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ, որոնք ներքին շուկան արտադրությամբ ապահովման հետ մեկտեղ շաքարավազը արտահանում են այլ երկրներ: Ինչպես նկատվում է աղյուսակ 3-ից, 2011թ. Բրազիլիայի արտադրության մասնաբաժինը 20 խոշոր արտադրող երկրների ցուցակում կազմել է 26.5%, իսկ արտադրության ծավալների աճի տեմպը 2011թ. կազմել է 94.3%, 2010թ.՝ 115.1%: Հնդկաստանի արտադրության ծավալները 2011թ. կազմել են ընդհանուրի 18.7%-ը, իսկ աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 128.8%, 2010թ. այդ ցուցանիշը կազմել է 129.4%:

Չվերամշակված շաքարավազի արտահանման ծավալներով առաջին տեղում է Բրազիլիան, որը 2011թ. իր արտադրանքի 53.6%-ը (20 մլն տոննա, 11.5 մլրդ ԱՄՆ դոլար) արտահանել է այլ երկրներ, որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 62.6%-ը, արժեքի՝ 63%-ը: Արտահանման ծավալների աճի տեմպը 2011թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է 96.2%, իսկ արժեքով՝ 124%: 2010թ. արտահանման աճի տեմպը կազմել է 116.8%, իսկ արժեքով՝ 155.7%: Վերջինիս հաջորդում է Թաիլանդը, որը արտահանել է արտադրանքի 42.7% (4.1 մլն տոննա, 2.1 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 12.8%-ը, արժեքի՝ 11.4%-ը: Արտահանման աճի տեմպը 2011թ. կազմել է 198.7%, իսկ արժեքով՝ 241.8%, 2010թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 88.4% և 114.4%: Ավստրալիան արտահանել է արտադրանքի 46.7%-ը (1.7 մլն տոննա, 987 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 5.3%-ը, արժեքի՝ 5.4%-ը: Արտահանման ծավալները 2011թ. կրճատվել են 38.9%-ով, իսկ արժեքով՝ 24.8 %-ով, սակայն նախորդ տարի 2010թ. աճի տեմպը կազմել է 114.6%, իսկ արժեքով՝ 152.6%: Արտահանման ծավալներով չորրորդ տեղում է Գվատեմալան, որը արտահանել է արտադրանքի 54.9%-ը (1.3 մլն տոննա, 649 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 4%-ը, արժեքի՝ 3.5%-ը: Արտահանման ծավալները 2011թ. կրճատվել են 26%-ով, իսկ արժեքով՝ 10.6%-ով, սակայն 2010թ. նախորդ տարվա նկատմամբ արտահանման ծավալների աճի տեմպը կազմել է 109.5%, իսկ արժեքով՝ 142.8%: Հինգերորդ տեղը զբաղեցնող Հնդկաստանը 2011թ. արտահանել է արտադրանքի 3.3%-ը (876 հազար տոննա, 607 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 2.7%-ը, արժեքի՝ 3.5%-ը: Արտահանման ծավալը 2011թ. գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշին 2.3 անգամ, իսկ արժեքով գերազանցել է շուրջ 2.4 անգամ: 2010թ. արտահանման ցուցանիշները նույնպես վկայում են ծավալների աճի մասին, քանի որ այն գերազանցել է 2009թ. ցուցանիշներին շուրջ 15 անգամ, իսկ արժեքով՝ 19.8 անգամ: Հարկ է նշել նաև, որ խոշոր արտադրող 20 երկրներից Չինաստանը (12.5 մլն տ.) չի ընդգրկվել 20 խոշոր արտահանող երկրների ցանկում: Միաժամանակ չվերամշակված շաքարավազի 1 տոննայի արտահանման գների համաձայն ամենաբարձր գինը 2011թ. եղել է Մեքսիկայում՝ 794.6 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ ԱՄՆ-ում՝ 367.81 ԱՄՆ դոլար, 2010թ. ամենաբարձր գինը եղել է Մալավիյում՝ 1061.6 ԱՄՆ դոլար,

ամենացածրը՝ Ֆիջիում՝ 382 ԱՄՆ դոլար: 2009թ. ամենաբարձր գինը եղել է Ֆրանսիայում՝ 644.5 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Կուբայում՝ 291.1 ԱՄՆ դոլար 1 տոննայի դիմաց:

Կաթի փոշու 20 հիմնական երկրների կողմից արտադրության և արտահանման 2009-2011թթ. ցուցանիշների համաձայն (տես աղյուսակ 5 և 6) հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ հանդիսանում են նաև արտահանողներ: Այսպես, 2011թ. արտադրության ծավալով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի մասնաբաժինը ամբողջ արտադրության ծավալում կազմում է 26.5%-ը (785 հազար տոննա), երկրորդ տեղում է Նոր Զելանդիան, որի արտադրության մասնաբաժինը ընդհանուրի մեջ կազմել է 12.4% (366 հազար տոննա), որին հաջորդում է Գերմանիան՝ 10.1% (299.5 հազար տոննա): Արտադրության ծավալով չորրորդ տեղում է Ֆրանսիան, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուրի 8.4%-ը (250 հազար տոննա), իսկ հինգերորդ տեղում՝ Ավստրալիան, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուրի 5.7%-ը (168 հազար տոննա): Հարկ է փաստել, որ կաթի փոշու արտադրության ծավալները ըստ տարիների հիմնականում պահպանվում են, ինչը պայմանավորված է կայուն պահանջարկով:

Կաթի փոշու 2011թ. արտահանման ցուցանիշների համաձայն 20 խոշոր արտահանող երկրների ցանկում առաջին տեղում է ԱՄՆ-ը, որը արտահանել է արտադրանքի 55.6%-ը, որը ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 22%, արժեքով՝ 21.8% (436 հազար տոննա, 1.4 մլրդ ԱՄՆ դոլար), աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 113.6%, իսկ արժեքով՝ 140.1%, 2010թ. աճի տեմպը համապատասխանաբար կազմել է 154.4% և 199.3%: ԱՄՆ-ին հաջորդում է Գերմանիան, որը արտադրանքի 98.4%-ը արտահանել է, ինչը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 14.8%-ը և արժեքի 12.9%-ը (295 հազար տոննա, 946 մլն ԱՄՆ դոլար), աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 132.7%, իսկ արժեքով՝ 152.1%, 2010թ. աճի տեմպը կազմել է համապատասխանաբար՝ 115.4% և 134.9%: Հաջորդը Նոր Զելանդիան է, որը 2011թ. արտահանել է արտադրության 67.2%-ը, ընդհանուր արտահանման ծավալի 12.4%-ը, իսկ արժեքով՝ 12.9%-ը (246 հազար տոննա, 859 հազար ԱՄՆ դոլար): Ինչպես նկատվում է 2011թ. տվյալ երկրի կաթի փոշու արտահանման ծավալները կրճատվել են 29.5%-ով, իսկ արժեքով՝ 17.3%-ով: Նույնը կարելի է ասել նաև 2010թ. մասով, քանի որ արտահանման ծավալը նվազել է 14.5%-ով, և միայն արժեքով ցուցանիշը աճել է 24.1%-ով: Արտահանման ծավալներով հաջորդը Ֆրանսիան է, որը արտահանել է արտադրանքի 82.2%-ը, ընդհանուր արտահանման ծավալով և արժեքով՝ 10.3%-ը (206 հազար տոննա, 687 մլն ԱՄՆ դոլար): 2011թ. Ֆրանսիայի արտահանման աճի տեմպը ծավալով կազմել է 109.3%, իսկ արժեքով՝ 127.6%, 2010թ. այս ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 159.3% և 179.6%: Աղյուսակ 6-ում հինգերորդ տեղը զբաղեցնողը՝ Բելգիան, ընդգրկված չէ 20 խոշոր կաթ արտադրող երկրների ցանկում, սակայն վերջինիս ընդհանուր արտահանման ծավալում կազմել է 8.1%-ը, իսկ արժեքով՝ 8.3%-ը (161 հազար տոննա, 549 մլն ԱՄՆ դոլար): 2011թ. արտահանման աճի տեմպը կազմել է 118.7%, արժեքով՝ 126.8%, իսկ 2010թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 146.7% և 197%: Կաթի փոշու 2011թ. արտահանման 1 տոննայի գինը ամենից բարձրը եղել է Բելառուսում՝ 3892.26 ԱՄՆ դոլար և ամենից ցածրը՝ Սաուդյան Արաբիայում՝ 1617.36 ԱՄՆ դոլար: 2010թ. արտահանման 1 տոննայի գինը ամենից բարձրը եղել է Բելառուսում՝ 3529.2 ԱՄՆ դոլար, իսկ ամենից ցածրը՝ Սաուդյան Արաբիայում՝ 1182.6 ԱՄՆ դոլար: 2009թ. կաթի փոշու ամենաբարձր գինը եղել է Իսպանիայում՝ 2802 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուկրաինայում՝ 1641.3 ԱՄՆ դոլար:

Կարագի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2009-2011թթ. վիճակագրական ցուցանիշների (տես աղյուսակ 7 և 8) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կարագ արտադրող խոշոր երկրները միևնույն ժամանակ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ: Կարագի արտադրության ծավալներով առաջին տեղում է ԱՄՆ-ը, որի բաժինը արտադրության ընդհանուր ծավալում կազմել է շուրջ 20.2% (821 հազար տոննա), որի արտադրության ծավալների աճի տեմպը 2011թ. կազմել է 115.7%, սակայն 2010թ. աճի տեմպը կազմել է 99.5%: Արտադրության ծավալով երկրորդ տեղում է Նոր Զելանդիան, որի արտադրանքը 2011թ. կազմել

է ընդհանուրի 11.3%-ը (459 հազար տոննա), արտադրության ծավալների աճի տեմպը 2011թ. կազմել է 104.1%, իսկ 2010թ.՝ 106.8%: Վերջինիս հաջորդում է Գերմանիան, որի արտադրանքը 2011թ. կազմել է ընդհանուրի 10.46%-ը (425 հազար տոննա), աճի տեմպը կազմել է 105.2%, իսկ 2010թ.՝ 98.6%: Չորրորդ տեղում է Ֆրանսիան, որի արտադրանքը կազմել է ընդհանուրի 10.45%-ը (424 հազար տոննա), աճի տեմպը 2011թ. նախորդ տարվա նկատմամբ կազմելով 100.3%, իսկ 2010թ. այդ ցուցանիշը կազմել է 101.9%: Արտադրության ծավալով հինգերորդ տեղում է ՌԴ-ը, որի արտադրանքը 2011թ. կազմել է ընդհանուրի 5.4%-ը (220 հազար տոննա), աճի տեմպը կազմելով 105.8%, իսկ 2010թ. նախորդ տարվա նկատմամբ այդ ցուցանիշը կրճատվել է 10.7%-ով:

Կարագի արտահանման ցուցանիշներով առաջին տեղում է Նոր Զելանդիան, որը 2011թ. արտահանել է արտադրված կարագի 61.1%-ը, որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 21.4%-ը, արժեքի՝ 20%-ը (280 հազար տոննա, 1.4 մլրդ ԱՄՆ դոլար), արտահանման ծավալները կրճատվել են 32.6%-ով, արժեքով՝ 10.9%-ով, իսկ 2010թ. արտահանման ծավալը կրճատվել է 7.8%-ով, սակայն արժեքով աճել է 63.6%-ով: Հարկ է նշել, որ կարագի արտահանման ծավալներով երկրորդ և երրորդ տեղերը զբաղեցնող Նիդերլանդների և Իռլանդիայի արտահանման ծավալները գերազանցել են արտադրության ծավալներին համապատասխանաբար 36.4%-ով և 12.3%-ով: Նիդերլանդների արտահանման ծավալը 2011թ. կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 13.5%-ը, արժեքի՝ 14.6%-ը: Նշենք, որ արտահանման ծավալի աճի տեմպը 2011թ. կազմել է 96.7%, արժեքով՝ 124.2%, իսկ 2010թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 102% և 131.3%: Իռլանդիայի արտահանման ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 12.5%-ը, արժեքով՝ 11.5%-ը, ինչը պայմանավորված է տվյալ երկրների կողմից կարագի ներմուծման և հետագայում արտահանման հանգամանքով: 2011թ. նախորդ տարվա նկատմամբ արտահանման աճի տեմպը կազմել է ծավալով 121.9%, արժեքով՝ 144.6%, իսկ 2010թ. համապատասխանաբար՝ 112% և 143.7%: Միաժամանակ նշենք, որ Նիդերլանդները 2011թ. ներկրել է 53 հազար տոննա կարագ, որը ամենայն հավանականությամբ հետագայում արտահանվել է: Նույնը կարելի է ասել նաև Իռլանդիայի մասին, քանի որ 2011թ. ներկրվել է 6604 տոննա կարագ: Արտահանման ծավալներով չորրորդ տեղում է Բելգիան, որի արտահանման ծավալը գերազանցել է արտադրության ծավալը շուրջ 2 անգամ և կազմել է ընդհանուրի 8.7%-ը, արժեքով՝ 9.8%-ը (114 հազար տոննա, 687 մլն ԱՄՆ դոլար): Նշենք, որ 2011թ. արտահանման ծավալը կրճատվել է 12.9%-ով, իսկ արժեքով աճել է 4.8%-ով, 2010թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են՝ 5.8% և 12%: Հինգերորդ տեղում է Գերմանիան, որը 2011թ. արտահանել է արտադրության 25.3%-ը (107.7 հազար տոննա, 614 մլն ԱՄՆ դոլար արժեքով), որի արտահանման ծավալը կազմել է ընդհանուրի 8.2%-ը, արժեքով՝ 8.8%-ը: Կարագի արտահանման ծավալների աճի տեմպը 2011թ. կազմել է 95.8%, իսկ արժեքով՝ 119.2%, 2010թ. այդ ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 122.6% և 152.2%: Կարագի արտահանման գների համաձայն 2011թ. 1 տոննայի ամենաբարձր գինը եղել է Դանիայում՝ 6364.44 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուրուգվայում՝ 3811.99 ԱՄՆ դոլար, 2010թ. այդ օրինաչափությունը պահպանվել է. ամենաբարձր գինը եղել է Դանիայում՝ 5300.6 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուրուգվայում՝ 2975 ԱՄՆ դոլար, ինչպես նաև 2009թ. ամենաբարձրը կրկին եղել է Դանիայում՝ 4459.5 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Նոր Զելանդիայում՝ 2124.5 ԱՄՆ դոլար:

Ուսումնասիրելով բուսական յուղի արտադրության և արտահանման 20 հիմնական երկրների 2009-2011թթ. ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 9 և 10)՝ կարելի է փաստել, որ հիմնական խոշոր արտադրողները միաժամանակ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ: Այսպես, բուսական յուղի արտադրության ծավալներով առաջին տեղն է զբաղեցնում Ուկրաինան, որի արտադրության ծավալը կազմել է ընդհանուր արտադրության ծավալի 25.8%-ը (3.2 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը 2011թ. կազմել է 106.3%, 2010թ.՝ 107.9%: Երկրորդ տեղում է ՌԴ-ը համապատասխանաբար՝ 20.7%-ը (2.5 մլն տոննա), իսկ աճի տեմպը 2011թ. կազմել է 100.6%, 2010թ.՝ 90.2%: Երրորդ տեղում է Արգենտինան, որի արտադրության ծավալը

2011թ. կազմել է ընդհանուրի 12.1%-ը (1.5 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը 2011թ. կազմել է 132.1%, 2010թ.՝ 79.5%: Թուրքիան զբաղեցրել է չորրորդ տեղը, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 6.6%-ը (806 հազար տոննա), իսկ արտադրության աճի տեմպը 2011թ.՝ 113.6%, 2010թ.՝ 129.4%: Հինգերորդ տեղում է Չինաստանը, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 4.7%-ը (580 հազար տոննա), իսկ արտադրության աճի տեմպը 2011թ. կազմել է 92.3%, 2010թ.՝ 127.3%:

Բուսական յուղի արտահանման 2011թ. ցուցանիշների համաձայն առաջին տեղում է Ուկրաինան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 84.4%-ը (2.7 մլն տոննա, 3.1 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 41%-ը և արժեքի 36.2%-ը, իսկ աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 126.2%, արժեքով՝ 180.8% իսկ 2010թ.՝ ծավալով 91.1%, արժեքով՝ 107.5%: Երկրորդ տեղում է Արգենտինան, որը արտահանել է արտադրության 60.3%-ը (898 հազար տոննա, 1.1 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր ծավալի 13.7%-ը, իսկ արժեքի՝ 13.2%-ը: Արտահանման աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 158.5%, արժեքով՝ 212.4%, 2010թ.՝ ծավալով՝ 60%, արժեքով՝ 73.4%: Երրորդ տեղում է ՌԴ-ը, որը արտահանել է արտադրանքի 19.4%-ը (493 հազար տոննա, 609 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 7.5%-ը, իսկ արժեքի՝ 7%-ը: Արտահանման աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 123.9%, իսկ արժեքով՝ 160.6%, 2010թ.՝ 54.9% և 65.8%: Ֆրանսիան արտահանման ծավալով զբաղեցրել է չորրորդ տեղը, որը արտահանել է արտադրանքի 68.7%-ը (443 հազար տոննա, 676 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 6.8%-ը, իսկ արժեքի 7.8%-ը: Արտահանման աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 109.8%, արժեքով՝ 145.4%, 2010թ.՝ 112.1%, արժեքով՝ 105.7%: Հինգերորդ տեղում է Նիդերլանդները, որը բուսական յուղ է արտահանել արտադրությունից շուրջ 2 անգամ ավել, որը պայմանավորված է 2011թ. 330923 տոննա ներկրման ծավալներով, ինչը հետագայում արտահանվել է: Արտահանումը կազմել է ընդհանուր ծավալի 6.5%-ը և արժեքի 7.2%-ը, իսկ արտահանման աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 105.6%, արժեքով՝ 149.4%, 2010թ. համապատասխանաբար՝ 87% և 81.9%: Բուսական յուղի 1 տոննայի արտահանման գների 2011թ. ցուցանիշների համաձայն ամենից թանկը եղել է Եգիպտոսում՝ 2670.4 ԱՄՆ դոլար, իսկ ամենից էժանը Մոլդովայում՝ 1160.3 ԱՄՆ դոլար: 2010թ. ամենաբարձրը եղել է Բելգիայում՝ 1405.8 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուկրաինայում՝ 818.5 ԱՄՆ դոլար, 2009թ. ամենաբարձրը եղել է Օմանում՝ 1580 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Ուկրաինայում՝ 693.5 ԱՄՆ դոլար:

Համաձայն 20 հիմնական երկրների կողմից տավարի մսի արտադրության և արտահանման 2009-2011թթ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 11 և 12) կարելի է փաստել, որ արտադրող և արտահանող երկրները հիմնականում համընկնում են: Այսպես, տավարի մսի արտադրության ծավալով 2011թ. առաջին տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը ընդհանուրում 2011թ. կազմել է 25.4%-ը (12 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 99.5%, 2010թ. աճի տեմպը կազմել է 101.3%: Վերջինիս հաջորդում է Բրազիլիան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 19.14%-ը (9 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը կազմել է 99.1%, 2010թ. աճի տեմպը կազմել է 97%: Երրորդ տեղում է Չինաստանը, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 13.1%-ը (6.2 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 99%, 2010թ.՝ 103%: Չորրորդ տեղում է Արգենտինան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 5.3%-ը (2.5 մլն տոննա), իսկ աճը 2011թ. և 2010թ. կրճատվել է համապատասխանաբար 5.1%-ով և 22.1%-ով: Հինգերորդ տեղում է Ավստրալիան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 4.5%-ը (2.1 մլն տոննա), իսկ արտադրության աճի տեմպը կազմել է 100%, 2010թ.՝ 99.4%:

Տավարի մսի արտահանման 2011թ. ցուցանիշներով առաջին տեղն է զբաղեցրել Գերմանիան, որի արտահանման ծավալը կազմել է արտադրության 21.1%-ը (247 հազար տոննա, 1.25 մլրդ ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 14.8%-ը, արժեքի 15.5%-ը,

իսկ արտահանման աճի տեմպը կազմել է ծավալով 116.8%, արժեքով՝ 150%, 2010թ. աճի տեմպը կազմել է ծավալով 128.3%, արժեքով՝ 91.1%: Երկրորդ տեղում է Ֆրանսիան, որը արտահանել է արտադրանքի 13.4%-ը (210 հազար տոննա, 1.1 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը կազմել է ընդհանուր արտահանման ծավալի 12.6%-ը և արժեքի 14%-ը, իսկ աճի տեմպը կազմել է ծավալով 112.7%, արժեքով՝ 122.2%, 2010թ. աճի տեմպը կազմել է ծավալով 108.5%, արժեքով՝ 104.8%: Ֆրանսիային հաջորդում են Լեհաստանը և Նիդերլանդները, որոնք արտահանման ծավալներով զբաղեցնում են համապատասխանաբար երրորդ և չորրորդ տեղերը: Սակայն վերջիններս չեն ընդգրկվել տավարի միս արտադրող խոշոր 20 երկրների ցուցակում: Նշենք, որ Լեհաստանը արտահանել է ընդհանուրի ծավալի 11.5%-ը, արժեքի՝ 9.4%-ը (191 հազար տոննա, 756 մլն ԱՄՆ դոլար), իսկ աճի տեմպը 2011թ. կազմել է ծավալով 98.3%, արժեքով՝ 115.2%, 2010թ. աճի տեմպը կազմել է ծավալով 117.2%, արժեքով՝ 97.5%: Նիդերլանդները արտահանել է ընդհանուրի ծավալի 9.8%-ը, արժեքի՝ 12.6%-ը (164 հազար տոննա, 1 մլրդ ԱՄՆ դոլար), իսկ աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է ծավալով 128.3%, արժեքով՝ 150.4%, 2010թ. ծավալով՝ 117.2%, արժեքով՝ 97.5%: Արտահանման ծավալով հինգերորդ տեղում է ԱՄՆ-ը, որը 2011թ. արտահանել է արտադրության 0.9%-ը (111 հազար տոննա, 593 մլն ԱՄՆ դոլար), որը կազմել է ընդհանուրի ծավալի 6.7%-ը, արժեքի 7.3%-ը, իսկ աճի տեմպը 2011թ. նախորդ տարվա նկատմամբ կազմել է ծավալով 114.5%, արժեքով՝ 112.8%, 2010թ. աճի տեմպը կազմել է ծավալով 98.6%, արժեքով՝ 131.5%: Տավարի մսի արտահանման 1 տոննայի գների 2011թ. ցուցանիշների համաձայն ամենաբարձրը եղել է Նիդերլանդներում՝ 6196.7 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Պակիստանում՝ 2835.7 ԱՄՆ դոլար, 2010թ. ամենաբարձրը եղել է Բելգիայում՝ 5492.5 ԱՄՆ դոլար, ամենացածրը՝ Ուրուգվայում՝ 2131.9 ԱՄՆ դոլար, 2009թ. ամենաբարձրը եղել է Բելգիայում՝ 5946.3 ԱՄՆ դոլար, իսկ ամենացածրը՝ Նոր Զելանդիայում՝ 1777.2 ԱՄՆ դոլար:

Ուսումնասիրելով խոզի մսի արտադրության և արտահանման 2009-2011թթ. վիճակագրական ցուցանիշները (տե՛ս աղյուսակ 13 և 14)՝ կարելի է փաստել, որ մի շարք խոշոր արտադրող երկրներ հանդիսանում են նաև խոշոր արտահանողներ: Այսպես, խոզի մսի արտադրության 2011թ. ցուցանիշների (տե՛ս աղյուսակ 13) համաձայն առաջին տեղում է Չինաստանը, որի արտադրության ծավալը ընդհանուրում կազմել է 51%-ը (48.4 մլն տոննա), իսկ արտադրության ծավալի աճի տեմպը նախորդ տարվա նկատմամբ կազմել է 99.6%, 2010թ. աճի տեմպը կազմել է 103.5%: Երկրորդ տեղում է ԱՄՆ-ը, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 10.8%-ը (10.3 մլն տոննա), իսկ աճի տեմպը կազմել է 101.4%, 2010թ. աճի տեմպը կազմել է 97.5%: ԱՄՆ-ին հաջորդում է Գերմանիան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 5.9%-ը (5.6 մլն տոննա), իսկ աճի տեմպը կազմել է 102.3%, 2010թ. աճի տեմպը կազմել է 104.3%: Չորրորդ տեղում է Իսպանիան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 3.5%-ը (3.5 մլն տոննա), իսկ աճի տեմպը 2011թ. կազմել է 103%, 2010թ. աճի տեմպը կազմել է 102.4%: Հինգերորդ տեղում է Բրազիլիան, որի արտադրության ծավալը 2011թ. կազմել է ընդհանուրի 3.4%-ը (3.4 մլն տոննա), իսկ աճի տեմպը 2011թ. կազմել է 105.5%, 2010թ.՝ 102.1%:



ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

Ներկայիս գլոբալ տնտեսության պայմաններում համաշխարհային շուկայում պարենային ապրանքների գները, կապված մի շարք պատճառների հետ, կայուն աճել են: Հոգս է կարևորագույն պարենային ապրանքների միջազգային, ՀՀ և ԼՂՀ գների ուսումնասիրությանը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ը և ԼՂՀ-ը հանդիսանում են պարենի խոշոր ներկրող երկրներ, հեղինակները փորձել են ուսումնասիրել և վերլուծել պարենային ապրանքների գների դինամիկան 2008-2013թթ. և դրանց ազդեցությունը ՀՀ և ԼՂՀ գների վրա:

ՀՀ ԿՈՏԱՆՅԱՆ ԿՈՆԱՏԱԿՏԱՆԻ ԿՈՆՈՒՆԻՍՏԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ТЕНДЕНЦИИ ИЗМЕНЕНИЯ ЦЕН НА ПРОДОВОЛЬСТВЕННЫЕ ТОВАРЫ НА МИРОВОМ РЫНКЕ, В РА И НКР

ДАВИД АРУТЮНЯН, *д.э.н.*
старший научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

ЛЕВОН ХАЧАТРИАН, *к.э.н.*
научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

МЕРУЖАН МАРКОСЯН, *к.э.н.*
научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

Аннотация

В современных условиях глобальной экономики цены на продовольственные товары на мировых рынках в силу ряда причин стабильно выросли. Статья посвящена изучению цен на важнейшие виды продовольственных товаров на мировом рынке, в Республике Армения и в Нагорно-Карабахской Республике. Учитывая тот факт, что РА и НКР являются крупными импортерами продовольствия, авторы попытались изучить и проанализировать динамику мировых цен на продовольственные товары за период 2008-2013 гг. и их влияние на цены РА и НКР.

Ключевые слова: продовольствие, цены, мировые цены, мировой рынок, импорт.

THE TRENDS OF FOOD PRICES ON THE WORLD MARKETS, IN THE REPUBLIC OF ARMENIA AND NAGORNO-KARABAKH REPUBLIC

DAVID HARUTYUNYAN
Doctor of Sciences (Economics)
Senior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

LEVON KHACHATRYAN
Candidate of Sciences (Economics)
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

MERUZHAN MARKOSYAN
Candidate of Sciences (Economics)
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

In the current global economy the food prices on the world markets have been constantly rising owing to several things. The article studies the international and domestic prices (and prices in the NKR market) of the most important food items. Taking into account the fact, that both the Republic of Armenia and the Nagorno-Karabakh Republic are mainly food importers, the authors attempt to study and analyze the dynamics of world prices for the period 2008-2013, and the impact of these prices on the local prices (in Armenia and Karabakh).

Keywords: food, international prices, world markets, import.

²Paî '²Ú², Ú²Û, i. : .!, añáy»ëáñ

ÐÐ ¶²² Ø. óáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý
iÝi»ë³·ÇiáðÃÚ³Ý ÇÝëiÇiáðiÇ
·ËË³iáñ ·Çi³βË³iáÕ

Ð²ÚÍ Ø²ðÎáëÚ²Û, i. : .Ã.

ÐÐ ¶²² Ø. óáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý
iÝi»ë³·ÇiáðÃÚ³Ý ÇÝëiÇiáðiÇ
·Çi³βË³iáÕ

ã°i²PÛ ä²ðiøÆ Î²e²i²ðØ²Û Ûä²²îÛ°ðÀ
°i ,ð² Î²ð¶iáðØ²Û ÐÆØÛ²ÊÛ ,ÆðÛ°ðÀ

Ինչպես տնտեսագիտական բոլոր հասկացությունների, այնպես էլ պետական պարտքի և դրա կառավարման նպատակների սահմանման պարագայում տնտեսագետների շրջանում դեռևս բացակայում է միասնական կարծիքը: Սակայն ամենատարածված տեսակետներից մեկի համաձայն՝ պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը դրա գծով սպասարկման ծախսերը նվազագույնի հասցնելն է և դրա արդյունքում պետության կողմից առավել շահեկան պայմաններով փոխառությունների ձեռքբերումն է: Այս դեպքում պետական պարտքի կառավարման մեխանիզմը բավականին պարզ է, քանի որ պետությունը տնտեսական վերելքի փուլում աշխատում է հնարավորության սահմաններում չվերցնել երկարաժամկետ վարկեր, որպեսզի հետագայում պարտադրված չլինի դրանց դիմաց վճարել բարձր անվանական տոկոսադրույքներով գումարներ: Ուստի տնտեսական հետընթացի ժամանակ դրանից զերծ մնալու համար, տվյալ երկրի կառավարությունը իրականացնում է հակառակ գործողություններ՝ նպատակ է դնում պարտքային պարտավորությունների ժամկետների ավելացման հաշվին նոր փոխառություններ ներգրավել՝ առավելապես երկարաժամկետ վարկերի տեսքով¹:

Պետական պարտքի սպասարկման ծախսերը նվազագույնի հասցնելու նպատակը Ջ.Թոբինը լրացնում է արժույթի (դրամ, տարադրամ) կայունացման խնդրով, գտնելով, որ պետական պարտքի միայն այդպիսի կառավարումը կարող է պետության համար ձեռնտու լինել: Միաժամանակ, Ջ.Թոբինն այդ տեսակետը պաշտպանում է նաև այն պատճառով, քանի որ նրա կարծիքով չի կարելի հստակ սահմանազատել պետական պարտքի կառավարման և արժույթային քաղաքականության, ինչպես նաև կենտրոնական բանկի ու գանձապետարանի գործունեության ոլորտները²:

Այլ է քեյնսյան դպրոցի ներկայացուցիչների՝ պետական պարտքի կառավարման նպատակի մեկնաբանման տեսակետը: Ըստ այդ տեսաբանների՝ պետական պարտքը դիտվում էր որպես տնտեսական կայունության ձեռքբերման ու պահպանման գործոն, հետևաբար այս դեպքում պետական պարտքի կառավարման քաղաքականությունն ուղղվում է տնտեսական խթանման համակարգի գործունեության արդյունավետությունը առավելագույնը դարձնելուն³: Տվյալ պարագայում պետական պարտքի տոկոսավճարների հետ կապված ծախսերը նվազագույնի են հասցվում այնքան ժամանակ, քանի դեռ այն նպաստում է տնտեսության կայունացման ձեռքբերմանը: Այսինքն՝ պետությունը տնտեսական վերելքի փուլում պետք է հիմնականում թողարկի երկարաժամկետ պարտավորություններ, ինչն էլ իր հերթին պայմանավորված է տոկոսադրույքի և ներդրումային պահանջարկի ավելացմամբ: Իսկ ահա տնտեսական անկման ժամանակ, ելնելով տնտեսության կայունացման դատողություններից, անհրաժեշտ է ավելցուկային իրացվելիության փոխհատուցման համար թողարկել կարճաժամկետ փոխառություններ:

¹ Русаякина А.М. Управление государственным долгом. - Пенза, 2001, с. 11.
² Tobin J. An Essay on Principles of Debt Management.-N.Y., Cowles Foundation for Research in Economics at Yale University, 1963, p. 210.
³ Хансен Э. Экономические циклы и национальный доход. Классики кейнсианства (т. 2). -М.: 1997, с.334.

Իրենց հերթին արդեն գործող դասականներ ու նոր դասականներ համարվող տեսաբանները պետությունից պահանջում են «չեզոք» վարքագիծ, որոնց կարծիքով, տնտեսական քաղաքականության որևէ նպատակի հասնելու համար պետական կարգավորման գործիքների շարքում պետք է պետական պարտքի կառավարումը սկզբունքորեն բացառվի, քանի որ պարտքային գործիքների օգնությամբ պետության փողի առաջարկի կարգավորման փորձերը գործնականում դրական արդյունքներ չեն տալիս: Բացի այդ, բյուջետային պակասուրդները և դրանց՝ պարտքային գործիքների օգնությամբ ֆինանսավորումը առաջ են բերում փողի պահանջարկի աճ և ավելացնում են տոկոսադրույքները: Դրա արդյունքում փոքրանում է մասնավորի արտադրական գործընթացների գծով կուտակման ինչպես ֆինանսական, այնպես էլ նյութական բազան, թանկանում են վարկերը, իջնում է նաև ներդրումների մակարդակը: Արդյունքում առաջանում է պետական վարկային միջոցների նկատմամբ մասնավոր պահանջարկի դուրս մղման ազդեցություն և որի վերացման համար անհրաժեշտ է հաստատել բյուջետային հավասարակշռվածություն¹:

Տնտեսական կայունության պահպանումը պետությունից պահանջում է իրականացնել այնպիսի ծախսեր, որոնց արժեքը չի կարող ուշադրությունից դուրս մնալ: Նույնիսկ հակացիկլային միջոցառումների իրականացման համար պարտքային գործիքներ օգտագործելիս, պետությունը պարտավոր է հաշվի առնել փոխառությունների գծով ծախսերի մեծությունը, որպեսզի ապագայում թույլ չտա ճգնաժամային իրավիճակների ձևավորում: Ուստի որպես կարևորագույն նախապայման փոխառությունների գծով ծախսերը նվազագույնի հասցնելը պետք է դիտել որպես պետական պարտքի կառավարման հիմնական նպատակ: Միաժամանակ, վերջինիս համահունչ պետք է, որ դրվեն այլ նպատակներ ևս, ինչպես, օրինակ՝ երկրի տնտեսական անվտանգության ապահովումը՝ կախված փոխառությունների ծավալից:

Դեռևս 20-րդ դարի վերջին տասնամյակում ռուս տնտեսագետ Ֆ.Ամիրխանովան առաջարկեց այն տեսակետը, որ անհրաժեշտ է պետական պարտքի կառավարման գործընթացում լուծում տալ հետևյալ խնդիրներին.

- նվազագույնի հասցնել վարկատուի պարտքի արժեքը,
- արդյունավետ օգտագործել ներգրավված միջոցները,
- ապահովել փոխառությունների ժամանակին վերադարձը,
- կարգավորել արտաքին պարտավորությունները պարտքային ճգնաժամի պայմաններում²:

Վերոնշյալ խնդիրների շարքի տնտեսագիտական մեկնաբանությունները վկայում են, որ պետական պարտքի կառավարման ժամանակ չի կարելի դրա սպասարկման խնդիրը դիտարկել որպես գերխնդիր, անտեսելով այնպիսի ոչ պակաս կարևոր հիմնահարցեր, ինչպիսիք են՝ պարտքային միջոցների ճիշտ օգտագործումը (ինչը պետք է երաշխիք հանդիսանա հետագայում պարտքի վերադարձման համար միջոցների առկայության պայմաններում), փոխառությունների պատշաճ սպասարկումը (ինչը երաշխիք կհանդիսանա երկրի վարկանիշի բարձրացման և հետագայում նոր միջոցների ներգրավման հեշտացման համար) և այլն:

Իսկ ահա 21-րդ դարի սկզբներին տեսաբան Յու.Վավիլովն առաջարկում է պետական պարտքի կառավարման գործընթացում լուծվող ավելի ամբողջական և մանրամասն խնդիրներ: Դրանք են.

- պահպանել երկրի տնտեսության համար վտանգ չներկայացնող պետական ներքին և արտաքին պարտքերի մեծությունը,
- նվազագույնի հասցնել պետական պարտքի արժեքը՝ հենվելով փոխառության ժամկետի երկարաձգման, պետական արժեթղթերի եկամտաբերության իջեցման, այլ շուկաներ դուրս գալու և նոր ներդրողներ ներգրավելու վրա,
- պահպանել երկրի առաջնակարգ փոխառուի հեղինակությունը՝ հիմք ընդունելով ներդրողների հանդեպ ֆինանսական պարտավորությունների անթերի կատարումը,
- ապահովել պետական պարտքի շուկայի կայունությունն ու կանխատեսելիությունը,
- ապահովել փոխառու միջոցների, պետական վարկերի և պետական երաշխիքներով փոխառությունների արդյունավետ ու նպատակային օգտագործումը,

¹ Русаякина А.М., Управление государственным долгом. - Пенза. 2001, с. 13.

² Амирханова Ф.С. Развитие финансовых методов управления внешним долгом России. - М.: Диалог-МГУ, 1997, с. 3.

- ապահովել պետական վարկերի ժամանակին վերադարձը՝ մարումը, և դրանց մայր գումարի տոկոսավճարների ժամանակին կատարումը,
- տարբեր խմբերի ներդրողների պահանջների բավարարման նպատակով դիվերսիֆիկացնել պարտքային պարտավորությունները՝ ըստ փոխառության ժամկետի, եկամտաբերության, եկամտի վճարման ձևերի և այլ պարամետրերի¹:

Հինք ընդունելով պետական պարտքի կառավարման նպատակների վերաբերյալ տարբեր տեսաբանների տեսակետները, պետք է նշել, որ ՀՀ-ում այդ գործընթացը սահմանվում է ՀՀ պետական պարտքի մասին օրենքով²: Այսպես, պետական պարտքի կառավարումը գործընթաց է, որն իրականացվում է փոխառու միջոցների ներգրավման, վերաձևակերպման, մարման և սպասարկման ծրագրերի մշակման ու իրականացման միջոցով: Քանի որ ՀՀ պետական պարտքը բաղկացած է կառավարության և կենտրոնացման բանկի պարտքի հանրագումարից, ուստի օրենքն առանձին է տալիս նաև այդ 2 բաղադրիչների կառավարման նպատակները:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման հիմնական նպատակը սահմանվում է որպես նրա ֆինանսական կարիքների բավարարման մշտական հնարավորության ապահովում՝ երկարաժամկետ հատվածում նվազեցնելով պարտքի սպասարկման մեծությունը: Իր հերթին ՀՀ կենտրոնական բանկի պարտքի կառավարման նպատակները սահմանվում են «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով: Վերջինիս 11.1 հոդվածով սահմանվում է, որ ՀՀ կենտրոնական բանկի պարտքի կառավարումն իրականացվում է վճարային հաշվեկշռի կարգավորման, դրամավարկային քաղաքականության իրականացման և ֆինանսական կայունության ապահովման նպատակով³:

Միջազգային կազմակերպությունները, մասնավորապես Արժույթի միջազգային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը, որպես պետական պարտքի կառավարման հիմնական նպատակ հորդորում են դիտարկել նվազագույն ծախսումներով, միջին ու երկարաժամկետ հեռանկարում, խելամիտ ռիսկի սահմաններում պետության ֆինանսավորման պահանջարկի բավարարումը:

Տարբեր երկրներում պետական պարտքի կառավարման փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա վերաբերյալ տեսական պատկերացումները, որպես կանոն, զուգորդվում են պետության վճարունակության կամ պարտքային կայունության հետ: Հարկ է նշել, որ այս երկու հասկացությունները, չնայած ընդհանրություններին, իմաստային առումով բավականին տարբերվում են:

Վճարունակությունը տնտեսական կատեգորիա է, որը բնութագրում է պարտապանի՝ կուտակված պարտքային միջոցների սպասարկման և հետվերադարձի ընդունակությունը: Ավանդաբար, տնտեսագիտական տեսության մեջ այն ներկայացվում է որպես պարտապանի՝ պարտքային պարտավորությունների կատարման ընդունակության կարևորագույն գործոն: Որպես վճարունակության ապահովման կարևորագույն գործոն առավել հաճախ դիտարկվում է արտաքին առևտրի դրական մնացորդը (սալդոն), այսինքն՝ եթե պարտապանը ընդունակ է արտահանումից ապահովել այնքան զուտ շահույթ, որքան անհրաժեշտ է կուտակված պարտքային պարտավորությունների սպասարկման համար, կնշանակի, որ նման երկիրը վճարունակ է:

Ավելի խորը ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ պետական պարտքի սպասարկման պարագայում վճարունակությունը դեռևս բավարար պայման չէ պարտապանի՝ իր կողմից ստանձնած պարտավորությունների ժամանակին և պատշաճ մակարդակով կատարման համար, քանի որ նման պնդումը ճիշտ կլինի միայն այն պարագայում, եթե ենթադրենք, որ պարտապան երկիրը պատրաստ է վճարել պարտատեր երկրներին, իսկ պարտատեր երկրները, իրենց հերթին, պատրաստ են շարունակել վարկավորել նախկին պայմաններով և վերջնական արդյունքով: Նման ենթադրությունը, բնականաբար, ոչ միշտ է ճիշտ:

Պարտքային կայունության գաղափարն, ի տարբերություն վճարունակության, բացի պարտապան երկրի՝ կուտակված վարկային միջոցների սպասարկման ունակության, ենթադրում է նաև նման սպասարկման ու փոխառու միջոցներ տրամադրող երկրների՝ վարկավորման

¹ Вавилов Ю.Я. Государственный долг. 3-е изд., перераб. и доп. - М.: Изд-во «Перспектива», 2007, с. 20.

² «ՀՀ պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ, 2008.06.25/39(629), հոդ. 627:

³ «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենք, ՀՀԱԺՏ, 1996/12:

գործընթացը շարունակվելու պատրաստակամությունը: Այսինքն՝ պարտքային կայունությունը կարելի է սահմանել որպես փոխառու միջոցների ծավալի և կառուցվածքի այնպիսի իրավիճակ, որի դեպքում պարտապանը հնարավորություն ունի կատարելու իր ընթացիկ և ապագա պարտավորությունները՝ առանց խաթարելու երկրի սոցիալ-տնտեսական բնականոն զարգացումը և որի դեպքում կարիք չի առաջանա դիմելու այնպիսի գործողությունների, ինչպիսիք են պարտքի դուրսագրումն ու դրա վերածնակավորումը:

Առևտրային և ընթացիկ հաշվեկշիռների կայուն պակասուրդ ունեցող երկրներում դրական սալդոյի հասնելու համար կարևորագույն նշանակություն ունի ինչպես վճարունակության, այնպես էլ պարտքային կայունության ապահովումը: Այստեղ սկզբունքային նշանակություն ունի այն հարցը, թե արդյո՞ք հնարավոր է նման վիճակի հասնել առանց լուրջ սոցիալ-տնտեսական ցնցումների, մակրոտնտեսական քաղաքականության ընթացիկ սկզբունքների վերանայման, ներքին սպառման և կապիտալի ներհոսքի ծավալների կրճատման: Նման հնարավորության դեպքում առևտրային հաշվեկշիռի բացասական սալդոն կարելի է գնահատել որպես ընդունելի, ինչը նշանակում է, որ այն կարելի է հաղթահարել տնտեսական քաղաքականությունը շտկող որոշ գործողությունների միջոցով: Հակառակ դեպքում պարտքային կայուն վիճակի հնարավոր կլինի հասնել միայն պարտատերերի կողմից պարտքի բեռի թեթևացման միջոցով: Բացի այդ, եթե մեծ և բաց տնտեսություններ ունեցող երկրները մշակում են համաշխարհային տնտեսական ռազմավարություններ և փորձում են հասնել համաշխարհային տնտեսական տիրապետության և կարող են «չարաշահելով» սեփական դիրքը բարելավել արտաքին տնտեսական հարաբերությունները, ապա փոքր երկրները, այդ թվում Հայաստանը, չեն կարող թելադրել իրենց տնտեսական քաղաքականությունը և պարտավոր են իրականացնել իրեն արդարացնող տնտեսական քաղաքականություն¹:

Տնտեսապես հիմնավորված պայմաններով ստացված արտաքին փոխառու միջոցների ներդրումը ապահովում է անհրաժեշտ տնտեսական արդյունավետություն, և պետական պարտքի նման աճը պարտքային խնդիրներ չի առաջացնում²: Սակայն քիչ չեն դեպքերը, երբ պարտապանները դժվարանում են սպասարկել ստացված փոխառու միջոցները: Քանի որ ժամանակակից պայմաններում երկրների գերակշիռ մասը պետական պարտք ունեն կուտակած, այստեղ հարց է առաջանում՝ ինչպե՞ս որոշել պարտքի թույլատրելի կամ անվտանգ մեծությունը:

Նման հարցադրումը կարևոր է, քանի որ պարտքային չհիմնավորված քաղաքականությունն անշեղորեն տանում է դեպի այնպիսի իրավիճակի, որի դեպքում պարտքի ընթացիկ սպասարկման հիմնախնդիրը վերաճում է պարտքի վերակառուցման և պարտատերի հետ փոխհարաբերությունների կարգավորման գերխնդրի: Այսպիսով, պարտքի մեծության գնահատման գործիքների ներդրումը կարևորագույն քայլ է պետական պարտքի կառավարման գործընթացի արդյունավետության ապահովման գործում:

Տեսական առումով կարելի է նշել, որ կուտակված պետական պարտքը կարելի է ընդունելի համարել այն դեպքում, երբ պետության խելամիտ տնտեսական քաղաքականությունը վարելու պայմաններում պարտքի մեծությունն արտահայտող հարաբերական ցուցանիշերը (պարտք/ՀՆԱ, պարտք/զուտ արտահանում և այլն) կայուն մեծություն կամ նվազման միտում ունեն: Եվ հակառակը, պարտքի մեծությունն անընդունելի է, երբ նույնիսկ պետական նպատակաուղղված խելամիտ տնտեսական քաղաքականության և մակրոտնտեսական կանխատեսումների պարագայում նույն ցուցանիշները կայուն աճի միտումներ են ցուցաբերում, որը նշանակում է, որ պարտքն ի վերջո պետք է վերածնակավորվի³:

¹ Խաչատրյան Վ., Մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսման հիմնախնդիրները հետճգնաժամային զարգացումների համատեքստում, «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» (հանրապետական գիտաժողովի նյութեր), Երևան, ՀՀԳԱ «Գիտություն» հրատ., 2010, էջ 79:

² Макконнелл К.Р., Брю С.Л., Экономикс: принципы, проблемы и политика. Пер. с 14-огоангл. изд. –М.: ИНФРА-М, 2004, с. 428.

³ Krueger A.O., “Sovereign Debt Restructuring Mechanism-One Year Later”. International Monetary Fund, Presented at the European Commission, Brussels, Belgium, December 10, 2002. <http://www.imf.org/external/np/speeches/2002/121002.htm>.

ՀՀ Կոտայնի մարզի Մարտի 1-ին համալսարանի
Հոգեբանության և Գործառնական հարաբերությունների
ինստիտուտի Գիտական կոնֆերանսի Կազմակերպչական
կոմիտեի Կողմից

ՀՀ Կոտայնի մարզի Մարտի 1-ին համալսարանի
Հոգեբանության և Գործառնական հարաբերությունների
ինստիտուտի Գիտական կոնֆերանսի Կազմակերպչական
կոմիտեի Կողմից

ՀՀ Կոտայնի մարզի Մարտի 1-ին համալսարանի

Ամենատարածված տեսակետի համաձայն պետական պարտքի կառավարման հիմնական նպատակը դրա գծով սպասարկման ծախսերը նվազագույնի հասցնելն է: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման մոտեցումը փակուղային է, քանի որ չի արտահայտում պարտք վերցնելու բուն նպատակն ու հիմնավորումը: Աշխատանքում ներկայացվել են պետական պարտքի ձևավորման և սպասարկման սկզբունքային հիմնավորումները: Հիմնավորվել է, որ պետական պարտքի կառավարման հիմքում պետք է դրվի նպատակների համալիր, որոնց իրագործման մեխանիզմների մշակումը հանդես է գալիս որպես արդյունավետ կառավարման նախապայման:

ՀՀ Կոտայնի մարզի Մարտի 1-ին համալսարանի Հոգեբանության և Գործառնական հարաբերությունների ինստիտուտի Գիտական կոնֆերանսի Կազմակերպչական կոմիտեի Կողմից

ЦЕЛИ УПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ И ПРОБЛЕМЫ ЕГО РЕГУЛИРОВАНИЯ

АШОТ БАЯДЯН, д.э.н., профессор
главный научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

АЙК МАРКОСЯН, к.э.н.
научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

Аннотация

Согласно наиболее распространенной точке зрения, основной целью управления государственным долгом является минимизация расходов по его обслуживанию. Однако исследования показывают, что такой подход является тупиковым, поскольку он не отражает истинной цели и обоснования заимствования. В работе представлены принципиальные положения формирования и обслуживания государственного долга.

Обосновано, что в основу регулирования государственного долга должен быть положен комплекс целей, разработка механизмов реализации которых выступает в качестве предпосылки эффективного управления.

Ключевые слова: государственный, долг, управление, цель, обслуживание, стабильность, платежеспособность, кредитоспособность.

PUBLIC DEBT MANAGEMENT OBJECTIVES AND REGULATION ISSUES

ASHOT BAYADYAN, Doctor of Sciences (Economics)
Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

HAYK MARKOSYAN, Candidate of Sciences (Economics)
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

According to the most common view, the main objective of the public debt management is to minimize the debt servicing cost. However, the studies show that such approach to the debt management is considered a dead-end, since it does not identify and justify the main reason of borrowing. The article presents the basic provisions of borrowing and servicing the public debt. The article justifies that the set of objectives needs to be at the core of public debt management, and the design of respective implementation mechanisms of stated objectives is considered a prerequisite for efficient management.

Keywords: public debt, management, objective, service, stability, solvency, creditworthiness.

տնտեսագիտության կողմից ընդունվել է որպես տնտեսությունը կաշկանդող, իսկ երկրորդը՝ որպես խթանող հարկային քաղաքականություն¹:

Տնտեսության ներկա պայմաններում հարկային քաղաքականության առաջնային նպատակը պետք է հանդիսանա հարկերի խթանիչ գործառույթի դերի մեծացումը՝ միաժամանակ ապահովելով նաև օպտիմալ հարաբերակցություն՝ այդ և ֆիսկալ գործառույթների միջև: Առանց հարկերի խթանիչ գործառույթի վրա հիմնված ճկուն հարկային քաղաքականության մշակման՝ անհնար է պատկերացնել կայուն զարգացող տնտեսություն՝ ցանկացած երկրում: Այս գործառույթների օպտիմալ հարաբերակցության շնորհիվ միայն կարելի է ապահովել կայուն պետական եկամուտներ՝ խթանելով նաև տնտեսական գործունեությունը և ներդրումները մեր հանրապետությունում: Հիմնվելով միայն հարկերի ֆիսկալ գործառույթի վրա, հարկային քաղաքականությունը մեր հանրապետությունում չի կարող ապահովել տնտեսության երկարաժամկետ զարգացման նախադրյալներ: Խթանիչ գործառույթի կյանքի կոչելու համար նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել հարկային քաղաքականության, հարկային համակարգի և տնտեսական համակարգի բարելավման հետևողական միջոցառումների համալիր: Նշվածի արդյունքում, կարծում ենք, հնարավոր կլինի կրճատել հարկային բեռը և սովերային տնտեսությունը, խթանել ներդրումները՝ դրանով իսկ ապահովելով տնտեսական կայուն աճի նախապայմաններ: Այս նպատակներին հասնելու համար՝ անհրաժեշտ է իրականացնել ճկուն ու արդյունավետ հարկային քաղաքականություն, որի շնորհիվ կապահովվի ինչպես պետության հարկային եկամուտների բավարար մակարդակ, այնպես էլ միաժամանակ կլուծվի վերը նշված հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականության ոլորտում, չնայած իրականացված մի շարք օրենսդրական և վարչարարական բարեփոխումների՝ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում տնտեսության զարգացման վրա: Վերջիններից, մասնավորապես, հատկանշական են հետևյալները.

- Հարկային քաղաքականության մեջ հարկերի խթանիչ գործառույթի բացակայությունը, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսության զարգացման և ներդրումների խթանման վրա:
- Անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշիռը, ինչը բացի ֆիսկալ նպատակներից ոչ մի տնտեսական բարենպաստ հետևանք չի ունենում, քանի որ դրա վերջնական վճարողը համարվում է սպառողը և վերջինս այդ չափով կրճատում է իր սպառումը:
- Հարկային արտոնությունների չհիմնավորված և անարդյունավետ համակարգի կիրառումը: Այս ոլորտում անհարժեշտ են բավական մանրակրկիտ և խորը վերլուծություններ՝ պարզելու տրամադրված արտոնությունների տնտեսական հետևանքները: Հարկային արտոնությունները պետք է բխեն տնտեսության զարգացման ռազմավարությունից, տարածքային զարգացման նպատակներից ու տնտեսության ճյուղային դիվերսիֆիկացիայի խնդիրներից:
- Հարկային վարչարարության կազմակերպման ցածր արդյունավետությունը, ինչն անխոս, բացասաբար է անդրադառնում հարկերի հավաքագրելիության մակարդակի վրա: Հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումը, կադրերի որակավորման բարձրացումը, հարային մարմին–հարկատու շփումների նվազեցումը, հարկային ստուգումների կրճատումը մեծապես կնպաստեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:
- Հաստատագրված և արտոնագրային վճարներով հարկվող ոլորտների տնտեսապես չհիմնավորված և բավականաչափ մեծ տեսակարար կշիռը: Նշենք, որ հաստատագրված և արտոնագրային վճարների դեպքում՝ հարկման օբյեկտ են համարվում ոչ թե եկամուտները, այլ գործունեության տեսակները, որոնք, ի տարբերություն գործունեության մնացած տեսակների, տեղափոխվում են հարկման արտոնյալ դաշտ՝ սկիզբ դնելով հարկման սկզբունքներին հակասող անհավասար հարկման անընդունելի պրակտիկային²:

¹ «Մակրոտնտեսական կարգավորում» Հ. Ղուլչյանի խմբ., Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 355:

² Բագրատյան Հ. Հայաստանը դարերի սահմանագծին: Երևան, «Նաիրի», 2003, էջ 190:

- Ֆիզիկական անձանց աշխատավարձի վրա բարձր հարկային ճնշումը: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով՝ չհարկվող նվազագույն եկամտի՝ անձնական նվազեցումների վերացմամբ¹ էլ ավելի մեծացավ հարկային ճնշումը ֆիզիկական անձանց առանց այն էլ ցածր եկամուտների վրա, ինչը հանգեցրեց ազգաբնակչության կենսամակարդակի էլ ավելի անկման:
- Իրավաբանական և ֆիզիկական անձանց եկամուտների և կատարվող ծախսերի նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմի բացակայությունը, ինչը նպաստում է ստվերային տնտեսության ընդլայնմանը: Տնտեսվարողների եկամուտների և ծախսերի կապակցումը միմյանց հետ և արդյունքում հարկային մարմնի կողմից համապատասխան ճշգրտումները կնպաստեն ստվերային շրջանառության կրճատմանը և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը:
- Բազմաքանակ և անարդյունավետ հարկային ստուգումները, որոնք պարզապես ճնշող ազդեցություն են թողնում տնտեսվարողների վրա և չեն նպաստում տնտեսական նախաձեռնությունների խթանմանը:

Նշված հիմնախնդիրները, բնականաբար, բացասաբար են անդրադառնում ինչպես հարկային քաղաքականության արդյունավետության վրա, այնպես էլ խոչընդոտում են տնտեսական հարաբերությունների բնականոն ընթացքին: Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում առաջիկա տարիներին հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմքում, նախ և առաջ, անհրաժեշտ է դնել նշված խնդիրների լուծումը:

Վերջիններս դիտարկելով, հանգում ենք նրան, որ ներկայումս մեր հանրապետությունում գործող հարկային քաղաքականության պետական կարգավորումը բավարար արդյունավետ չէ՝ տնտեսության առջև ծառայած խնդիրների լուծման, տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման և կայուն տնտեսական աճ ապահովելու համար: Մեր երկրում հարկային քաղաքականության հիմնական գործառույթը եղել և մնում է ֆիսկալ գործառույթը, որը նույնպես բավարար արդյունավետ չէ՝ կապված հարկերի հավաքագրելիության ցածր մակարդակի, ստվերային տնտեսության մեծ չափերի առկայության հետ և այլն: Ինչ վերաբերվում է հարկային քաղաքականության խթանիչ ու բաշխիչ գործառույթներին, ապա դրանք համարյա չեն գործում, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ներկայիս հարկային քաղաքականությունը չունի ռազմավարական նպատակներ և չի նպաստում մեր ազգաբնակչության բարեկեցության աճին, սոցիալական բեռնացման կրճատմանը, տնտեսական գործունեության և ներդրումների խթանմանը: Սա խոսում է այս քաղաքականության պետական կարգավորման ոչ պատշաճ մակարդակի մասին: Մեր հանրապետությունում թեև վերջին տարիների ընթացքում իրականացվեցին բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ և վարչարարական բնույթի բարեփոխումներ, սակայն, դրանք ապահովեցին կարճաժամկետ «տեղային» լուծումներ՝ ելնելով կրկին ֆիսկալ նպատակներից: Արդյունքում, ինչպես տեսնում ենք, տնտեսության մեջ առկա հիմնախնդիրները գրեթե չեն վերացել:

Վերը նշված խնդիրների լուծման համար ներկայումս մեծապես կարևորվում է հարկային քաղաքականության ուղղությունների վերանայումը և տնտեսության զարգացման հետ դրանց փոխկապակցումը: Այս առումով, անհրաժեշտ ենք համարում հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմքում դնել հայեցակարգային մոտեցումներ: Այլ կերպ ասած, կառավարության կողմից պետք է մշակվի հարկային քաղաքականության հայեցակարգ, որում պետք է նշվեն հարկային քաղաքականության կոնկրետ նպատակները, ուղղությունները, գործիքակազմը և ակնկալվող արդյունքները: Հարկային քաղաքականության հայեցակարգային ուղղությունների սահմանման ժամանակ պետք է ընտրվեն այնպիսի չափանիշներ, որոնց միջոցով հաշվի կառնվեն ինչպես պետության, այնպես էլ տնտեսության և դրա իրական հատվածի, տնտեսավորողների և ազգաբնակչության տնտեսական շահերը: Այս առումով, հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվի այն սկզբունքային մոտեցումը, որ հարկերի հավաքագրումը պետք է իրականացվի ոչ միայն պետական եկամուտների ապահովման, այլև

¹ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք:

տնտեսական հարաբերությունների վրա ցանկալի ներգործություն և տնտեսության խթանման ուղղությամբ՝ պետական մակրոտնտեսական կարգավորում իրականացնելու նպատակով: Մեր երկրի տնտեսության զարգացման համար՝ հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության գլխավոր չափորոշիչը պետք է հանդիսանա տնտեսության իրական հատվածի և բուն արտադրության ոլորտի խթանման կարողությունը: Հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը կարող է լուծվել միայն համալիր միջոցառումների իրականացման ճանապարհով, որի դեպքում միայն կլուծվեն առկա հիմնախնդիրները և կբարձրանա հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետությունը, ինչին ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն, հաշվի առնելով ինչպես զարգացած եվրոպական, այնպես էլ հետխորհրդային երկրներում իրականացվող հարկային քաղաքականության ձևավորված միտումները:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության պետական կարգավորման հայեցակարգի հիմքում անհրաժեշտ է դնել հետևյալ նպատակները.

- հարկերի խթանիչ գործառույթի ընդլայնումը՝ կապակցելով այն տարածքային զարգացման, տնտեսության դիվերսիֆիկացման և ներդրումների խթանման ռազմավարության հետ,
- հարկային բեռի կրճատումը և հավասարաչափ բաշխումը,
- տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանումը՝ բարենպաստ հարկային ռեժիմ սահմանելու միջոցով,
- հարկային օրենսդրության պարզեցումը և միասնականացումը, գործող հարկատեսակների հաշվարկման ընթացակարգերի և մեխանիզմների հստակեցումը և պարզեցումը, հարկային վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների ներդրումը,
- հարկային վարչարարության պարզեցումը, ծախսատարության կրճատումը, հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումը և հարկերի հավաքման մակարդակի բարձրացումը,
- հարկատուների համար հարկման հավասար և արդար պայմանների ապահովումը,
- անուղղակի հարկերի աստիճանական կրճատումը,
- հաստատագրված և արտոնագրային վճարների համակարգից աստիճանական անցումը տարբերակված արդյունավետ հարկային դրույքաչափերի կիրառմամբ հարկման համակարգի,
- տնտեսվարող սուբյեկտների, դրանց ղեկավարների, ու վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ծախսերի վերահսկման համակարգի ներդրումը, ինչը կնպաստի ստվերային շրջանառության կրճատմանը և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը:

Ամփոփելով, նշենք, որ հարկային քաղաքականությունը՝ պետական արդյունավետ կարգավորման շնորհիվ, ի թիվս իրեն բնորոշ այլ գործառույթների, կվերածվի մեր հանրապետության տնտեսության զարգացմանը խթանող կարևոր լծակի:

մտահարկի մասին» ՀՀ օրենքով¹ էր նախատեսված, այս հարկատեսակի դեպքում ևս նպատակահարմար է անհրաժեշտ է սահմանել անձնական նվազեցման գումար, ընդ որում, ավելի բարձր քան նախկինում, կապված գնաճի արդյունքում դրամի գնողունակության նվազման հետ: Այս քայլը կնպաստի ազգաբնակչության առավել խոցելի խմբերի սոցիալական վիճակի որոշակի բարելավմանը:

Տնտեսության խթանման ու զարգացման ոլորտում միտված հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնական ուղղությունները պետք է լինեն.

1. հարկեր/ՀՆԱ հարաբերության աստիճանական մեծացումը: Ինչպես վերևում նշվեց այս ցուցանիշը մեր հանրապետությունում բավական ցածր է և վերջին տարիներին տատանվում է 16-19 տոկոսի սահմաններում, այն դեպքում, երբ Եվրամիության անդամ պետություններում կազմում է միջինը 34.4 տոկոս, անցումային տնտեսություն ունեցող Լեհաստանում՝ 34.8, Չեխիայում 36.9, Էստոնիայում 33.1, Լատվիայում 30.5, Բուլղարիայում 43.2 տոկոս,²
2. Հարկերի խթանիչ դերի ընդլայնումը: Առանց վերջինիս վրա հիմնված հարկային քաղաքականության՝ դժվար է ունենալ զարգացած տնտեսություն որևէ երկրում: Այս գործառույթի ընդլայնման շնորհիվ միայն կարելի է ապահովել կայուն պետական եկամուտներ՝ խթանելով նաև տնտեսական գործունեությունը հանրապետությունում: Հիմնվելով միայն հարկերի ֆիսկալ գործառույթի վրա, հարկային քաղաքականությունը մեր հանրապետությունում չի կարող ապահովել տնտեսության երկարաժամկետ զարգացման նախադրյալներ: հարկերի խթանիչ գործառույթը կյանքի կոչելու համար նախևառաջ անհրաժեշտ է իրականացնել ինչպես հարկային քաղաքականության ուղղությունների, այնպես էլ հարկային համակարգի և գործարար միջավայրի բարելավման հետևողական միջոցառումներ:
3. Հոբքր և միջին ձեռներեցության խթանումը: Գաղտնիք չէ, որ փոքր ու միջին բիզնեսը հանդիսանում են ցանկացած տնտեսության կայուն հիմքը և այս ոլորտում պետության կարևորագույն առաքելությունն է հանդիսանում բարենպաստա հարկային դաշտ ապահովել դրա համար: Այս ոլորտի կայուն զարգացումը մեծապես կնպաստի պետության համար հետագա կայուն հարկային եկամուտների ծավալի ընդլայնմանը:
4. Տնտեսական նախաձեռնությունները խթանող հարկային համակարգի ձևավորումը և զարգացումը: Ներկայիս գործող հարկային համակարգը չի նպաստում ձեռնարկատիրական նախաձեռնությունների ընդլայնմանը: Ինովացիոն ոլորտներում վեճելուային կապիտալով բիզնես ծրարգրերի իրականացման ժամանակ նպատակահարմար կլինի առաջին մի քանի տարվա համար հարկային պարտավորություններից ազատել հարկատուներին, ինչը, կարծում ենք, որոշակիորեն կխթանի այս ոլորտում տնտեսական ակտիվությունը
5. Հարկային բեռի թեթևացումը: Տնտեսական ճգնաժամի արդյունքում համախառն պահանջարկի կրճատման ժամանակ, որպես կանոն, պետությունները նվազեցնում են հարկային բեռը՝ նպաստելով սպառման և ներդրումների աճին: Մասնավորապես, Ռուսաստանում շահութահարկի դրույքաչափը նվազեցվեց 24-ից մինչև 20 տոկոս: Մեր հանրապետությունում, ընդհակառակը, որևէ դրույքաչափի չփոփոխվեց, ավելին, նախկինում գործող եկամտահարկի և սոց.վճարի փոխարեն 2013 թվականից գործեց եկամտային հարկը, որի հարկային բեռը զգալի գերազանցում էր նշված երկու հարկատեսակի ունեցած բեռին: Սա ևս վկայում է, որ մեր հանրապետությունում միանշանակ կերպով կիրառվում է հարկերի ֆիսկալ գործառույթը: Կարծում ենք, որ հարկային բեռի ընդհանուր մակարդակի կրճատման նպատակով անհրաժեշտ է.
 - ապահովել հարկատուների համար հարկային ճնշման առավել հավասար մակարդակ,
 - նվազեցնել աշխատավարձի ֆոնդի վրա հարկային բեռը՝ այդ թվում, եկամտային հարկի գծով չհարկվող անձնական նվազեցման գումար սահմանելով,

¹ «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենք:

² Taxation trends in the European Union. Data for the EU Member States, Iceland and Norway 2013 edition.

- հնարավորություն ընձեռել հարկատուներին հարկման բազայից հանել տնտեսական գործունեության իրականացման համար բոլոր անհրաժեշտ և հիմնավորված ծախսերը,
 - կրճատել որոշ հարկատեսակների դրույքաչափերը՝ դրան զուգահեռ կրճատելով պետական բյուջեի անարդյունավետ ծախսերը:
6. Անուղղակի հարկերի տեսակարար կշռի ընդհանուր նվազեցումը: Ինչպես նախորդ գլխում կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ մեր հանրապետությունում անուղղակի հարկերի տեսակարար կշռը բավականին բարձր է, ինչ խոսում է կիրառվող հարկային քաղաքականության անկատարության և անարդյունավետության մասին: ԱԱՀ դրույքաչափը մեր հանրապետությունում դրա սահմանումից ի վեր մնացել է անփոփոխ՝ ինչը խոսում է այս հարկատեսակի սահմանման զուտ ֆիսկալ նպատակի մասին: Այս հարկատեսակի դրույքաչափի որոշակի նվազեցումը, կարծում ենք, կնպաստի տնտեսական ակտիվության աճին և հանրապետությունում ընդհանուր գների մակարդակի նվազեցմանը: Հաշվի առնելով, որ անուղղակի հարկերի իրական վճարողը՝ վերջին հաշվով, սպառողներն են հանձինս մեր ազգաբանկչության, ապա դրանց տեսակարար կշռի նվազեցումը՝ տնտեսական զարգացման ներկա փուլում օբյեկտիվ անհրաժեշտություն է՝ համախառն պահանջարկը և սպառումը խթանելու ուղղությամբ:
 7. Հարկման խթանիչ ձևի արմատավորումը և կիրառումը, ինչի համար անհրաժեշտ են հարկման բազայի ձևավորման փոփոխություններ, հարկերի դրույքների տարբերակում՝ կախված տնտեսական գործունեության տեսակից և եկամտի աղբյուրից: Հարկային քաղաքականության բարեփոխումները հարկավոր է ուղղորդել դեպի արտադրական, առևտրային ու այլ ծախսերի կրճատումը խթանելուն: Այս խնդիրը պետք է լուծվի ինչպես մակրոմակարդակում, այնպես էլ միկրոմակարդակում: Հարկերը ոչ թե պետք է ընկերությանը ստիպեն ավելի շատ ծախսեր կատարելու և ձևակերպելու, որպեսզի քիչ հարկեր վճարեն, այլև պետք է նպաստեն իրական տնտեսական ռեսուրսների խնայություններին: Կարծում ենք, շատ ճիշտ և խելամիտ մոտեցում կլինի ընկերության շահութահարկի գանձման դեպքում չհարկել շահույթի այն մասը, որն ապահովվել է ինքնարժեքի նվազեցման հաշվին: Սա, մի կողմից, կխթանի տնտեսվարող սուբյեկտների կողմից իրականացվող ներդրումները, իսկ մյուս կողմից, այլ հավասար պայմաններում, կնվազեցնի ապրանքների գները:
 8. «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով¹ սահմանված ամոտիզացիոն նվազագույն ժամկետների վերանայումը: Տնտեսության արդիականացման և վերազինման համար նպատակահարմար կլինի որոշակիորեն նվազեցնել այդ ժամկետները՝ կիրառելով արագացված ամորտիզացիա:
 9. Հարկային արտոնությունների արդյունավետության գնահատումը և դրա հիման վրա դրանց վերանայումը: Օրենսդրությամբ սահմանված բազմաթիվ արտոնությունների տնտեսական նպատակահարմարությունը պետք է ճշգրիտ գնահատվի և դրա արդյունքում՝ այդ արտոնությունները պետք է վերանայվեն և սահմանվեն բացառապես առանձին օրենքներով, որոնցում միաժամակ կսահմանվեն նաև դրանց արդյունավետության գնահատման և հսկողության կոնկրետ մեխանիզմներ: Այս քայլը, մեծապես կնպաստի սահմանվող հարկային արտոնությունների տնտեսական արդյունավետության բարձրացմանը: Հարկային արտոնությունները պետք է սահմանվեն բացառապես պետության ռազմավարական կարևորություն ունեցող կարևոր ոլորտների զարգացման, ճգնաժամերի հետևանքների հաղթահարման և այլ կարևոր նպատակներից ելնելով:
 10. Տարածքային համաչափ զարգացման ռազմավարական նպատակից ելնելով՝ հանրապետության որոշ մարզերում հարկային տարբերակված դրույքաչափերի կիրառումը: Հաշվի առնելով, որ հանրապետության հիմնական տնտեսական ներուժը կենտրոնացված է մայրաքաղաքում, իսկ հանրապետության մարզերից մարդկանց մեծ արտահոսք կա դեպի մայրաքաղաք՝ հարկերի արտոնյալ դրույքաչափերի սահմանումը, մասնավորապես, սահ-

¹ «Շահութահարկի մասին» ՀՀ օրենք:

մանամերձ մարզերի և աղետի գոտու տարածաշրջանի համար կնպաստի այս տարածքներում ձեռներեցեցության զարգացմանը, լրացուցիչ աշխատատեղերի ստեղծմանը, բնակչության արտահոսքի կրճատմանը և նրանց կենսամակարդակի բարձրացմանը:

11. Հաստատագրված և արտոնագրային վճարներով հարկվող գործունեությունների որոշ մասի տեղափոխումը դեպի հարկման ընդհանուր դաշտ: Հաստատագրված վճարներով հարկվող ոլորտները բավականաչափ շատ են, ինչը բացասաբար է անդրադառնում մեր երկրում հարկային քաղաքականության արդյունավետության և հարկման համահավասարության սկզբունքի կիրառման վրա: Հարկային հսկողության բավարար մեխանիզմներ նշակելով նպատակահարմար կլինի հնարավորինս կրճատել այդ ոլորտը:
12. Տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության բարձրացումը: Մասնավորապես, Հայաստանում հարկային համակարգի արդյունավետ կազմակերպման միջոցով կարելի խթանել արտադրություններում աշխատանքի արտադրողականությունը, ինչի համար որպես ելակետ, կարելի դիտարկել սպառման ֆոնդի կամ աշխատավարձի ֆոնդի և աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը: Վերջինս շատ կարևոր ցուցանիշ է՝ բնորոշելու արտադրական ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը: Այն որոշվում է բազմաթիվ գործոններով՝ աշխատողների որակավորմամբ, արտադրության միջոցների վիճակով, աշխատանքի կազմակերպվածության աստիճանով, արտադրության ինովացիոն բնույթով, կառավարման մակարդակի արդյունավետության մակարդակով և այլն:
13. Տնտեսության մեջ ինովացիոն ոլորտներում ներդրումների խթանումը՝ շահութահարկի նվազեցման միջոցով: Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման առումով, կարծում ենք, կարևոր քայլ կարող է հանդիսանալ (և ինչը արտասահմանյան շատ երկրներում լայնորեն կիրառվում է) շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում: Հարկերից մասնակի կամ ամբողջությամբ ազատումը կախված կլինի համապատասխան ներդրման ժամկետից: Սա մեծապես կխթանի ժամանակակից և հեռանկարային զարգացման ներդրումային ծրագրերի իրականացումը՝ ստեղծելով պետության համար հետագա լրացուցիչ հարկման բազա:

Հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման ոլորտում, անխոս, չափազանց մեծ է հարկային վարչարարության դերը, որի բարելավման արդյունքում պետք է ապահովվի նաև այդ ոլորտի ծախսերի կրճատում՝ ինչպես հարկային մարմնի, այնպես էլ հարկ վճարողների համար:

Կարծում ենք, որ հարկային վարչարարության ոլորտում բարեփոխումները պետք է ընթանան հետևյալ հիմնական ուղղություններով.

1. հարկային մարմնի հետ հարատուների շփումների կրճատում,
2. հարկային մարմին ներկայացվող հաշվետվությունների քանակի և պարբերականության կրճատում,
3. հաշվետվությունների մեջ արտացոլվող տեղեկատվության պարզեցում,
4. փոքր և միջին բիզնեսի համար հաշվետվողականության առավել պարզեցված կարգի սահմանում,
5. հարկային մարմինների աշխատակիցների համար նյութական խրախուսման այնպիսի համակարգի ներդրում, որոնք նվազագույնի կհասցնեն հովանավորչությունն այս ոլորտում,
6. հարկային մարմնի լիազորությունների ընդլայնում: Որպես հարկերից խուսափելու դեմ պայքարի արդյունավետ միջոց, կարծում ենք, կհանդիսանա հարկատուների ծախսերի և եկամուտների համապատասխանության վերահսկումը: Այս նպատակով՝ հարկային մարմնին անհրաժեշտ է օժտել բավարար լիազորություններով՝ կատարված ծախսերի և ապրելակերպի հիման վրա հարակտուների եկամուտների գնահատման անուղղակի եղանակների կիրառման համար: Թաքցվող եկամուտները հայտնաբերելու և դրանց գծով հարկերը զանձելու ուղղությամբ այս միջոցառումները մեր կարծիքով հաջողությամբ

կգործեն: Արտերկրի փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ փողերի լվացման և հարկերից խուսափելու դեմ պայքարում հարկային մարմիններն ունեն լայն իրավասություններ՝ նույնիսկ անբարեխիղճ հարկատուների եկամուտների վերաբերյալ ուղղակի տեղեկատվության աղբյուրների բացակայության պայմաններում: Այստեղ կարևորում ենք, օրենսդրորեն ամրագրել տարբեր կառույցների և կազմակերպությունների, մասնավորապես, նոտարների, անշարժ գույքի գործակալների, աճուրդների և սակարկությունների կազմակերպիչների, դիլերների և այլոց կողմից հարկային մարմինն պարբերաբար համապատասխան տեղեկատվության տրամադրման պարտավորությունները՝ ցանկացած անձի կողմից կատարվող տնտեսական գործարքների և կատարված ծախսերի մասին: Այս պրակտիկան գործում է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի հիման վրա և վերը նշված տեղեկատվությունը՝ պատկան մարմինները ներկայացնում են ՀՀ Կենտրոնական բանկ: Փողերի լվացման հիմնախնդրից պակաս կարևոր հիմնախնդիր չէ նաև հարկերից խուսափումը, ինչն, իր հերթին, կարող է տեղ գտնել հենց փողերի լվացման արդյունքում: Ուստի, առաջարկված միջոցառումներն այս ոլորտում կունենան բավական լուրջ հաջողություններ:

7. Հարկային ծառայողների պատասխանատվության, նրանց որակավորման ու արհեստավարժության մակարդակի նկատմամբ պահանջների խստացում, ինչի արդյունքում համակարգում կաշխատեն միայն բանիմաց և համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետները:
8. Հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացում, ավելորդ ստորաբաժանումների կրճատում, տվյալներ վերանշակման ավտոմատ համակարգերի և անձնակազմի կառավարման ժամանակակից համակարգի ներդրում,
9. Հարկային քաղաքականության մեջ հարկային վարչարարության ռազմավարության մշակում, որոնցով կսահմանվեն այս ոլորտում հարկային քաղաքականության գերակա նպատակները և դրանց իրագործումն ապահովող համալիր միջոցառումները:

Ամփոփելով, հարկ ենք համարում նշել, որ հանրապետության հարկային քաղաքականության պետական կարգավորման բարելավումը առաջիկա տարիներին պետք է ուղղված լինի վերոնշյալ հիմնախնդիրների լուծմանը, ինչը հնարավորություն կտա ձևավորել ժամանակակից ու տնտեսության ներկայիս իրավիճակին համապատասխանող մրցունակ հարկային համակարգ, իսկ հարկային քաղաքականության բարեփոխումների արդյունքում այն կվերածվի հզոր տնտեսական լծակի, որի միջոցով կապահովվի ինչպես պետության համար ցանկալի եկամուտների մակարդակ, այնպես էլ տնտեսության կայուն զարգացման բարենպաստ պայմաններ:

ÈàðéÚ² ¶²ÈàÚ²Û

ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý
íÝí»è³·ÇíáðÃÚ³Ý ÇÝèíÇíáðíÇ
³èãÇñ³Ýí

ã°í²Û ã²ðíøÆ úãíÆØ²È Í²è²í²ðáðØÀ ã²ðíøÆ úã°ð²íÆèí °í è²¼Ø²í²ð²Û Í²è²í²ð²Û Øà, °ÈÛ°ðÆ ÐÆØ²Û ìð²

Պարտքի կառավարման յուրաքանչյուր ռազմավարություն փոխզիջումների արդյունք է, որոնք թույլ են տալիս կամ միավորել բարդ համակցելի նպատակներն ու սահմանափակումները (ընդ որում, պարտադիր չէ՝ լավագույն ձևով), կամ սահմանել նորից պարտադիր չէ օպտիմալ, սակայն՝ ընթացիկ պահի կարիքներն արտացոլող գերակայությունների համակարգ: Բոլոր այս գործոնների վերլուծությունը թույլ է տալիս սահմանել պարտքի կառավարման հիմնական նպատակներն ու սահմանափակումները, դրանց միջև հաստատել որոշակի հավասարակշռություն, տեսնել գլխավոր ուղղությունը և այդ հիմքի վրա ձևավորել ուղենիշային փաթեթը:

Կարևոր է նկատել, որ գործնականում պարտքի կառավարման օպտիմալ մեթոդի որոշման խնդրի լուծման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները: Առաջինը, անհրաժեշտ է սահմանել, թե որոնք են ռիսկի մակարդակները, և դրանց շարքում որոնցից առաջին հերթին պարտքի կառավարիչը պետք է ապահովագրվի: Երկրորդը, այս ոլորտում գոյություն չունի բոլոր խնդիրների համար օպտիմալ լուծում ապահովող մոտեցում: Պարտքային պորտֆելի ցանկացած օպտիմալացում ըստ մեկ փոփոխականի որոշվում է դրա հիմքում դրված սցենարի նախադրյալներով: Եթե դեպքերը այլ զարգացում ստանան, փոխառուի կորուստները հսկայական կլինեն: Այդ իսկ պատճառով, մեկ ցուցանիշի լավագույն արժեքին ձգտելու, օրինակ՝ ռիսկի տրված մակարդակի դեպքում արժեքի մինիմիզացման կամ տրված արժեքի դեպքում ռիսկի մինիմիզացման համար ավելի լավ է ձևավորել այսպես կոչված «կայուն» պորտֆելներ, որոնք այնպիսի կառուցվածք ունեն, որը բոլոր հնարավոր սցենարների դեպքում ընդունելի ցուցանիշներ է ապահովում: Երրորդը, պարտքի կառավարիչը պարտավոր է մանրակրկիտ կերպով հետազոտել իր ներդրողներին ու վարկատուներին: Ներդրողներին ու պոտենցիալ վարկատուներին տեղեկատվության ճիշտ ժամանակին ու ամբողջական ծավալով ներկայացումը կարող է կարևոր նախապայման հանդիսանալ փոխառության արժեքի նվազեցման համար: Մեկ այլ նպատակ կարող է հանդիսանալ պարտքի արժեքի մինիմիզացիան: Եթե պարտքը կազմված է տարբեր արժույթներով արտահայտված վարկերից, ապա դրա արդյունավետ արժեքը կարող է չափվել միջին կշռված տոկոսադրույքով՝ ճշգրտված արտարժույթային փոխարժեքների փոփոխության չափով: Ոչ պակաս կարևոր է նաև ժամանակահատվածը, որի ընթացքում պարտքի կառավարիչը ձգտում է մինիմիզացնել դրա արդյունավետ արժեքը:

Վերը ներկայացված դիտարկումները հաշվի առնելով, կառուցվել են պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մոդելներ, որոնց շրջանակներում փորձ է արվում նկարագրել պարտքի կառավարման օպտիմալ տարբերակի ընտրության հիմնախնդիրը՝ որոշումների կայացման երկու հաջորդական մակարդակների (ռազմավարական և մարտավարական) փոխապայմանավորվածության և փոխկապվածության սկզբունքը հաշվի առնելով:

Պարտքի կառավարման օպերատիվ մոդելը նվիրված է տարբեր վարկային շուկաներում ֆինանսական միջոցների նվազագույն ծախսերով ներգրավման խնդրի լուծման ուղիների որոնմանը: Սահմանափակումների համախումբը հետևյալն է.

$$\sum_{i=1}^k a_{it} x_{it} \leq P_{ik}, \quad \forall t \in [1, T], k \in [1, T] \text{ համար} \quad (1.1)$$

$$\sum_{i=1}^N a_{it} x_{it} = L_t, \quad \forall t \in [1, T] \text{ համար} \quad (1.2)$$

$$D_{it} \geq 0; \quad \forall i \in [1, N], \forall t_0 \in [1, T] \text{ համար,} \quad (1.3)$$

որտեղ $\sum_{t=1}^{t_0} a_{it} x_{it} = D_{it}, \forall i \in [1, N]; \forall t_0 \in [1, T]$ համար,

$$\sum_{t=1}^{t_k} x_{it} = 0, \forall i \in [1, N] \text{ համար} \quad (1.4),$$

որտեղ X_{it} -ն t ժամանակահատվածում i -րդ ֆինանսական գործիքի ներգրավման կամ մարման գումարն է, $A = [a_{it}]_{N \times T}$ գործառնությունների «թույլատրման» մատրիցը, P_{ik} միջոցների ներգրավման սահմանաչափն է, L_t -ն փոխառու միջոցների ներգրավման կամ մարման մեծությունը: (1.1)-(1.4) սահմանափակումների համախումբը կանվանենք մոդել:

Անցնենք օպերատիվ մոդելի նպատակային ֆունկցիայի ձևակերպմանը: Ընդհանուր առմամբ, առաջարկվում են երեք հիմնական նպատակային ֆունկցիաներ.

- I. Պարտքի սպասարկման ծախսերի մինիմիզացման նպատակային ֆունկցիա:
- II. Ռիսկերի մակարդակի հաշվառման կամ տվյալ ֆինանսական գործիքի նախընտրելիության վրա հիմնվող նպատակային ֆունկցիա:
- III. Խառը տարբերակ:

Նպատակային ֆունկցիա I. Դժվար չէ նկատել, որ նպատակային ֆունկցիան ստանում է հետևյալ ընդհանուր տեսքը.

$$S(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N S_{it} D_{it} \rightarrow \min,$$

որտեղ D_{it} – պարտքի մեծությունն է՝ ըստ i -րդ գործիքի, t -րդ ժամանակահատվածում:

Այսպիսով, ըստ նպատակային ֆունկցիա I-ի իրականացվելիք հաշվարկների արդյունքը կհանդիսանա փոփոխուն ծախսերի S'' գումարը, որը ավելացնելով փոխառության համակարգի ձևավորման՝ տվյալ ժամանակահատվածում արվելիք S' ծախսերին, կստանանք դիտարկվող ժամանակահատվածում պարտքի սպասարկման ծախսերի S մեծությունը:

Նպատակային ֆունկցիա II. Հաշվի առնելով փոխառության (վարկի) ռիսկի (նախընտրելիության) մակարդակը, ներմուծենք փոխառության միավորի հաշվով ռիսկի մակարդակի հասկացությունը՝ V_{it} : Նպատակային ֆունկցիան փոխառության նախընտրելիության գաղափարի օգտագործման հիման վրա կառուցելու պարագայում անհրաժեշտ է ներմուծել նախընտրելիության ֆունկցիա հասկացությունը: Այն նշանակենք G_{it} : Այնուհանդերձ, ինքնըստինքյան հասկանալի է, որ V_{it} և G_{it} մեծությունները միմյանց հակադիր են: Այսինքն, ռիսկերի մակարդակը հաշվի առնելու պայմաններում նպատակային ֆունկցիան կբնութագրվի հետևյալ կերպ.

$$R(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N v_{it} D_{it} \rightarrow \min \quad (1.5), \text{ որտեղ } v_{it} \in [0;1].$$

Նախընտրությունների (g_{it}) հետ կապված ֆունկցիան հակադարձ է, հետևաբար մոդելի նպատակային ֆունկցիան պետք է մաքսիմալացվի, այսինքն՝

$$Q(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N g_{it} D_{it} \rightarrow \max \quad (1.6), \text{ որտեղ } g_{it} \in [0;1]:$$

Լուծման արդյունք են հանդիսանում փոխառության համակարգի համար ստացված v_{it} կամ g_{it} որոշակի քանակական գնահատականները:

Նպատակային ֆունկցիա III. Այս դեպքում դիտարկվում է $S(x)$ և $R(x)$ ֆունկցիաների հենքի վրա կառուցված խառը նպատակային ֆունկցիան: Սկզբունքորեն ընդունելի է այն պնդումը, որ շուկայում ֆինանսական ռիսկերի աճին համընթաց փոխառությունների գինն աճում է: Իսկ թողարկողի համար, որպես կանոն, փոխառության զնի բարձրացումը նշանակում է բյուջետային բեռի ավելացում: Ըստ այդմ, խառը նպատակային ֆունկցիան կարելի է ձևակերպել հետևյալ կերպ.

$$f(x) = \sum_{t=1}^T \sum_{i=1}^N v_{it} s_{it} D_{it} \rightarrow \min \quad (1.7),$$

Դժվար չէ հասկանալ, որ նշված ֆունկցիան թույլ է տալիս հաշվի առնել ղեկավարության նախընտրությունները և փոխառության գինը:

Պետական պարտքի ռազմավարական կառավարման մոդելը կառուցված է պետական պարտքի ռազմավարական կառավարման գերակայություններին և յուրահատկություններին ներդրումային նախագծերի հիմնավորման դիմամիկ մեթոդների հարմարեցման հիմքի վրա: Ի սկզբանե հարկ է հստակեցնել, որ օպերատիվ մոդելից ռազմավարական մոդելի հիմնական տարբերությունը ներգրավվող փոխառությունների օգտագործման ուղղությունների մեջ է: Ըստ այդմ, պետական պարտքի կառավարման ռազմավարական մոդելի շրջանակներում ենթադրվում է, որ փոխառու միջոցների ներգրավման գլխավոր նպատակը պետական նշանակություն ունեցող և երկրի սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գերակայություններից բխող ներդրումային նախագծերի (և առաջին հերթին՝ ենթակառուցվածքային բնույթ ունեցող) իրականացման ֆինանսավորումն է:

Այսպիսով, ռազմավարական մոդելի շրջանակներում սահմանվում են հետևյալ նպատակները. պարտքի սպասարկման ծախսերի նվազագույն մակարդակի ապահովում, բյուջեի եկամուտների առավելագույն մակարդակի ապահովում, ներդրումային նախագծերի առավելագույն ծավալի իրականացում, t' ժամանակահատվածում բյուջետային պակասուրդի կամ հավելուրդի որոշակի պլանային $L_{t'}$ մակարդակի ապահովում:

Ընդհանուր առմամբ, խնդիրը կարելի է մեկնաբանել որպես բյուջեի ֆինանսավորման հնարավորությունների սահմաններում տեղավորվող ներդրումային տարբեր ծրագրերի համախմբության ընտրություն:

Արդյունքում, ներկայացվող մոդելում նպատակային ֆունկցիան կունենա հետևյալ սահմանափակումները.

$$0 \leq X_g \leq 1, \quad g \in [1; E] \quad (1.8), \quad X_g - \text{ն ամբողջ թիվ է,}$$

$$L_{t'} \geq \min L_{t'}, \quad (1.9), \quad R_{DT'} \geq \sum_{t'=1}^{T'} L_{t'-1} (1 + S_{t'}) \quad (1.10),$$

որտեղ՝ $\min L_{t'}$ -ն պետական պարտքի սահմանային մեծությունն է t' -րդ ժամանակահատվածում, $R_{DT'}$ -ն պլանային T' ժամանակաշրջանի ընթացքում պարտքի սպասարկման ծախսերի հանրագումարն է:

Սողելի նպատակային ֆունկցիան կլինի՝

$$L_{t'} = M_{t'} - R_{t'} + \sum_{g=1}^E Z_{t'g} x_g + L_{t'-1} (1 + S_{t'}) \rightarrow \max \quad (1.11),$$

որտեղ՝ $M_{t'}$ -ն բյուջեի եկամուտներն են t ժամանակահատվածում, $R_{t'}$ -ն բյուջեի ծախսերը t ժամանակահատվածում, $Z_{t'g}$ դրամական հոսքերն են, $S_{t'}$ -ն t' -րդ ժամանակահատվածում փոխառության միջին գինը:

Պետական պարտքի կառավարման խնդիրների լուծման գործընթացում դիտարկված երկու մոդելների օգտագործման հիմնական սկզբունքը դրանց փոխլրացումն է: Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում առանձնացնել դրանցից յուրաքանչյուրի դերը պետական պարտքի օպտիմալ դիմամիկայի պլանավորման գործընթացում:

Այսպիսով, պետական պարտքի կառավարումը, ընդհանուր մոտեցմամբ, պայմանավորվում է երկու հիմնական մակարդակներով.

1. ռազմավարական մակարդակ. պետական պարտքի ծավալը և կառուցվածքը կարգավորող հիմնական բյուջետային ցուցանիշների պլանավորում,

2. մարտավարական մակարդակ. փոխառությունների կառուցվածքի ձևավորման գործընթացում կոնկրետ պայմանագրերի ընտրություն և կնքում:

Առաջարկվող պետական պարտքի կառավարման մոդելավորման երկաստիճան մոտեցումը պարտքի կառավարման գործընթացի համար ապահովում է դրա տրամաբանական ամբողջականությունը՝ սկզբում տեղի է ունենում ռազմավարության ընտրությունը, այնուհետև ռազմավարության իրականացման գործընթացում կայացվում են մարտավարական որոշումները: Այս հանգամանքը պայմանավորում է ներկայացված մոդելային կառուցվածքի և դրա գործադրմամբ պետական պարտքի կառավարման առաջարկվող մեխանիզմի գործնական նշանակությունն ու արդիականությունը:

ՀՀ պետական պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մոդելների օգտագործման արդյունք է հանդիսանում պլանավորման յուրաքանչյուր ժամանակահատվածի համար որոշված փոխառության ֆինանսական գործիքների հավաքածուն: Մոդելների գործարկման շրջանակներում ստացված լուծումների հիման վրա կարելի է սահմանել այն պայմանները, որոնցից ելնելով անհրաժեշտ է ձևավորել կոնկրետ փոխառության պայմանագրերը:

Պարտքի կառավարման ռազմավարական մակարդակի մոդելը նախատեսված է առաջին հերթին մի քանի ֆինանսական ժամանակահատվածների համար բյուջեի ձևավորման խոշորամասշտաբ պլանների կառուցման համար, յուրաքանչյուր պլանի համար իր բյուջետային բնութագրիչների սահմանմամբ, ինչպես նաև՝ բյուջեի կատարման տվյալ տարբերակի իրականացման համար անհրաժեշտ ներդրումային նախագծերի որոշակի փաթեթի ձևավորմամբ:

Պետական պարտքի կառավարման մարտավարական մակարդակի մոդելը հիմնվում է ռազմավարական մակարդակի մոդելի շրջանակներում իրականացված հաշվարկների արդյունքում ստացված և այլ ընթացիկ տեղեկատվության վրա: Դրա օգտագործման արդյունք է հանդիսանում պարտքի սպասարկման ծախսերի նվազագույն հնարավոր մեծության դուրսբերումը՝ հիմնվելով պարտքի կառավարման մարմինների կողմից մոդելում ներմուծվելիք տեղեկատվության վրա: Տվյալ դեպքում կարելի է խոսել ծախսերի մինիմիզացման խնդրի մասին՝ հաշվի առնելով փոխառությունների կոնկրետ համակարգի հնարավորությունները, փոխառության շուկայի վիճակը և փոխառու միջոցների ներգրավման պլանային հանձնարարությունը:

Ուշագրավ է, որ մարտավարական մակարդակում մոդելի լուծման արդյունքում ստացվելիք պարտքի սպասարկման ծախսերի մեծության ցուցանիշը օգտագործվում է ռազմավարական մոդելի հաջորդ մոտարկման կամ գործառնության հաջորդ փուլի ընթացքում:

Վերը նշվածը հաշվի առնելով, պետք է փաստել, որ անհրաժեշտ տվյալների և ծրագրային ապահովման առկայության պարագայում, պետական պարտքի կառավարման ռազմավարական և օպերատիվ մոդելների կիրառման արդյունքում կարելի է ստանալ բյուջեի ձևավորման խոշորամասշտաբ պլանների ցանկացած հավաքածու՝ կոնկրետացման կամայական աստիճանով՝ ընդհուպ մինչև կոնկրետ փոխառությունը կամ վարկը՝ իրենց համապատասխան բոլոր բնութագրիչներով: Այս հանգամանքը պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման, պարտքի և բյուջեի կայունության ապահովման կարևոր նախադրյալ է հանդիսանում: Ըստ այդմ, նկարագրված մոդելները կարելի է դիտարկել որպես պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծման կարևոր գործիքներ:

ՀՀ ԿՈՏԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ ԿՈՏԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՕՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ ԿՈՏԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հոդվածում ներկայացվել է պետական պարտքի կառավարման արդյունավետության ապահովման ընթացակարգ, որը հիմնված է պետական պարտքի կարգավորման գործընթացներով պայմանավորված օպերատիվ և ռազմավարական մակարդակների մոդելների օգտագործման վրա: Առաջարկվող պետական պարտքի կառավարման մոդելավորման երկաստիճան մոտեցումը պարտքի կառավարման գործընթացի համար ապահովում է դրա տրամաբանական ամբողջականությունը, կապված՝ ռազմավարության ընտրության, և այնուհետև դրա իրականացման գործընթացում կայացվող մարտավարական որոշումները: Միաժամանակ հոդվածում կարևորել ենք պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման և այդ ոլորտում առկա որոշակի խումբ հիմնահարցերի լուծման անհրաժեշտությունը, որոնք պայմանավորում են պարտքի կառավարման ռազմավարական և մարտավարական մակարդակներում առկա խնդիրների տարանջատման, դրանց լուծման օպտիմալ ուղիների նախանշման ու ստացված արդյունքների փոխկապակցման և փոխհամաձայնեցման կարևորությունը:

ՀՀ ԿՈՏԱՆԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԵՐԿՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՕՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԿՆԵՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ОПТИМАЛЬНОЕ УПРАВЛЕНИЕ ГОСУДАРСТВЕННЫМ ДОЛГОМ НА ОСНОВЕ МОДЕЛЕЙ ОПЕРАТИВНОГО И СТРАТЕГИЧЕСКОГО УПРАВЛЕНИЯ

ЛЮСЯ ГАЛОЯН

аспирант Института экономики
им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье представлена процедура обеспечения эффективности управления государственным долгом, основанная на использовании связанных с процессами регулирования государственного долга моделей оперативного и стратегического управления государственным долгом. Предложенный двухуровневый подход к моделированию управления государственным долгом обеспечивает логическую целостность процесса управления долгом путем выбора стратегии, а затем принятия тактических решений в процессе реализации стратегии. Одновременно в статье подчеркнута необходимость повышения эффективности управления государственным долгом и решения существующей в этой области определенной группы проблем, обуславливающих важность разделения задач на стратегическом и тактическом уровнях управления долгом, предопределения оптимальных путей их решения и полученных результатов во взаимосвязи и взаимосогласованности.

Ключевые слова: управление государственным долгом, оптимальный метод управления долгом, оперативная модель управления долгом, стратегическая модель управления долгом, эффективность управления, долговой портфель, целевая функция, ограничения.

THE OPTIMAL MANAGEMENT OF PUBLIC DEBT BASED ON THE OPERATIONAL AND STRATEGIC MODELS OF DEBT MANAGEMENT

LUSYA GALOYAN

Ph.D. Student
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

The article presents a procedure to ensure efficient management of public debt that is based on utilizing models at strategic and operational levels related to the processes of regulating debt management. The proposed two-level approach of modeling the public debt management ensures its logical completeness related to the: strategic choice and then, tactical decisions made while implementing the strategy. Meanwhile, the articles stresses the necessity to increase the efficiency of public debt management and to address some issues in this area that explain the importance of addressing the issues of public debt management at strategic and tactical levels separately, outlining the optimal approaches to address them; and importance of interaction and correlation of results.

Keywords: public debt management, optimal method of debt management, operational model of debt management, strategic model of debt management, management efficiency, debt portfolio, objective function, constraints.

Էականության գնահատման համար մշակված սանդղակի գոյությամբ¹ (տե՛ս թիվ 1 աղյուսակը): Սակայն վերջինիս գլխավոր հատկությունը, այնուամենայնիվ, դրա համապարփակությունն է, որը դրսևորվում է ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ տեղի ունեցող փոփոխությունների գնահատմամբ:


Աղյուսակ 1

Կառուցվածքային փոփոխությունների (կամ տարբերությունների) էականության գնահատման սանդղակն ըստ Ռյաբցևի ինդեքսի²

Արժեքների միջակայք	Կառուցվածքային տարբերությունների չափի բնութագիրը
0.000 - 0.030	Կառուցվածքների նույնություն
0.031 - 0.070	Կառուցվածքային տարբերությունների շատ ցածր մակարդակ
0.071 - 0.150	Կառուցվածքային տարբերությունների ցածր մակարդակ
0.151 – 0.300	Կառուցվածքային տարբերությունների էական մակարդակ
0.301 – 0.500	Կառուցվածքային տարբերությունների զգալի մակարդակ
0.501 – 0.700	Կառուցվածքային տարբերությունների շատ զգալի մակարդակ
0.701 – 0.900	Կառուցվածքների հակադարձ տիպ
0.901 և բարձր	Կառուցվածքների լրիվ հակադարձություն

Գծապատկեր

ՀՀ ՀՆԱ-ի օգտագործման 2000-2011թթ. կառուցվածքը³



Եվրոպայի զարգացած երկրները զուտ արտահանման ցուցանիշով ունեն ինչպես դրական, այնպես էլ բացասական արժեքներ: Հարկ է նշել Ադրբեջանի (32.9%), Ղազախստանի (22.3%) և Ռուսաստանի (8.6%) մակարդակները: Իսկ ինչպիսի՞ փոփոխություններ է կրել Հայաստանի ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքը XXI դարի առաջին տասնամյակում: Գծապատկերի հիման վրա կարելի է բացահայտել հետևյալ օրինաչափությունները.

¹ Статистика Региональная статистика / Под ред. проф. В.М. Рябцева, засл. экон. РФ Г.И. Чудилина – М., 2001, էջ 44:
² Статистика Региональная статистика: Учеб. / Под. ред. Е. Заровой – М.: Финансы и статистика, 2006, էջ 60:
³ 2012 և 2013 թթ. մակրոցուցանիշները դեռևս հաշվարկված չեն:

- ուսումնասիրվող ժամանակահատվածում կայուն են պետական հիմնարկների վերջնական սպառման ծախսերի կշիռները, իսկ համախառն կուտակման տեսակարար կշիռը 2000թ. 18.6%-ից 2011թ. դարձել է 27.2%¹,
- զուտ արտահանման բաժնեմասի դինամիկայի մեջ գրեթե համարժեք են արտահանման և ներմուծման փոփոխությունների ազդեցությունները: Եթե արտահանման բաժնեմասը 2000թ. 23.3%-ից 2005թ. աճում է մինչև 28.2%, ապա ներմուծման բաժնեմասը նույն ժամանակահատվածում 50.3%-ից դառնում է 42.3%: հետագա տարիներին էականորեն նվազում է միայն արտահանման բաժնեմասը՝ 2011թ. դառնալով 23.7%՝ կրկնակի փոքր լինելով ներմուծման բաժնեմասից,
- 2000-2005թթ. զգալիորեն նվազել է տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսերի տեսակարար կշիռը՝ 22.7 տոկոսային կետով, սակայն հետագայում վերականգնում է նախկին դիրքերը՝ ընդհանուրի մեջ կազմելով 83.4%,
- ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքային տեղաշարժերի էականությունը Ռյաբցևի ինդեքսի միջոցով գնահատելիս նկատում ենք, որ 2000-2005թթ. արձանագրված կառուցվածքային փոփոխություններն ($J_{R_{05/00}} = 0.130$) ավելի ազդեցիկ էին, քան 2005-2011թթ. ($J_{R_{11/05}} = 0.061$) տեղաշարժերը: Ըստ Ռյաբցևի ինդեքսի ստացվում է, որ առաջին հնգամյակի տեղաշարժերը գնահատվում են որպես ցածր, հաջորդ վեցամյակինը՝ շատ ցածր, որն էլ տասնմեկամյա կտրվածքով ապահովեց կառուցվածքային փոփոխությունների շատ ցածր մակարդակ ($J_{R_{11/00}} = 0.075$):

Քանի որ ՀՆԱ-ի օգտագործման վերջին տարիների կառուցվածքի ըստ բաղադրիչների տեղաշարժերը գնահատվեցին որպես շատ ցածր, ապա կարելի է կատարել դրա կանխատեսում առաջիկա տարիների համար: Կանխատեսումը իրականացնենք *անցման մատրիցների* մեթոդով համակցության սկզբնական և վերջնական կառուցվածքների մասին տեղեկատվության հիման վրա: S_0 -ն և S_1 -ն ՀՆԱ-ի օգտագործման կառուցվածքի վեկտորներն են համապատասխանաբար 2007-2009 և 2010-2012թթ. համար՝

$$\sum_{i=1}^m S_i^0 = \sum_{i=1}^m S_i^1 = 100\%:$$

Առաջին հերթին կազմենք P' օժանդակ աղյուսակ, որի գլխավոր անկյունագծի տարրերը հաշվարկվում են որպես՝ $P' = \min \{S_i^0, S_i^1\}$, $i = 1, \dots, m$: Արդյունքում մնում են նախկին կառուցվածքի «չօգտագործված» տարրեր (ըստ տողերի անհամաձայնեցվածություն)՝ $\Delta_i = S_i^0 - P'_{ii}$, $i = 1, \dots, m$:²

¹ Տե՛ս Ենգիբարյան Ն., ՀՆԱ կառուցվածքի և դինամիկայի վիճակագրական վերլուծությունը, ՀՀ և ՌԴ տնտեսությունների նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, «Տնտեսագետ», 2011, էջ 531:

² Տե՛ս Статистика: учебник / Л.П. Харченко, В.Г. Ионин, В.В. Глинский и др.; под ред. канд. экон. наук, проф. В.Г. Ионина. – 3-е изд., перераб. и доп. – М.: ИНФРА-М, 2008, էջ 126-127:

Անցման աղյուսակի ցուցանիշների հաշվարկը

Ցուցանիշ	2007-2009թթ. միջին, %	2010-2012թթ. միջին, %	Օժանդակ աղյուսակ (P')					Δ _i	ξ _j	Անցման աղյուսակ				
	S _i ⁰	S _i ¹	SS	ՊՅ	ՀԿ ¹	Ա ²	Ն ³			P' _{i1}	P' _{i2}	P' _{i3}	P' _{i4}	P' _{i5}
ՎՍԾ ՏՏ ⁴	74.3	84.3	74.3					0	10.0	74.3	0	0	0	0
ՎՍԾ ՊՅ ⁵	11.2	13.0		11.2				0	1.8	0	11.2	0	0	0
Համախառն կուտակում	37.8	28.0			28.0			9.8	0	6.0	1.1	28.0	2.7	0
Արտահանում	17.7	22.1				17.7		0	4.4	0	0	0	17.7	0
Ներմուծում	-41.0	-47.4					-47.4	6.4	0	4.0	0.7	0	1.7	-47.4
Ընդամենը	100.0	100.0	-	-	-	-	-	16.2	16.2	-	-	-	-	-

Ոչ լրիվ են լրացված նաև հաջորդ կառուցվածքի տարրերը, իսկ սյունակների անհամաձայնեցվածությունները կարելի է որոշել հետևյալ բանաձևով՝ $\xi_j = S_j^1 - P'_{ij}$, $i=1, \dots, m$: Կառուցվածքի տողերի «չօգտագործված» մասերը (Δ_i) բաշխվում են սյունակների անհամաձայնեցվածություններին համամասնորեն՝

$$P'_{ij} = \Delta_i \frac{\xi_j}{\sum_j \xi_j} :$$

Օրինակ՝ անցման աղյուսակի 3-րդ տողի սյունակների արժեքները որոշվում են հետևյալ կերպ.

$$P'_{31} = \Delta_3 \frac{\xi_1}{\sum_j \xi_j} = 9.8 \cdot \frac{10.0}{16.2} = 6.0,$$

$$P'_{32} = \Delta_3 \frac{\xi_2}{\sum_j \xi_j} = 9.8 \cdot \frac{1.8}{16.2} = 1.1 \text{ և}$$

$$P'_{34} = \Delta_3 \frac{\xi_4}{\sum_j \xi_j} = 9.8 \cdot \frac{4.4}{16.2} = 2.7:$$

Այնուհետև հաշվարկվում են անցման մատրիցի տարրերը: Օրինակ՝ առաջին տողի արժեքները որոշվում են հետևյալ կերպ՝

$$P_{1j} = \frac{P'_{1j}}{S_0^1} = (74.3 \ 0.0 \ 0.0 \ 0.0 \ 0.0) / 74.3 = (1.0 \ 0.0 \ 0.0 \ 0.0 \ 0.0),$$

իսկ երրորդինը՝

1 Համախառն կուտակում:
 2 Արտահանում:
 3 Ներմուծում:
 4 Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր:
 5 Պետական հատվածի վերջնական սպառման ծախսեր:

$$P_{3j} = \frac{P'_{3j}}{S_0^3} = (6.0 \ 1.1 \ 28.0 \ 2.7 \ 0.0) / 37.8 = (0.159 \ 0.029 \ 0.741 \ 0.071 \ 0.0):$$

Այստեղից էլ, անցման մատրիցն ունի հետևյալ տեսքը՝

$$P_{ij} = \begin{pmatrix} 1.0 & 0.0 & 0.0 & 0.0 & 0.0 \\ 0.0 & 1.0 & 0.0 & 0.0 & 0.0 \\ 0.159 & 0.029 & 0.741 & 0.071 & 0.0 \\ 0.0 & 0.0 & 0.0 & 1.0 & 0.0 \\ -0.098 & -0.017 & 0.0 & -0.041 & 1.156 \end{pmatrix}$$

Վերջապես որոշենք ՀՀ ՀՆԱ-ի 2013-2015թթ. միջին կառուցվածքը՝

$$\begin{pmatrix} 84.3 \\ 13.0 \\ 28.0 \\ 22.1 \\ -47.4 \end{pmatrix} \times \begin{pmatrix} 1.0 & 0.0 & 0.0 & 0.0 & 0.0 \\ 0.0 & 1.0 & 0.0 & 0.0 & 0.0 \\ 0.159 & 0.029 & 0.741 & 0.071 & 0.0 \\ 0.0 & 0.0 & 0.0 & 1.0 & 0.0 \\ -0.098 & -0.017 & 0.0 & -0.041 & 1.156 \end{pmatrix} = \begin{pmatrix} 93.4 \\ 14.6 \\ 20.7 \\ 26.1 \\ -54.8 \end{pmatrix}$$

Ընդհանրացված տեսքով նշենք, որ ստացված արդյունքները հուսադրող չեն, քանզի ՀՆԱ-ի կառուցվածքում կշարունակի աճել վերջնական սպառման ծախսերի բաժնեմասը, հատկապես տնային տնտեսությունների ծախսերը: Դրան հակառակ, աստիճանաբար անկում կապրի կապիտալի կուտակման գործընթացը: Իսկ ինչ վերաբերում է ներմուծման մասնաբաժնին, ապա այդ բաղադրիչը, ամենայն հավանականությամբ, կվերականգնի զրոյական թվականների մակարդակը՝ գերազանցելով ՀՆԱ-ի 50%-անոց շեմը:

Մեծագույն օրգանիզմ, և.ա.

ԺՄԵՆՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻ ԻՑԻՆՈՒՄՆԵՐԻ

ԺՄԵՆՆԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒՄԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԻ ԻՑԻՆՈՒՄՆԵՐԻ

Հոդվածում լուսաբանվել են հարցեր, որոնք վերաբերում են ՀԱՍ-ի ըստ բաղադրիչների վերլուծության օգտագործման մեթոդին, որը հնարավորություն է տալիս բացահայտել, թե ովքեր են ապրանքների և ծառայությունների վերջնական սպառողները: Հայաստանի ՀԱՍ-ի օգտագործման 2011թ. կառուցվածքը համեմատվել է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների ցուցանիշների հետ: ՀԱՍ-ի օգտագործման կառուցվածքային տեղաշարժերի էականությունը գնահատվել է Ռյաբցևի ինդեքսի միջոցով: Կատարվել է ՀԱՍ-ի օգտագործման կառուցվածքային բաղադրիչների կանխատեսում անցման մատրիցների մեթոդով:

ՀԱՍ-ի կառուցվածքի փոփոխությունները 2011 թ. ՀԱՍ-ի կառուցվածքը համեմատվել է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների ցուցանիշների հետ: ՀԱՍ-ի օգտագործման կառուցվածքային տեղաշարժերի էականությունը գնահատվել է Ռյաբցևի ինդեքսի միջոցով: Կատարվել է ՀԱՍ-ի օգտագործման կառուցվածքային բաղադրիչների կանխատեսում անցման մատրիցների մեթոդով:

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ СТРУКТУРЫ ИСПОЛЬЗОВАНИЯ ВВП

НАРИНЕ ЕНГИБАРЯН, к.э.н.

Армянский государственный
экономический университет

Аннотация

В статье освещены вопросы, касающиеся использования метода анализа ВВП по компонентам, позволяющего выявить конечных потребителей товаров и услуг. Рассмотрена структура использования ВВП Армении в 2011г. в сравнении с показателями как развивающихся, так и развитых стран. Существенность структурных сдвигов в использовании ВВП оценена с помощью индекса Рябцева. Осуществлен прогноз структурных составляющих использования ВВП методом матрицы перехода.

Ключевые слова: метод конечного использования ВВП, расходы конечного потребления, валовое накопление, экспорт, импорт, индекс Рябцева, расходы конечного потребления домашних хозяйств, расходы конечного потребления государственного сектора.

STATISTICAL ANALYSIS OF COMPOSITION OF GDP (EXPENDITURE BY GDP COMPONENTS)

NARINE YENGBARYAN, Candidate of Sciences (Economics)

Armenian State University of Economics

Abstract

The article covers issues related to GDP by expenditure components' analysis that allows identifying who are the final users of goods and services. Composition of GDP (Expenditure by GDP Components) of Armenia for the period 2011 is compared with the respective compositions of GDP of both developing and developed nations. Ryabtsev Index is used to measure disparities in the structure. Transition matrix estimation and forecasting method is used with respect to GDP composition.

Keywords: GDP by expenditure the components' method, final consumption expenditure, gross capital formation, export, import, Ryabtsev Index, household final consumption expenditure, Government final consumption expenditure.

ՀՀ ԱԿՏԻ ՎԵՐՈՒՄ

ՀՀ ԱԿՏԻ ՎԵՐՈՒՄ

ՀՀ ԱԿՏԻ ՎԵՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՐԱՐՈՒՄ ԵՐԱՆՈՒՄ

Անշարժ գույքի շուկան ազգային շուկայական տնտեսության այնպիսի ոլորտ է, որը դրանում ներառված օբյեկտների, շուկայում գործող տնտեսվարող սուբյեկտների, դրանց կողմից իրականացվող գործընթացների, այսինքն՝ արտադրության կազմակերպման, անշարժ գույքի օբյեկտների փոխանակության, շուկայի կառավարման գործընթացների և շուկայի գործունեությունն ապահովող մեխանիզմների (շուկայի ենթակառուցվածքներ) համախումբ է:

Համաշխարհային ճգնաժամը բացասական ազդեցություն է ունեցել ՀՀ-ում ոչ միայն շինարարության ճյուղի կողմից տրվող արդյունքի ծավալների, այլև անշարժ գույքի շուկայի վրա: Անհրաժեշտ է նշել, որ ՀՀ անշարժ գույքի շուկայում իրավիճակը սկսեց վատթարանալ 2008թ. ամռան վերջից, այսինքն՝ գրեթե այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում սկսվեց համաշխարհային ֆինանսական ճգնաժամը:


Ընդհանուր առմամբ, ՀՀ անշարժ գույքի շուկայում տեղի ունեցող զարգացումները պատմականորեն պայմանավորված են եղել երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակով: Այսպես, երկրի տնտեսական աճը, մակրոտնտեսական կայունությունը, բնակչության եկամուտների աճը, քաղաքական իրավիճակի կայունացումը, իրականացվող քաղաքաշինական և ներդրումային ծրագրերը, գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը, գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը, ինչպես նաև համապատասխան օրենսդրական դաշտի որոշակի կարգավորումը և հիփոթեքային շուկայի զարգացումը հանգեցրին անշարժ գույքի շուկայի կտրուկ զարգացմանը սկսած 2000թ. սկզբից, ինչն արտահայտվեց թե՛ անշարժ գույքի գների, թե՛ իրականացվող գործարքների քանակական աճով: Աճի միտումները շարունակվեցին մինչև 2008թ. վերջ, երբ համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը հասավ Հայաստան: Արդյունքում տնտեսությունում արձանագրվեց խորը անկում, և տնտեսության մնացած ճյուղերի հետ նվազեց նաև անշարժ գույքի շուկան:

Սկսած 2000թ. մինչև 2008թ., երբ անշարժ գույքի գները Հայաստանում հասան իրենց գագաթնակետին, տարեկան համեմատությամբ գրանցվում էր անշարժ գույքի գների, ինչպես նաև՝ անշարժ գույքի գործարքների քանակի պարբերական աճ: 2008թ. օգոստոս ամսին ՀՀ անշարժ գույքի շուկայում իրականացվել է թվով 13064 գործարք՝ 12.4%-ով քիչ, քան նույն տարվա հուլիս ամսին և 10.6%-ով քիչ՝ 2007թ. նույն ժամանակահատվածի համեմատ¹: Հատկանշական է այն փաստը, որ գործարքների քանակը սկսել է նվազել անշարժ գույքի գների անկմանը զուգահեռ: Օրինակ, անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տվյալների համաձայն, 2008թ. օգոստոսին անշարժ գույքի գները նույն տարվա նախորդ ամսվա համեմատ նվազել են 1.8%-ով², շարունակելով նվազել, իսկ նոյեմբերի վերջին հրապարակված տվյալներով՝ շուկայական միջին գները հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ անկում են ապրել ևս 0.3%-ով:

Ստորև գծապատկերի տեսքով ներկայացնենք ՀՀ անշարժ գույքի շուկայում կատարված գործարքների քանակները 2000թ. մինչև 2013թ. առաջին ինն ամիսների կտրվածքով (տե՛ս գծապատկեր 1):

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «ՀՀ անշարժ գույքի շուկան 2008թ. օգոստոսին (վերլուծություն)», էջ 1:
² Նույն տեղում:


ՀՀ անշարժ գույքի գործարքների քանակական շարժընթացը 2000-2013/9-ում¹



Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, ճգնաժամին նախորդող վերջին տարիների ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների քանակներն աճել են՝ բացառությամբ 2009 թվականի, որը պայմանավորված է հանրապետության անշարժ գույքի շուկայի վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի թողած բացասական հետևանքներով: 2009թ. անշարժ գույքի շուկայում իրականացված գործարքների քանակը նվազել է 3%-ով: Արդեն սկսած 2009թ. սեպտեմբերից ՀՀ անշարժ գույքի շուկան աստիճանաբար սկսել է վերականգնվել, և գործարքների քանակը յուրաքանչյուր ամիս նախորդ ամսվա համեմատ շարունակաբար աճել է², սակայն հաջորդ անկումը սկսել է գրանցվել 2012թ.:

Անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ անշարժ գույքի շուկայում, բացի գործարքների քանակական շարժընթացից, իր ուրույն տեղն ունի դրա բաշխվածությունը (տե՛ս գծապատկեր 2):

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների բաշխվածությունն ըստ տեսակների (տվյալ ժամանակահատվածում իրականացված գործարքների քանակի նկատմամբ, %) 2008-2013/9³




¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 1, 2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:
² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, 2007-2009թթ. տնտեսական վերլուծություններ:
³ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2008թ. տարեկան վերլուծություն», էջ 2, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2009թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2010թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2011թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2013թ. հունվար- սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:

Ակնհայտ է, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում ուսումնասիրվող յուրաքանչյուր ժամանակահատվածում մեծ տեսակարար կշիռ են ունեցել օտարման գործարքները (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Անշարժ գույքի օտարման գործարքների թիվը 2008-2012թթ.¹



Գծապատկեր 3-ից ակնհայտ է, որ անշարժ գույքի օտարման գործարքների թիվը կտրուկ նվազել է 2009թ., ինչը պայմանավորված է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի՝ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցությամբ: Նշենք, որ 2013թ. առաջին ինն ամիսների ընթացքում կատարվել է անշարժ գույքի օտարման թվով 35187 գործարք, այսինքն՝ ավելի քիչ, քան մինչև ճգնաժամը՝ 2008թ. նույն ցուցանիշի մակարդակը, որը կազմել է 41388 գործարք²:

2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև մասնավոր տրանսֆերտների նվազումը և հիփոթեքային վարկավորման ծավալների կտրուկ աճը:

Ճգնաժամն ազդել է ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակի վրա, քանի որ Հայաստան մտնող ֆինանսական կապիտալը նվազել է, առաջնային բնակարանների հիմնական գնորդները կամ սփյուռքահայերն են, կամ արտերկրից փոխանցումներ ստացող բնակիչները, այդ պատճառով էլ Ռուսաստանում և ԱՄՆ-ում տնտեսական իրավիճակի վատթարացմանը զուգընթաց նվազել է կանխիկ դրամի ներհոսքը մեր երկիր, ուստի իջել է մարդկանց գնողունակությունը: Բացի այդ՝ ֆինանսական միջոցներ ունեցող մարդիկ, ովքեր վերջին տարիներին նախընտրում էին իրենց միջոցները ներդնել շինարարության մեջ, իրենց միջոցները դուրս բերեցին այդ ոլորտից:

Այսպիսով, ճգնաժամի ազդեցությամբ ՀՀ շինարարության ոլորտի անկումը պայմանավորված էր ինչպես ներքին համախառն պահանջարկի նվազմամբ, այնպես էլ արտերկրում բնակվող հայերի եկամուտների նվազմամբ, քանի որ ՀՀ-ում անշարժ գույքի նկատմամբ պահանջարկի զգալի մասը ձևավորվում էր հենց նրանց կողմից, ինչով էլ կարելի էր բացատրել վերջին տասը տարվա ընթացքում անշարժ գույքի գների մոտ տասնապատիկ աճը: Այդ պահանջարկի նվազման պատճառով 2009թ. ընթացքում ՀՀ անշարժ գույքի շուկայում արձանագրվել են անշարժ գույքի գների անկման միտումներ: Մասնավորապես, մայրաքաղաք Երևանում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, 1 քմ մակերեսի հաշվարկով, 2008թ. նույն ժամանակահատվածի

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2008թ. տարեկան վերլուծություն», էջ 2, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2009թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2010թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2011թ. տարեկան վերլուծություն», էջ 3, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2012թ. տարեկան վերլուծություն», էջ 3:

² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե., «2008թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 1:

համեմատ նվազել են 10%-ով¹: Սակայն, եթե հաշվի առնենք 2009թ. մարտի սկզբին ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի մոտ 20%-ով արժեզրկումը, և հաշվարկներն իրականացվեն համադրելի գներով, ապա Երևան քաղաքում 2009թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, 1քմ մակերեսի հաշվարկով, 2008թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են շուրջ 22.8%-ով: 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի շուկայական միջին գինը, 1քմ մակերեսի հաշվարկով, կազմել է 270,800 ՀՀ դրամ², մինչդեռ 2008թ. նույն ժամանակահատվածում այն կազմել է 296,000 ՀՀ դրամ³:

2008-2013թթ. ՀՀ անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում անշարժ գույքի շուկան ունեցել է հետևյալ առանձնահատկությունները՝

- անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ են ունեցել օտարման գործարքները, որոնց թիվը կտրուկ նվազել է ճգնաժամի ազդեցությամբ և դեռ չի հասել նախաճգնաժամային մակարդակին,
- յուրաքանչյուր տարի Հայաստանում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի զգալի մասը կատարվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ,
- գործարքների ընդհանուր քանակի մեծ մասը գրանցվել է մայրաքաղաք Երևանում, ուստի ճգնաժամի ազդեցությամբ ավելի մեծ չափով գործարքների թիվը պակասել է հենց մայրաքաղաքում,
- ճգնաժամի ազդեցությամբ նվազել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, և 2013թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Երևանում բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանի շուկայական միջին գինը, 1 քմ մակերեսի հաշվարկով, կազմել է ավելի քիչ, քան 2008թ. նույն ժամանակահատվածում,
- 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամով պայմանավորված՝ ՀՀ անշարժ գույքի շուկայի վրա բացասական ազդեցություն են ունեցել նաև մասնավոր տրանսֆերտների նվազումը և հիփոթեքային վարկավորման ծավալների կտրուկ աճը:

Ներկայումս ՀՀ անշարժ գույքի շուկայում տիրող իրավիճակը կարելի է բնութագրել որպես ճգնաժամից հետո կայուն վերականգնվող, սակայն ՀՀ անշարժ գույքի շուկան, ընդհանուր առմամբ, դեռևս գտնվում է կայացման փուլում: Առկա են բազում գերակա խնդիրներ՝ կապված ինչպես բնագավառի օրենսդրական կարգավորման, այնպես էլ մասնագետների որակական հատկանիշների բարձրացման, համապատասխան կրթական ծրագրերի ներդրման, տեղեկատվության մատչելիության ապահովման, անշարժ գույքի շուկայի կայացման ու զարգացման, ինչպես նաև այլ հարցերի հետ:

Գտնում են, որ Հայաստանի անշարժ գույքի շուկայի հեռանկարային զարգացումն ապահովող կարևոր քայլերից են հանդիսանում՝

1. անշարժ գույքի շուկայում արժանահավատ տեղեկատվության ապահովումը (օրինակ՝ անշարժ գույքի ու անշարժ գույքի շուկայի համակարգված դիտարկումների իրականացում և արդյունքների հրապարակում ու իրազեկում ՋԼՄ-ների միջոցով);
2. անշարժ գույքի շուկայում վճարունակ պահանջարկի ավելացման նպատակով անշարժ գույքի հիփոթեքային վարկավորման խթանիչ միջոցառումների իրականացումը, այդ թվում՝ անշարժ գույքի հիփոթեքային վարկավորման համակարգի զարգացումը, գնային իրավիճակի շարունակական դիտարկումների իրականացումը և գնային ինդեքսների ձևավորումը, անշարժ գույքի շուկայական գնահատման համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին:

¹ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2009թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

² ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2013թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

³ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, «2008թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի վերլուծություն», էջ 2:

Ֆինանսական համակարգի մասին օրենքի նախագիծը

Հայաստանում հիփոթեքային շուկայի զարգացումը սկիզբ է առել 2005թ.-ից, իսկ մինչ այդ հիփոթեքային շուկա, որպես այդպիսին, գոյություն չուներ. 2004թ. դրությամբ հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմում էր մոտ 13 մլն ԱՄՆ դոլար¹, բացի այդ՝ դրանց պայմանները էականորեն չէին տարբերվում սպառողական վարկավորման պայմաններից (բարձր տոկոսադրույքով կարճաժամկետ վարկեր):


Հաշվի առնելով ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ հիփոթեքային շուկայի վրա՝ Հայաստանում դրա աստիճանական զարգացումը (էվոլյուցիան) պայմանականորեն կարելի է բաժանել 3 փուլի.

- Հիփոթեքային շուկայի զարգացում (2005թ.-ից մինչև 2008թ. ավարտը),
- Հիփոթեքային շուկան համաշխարհային ճգնաժամի ժամանակ (2008թ. վերջից մինչև 2010թ. սկիզբ),
- Հիփոթեքային շուկայի զարգացումը հետճգնաժամային հատվածում (2010թ.-ից սկսած):

Հիփոթեքային շուկայի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ստորև ներկայացնենք հիփոթեքային վարկերի ծավալների դինամիկան, որոնք տրամադրվել են ՀՀ առևտրային բանկերի կողմից:

Գծապատկեր 1

ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալների դինամիկան² (ըստ 2008-2013թթ. 3-րդ եռ. դրությամբ, մլրդ դրամ)



Համաշխարհային ճգնաժամը ՀՀ-ում դրսևորվեց 2009թ. սկզբին, որն իր բացասական ազդեցությունն ունեցավ ինչպես Հայաստանի ընդհանուր տնտեսության, այնպես էլ՝ հիփոթեքային վարկավորման ծավալների վրա: 2009թ. որոշ բանկեր դադարեցրին վարկավորումը, իսկ որոշներն էլ՝ խստացրին վարկավորման պայմանները (տոկոսադրույքի աճ, կանխավճարի չափի ավելացում, վարկավորման սահմանափակում մարզերում, վարկունակության գնահատման չափանիշների խստացում և այլն), ինչի արդյունքում 2009թ. վարկավորման աճ գրեթե չի արձանագրվել: Ընդհանուր առմամբ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մար-

¹ "Pre-feasibility Study of the Housing Finance Market in Armenia," Urban Institute for KfW, Washington, October 2004.
² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ Հրապարակումներ:


տահրավերները ՀՀ ֆինանսական համակարգում ցնցումներ չառաջացրին, և արդեն 2010թ.-ից հիփոթեքային վարկավորման շուկան սկսեց աշխուժանալ:

Ինչպես երևում է գծապատկերից, 31.12.2010թ. դրությամբ ՀՀ-ում առևտրային բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը 31.21.2009թ. համեմատ աճել է 37.7%-ով, ընդ որում՝ աճը շարունակվել է, և 31.12.2013թ. դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը կազմել է 133.4 մլրդ ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալներին (տե՛ս գծապատկեր 2), ապա կարող ենք նշել, որ նրանց կողմից տրված հիփոթեքային վարկերի ծավալները ևս, ՀՀ կենտրոնական բանկի հրապարակումների համաձայն, տարեցտարի ավելացել են:

Գծապատկեր 2

ՀՀ վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալների դինամիկան (2005-2013թթ., մլն դրամ)¹




2013 թվականի նոյեմբերի դրությամբ հիփոթեքային վարկերի ծավալը կազմել է շուրջ 141 մլրդ դրամ, ինչը շուրջ 3 անգամ գերազանցում է 2007 թվականի նույն ցուցանիշը՝ 49 մլրդ: Ընդ որում՝ 2013 թվականի 141 մլրդ դրամից շուրջ 68 մլրդը ՀՀ դրամով է, իսկ 73 մլրդը՝ արտարժույթով, 2007 թվականի 49 մլրդ դրամից շուրջ 26 մլրդը ՀՀ դրամով է, իսկ 23 մլրդը՝ արտարժույթով:

Ընդհանուր առմամբ, վարկերի տրամադրման գործում կարևորվում է տոկոսադրույքների սահմանումը (տե՛ս գծապատկեր 3):

Գծապատկեր 3

Հիփոթեքային վարկավորման տոկոսադրույքները (2008-2013թթ.)²



¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ Հրապարակումներ:

² Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ Հրապարակումներ:


Տեսնում ենք, որ, ըստ գծապատկեր 3-ի, 2013 թվականին հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը միջինում թե՛ դրամային, թե՛ դոլարային վարկերի համար նվազել է մինչև 12%, իսկ 2008 թվականին դրամայինը՝ շուրջ 15%, դոլարայինը՝ շուրջ 17%:

Ներկայումս ՀՀ վարկատու կազմակերպությունների կողմից տրամադրվող հիփոթեքային վարկերի միջին տոկոսադրույքները տատանվում են 12-16% միջակայքում:

Տոկոսադրույքները սահմանելիս կարևորվում է նաև, թե ինչ ժամկետներով են դրանք տրամադրվում (տես գծապատկեր 4):

Գծապատկեր 4

Հիփոթեքային վարկերի ժամկետայնությունը (2007-2013թթ.)¹



Ինչպես երևում է, 2013 թվականին հիփոթեքային վարկերի 72%-ը եղել է 5 տարուց ավելի ժամկետայնությամբ, իսկ 2007 թվականի նույն ցուցանիշը կազմել է ընդամենը 34%:

Կարող ենք ասել, որ Հայաստանում հիփոթեքային շուկայի զարգացման համար նախադրյալ են հանդիսացել՝

- բնակարանային պայմանների բարելավման նկատմամբ մեծ պահանջարկը (ըստ միջազգային փորձագետների գնահատականների)²՝ ՀՀ-ում հիփոթեքային վարկավորման նկատմամբ վճարունակ պահանջարկը 2009թ. վերջի դրությամբ կազմել է մոտ 1.37 մլրդ ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ (կնքվել է 55,000 հիփոթեքային վարկավորման պայմանագիր),
- օրենսդրական բարեփոխումները,
- բնակչության եկամուտների աճը,
- վարկատու կազմակերպությունների միջև մրցակցության ուժեղացումը:

Եթե հիփոթեքային շուկայի զարգացման սկզբնական շրջանում (2005-2006թթ.) վարկերը հիմնականում տրամադրվել են ԱՄՆ դոլարով, ապա արդեն 2007թ. վերջի դրությամբ դրամային վարկերը կազմել են ընդհանուր հիփոթեքային պորտֆելի գրեթե կեսը³: Դրամային վարկերի աճին նպաստեց նաև Գերմանա-հայկական հիմնադրամի կողմից KfW բանկի միջոցներով իրականացվող «Բնակարանային ֆինանսավորման ծրագիրը», որը 2007թ.-ից սկսած իրականացնում էր բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորում, որի նպատակներից մեկն էր ՀՀ դրամով հիփոթեքային վարկավորման աշխուժացումը: 2008թ.-ից նոր տրամադրվող հիփոթեքային վարկերի մեծ մասն արդեն տրամադրվում էր ՀՀ դրամով: 2009թ. ճգնաժամի հետևանքով ՀՀ դրամի արժեզրկումը բերեց նրան, որ վարկատու կազմակերպությունները, ունենալով ԱՄՆ դոլարով ներգրաված մեծածավալ միջոցներ, արտարժույթային ռիսկից խուսափելու նպատակով սկսեցին հիփոթեքային վարկեր տրամադրել հիմնականում արտարժույթով: ՀՀ կենտրոնական բանկի տվյալների համաձայն՝ 30.09.2013թ. դրությամբ ըստ արժույթային կառուցվածքի՝ առևտրային բանկերի

¹ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ Հրապարակումներ:
² Աղբյուրը՝ “Market assessment on Armenia”, 07.12.2009, IFC.
³ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ Հրապարակումներ:

կողմից տրամադրված դրամային և արտաթուփային վարկերը կազմել են համապատասխանաբար 587 մլրդ դրամ և 1 տրլն 59.8 մլրդ դրամ¹:

Վերջին տարիներին աշխարհի գրեթե բոլոր երկրների կառավարությունները և օրենսդիր մարմինները փորձում են զարգացնել հիփոթեքային երկարաժամկետ վարկավորումը, հաղթահարել ֆինանսական ճգնաժամի բացասական հետևանքները՝ գիտակցելով, որ դա ոչ միայն տնտեսական, այլև սոցիալական ու քաղաքական հարց է: Ակնհայտ է, որ հիփոթեքային վարկավորման արդյունավետ համակարգի գործունեության պայմանների ստեղծման գործընթացում ներկայումս առավել է կարևորվում պետության դերը, որը կարգավորում է այդ գործընթացի մասնակիցների համար «խաղի կանոնները»:

Նկատի ունենալով, որ հիփոթեքային վարկավորման համակարգի կատարելագործումը պետության շահերի շրջանակում է, առաջարկում են հիփոթեքային վարկավորման մեխանիզմի խթանման հետևյալ միջոցառումները՝

- հատուկ վերահսկողական կառույցի ստեղծում՝ դա լինի հիփոթեքային գործակալություն, հիփոթեքային բանկ կամ հիփոթեքային հիմնադրամ: Հայաստանում հիփոթեքային երկարաժամկետ վարկավորման համակարգի զարգացման համար անհրաժեշտ է ստեղծել պետական մասնագիտացված հիփոթեքային բանկ, որն իրավունք ունենա տրամադրել վարկեր անշարժ գույքի գրավի դիմաց քաղաքացիներին, արդյունաբերական և գյուղատնտեսական կազմակերպություններին, ֆերմերներին,
- մակրոտնտեսական որոշակի պայմանների ապահովում՝ տնտեսական աճի կայուն տեմպ, ազգային արժույթի կայունություն, արժեզրկման տեմպերի կրճատում, բնակչության իրական եկամուտների աճ մինչև այն մակարդակը, որը թույլ է տալիս իրականացնել կուտակումներ, խնայողություն և դրանք ներդնել բնակարանային շինարարության մեջ կամ պարզապես գնել բնակարաններ,
- հիփոթեքային վարկերի երկրորդային շուկայի ձևավորում և զարգացում, ինչն առևտրային բանկերին կտա հիփոթեքային արժեթղթերի վաճառքի միջոցով վարկավորման համար անհրաժեշտ դրամական միջոցների ներգրավման հնարավորություն,
- համապատասխան իրավական ու տնտեսական պայմանների ստեղծում (օրինակ՝ ՓՄՁ-ների համար հարկային բեռի թեթևացում) մեր երկրում բնակչության միջին խավ ձևավորելու համար, որը կդառնա հիփոթեքային վարկավորման գործընթացի լիարժեք մասնակից,
- առևտրային անշարժ գույքի, անավարտ շինարարության և հատկապես հողի գնահատման գործընթացներում առկա խնդիրների լուծում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանկերն անշարժ գույքի գնահատումն իրականացնում են գնահատող կազմակերպությունների հետ համագործակցության սկզբունքով (օրինակ՝ անշարժ գույքի գրանցման մեխանիզմի պարզեցում և դրա հետ կապված վճարների նվազեցում),
- հիփոթեքային երկարաժամկետ վարկավորման համակարգին առնչվող իրավական հարցերի իրազեկում բնակչությանը,
- ՀՀ-ում հիփոթեքի նորմատիվաիրավական հիմքերի մշակում, բացի այդ՝ հիփոթեքի մասնակիցներին երկարաժամկետ ու էժան վարկային ռեսուրսների հասանելիության ապահովում,
- վարկատուի և փոխառուի շահերի պաշտպանություն (ապահովագրություն, պետական հատուկ երաշխիքներ),
- պետության կողմից հիփոթեքային վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում, որպեսզի բնակչության եկամուտների ներկա մակարդակի պայմաններում հիփոթեքային վարկը լինի իրատեսական և մատչելի,
- հիփոթեքային պարտատոմսեր թողարկելու համար հիփոթեքային վարկերի գրավադրման կարգի սահմանում,
- հիփոթեքային ընկերության կողմից թողարկվող հիփոթեքային պարտատոմսերի թողարկման և շրջանառության կարգի սահմանում:

¹ ՀՀ ԿԲ, «2013թ. 3-րդ եռամսյակի բանքեր», էջ 7:

ՉԱՆՆԱԿԱՆ ԻՄՈՒՏԱՆՎՈՐՈՒՄ

«Ճյուղից իմ մասին կ'սպասվի մեծ միջազգային նվազում»

ԾԱՆՈՒԹԱՅԻՆ ՎՅԱԾ

Համաշխարհային ճգնաժամը ՀՀ-ում դրսևորվեց 2009թ. սկզբին, որն իր բացասական ազդեցությունը ունեցավ ինչպես Հայաստանի ընդհանուր տնտեսության վրա, այնպես էլ՝ հիփոթեքային վարկավորման ծավալների վրա: 2009թ-ին որոշ բանկեր դադարեցրին վարկավորումը, իսկ որոշներն էլ՝ խստացրին վարկավորման պայմանները: Սակայն, ընդհանուր առմամբ, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի մարտահրավերները ՀՀ ֆինանսական համակարգում ցնցումներ չառաջացրին, և արդեն 2010թ-ից հիփոթեքային վարկավորման շուկան սկսեց աշխուժանալ: 2013 թվականի նոյեմբերի դրությամբ հիփոթեքային վարկերի ծավալը մոտ 3 անգամ գերազանցում էր 2007 թվականի նույն ցուցանիշը: 2013 թվականին հիփոթեքային վարկերի տոկոսադրույքը միջինում նվազել է մինչև 12%, մինչդեռ 2008 թվականին եղել է շուրջ 15% -17%:

«Ճյուղից իմ մասին կ'սպասվի մեծ միջազգային նվազում»

РЫНОК ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ РА В ПРЕДКРИЗИСНЫЕ И ПОСЛЕКРИЗИСНЫЕ ПЕРИОДЫ

АННА АНИСЯН

соискатель финансово-расчетной кафедры ЕГУ

Аннотация

Мировой кризис, проявившийся в РА в начале 2009 года, негативно повлиял как на всю экономику Армении, так и на объемы ипотечного кредитования. В 2009 году некоторые банки прекратили кредитование, а некоторые ужесточили условия предоставления кредитов. Однако, в целом, вызовы мирового финансово-экономического кризиса не вызвали потрясений в финансовой системе РА, и уже с 2010 года рынок ипотечного кредитования начал оживляться. Объем ипотечных кредитов по состоянию на ноябрь 2013 года превзошел этот же показатель 2007 года в 3 раза. В 2013 г. процентная ставка ипотечных кредитов снизилась в среднем до 12%, в то время как в 2008 году она составляла около 15-17%.

Ключевые слова: ипотечный рынок, кредит, кризис, кредитная организация, коммерческий банк, процентная ставка кредита, объем кредитов.

PERFORMANCE OF THE MORTGAGE LENDING MARKET PRIOR TO AND AFTER THE CRISIS

ANNA HANISYAN

Ph.D. Student

Finances and Accounting Department

Yerevan State University

Abstract

The Global Financial Crisis hit Armenia in early 2009, negatively affecting both the whole economy and mortgage lending market, in particular. In 2009, some commercial banks stopped providing mortgage loans, and some banks made mortgage loan requirements stricter. However, in general, the challenges of the Global Financial Crisis didn't destabilize the financial system of the Republic of Armenia and, since 2010 the mortgage lending market has started reporting growth. In November 2013 (as of November 30), the mortgage lending exceeded mortgage lending of the same period of 2007 approximately 3 times. In 2013, mortgage loan rates declined comparing to 2008 loan rates (12% in 2013, on average, comparing to approximately 15%-17% in 2008).

Keywords: mortgage market loan, crisis, credit organization, commercial bank, loan interest rates, lending.

ԸՄԻՍԻՍԻՆԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
 ԸՄԻՍԻՍԻՆԻՍՏԻԿԱՆ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Սույն հիմնահարցի համատեքստում օրինակով փորձենք գնահատել և հիմնավորել հարկային բեռի ազդեցությունը տնտեսության առանձին ճյուղերի վրա (առևտրային կազմակերպությունների օրինակով), քանի որ ժամանակակից տնտեսական հարաբերությունների համատեքստում տնտեսական ակտիվության ապահովման կարևոր նախապայմաններից մեկը արդյունավետ հարկային բեռի սահմանումն է, որն առավելագույնս կապահովի պետական բյուջեն համապատասխան հարկային եկամուտներով և միաժամանակ կնպաստի երկրում տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Հարկային բեռի հաշվարկման մեթոդն իր մեջ պետք է ներառի կազմակերպության ֆինանսական կայունության վրա հարկերի և վճարների ազդեցության քանակական և որակական գնահատականը: Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի հաշվարկման ամենատարածված մեթոդը հարկային վճարումների բաժինն է ՀՆԱ-ի կազմում, որը բնորոշում է հարկային բեռը մակրոմակարդակում, որը, չնայած ամբողջապես չի բնութագրում հարկերի ազդեցությունը տնտեսական ակտիվության վրա, առավել ևս ցույց չի տալիս, թե տնտեսության յուրաքանչյուր ոլորտ ինչ հարկային բեռ է կրում, սակայն քանի որ չկա այլ, առավել հստակ մեթոդ կամ մեթոդաբանություն, առաջնորդվենք այդ ցուցանիշով:

Գտնում ենք, որ հարկային բեռը Հայաստանի Հանրապետությունում կարելի է համարել «թեթև»: Սակայն այս ցուցանիշը ցածր համարել չի կարելի, քանի որ այն միջինացված ցուցանիշ է և չի հստակեցնում կոնկրետ բեռը:

Աղյուսակ 1

ՀՀ պետական բյուջեի եկամուտների և հարկային եկամուտների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 1998-2012թթ.¹

	Պետական բյուջեի ընդամենը եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ, (%)	Հարկային եկամուտները ՀՆԱ-ի նկատմամբ, (%)	Հարկային եկամուտները և պարտադիր սոց. ապահովության վճարները ՀՆԱ-ի նկատմամբ, (%)
1998	17.6	13.1	15.9
1999	17.8	15.1	18.3
2000	16.7	13.9	17.0
2001	16.5	13.2	16.1
2002	16.8	13.6	16.4
2003	18.0	13.1	15.8
2004	15.8	13.1	15.8
2005	16.7	13.6	16.4
2006	16.6	13.5	16.4
2007	18.7	15.4	18.2
2008	21.3	16.8	19.7
2009	21.5	16.0	19.3
2010	21.6	16.4	19.4
2011	21.9	16.3	20.1
2012	24.4	18.6	21.8

¹ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000-2013թթ. հունվար-դեկտեմբեր, Հայաստանի վիճակագրական տարեգրքեր 1998-2013թթ., ՀՀ ԱՎԾ 2000-2013թթ. հրապարակումներ, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2000-2013թթ. հրապարակումներ:

Եթե դիտարկենք տնտեսության առանձին ճյուղերի կազմակերպությունների հարկային բեռի բաշխվածության աստիճանը և առանձնահատկությունները, առաջին հերթին կնկատենք, որ, ցավոք, ազգային հաշիվների համակարգում մի շարք ցուցանիշների բացակայությունը հնարավորություն չի տալիս տարբեր մեթոդների կիրառմամբ հարկային բեռի հաշվարկի իրականացումը: Այդ իսկ պատճառով, մեր կողմից փորձ է արվել հաշվարկել հարկային բեռը Կրեյնինայի, Լիտվինի և ըստ ավելացված արժեքի մեթոդների՝ համադրելով առկա վիճակագրական ցուցանիշները:

Լիտվինի մեթոդի կիրառմամբ հարկային բեռի հաշվարկումն իրականացվում է համարիչում հիմք ընդունելով «շահութահարկի գծով ծախս» ցուցանիշը:

Կրեյնինայի մեթոդի կիրառման դեպքում իրացումից հասույթը և իրացված արտադրանքի ծախսերի փոխարեն ընդունում ենք համախառն շահույթ ցուցանիշը:

Ավելացված արժեքի մեթոդի կիրառմամբ հարկային բեռի գնահատումն իրականացվում է հետևյալ ընթացակարգով.

1. Հաշվարկվում է կազմակերպության ավելացված արժեքը, որն իրացումից հասույթի և նյութական ծախսերի դրական տարբերությունն է,
2. Հաշվարկվում ենք ավելացված արժեքում հարկերի տեսակարար կշիռը: Մեր օրինակում՝ շահութահարկի մեծությունը:

Տնտեսագետներ Յ.Պետրովը և Ե.Եգորովը առաջարկում են հարկային բեռի հաշվարկման արդյունավետ դրույթաչափի կիրառման մեթոդը: Ըստ այս մեթոդի հարկային բեռը հաշվարկվում է հարկի ընդհանուր գումարի և կազմակերպությունում ստեղծված ավելացված արժեքի հարաբերությամբ: Այս մեթոդը բնութագրում է ընդհանուր հարկային ծանրության աստիճանը ներդրումների կատարման նպատակահարմարության տեսանկյունից: Ըստ նրանց սահմանաչափը կազմում է 58.9%, և գերազանցելու դեպքում բացառվում է ներդրումային գործընթացների զարգացումը կազմակերպությունում¹:

Ստորև մեր կողմից փորձ է արվել հաշվարկել տնտեսության առանձին ճյուղերի հարկային բեռը տարբեր մեթոդների կիրառմամբ, ինչն հնարավորություն կտա համեմատել ստացված արդյունքները, գնահատել հարկային բեռի ներգործության աստիճանը և կատարել ոլորտի զարգացմանը խոչընդոտող պատճառների վերլուծություն՝ բացահայտելով զարգացման հնարավոր ուղիների կիրառումը հարկման արդյունավետ բեռի սահմանման համատեքստում:

Տնտեսության առանձին ոլորտների հարկային բեռի հաշվարկը փորձենք իրականացնել ըստ ընդհանուր առևտրային կազմակերպությունների և ըստ միջին և խոշոր առևտրային կազմակերպությունների:

Այս կերպ, մեր կողմից ուսումնասիրվել և հաշվարկվել են ինչպես ընդհանուր առևտրային կազմակերպությունների համար, այնպես էլ հանքարդյունաբերության, էներգետիկայի, գյուղատնտեսության և առևտրի ոլորտների հարկային բեռի ցուցանիշները: Նշվածի ուսումնասիրությունից հետո, կարծում ենք, տեղին է նաև անդրադարձը խոշոր հարկատուների հարկային վճարումներին (աղյուսակ 2):

Համեմատության պարզեցման համար վերցնենք 2008-2010թթ. ժամանակահատվածում կատարված փոփոխությունները: Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, հարկային վճարումների կազմում մեծ տեսակարար կշիռ են կազմում անուղղակի հարկերը՝ 1000 խոշոր հարկատուների կազմում 50-56 %: Իսկ ընդհանուր առմամբ 1000 խոշոր հարկատուները ապահովում են պետական բյուջեի հարկային եկամուտների 74-78%-ը:

Աղյուսակ 2-ում ներկայացված են նաև խոշոր տնտեսվարող սուբյեկտների կողմից վճարվող հարկերի կառուցվածքում ուղղակի և անուղղակի հարկերի հարաբերակցությունը: 1000 խոշոր հարկատուների ցանկում կան կազմակերպություններ, որոնց կողմից կատարված հարկային վճարումների կառուցվածքում ուղղակի հարկերի մասնաբաժինը 15%-ի չի հասնում:

¹ Егорова Е., Петров Ю. Сравнительный анализ эффективной ставки налогов в России и зарубежных странах, Налоговый вестник, 1995, N 11, с. 9-16.

1000 խոշոր հարկատուների հարկային վճարումները 2009-2012թթ.¹

Տարիներ	ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտներ (մլրդ. դրամ)	1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումները (մլրդ. դրամ) այդ թվում՝	% -ը ՀՆԱ-ի կազմում	% -ը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում այդ թվում՝	Ուղղակի հարկեր			Անուղղակի հարկեր			Հաստատագրված վճարներ			Այլ հարկեր և տուրքեր		
					Ընդամենը (մլրդ. դրամ)	%-ը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում	%-ը 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում	Ընդամենը (մլրդ. դրամ)	%-ը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում	%-ը 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում	Ընդամենը (մլրդ. դրամ)	%-ը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում	%-ը 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում	Ընդամենը (մլրդ. դրամ)	%-ը պետական բյուջեի հարկային եկամուտների կազմում	%-ը 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում
2009	503.4	382.9	12.3	76.1	92.0	18.3	24.0	205.5	40.8	53.7	58.6	11.6	15.3	27.0	5.4	7.1
2010	574.1	432.9	13.5	75.4	91.1	15.9	21.0	243.6	42.4	56.3	62.9	11.0	14.5	35.6	6.2	8.2
2011	647.8	483.3	12.8	74.61	195.2	21.5	22	404.2	44.6	55.8	20.7	2.3	15.2	41.2	4.5	7.8
2012	741.8	534.1	16.2	72	226.6	23.2	23	461.9	47.3	56.7	14.8	1.5	15.5	39.7	4	7.5

Աղյուսակ 2.

300 խոշոր հարկատուների խմբավորումը ըստ վճարած ուղղակի և անուղղակի հարկերի ցուցանիշի 2010-2012թթ.²

	2010		2011		2012	
	Կազմակերպությունների քանակը	Տեսակարար կշիռը ընդամենի մեջ, (%)	Կազմակերպությունների քանակը	Տեսակարար կշիռը ընդամենի մեջ, (%)	Կազմակերպությունների քանակը	Տեսակարար կշիռը ընդամենի մեջ, (%)
Ուղղակի հարկեր (շահութահարկ, եկամտահարկ)						
0-100 հզ.	182	60.7	185	61.7	168	56.0
100-500 հզ.	93	31.0	87	29.0	104	34.7
500 հզ. -1 մլն.	12	4.0	15	5.0	16	5.3
1 մլն.-1.5 մլն.	4	1.3	3	1.0	5	1.7
1.5 մլն.-2 մլն.	2	0.7	1	0.3	1	0.3
2 մլն.- 2.5 մլն.	2	0.7	6	2.0	3	1.0
2.5 մլն. և ավել	5	1.7	3	1.0	3	1.0
ընդամենը	300	100	300	100	300	100
Անուղղակի հարկեր (ԱԱՀ, ակցիզային հարկ)						
0-100 հզ.	52	17.3	58	19.3	44	14.7
100-500 հզ.	160	53.3	173	57.7	177	59.0
500 հզ. -1 մլն.	50	16.7	39	13.0	42	14.0
1 մլն.-1.5 մլն.	15	5.0	14	4.7	10	3.3
1.5 մլն.-2 մլն.	12	4.0	8	2.7	13	4.3
2 մլն.- 2.5 մլն.	3	1.0	2	0.7	4	1.3
2.5 մլն. և ավել	8	2.7	6	2.0	10	3.3
ընդամենը	300	100	300	100	300	100

¹ ՀՀ ԿԱ ՊԵԿ վիճակագրակա հրապարակումներ, խոշոր հարկ վճարողների մոնիթորինգի ամփոփ ցուցանիշներ 2009-2010թթ., հարկային ծառայության վիճակագրական հրապարակումներ, <http://www.taxservice.am>.

² ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վիճակագրական հրապարակումներ, խոշոր հարկ վճարողների մոնիթորինգի ամփոփ ցուցանիշներ 2009-2010թթ., հարկային ծառայության վիճակագրական հրապարակումներ, <http://www.taxservice.am>

Իսկ 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում ուղղակի հարկերի տեսակարար կշռի ցուցանիշը 2009-2012թթ. ժամանակահատվածում սկզբից նվազել է 3.0 տոկոսային կետով, ապա կրկին բարձրացել է, սակայն ապահովել է միայն 23% ցուցանիշ:

Անուղղակի հարկերի տեսակարար կշիռը 1000 խոշոր հարկատուների կողմից կատարվող հարկային վճարումների կազմում ավելացել է 3 տոկոսային կետով՝ հասնելով 56.7 %-ի: Իսկ ընդհանուր հարկային եկամուտների կազմում անուղղակի հարկերի ցուցանիշը աճել է՝ 40.8 %-ից հասնելով 47.3%-ի: Անշուշտ սա վկայում է այն մասին, որ անուղղակի հարկերի բեռը փոխանցված է ապրանքների և ծառայությունների վերջնական սպառողների վրա:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ում արտացոլված ցուցանիշներից, 1.5 մլն.-ից մինչև 2.5 մլն. և ավել վճարումների մասով մեծ տեսակարար կշիռ են կազմում հարկային եկամուտների կազմում անուղղակի հարկեր վճարող կազմակերպությունները: Այսպես, 2010 թվականին ուղղակի հարկ վճարող կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմում է 2.3%, մինչդեռ անուղղակի հարկ վճարող կազմակերպությունների տեսակարար կշիռը կազմում է 8.9 %: Ընդ որում նկատելի է կազմակերպությունների թվաքանակի հարաբերակցության փոփոխություն ի հաշիվ անուղղակի հարկ վճարող կազմակերպությունների թվաքանակի աճի:

Այսպիսով, առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա հարկային բեռի ազդեցության վերլուծության արդյունքներից ելնելով՝ կարելի է ձևակերպել հետևյալ կարևոր եզրակացությունները.

- հարկային բեռի վերլուծությունը ցույց է տալիս, որ 2002 թ. հետ համեմատած հարկային բեռն էականորեն չի փոխվել՝ հաշվի առնելով նաև ներկայիս հարկային բարեփոխումները,
- Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային բարեփոխումները, հարկային բեռի մակարդակն էական ազդեցություն չեն թողնում բյուջետավորման վրա:

Վերլուծության շրջանակներում ստացված արդյունքները, մեր համոզմամբ, պետք է հաշվի առնվեն արդյունավետ հարկային բեռի սահմանման քաղաքականության մշակման ընթացքում, որը կարող է նպաստել դրա շրջանակներում իրականացվող միջոցառումների նպատակայնության և արդյունավետության բարձրացմանը:

Այս առումով, կարևոր է, որ Հայաստանի Հանրապետությունում ընթացող հարկային բարեփոխումները համադրելի լինեն երկրում ընթացող սոցիալ-տնտեսական զարգացումների հետ: Արդյունավետ հարկային բեռի սահմանման քաղաքականությունը պետք է դիտարկել սոցիալական և տնտեսական տարաբնույթ երևույթների ամբողջության մեջ՝ ելնելով ակնկալվող արդյունքից:

Ամփոփելով սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունների արդյունքները, գտնում ենք, որ արդյունավետ հարկային բեռի սահմանման հարցում շահագրգիռ է ինչպես պետությանը, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտը, հետևաբար հարկային բեռի մակարդակը գնահատելու համար պետք է ցուցաբերել համալիր մոտեցում:

ԳՐԻՎԱՆՈՒՄՈՒ ԴՆՏԵՆՍՊԱՆՈՒԹՅԱՆ

ԵՎ ՊՐԻՆՏՈՒՄՈՒ ԾՈՒՄՆԵՐԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ
ԴՆՏԵՆՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ

ԵՎՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ

Հայաստանի Հանրապետությունում ընթացող հարկային բարեփոխումները պետք է համադրելի լինեն երկրում ընթացող սոցիալ-տնտեսական զարգացումների հետ: Արդյունավետ հարկային բեռի սահմանման քաղաքականությունը պետք է դիտարկել սոցիալական և տնտեսական տարաբնույթ երևույթների ամբողջության մեջ՝ ելնելով ակնկալվող արդյունքից: Ինչ վերաբերում է արդյունավետ հարկային բեռի սահմանմանը, այդ հարցում շահագրգիռ է ինչպես պետությանը, այնպես էլ տնտեսավարող սուբյեկտը, հետևաբար հարկային բեռի մակարդակը զնահատելու համար պետք է ցուցաբերել համալիր մոտեցում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՆՏԵՆՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ ԵՄՎՈՂՍՑՈՒՄԻ

ВЛИЯНИЕ ЭФФЕКТИВНОСТИ НАЛОГООБЛОЖЕНИЯ НА БИЗНЕС СРЕДУ РА

ԳԱՐՆԻԿ ՆԵՐՏԻՍՅԱՆ

соискатель Института экономики
им. М.Котаняна НАН РА

Անոտация

Налоговые реформы, проводимые в Республике Армения, должны быть сопоставимы с протекающими процессами социально-экономического развития в стране. Политику определения эффективной налоговой нагрузки следует рассматривать в комплексе различных социально-экономических явлений, исходя из ожидаемого результата. Что касается определения эффективной налоговой нагрузки, то в этом вопросе заинтересованы как государство, так и хозяйствующий субъект. Следовательно, необходим комплексный подход к оценке уровня налоговой нагрузки .

Ключевые слова: нцлоговые реформы, налоговая нагрузка, хозяйствующий субъект, коммерческие организации, финансовая стабильность,налог на прибыль.

THE IMPACT OF TAX EFFICIENCY ON THE BUSINESS CLIMATE OF THE REPUBLIC OF ARMENIA

GARNIK NERSISYAN

Ph.D. Student
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

The tax reforms being implemented in the Republic of Armenia need to be in response to (reflect) the current social-economic developments. Effective tax burden defining policy needs to be considered in the framework of complete range of various social and economic phenomena, taking into account the expected result. Both the government and legal entities (businesses) are interested in defining effective tax burden, hence, a complex approach needs to be adopted/utilized in measuring the tax burden.

Keywords: tax reforms, tax burden, business (legal entity), commercial organization, financial stability, profit tax.

Ճծ՞à à²iÆÛ²Û

Ճ³Û³è³ÝÇ ³½.³ÛÇÝ ³.ñ³ñ³ÛÇÝ

Ñ³Û³Éè³ñ³ÝÇ ³èՇÇñ³Ýi

ՃԾ ²Ûİ²ÛÆÛ Û°ծøÆÛ i°ծԵիàÔàđÂÛ²Û İ²đ¶iàđØ²Û Ø°É²ÛÆ¼ØÛ°ծÀ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենքներով, ՀՀ կենտրոնական բանկի կամ կառավարության կողմից լիազորած պետական մարմնի հետ համատեղ հաստատված ենթաօրենսդրական ակտերով: Որպես կանոն բանկերը և նրանց գործունեությունը հանդիսանում են պաշտոնական վերահսկողության առավել խիստ ուշադրություն պահանջող ոլորտը, քան ձեռնարկատիրական գործունեության որևէ այլ բնագավառ: Բանկերի նկատմամբ նման յուրահատուկ մոտեցումը պայմանավորված է ինչպես ֆինանսական, այնպես էլ տնտեսական կյանքում դրանց ունեցած ակտիվ դերով: Միաժամանակ կարող ենք հաստատել այն իրողությունը, որ բանկային վերահսկողությունն ունի նաև արտահայտված մակրոտնտեսական նշանակություն, քանի որ տարբեր երկրներում գոյություն ունեցող վերահսկողության ռեժիմների և փորձի բազմազանության հիմքում ընկած են ընդհանուր նպատակներ ու դատողություններ: Հատկապես վերահսկողության գործընթաց իրականացնողները հիմնականում ձգտում են, որպեսզի բանկերը լինեն՝ ֆինանսական տեսակետից ապահով, բարձրակարգ ղեկավարվող և ավանդատուների շահերին չսպառնացող: Միջազգային պրակտիկայում ընդունված են նպատակային տարբեր մոտեցումները, որոնք հաշվի են առնում տեղական առանձնահատկությունները, ինչպես նաև այն հանգամանքը, թե տվյալ երկրի ղեկավար մարմինները որքանով են կարևորում բանկային վերահսկողությունն ընդհանրապես: Հատկապես շատ կարևոր է, որ վերահսկողություն իրականացնող մարմինն անկախ լինի քաղաքական կամ այլ արտաքին ներգործությունից, որպեսզի որոշումներն ընդունվեն բանկային վերահսկողության օբյեկտիվ սկզբունքներով: Միաժամանակ ոչ պակաս կարևոր է այնպիսի մեխանիզմի գոյությունը, որի օգնությամբ վերահսկող մարմինները կարողանան հաշվետվություն տալ իրենց կատարած աշխատանքների մասին կառավարությանը կամ խորհրդարանին¹: Ընդհանուր առմամբ բանկային համակարգում իր ուրույն տեղն ունի ներքին վերահսկողությունը: Ուստի այդ առումով էլ ինչպես բոլոր երկրներում, այնպես էլ Հայաստանում գործող բանկերում ներքին վերահսկողության համակարգի արդյունավետ կազմակերպումն արդիական է ոչ միայն զարգացող, այլ նաև արդեն զարգացած շուկայական տնտեսության պայմաններում, ինչի մասին են վկայում բազմաթիվ պետությունների փորձը: Ներքին վերահսկողությունն առևտրային բանկերի գործունեության կարևորագույն գործառնություններից է, որը հնարավորություն է տալիս համապարփակ հսկողություն սահմանել բանկային տարաբնույթ ռիսկերի նկատմամբ, քանի որ դրանց նվազեցումը ինքնանպատակ չէ, և այն միանշանակորեն պետք է զուգակցվի բանկի եկամտաբերության ապահովման հետ: Ներքին վերահսկողության հիմնական նպատակն է ոչ միայն բանկերի գործունեությանը նպաստող ներդրողների և նրանց հաճախորդների շահերի պաշտպանությունը, այլ նաև վերահսկողության միջոցով բանկի աշխատակիցների օրենսդրական իրավունքների պահպանման և նորմատիվային ակտերին համահունչ գործընթացների կատարմանը հետևելը, վիճահարույց միջադեպերի և համապատասխան վարքագծի կարգավորումը, այլ նաև բանկում իրականացվող գործընթացների արդյունավետության ապահովումն ու բանկային գործունեության ռիսկերի օպտիմալացումը²:

Ընդհանուր առմամբ ներքին վերահսկողության համակարգում ներառվում են հետևյալ բաղկացուցիչ տարրերը (տե՛ս գծապատկերը): Դրանք են՝

¹ Իվանյան Ա., Եսայան Տ., Բանկային վերահսկողություն և աուդիտ, Երևան, 2003, էջ 10-11:

² Банковский Надзор и Аудит, Меньщикова Т.М., 2007 ст. 4-9 .


- վերահսկող միջավայրը,
- կանոնակարգումը (ներքին և արտաքին միջավայր),
- առանձին տեսակի վերահսկողությունը,
- վերահսկող գործունեությունը,
- հատուկ վերահսկողությունը,
- դիտարկումները:

Ներքին վերահսկողության վերաբերյալ ավելի պարզ պատկերացնելու համար բնութագրենք վերոհիշյալներն ըստ առանձին տարատեսակների:

Վերահսկող միջավայրը դա ներքին վրահսկողության մնացած բաղադրիչների հիմքն է, որն ապահովում է աշխատակիցների կողմից իրականացվող գործընթացների կառուցվածքը և կարգապահությունը: Իր հերթին ներքին վերահսկողության միջավայրը իր մեջ նաև ներառում է բանկի աշխատակիցների էթիկան և կարողությունները, մենեջմենթի (կառավարման) ձևն ու փիլիսոփայությունը, պատասխանատվության և ղեկավարման տարանջատումը, կազմակերպական կառուցվածքը, ղեկավարների ուշադրությունն աշխատակիցների որակավորման բարձրացման վրա և տնօրենների խորհրդի ձևավորումը:

Գծապատկեր

Ներքին վերահսկողության համակարգի բաղկացուցիչ տարրերը



Վերահսկվող միջավայրում իրենց ուրույն տեղն ունեն՝

• **ղեկավարման քաղաքականությունը և մեթոդները**, որի ենթատեքստում ի նկատի ունենք մենեջմենթի կապն իրականացվող գործընթացների ռիսկի աստիճանի, ֆինանսական հաշվետ-

վրայն ենք կատարվող գրառումների, հաշվապահական հաշվառման տվյալների հիման վրա տարբեր մեթոդներով գնահատումների և տեղեկատվության վերամշակումների հետ:

• **կազմակերպական կառուցվածքը**, դա բոլոր տեսակի կազմակերպությունների, այդ թվում նաև բանկերի կողմից իրականացվող գործընթացների նախահիմքն է և, որի հիման վրա էլ պլանավորվում է նրա գործունեության ուղղվածությունը՝ նպատակներին հասնելու համար: Կազմակերպական կառուցվածքի բարձր պահանջները բավարարող հիմնական բաղադրիչներն իրենցում ներառում են պատասխանատվությունների և լիազորությունների առանձնացումը, դրանց բաշխումն ու ներքին հաշվետվություններին համապատասխան ուղիների հաստատումը: Բացի դրանցից պատասխանատվությունների և լիազորությունների առանձնացումն իր էությանը հնարավորություն է ընձեռում, որպեսզի աշխատակիցներն ինքնուրույն սահմանեն իրենց աշխատանքային պարտականությունները՝ պատահականություններից զերծ մնալու համար: Ներքին վերահսկողության միջավայրը շատ դեպքերում սահմանվում է նաև բանկի աշխատակիցների պատասխանատվությունն ապահովող գործառնությունների իրականացման համար¹:

Ղեկավարության իրավասությունները, որոնք հնարավորություն են տալիս ցուցաբերելու խնդիրներին հասնելու համար անհրաժեշտ գիտելիք և հմտություն, որպեսզի դրանով իսկ որոշվի անհատի կողմից կատարվող աշխատանքի արդյունավետությունը: Միաժամանակ ղեկավարությունը որոշումներ է ընդունում իրավասության համար, որին պետք է համապատասխանի աշխատակիցը, ուշադրություն դարձնելով մասնագետ պատրաստելու ծախսերի և ազատ գործելու հնարավոր մակարդակի վրա: Իրենց հերթին իրավասությունը և ազատ գործակերպն իրենց դրական դերակատարումն ունեն վերահսկողության գործընթացում:

Վերահսկող միջավայրն իր գործունեությունն արդյունավետ կազմակերպելու համար **կանոնակարգման** առումով ներառում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին նորմատիվային փաստաթղթերի ընդունման և համապատասխանեցման կարգավորումը:

Առանձին տեսակի վերահսկողությունը, որը կապված է բանկի վարչական, հաշվապահական, ֆինանսական, իրավական, տեղեկատվատեխնոլոգիական և համակարգչային ստորաբաժանումների հետ: Ըստ այս վերահսկողության, բանկային գործունեության կարգավորման առումով, կարևորվում է վերոհիշյալ ստորաբաժանումների փոխկապվածությունները:

Վերահսկող գործունեությունը, որը կարգավորում է ներքին վերահսկողության համակարգի առանձին բաղադրիչների փոխազդեցության և դրանց գործունեության գործընթացը: Նախ անհրաժեշտ է նշել, որ ներքին վերահսկողությունը իր գործունեության շրջանակներում գործող անկախ գործունեության տեսակ է, որի առաջնային խնդիրներից են հանդիսանում ռիսկերի բացահայտումը, որում գտնված է բանկը (ինչպես ֆինանսական, այնպես էլ հեղինակային առումով), գոյություն ունեցող ռիսկերից պաշտպանվածության ապահովումը և վերջինիս պարբերաբար վերանայումը: Կարևոր է գնահատել նաև, թե արդյոք կան համապատասխան վերահսկողական հնարավորություններ առաջադրված նպատակներին հասնելու համար, ինչպես նաև ապահովել համապատասխան միջոցառումներ, որպեսզի ներքին վերահսկողական համակարգն աշխատի արդյունավետ²:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր գործունեություն առաջնորդված է համապատասխան սկզբունքներով, այդ թվում նաև բանկերի համար՝

- ներքին վերահսկողությունը պետք է լինի շարունակական գործընթաց, որն իրականացվում է բանկի ղեկավարների և ամբողջ աշխատակազմի կողմից,
- ներքին վերահսկողությունը պետք է նպաստի բանկերի, նրանց հաճախորդների և ներդրողների շահերի պաշտպանությանը, բանկի գործունեության ընթացքում անձնակազմի կողմից

¹ Белуха Н.Т. «Аудит», М. 2000, ст. 156-158.

² Суйц В.П. Закаря Ж.В, Внутренний контроль в коммерческом банке, Москва 1998, ст. 9-56.

օրենսդրության ու նորմատիվ ակտերի պահպանմանը, իրականացվող գործառնությունների ապահովմանն ու բանակային գործունեության հետ առնչվող ռիսկերի նվազեցմանը,

- ներքին վերահսկողության գործունեությունը պետք է լինի անկախ այլ ստորաբաժանումների աշխատանքից, որն անմիջապես կառավարում է բանկի ղեկավարը կամ ղեկավարությունը:

Վերահսկող գործունեությունը իր եռթյամբ ներառում է ինչպես հատուկ վերահսկողությունը, այնպես էլ վերահսկող գործընթացների իրականացումն աշխատակիցների կողմից՝ իրենց պարտականությունների կատարման ընթացքում: Իր կարևորությամբ **հատուկ վերահսկողությունը** լինելով վերահսկող գործունեության բաղադրիչները մեկը, իրականացնում է ինչպես աշխատակիցների կողմից առանձին գործառնությունների կատարման և ծառայությունների մատուցման, այնպես էլ ստացված ֆինանսական արդյունքների և ակտիվների վիճակի ստուգում: Հատուկ վերահսկողությունը հիմնված է ներքին աուդիտի կողմից իրականացվող աշխատանքների վրա:

Բանկերում ներքին վերահսկողական համակարգն իրեն ավելի արժանահավատ դրսևորելու համար կարևորվում է **դիտարկման (մոնիթորինգ)** անցկացումը, որով բնութագրվում է աուդիտի արդյունավետ ստուգումը և գնահատումը նրա ժամանակային գործունեության ընթացքում: Դիտարկման գործընթացում ստուգումն իրականացվում է երկու փուլով: Դրանցից առաջինի դեպքում իրականացվում է կառավարիչների գործունեության օպերատիվ ստուգում, իսկ երկրորդի դեպքում առանձին ստուգման արդյունքների գնահատում:

Բացի վերոհիշյալներից իր ուրույն տեղն ունի նաև **գործառնական ստուգումը**, որն իրականացվում է անձնակազմի կողմից իրենց ամենօրյա պարտականությունները կատարելու ժամանակ: Այդ գործընթացում առանձին գնահատականներ ի հայտ են գալիս գործառնական ստուգման ժամանակ արդյունավետության և ռիսկի գնահատման հետ կապված: Վերահսկողության գնահատականն ի հայտ է գալիս ինչպես աուդիտի ժամանակ ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվության անհուսալիության ռիսկի սահմանելու, այնպես էլ այդ միջավայրին համապատասխան անցկացվող հաշիվների մնացորդների ստուգման վերահսկողության գործընթացների ժամանակ:

Անհրաժեշտ է նշել նաև այն կարևոր հանգամանքը, որ բանկում հաշվառում վարելիս ներքին ստուգման պայմաններից մեկը, կատարողական և վերահսկողական գործառնությունների հստակ տարանջատումն է: Բանկն իրականացնում է նախնական և հաջորդական ստուգումը իր կողմից իրականացվող գործառնությունների գծով: Երբ իրականացվում է նախնական ստուգում, ապա բանկային գործառնությունները վերահսկվում են դրանց իրականացման պահին կամ մինչև այդ պահը: Բանկի կողմից իրականացվող գործառնությունների մեծամասնությունը ենթական են բանկային ստուգման՝ կապված դրամարկղային, ավանդային, վարկային, հաշվարկային և նմանատիպ այլ գործընթացների հետ:

Այսպիսով, ընդհանրացնելու համար պետք է նշել, որ ինչպես բոլոր տնտեսվարող սուբյեկտները, այդ թվում նաև բանկերն իրենց գործունեությունն իրականացնում են տնտեսական և բանկային առանձնահատկություններին բնորոշ իրավական ու հաշվառման միջավայրում: Ուստի վերջիններս անհրաժեշտ են ոչ միայն բանկային վերահսկողության արդյունավետ կազմակերպման, այլ նաև բանկերի համար ներքին վերահսկողության կարգավորման մեխանիզմների մշակման և իրենց ֆինանսական խնդիրները լուծելու առումով:

ՀՀ ՊՖԿ-ի Կենտրոնի Կազմակերպչական խումբի
Կազմակերպչական խումբի
Կազմակերպչական խումբի
Կազմակերպչական խումբի

ՀՀ ՊՖԿ-ի Կենտրոնի Կազմակերպչական խումբի
Կազմակերպչական խումբի Կազմակերպչական խումբի

Հայաստանի Հանրապետության ԱԱՀ-ի մասին օրենքի համաձայն ԱԱՀ-ի դրույքաչափը կազմում է 20%¹, ինչի շնորհիվ 2013 թ. ՀՀ-ում պետբյուջե է փոխանցվել 396,693.7 մլն. դրամ²: Այս հարկատեսակը կազմում է ՀՀ պետական եկամուտների 39.69%-ը, իսկ շահութահարկը և եկամտային հարկերը 12.47% և 25.12%³ համապատասխանաբար: ԱԱՀ-ի նման տոկոսը զարգացած տնտեսությամբ երկրների համեմատությամբ բարձր ցուցանիշ է և մատնանշում է տնտեսության անառողջ վիճակ: Զարգացած տնտեսության ցուցանիշներից է, որ հարկերի միջոցով ձևավորված պետական եկամուտները գերակշռորեն բաղկացած լինեն ուղղակի հարկերից՝ եկամտային հարկից և մասնավորապես շահութահարկից:

Սույն հոդվածի նպատակն է գնահատել ՀՀ-ում ավելացված արժեքի հարկի դրույքաչափի (այսուհետ՝ ԱԱՀ) նվազեցման մակրոտնտեսական ազդեցությունը և այդ մեթոդաբանության դիտարկումը որպես օգտակար գործիք այլ հարկատեսակների դրույքաչափերի փոփոխության արդյունքների գնահատման համար:

Հարկերի դրույքաչափի նվազեցման անմիջական արդյունքը այն է, որ ցանկացած նվազեցում կբերի պետական եկամուտների ուղղակի նվազեցման: Սակայն հենց այն գումարը, որն ազատվում է նվազեցման արդյունքում՝ հայտնվում է սպառողների մոտ, որոնք իրենց հերթին այն ծախսում են և վերստին ներդնում տնտեսության մեջ, որն իր հերթին առաջացնում է նոր հարկեր: Այս մակրոտնտեսական երևույթների գնահատման համար դիտարկվել են հետևյալ ազդեցությունները՝

- Ուղղակի արդյունք՝ առաջարկվող ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման արդյունքում նվազած պետական եկամուտները:
- Քեյնսի գործակցի արդյունք՝ առաջարկվող ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցման արդյունքում ստացված գումարի շրջանառության արդյունքից գոյացած գումարի սպառումից (հաշվի առնելով ՀՀ-ում սահմանային սպառման հակումը) առաջացած պետական եկամուտները հարկերի տեսակով:

Քեյնսի գործակցի արդյունքի հաշվարկի համար դիտարկվել է հարկերից ազատված գումարը, ՀՀ-ում սահմանային սպառման հակումը և դրա արդյունքում ստացված գումարի ազդեցությունը ԱԱՀ-ի փոփոխված դրույքաչափով:

ՀՀ-ում սահմանային սպառման գնահատման համար դիտարկվել են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության աղքատության վերաբերյալ ուսումնասիրությունները, մասնավորապես «Տնային տնտեսությունների եկամուտներ, ծախսեր և բազային սնունդի սպառում» ուսումնասիրությունը³: Վերլուծության արդյունքում ստացվում է, որ 2012թ. միջին սպառման հակումը ՀՀ-ում կազմում է 89-90%, սակայն նույն հաշվետվության վերլուծության արդյունքում ստացվում է, որ սահմանային սպառման հակումը կազմում է 47.91%: Նման տարբերությունը վիճակագրական տվյալների մեջ և այն որ նման ուսումնասիրություններ չեն կատարվել

¹ ՀՀ Ազգային ժողով, ՀՀ Օրենք Ավելացված Արժեքի Հարկի Մասին ՀՕ-118, Բաժին 3՝ Հարկի Դրույքաչափեր, Հոդված 9:
² ՀՀ ԿԱ ՊԵԿ (2013թ.), 2013 թվականի դեկտեմբեր ամսվա ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ աղյուսակը և գրաֆիկական պատկերները
http://www.taxservice.am/Shared/Documents/ TI/Tax_Statistics/Tax_Statistical_Data/vt_hhpek_ekamut_2013_jan_dec.xls
³ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (2013թ.), Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն , Մաս 2. Տնային տնտեսությունների եկամուտներ, ծախսեր, և բազային սնունդի սպառումը, էջ 91,92:
http://armstat.am/file/article/poverty_2013e_3.pdf

2012թ.-ից ի վեր, բավարար հիմք է հանդիսացել կատարելու առանձին ուսումնասիրություններ կա սահմանային սպառման հակումը ճշգրտելու նպատակով:

Սահմանային սպառման հակումը ցույց է տալիս թե ինչպես կտնօրինի քաղաքացին ստացված հավելյալ գումարը: Այլ կերպ ասած իր ստացած հավելյալ 1 դրամի որ մասը կծախսի խնայելու փոխարեն: Իր հերթին սահմանային սպառման հակումը մատնանշում է թե տնտեսության մեջ գումարի ավելացումը ինչպես կծախսվի և յուրաքանչյուր հավելյալ ծախսումի որ մասը նորից կծախսվի և այդպես շարունակ: Տնտեսության մեջ գումարի նման ավելացման չափը գնահատվում է Քեյնսի գործակցի միջոցով:

Սահմանային սպառման հակման ուսումնասիրության հարցումը կատարվել է 2014թ. մայիսի 19-ից մինչև հունիսի 7-ը: Հարցմանը մասնակցել է 100 անձ, որոնք հիմնականում ֆինանսական ծառայությունների, հեռահաղորդակցության, SS (IT), ոչ պետական և պետական ծառայության աշխատակիցներ են: Հարցման հիմնական կետերն են եղել՝

1. Ինչքա՞ն է կազմում Ձեր ընտանեկան (տնային տնտեսության) միջին ամսական եկամուտը:
2. Հավելյալ 5% եկամուտ ունենալու պարագայում քանի՞ տոկոսը կծախսեիք: Օր.՝ 100,000 դրամ եկամուտ ունենալու պարագայում հավելյալ 5,000 դրամ-ի ո՞ր մասը կծախսեք խնայելու փոխարեն:

Ուսումնասիրության հիմնական ենթադրությունը եղել է հետևյալը՝

- Եթե մասնակիցների միջին տնային տնտեսության ամսական եկամուտը գերազանցում է ՀՀ-ում միջին ամսական եկամուտը, ապա միջին սահմանային սպառման հակումը կլինի առնվազն այնքան, որքան հարցման միջինացված արդյունքը և ավելին:
- Հավելյալ 5%-ի հարցի արդյունքը կիրառելի է 5%-ից ավելի փոքր հավելյալ եկամուտներ դիտարկելիս, որոնց պարագայում սահմանային սպառման հակումը նույնը կլինի կամ ավելին:

Ուսումնասիրության արդյունքում ստացվել է, որ մասնակիցների կշռված միջինով սահմանային սպառման հակումը կազմում է մոտ 80%: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի, ներկայում ՀՀ-ում միջին ամսական եկամուտների 98%-ը 260,000-ից¹ ցածր են, հետևաբար վերաբաշխելով ուսումնասիրության արդյունքներն ըստ ՀՀ եկամուտների կշիռների, ՀՀ-ում սահմանային սպառման հակումը կազմում է մոտ 87.6%: Ստացված արդյունքը ավելի համահունչ է ներկա միջին սպառման հակումին, քան հասանելի վիճակագրական տվյալները:

Այսպիսով, ուսումնասիրության արդյունքները ամփոփելով հնարավոր է հաշվել սահմանային սպառման հակումից ստացվող Քեյնսյան գործակիցը:

Քեյնսյան գործակցի բանաձևն է՝

$$\text{Քեյնսի գործակից} = \frac{1}{1 - \text{սահմանային սպառման հակում}}$$

Վերոնշյալ բանաձևի արդյունքում ստացվում է, որ Քեյնսյան գործակիցը կազմում է 8.07: Այսինքն՝ ՀՀ տնտեսության մեջ ազատված ցանկացած գումար, որն ուղղված է սպառմանը կբերի իր 8.07-ապատիկը:

Քանի որ ԱԱՀ-ի դրույթաչափի նվազեցումը կբերի սպառմանն ուղղված գումարների ազատման, ապա դրանք կազդեն ՀՀ տնտեսության վրա վերոնշյալ գործակիցը հաշվի առնելով:

Պարզության համար, այս հոդվածի շրջանակներում ընդունվել է ուսումնասիրության արդյունքում ստացված միջին սահմանային սպառման արդյունքը, այլ ոչ թե հնարավոր ավելի հակումը:

Քանի որ սպառման ձևավորման գործընթացում ամեն սպառված դրամի դիմաց գանձվում է շահութահարկ, ապա շահութահարկի դրույթաչափը ավելանում է պետական եկամուտներին հավելված ԱԱՀ-ից բացի: ԱԱՀ-ի դրույթաչափի նվազեցման արդյունքում ստացված հավելյալ

¹ ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն (2013թ.), Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատություն, Մաս 1. Աղքատության պատկերը և աշխատանքային շուկայի զարգացումները Հայաստանում 2008-2012թթ., էջ 106: http://armstat.am/file/article/poverty_2013a_2.pdf

գումարը ավելանում է ընկերությունների վաճառքին: ՀՀ ընկերությունների վաճառքի մոտ 3.86%¹ վերածվում է շահութահարկի:

Բացի այդ դիտարկվել են 4 սցենար՝ ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցում՝ 1%, 3%, 5%, 10%, տնտեսության զարգացման զգայունության հաշվարկման համար: Նման հաշվարկը ցույց կտա թե, ԱԱՀ-ի դրույքաչափի որքան նվազեցումը կբերի տնտեսական աճի, և որքանից հետո այլևս կհանգեցնի վնասի:

Վերլուծության արդյունքները բերված են ստորև՝

Աղյուսակ 1

ԱԱՀ-ի դրույքաչափի նվազեցում

	մլն ՀՀ դրամ			
Արդյունքի տեսակ	-1%	-3%	-5%	-10%
Ուղղակի արդյունք	-3,966.94	-11,900.81	-19,834.69	-39,669.37
Քեյնսի գործակցի արդյունք	6,348.91	17,666.44	27,063.58	41,467.31
Զուտ արդյունք	2,381.97	5,765.63	7,228.89	1,797.94


Կարելի է նկատել որ ԱԱՀ-ի դրույքաչափի նույնիսկ 1% նվազեցումը արդեն կբերի դրական արդյունքների: Այս երևույթը բացատրելի է մասնավորապես ՀՀ-ում բարձր սպառման գործակցով, քանի որ եկամուտների մեծ մասը սպառվում է: Այդ սպառումների մեծ մասը կրկին սպառվում է և դրանով իսկ դրական արդյունք ունենում տնտեսության վրա:

Վերը բերված աղյուսակից կարելի է եզրակացնել, որ սցենարներից առավելագույնի՝ 10% ԱԱՀ-ի նվազեցման դեպքում զուտ արդյունքը կտրուկ նվազում է, որը բացատրելի Լաֆֆերի կորի շնորհիվ: Ըստ Լաֆֆերի, պետական եկամուտները աճում են հարկերի դրույքաչափի աճին զուգընթաց մինչ որոշակի դրույքաչափ, որից հետո դրույքաչափի ավելացումը աշխատում է ի վնաս պետական եկամուտների:

Ստորև բերված է Լաֆֆերի կորի ձևափոխված տարբերակը, որը ներկայացնում է այս հոդվածի արդյունքը՝

Գծապատկեր 1

ԱԱՀ-ի առավել արդյունավետ կետը Լաֆֆերի կորի վրա



Ներկայացված ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրակացնել, որ ներկա պահին ՀՀ-ում ԱԱՀ-ի դրույքաչափը չի գտնվում իր ամենաարդյունավետ կետում: ԱԱՀ-ի նվազեցումը 5%-ով, այսինքն՝ հասցնելով դրույքաչափը 15%-ի ԱԱՀ-ից ստացված պետական եկամուտները կլինեն ավելի մեծ, քան ներկայում կիրառվող դրույքաչափի դեպքում:

Այս վերլուծության արդյունքից ելնելով, տվյալ մեթոդաբանությունը հավանաբար կարելի է կիրառել այլ հարկատեսակների նկատմամբ կախված տեղեկատվության հասանելիությունից:

¹ ՀՀ ԱԿԾ (2011թ.), Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, Մաս Թ, էջ 22.
http://www.armstat.am/file/article/finansner_10_3-4.pdf

²ᵒԾ իճ-ᵒճաՄ ՄՄ

ԾԾ զ² ᵒՉ ᵒՃԱՅՄՅԳ ²ՅՅ
 իՅԻ»²ՅՅ ԳճաճԱՄՅԳ ԳՅԵԻԳճճԻԳ
 ²ճՈՃ²Յ

ԾՅՅճճԻՅՅ Գն

Սույն հոդվածի նպատակն է ցուցադրել, որ ՀՀ հարկաբյուջետային քաղաքականությունում փոփոխությունը, մասնավորապես ԱԱՀ-ի դրույթաչափի նվազեցումը, կարող է դրական ազդեցություն ունենալ պետական եկամուտների և ընդհանուր տնտեսության վրա: Դրական արդյունքի հիմնական դրդապատճառն է ՀՀ-ում սահմանային սպառման հակման բարձր մակարդակը: ԱԱՀ-ի դրույթաչափի նվազեցումը 5%-ով կհանգեցնի ԱԱՀ-ի զծով ՀՀ պետական եկամուտների առավելագույն աճի:

²ՅԵՏ ²³ᵒն. ²²Ծ ²նճճԱՅ²²²², ²³ՆՄ²Յ²ՄՅ ²ճ²ᵒՄ²Ն²ԳճՍ, ᵒ»ՄՅᵒՑ ²ն²ԻՈճ, ²»²²Յ»²ԻՄճճԻ, Ն²նԻՈ ²նճճԱՅ²²²²Յ ²Ի²²»ᵒճճՍ:

АНАЛИЗ ЧУВСТВИТЕЛЬНОСТИ ЭКОНОМИКИ РА К СНИЖЕНИЮ СТАВКИ НДС

ARAM TER-GHEVONDYAN

аспирант Института экономики
 им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье предпринята попытка показать, каким образом изменение в налогово-бюджетной политике РА, в частности, снижение ставки НДС, может оказать положительное влияние на государственные доходы и экономику в целом. Основной побудительной причиной положительного результата является высокий уровень предельной склонности к потреблению в РА. Снижение ставки НДС на 5 % приведет к максимально возможному увеличению государственных доходов РА по линии НДС.

Ключевые слова: ставка НДС, предельная склонность к потреблению, мультипликатор Кейнса, государственный доход, снижение налоговой ставки.

ANALYSIS OF SENSITIVITY OF THE ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA TO THE REDUCTION OF VAT RATE

ARAM TER-GHEVONDYAN

Ph.D. Student
 M. Kotanyan Institute of Economics
 National Academy of Sciences
 Republic of Armenia

Abstract

The article attempts to illustrate that changes in the fiscal policy in the Republic of Armenia, namely, the reduction of VAT rate, could positively affect the state revenues and the overall economy. The main driver of the positive effect is the high value of marginal propensity to consume in the Republic of Armenia. The reduction of VAT rate by 5 percentage points could cause the highest increase in VAT collected in state revenues of the Republic of Armenia.

Keywords: VAT rate, marginal propensity to consume, Keynesian multiplier, state revenue, tax rate reduction.

ԻՂԵՂՈՒԹՅԱՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԸՆԿՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Ելնելով հարկային եկամուտների կառուցվածքից, ինչպես նաև տնտեսության ոլորտների հարկման առանձնահատկություններից, հատկապես տնտեսական ճգնաժամի ընթացքում, կարևորվեց հարկային համակարգի ինդիկատիվ գործառույթի պահանջների գնահատումը: Խոսքը վերաբերում է ՀՀ տնտեսական միջավայրին ու դրանում առկա վարչարարական ռիսկերի մեղմացմանը: Ավելին՝ որքան ժամանակին և անհրաժեշտ քանակությամբ հավաքագրվում են հարկային եկամուտները, այնքան ստացված արդյունքները օպտիմալ տեղաբաշխվում են պետության կողմից ֆիսկալ և սոցիալական քաղաքականությունների իրականացման համար, ինչն էլ նպաստում է ֆինանսական հարաբերությունների արդյունավետության, հարկային կարգապահության իրավիճակի, հարկային բազայի ավելացման հնարավորությունների բարձրացմանը:

Սույն հոդվածի շրջանակներում փորձենք բացահայտել հարկերի վճարումից խուսափելուն նպաստող և հարկային օրենքները խախտելուն ուղղված հիմնական գործոնները, որոնք, վերջին հաշվով, նպաստում են ստվերային եկամուտների ձևավորմանը: Բացի այդ, գտնում ենք, որ այդ հարցադրումները հետազայում կնպաստեն հարկային վարչարարության ոլորտում թույլ կողմերի բացահայտմանը՝ հիմնավորելով հարկային բարեփոխումների իրականացման մոտիվացիան:

Աղյուսակ 1

Հարկերը չվճարելու կամ հարկային օրենքները խախտելու վարքագիծն ու դրանց օրինաչափությունները¹

Գործոնները	Ընդհանուր բնութագիրը
Տնտեսվարող սուբյեկտների վարքագիծ	Կառուցվածքը (իրավաբանական և ֆիզիկական անձինք՝ անհատ ձեռներեց), տնտեսվարող սուբյեկտների չափն ու գործունեության իրականացման ժամանակահատվածը, տնտեսական գործունեության տեսակն ու եկամուտների ձևավորման աղբյուրներն ըստ աշխարհագրական տեղադիրքի (ռեզիդենտ, ոչ ռեզիդենտ, ներքին և արտաքին շուկաներ), ֆինանսական տվյալներ (նախնական կապիտալ ներդրում), տնտեսվարող սուբյեկտների միջնորդների տեսակները:
Հարկման արդարության սկզբունքի պահպանում	Հարկման արդարության սկզբունքի տնտեսագիտական բովանդակությունը կայանում է նրանում, որ այն պարունակում է հարկային հարաբերության մեկ մասնակցի՝ հարկ վճարողի շահերի նկատմամբ մյուսի՝ պետության շահերի գերակայություն: Պետության շահերի գերակայության ապահովումը զուգակցվում է հարկ վճարողի իրավունքների նկատմամբ նրա պարտականությունների սահմանման հետ՝ հիմք ընդունելով, որ հարկազանձումը համապարտադիր և անհատույց բնույթ է կրում բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար:
Հարկերի վճարման ընթացակարգերի վարչական բեռ	ՀՀ հարկային օրենսդրության անկատարությունը և հարկային ծառայողների հետ գաղտնի համաձայնության գալու հնարավորությունն այն հիմնական հանգամանքներն են, որ թույլ են տալիս խուսափել հարկերից:
Ճյուղային գործոններ	Ճյուղի տեսակն ու չափը, դրա հիմնական ներկայացուցիչը, ծախսերի կառուցվածքն ու շահութաբերության նորման, կարգավորող ճյուղի աշխատանքային գործունեությունը, ճյուղային հարցեր (մրցակցության մակարդակ, սեզոնային գործոններ և ենթակառուցվածքների զարգացվածության աստիճան):

¹ Исследовательские записи Института Кавказа, "Экономика старн Южного Кавказа в период кризиса 2009-2010гг.". N5- Июль, 2011г. с. 36-39 (55с).

Գործոնները	Ընդհանուր բնութագիրը
Սոցիոլոգիական գործոններ	Մշակութային նորմեր, էթիկական պատկանելություն, կառավարության նկատմամբ վերաբերմունք, տարիք, սեռ, կրթության մակարդակ:
Տնտեսական գործոններ	Ներդրումներ, տոկոսադրույքների դեմոգրաֆիական կառուցվածք, հարկային համակարգ, պետական քաղաքականության ուղղվածությունն ու միջազգային կազմակերպություններին ինտեգրման աստիճան, ինֆլյացիա և շուկաներում մրցակցության աստիճան ու դրանց քաղաքականացված բնույթ:
Չոգեբանական գործոններ	Ազահություն, ռիսկ, վստահություն, արժեքային համակարգ, արդարության և հավաստիության սկզբունքների փոխազդեցություն ու դրանց խախտման պատճառով հարկեր վճարելուց խուսափելու իրական հնարավորություն:

Հարց է առաջանում. «Ինչպե՞ս են առաջանում ստվերային եկամուտները»: Այդ հարցի առումով, գտնում ենք, որ ստվերային եկամուտների առաջացումը ուղղակիորեն պայմանավորված է հարկերը չվճարելուց կամ հարկային օրենքները խախտելու վարքագծից: Ընդ որում, վերջինիս վրա ազդում են բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններ, որոնց օրինաչափությունները կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ, որոնց արդյունքները բերված են աղյուսակ 1-ում.

- Տնտեսավարող սուբյեկտները տարբեր կերպ են արձագանքում կոռուպցիոն և հարկերից խուսափելու երևույթներին: Օրինակ՝ անհատ ձեռներեցի համար հարկերը վճարելուց խուսափելու և հարկային օրենքները խախտելու վարքագծի հիմքում ընկած է նրա պարտաճանաչ լինելու, պատասխանատվություն կրելու, օրենքը գերակա համարելու անձնական հատկությունները: Իրավաբանական անձանց համար ստվերային եկամուտներ առաջացնելու գործում հիմք է ընդունվում ընկերության մասնագիտացվածության բնույթը, ստվերում գործելու առաքելության գերակայությունը, համաշխարհային վարկանիշավորման անտեսումը և այլն¹:
- Յուրաքանչյուր հարկ վճարողի համար հարկային քաղաքականության արդյունավետության աստիճանը, առաջին հերթին, պայմանավորված է նրանով, թե արդյոք հարկային բեռն իր համար նույնն է այլ հարկ վճարողների համեմատ, թե՛ ոչ: Ուստի, ցանկացած հարկ վճարող հարկման արդարության սկզբունքը գնահատում է՝ հիմք ընդունելով կամ հարկային բեռի մակարդակի համեմատական գնահատումը այլ հարկ վճարողների նկատմամբ, կամ հարկ վճարողների և հարկային ծառայողների և փոխհամաձայնեցված գործողությունների արդյունքում հարկվող եկամուտների թերհայտարարագրման փաստը:
- Հարկերի վճարման ընթացակարգերը բավականին ժամանակատար և ծախսատար են, ուստի դրանցից խուսափելու համար տնտեսավարող սուբյեկտները և հարկային ծառայողները գաղտնի և անօրինական համաձայնության են գալիս հարկային հաշվետվությունները մասնակի ներկայացնելու կամ դրանք, ընդհանրապես, չներկայացնելու համար²:
- Սոցիալական խնդիրների խորացումն ու եկամուտների անհավասարությունը ՀՀ տնտեսությունում ձևավորում են այնպիսի մթնոլորտ, որտեղ նույնիսկ պետական գործիչները հակված են լինում վարչարարական ռիսկերին: Օրինակ՝ հարկային ծառայողների աշխատավարձի ցածր մակարդակը՝ այլ երկրների հետ համեմատած, նպաստում է կոռուպցիոն ռիսկի աճին, իսկ տնտեսավարող սուբյեկտների կողմից համապարտադիր և անհատույց բնույթ կրող հարկերի վճարումը պահանջում է օրինական դաշտում անցնել հարկային վարչարարության բավականին բարդ և «թանկարժեք» ճանապարհով: Երկու տարբեր օղակների տնտեսական շահերը հատվում են մեկ կետում. այն է՝ հարկվող

¹ ВСЕМИРНЫЙ БАНК, «Проведение налоговых проверок на основе системы оценки рисков: Подходы и опыт различных стран», 2009 г. Вашингтон, стр. 46-47.

² Alm, J., R. Bahl, and M. Murray. 1993. "Audit Selection and Income Tax Underreporting in the Tax Compliance Game." *Journal of Development Economics* 42 (1): 1-33p.

եկամուտը թաքցնելու, այն թերհայտարարագրելու և կոռուպցիոն ռիսկ առաջացնելու վարքագծի դրսևորում¹:

- ՀՀ տնտեսական օրենսդրության փոփոխումը և պաշտոնական մեկնաբանությունների անկանխատեսելիությունը, հարկային վարչարարության անբավարար մակարդակը ցույց է տալիս, որ հարկային համակարգի կատարելագործման հիմնական ուղղությունների մեջ առանձնացվում է հարկային օրենքների դրույթների պարզեցումը, պահանջների հստակեցումը՝ ՀՀ օրենսդրության մեջ առկա անվստահությունները և երկիմաստությունները վերացնելու միջոցով: Իսկ դա հանգեցնում է միմյանց հակասող իրավական նորմերի գործողության:
- Սոցիոլոգիական գործոնները, ինչպիսիք են՝ երկրի մշակութային նորմերը, էթնիկական պատկանելիությունը, կառավարության նկատմամբ վերաբերմունքը, տարիքը, սեռը, կրթության մակարդակը, բնորոշում են տվյալ երկրում հարկային մշակույթի ձևավորման նախադրյալները: Այսինքն՝ հարկազանձումն իրականացվում է ոչ միայն որպես պետական բյուջեում եկամուտ ապահովելու համար, այլ այն պատճառով, որ այդպիսին են խաղի կանոնները, դրանք հավասար են բոլորի համար, ուստի բոլորն էլ պետք է ենթարկվեն այդ կանոններին:
- Տնտեսական զարգացման ներկա փուլում առկա են այնպիսի տնտեսական գործոններ, որոնք նպաստում են հարկային քաղաքականության և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը: Կարլեի է ասել, որ դրանք չեն պայմանավորած միայն հարկային գործիքներով և հարկային լծակներով: Հակառակը, մեր կողմից այս պահի դրությամբ անտեսվում են վերջիններիս կիրառման գործնական հնարավորությունները, և շեշտը դրվում է վարկային տոկոսադրույքների քաղաքականության վերանայմանը, բնակչության ժողովրդագրական կառուցվածքին, ՀՀ գործարար միջավայրի և միջազգային կազմակերպություններին ինտեգրման աստիճանի խորացմանը, ինֆլյացիայի սպասումների մի շարք այլ գործոնների վրա:
- Շուկայական տնտեսությունը իր հետ բերեց բազմաթիվ դրական փոփոխություններ՝ նպաստելով գործարար միջավայրում գործող տնտեսվարող սուբյեկտներ կառավարչական և ռազմավարական որոշումների ազատական և ինքնուրույն դիրքորոշում ունենալու անսահմանափակ հնարավորություններին: Սակայն, նույն իրավիճակում նրանց մոտ զարգանում են նաև հոգեբանական գործոններ, որոնք պայմանավորված են հարկ վճարողի անձնական և սուբյեկտիվ վարքագծի դրսևորման առանձնահատկությունների հետ, ինչպիսիք են՝ ազահություն, ռիսկի գնալու կարողություն, վստահության, արժեքային համակարգի, արդարության և հավաստիության սկզբունքների փոխազդեցություն և այլն: Այսպիսով, հարկերը չվճարելու կամ հարկային օրենքները խախտելու վարքագծերն ու դրանց օրինաչափությունները, ինչն էլ պահանջվում էր հիմնավորել, նպաստում են սովերային եկամուտների առաջացմանը:
Բացի այդ, ՀՀ-ում հարկային օրենքները խախտելու և հարկերը վճարելուց խուսափելու համար հարկային քաղաքականության մեջ առանցքային դեր է կատարում նաև հարկային ստուգումների համակարգը: Գտնում ենք, որ սույն համակարգում կարևոր դեր ունի հարկային ծառայողների մասնագիտական կարողությունների բարձրացման և էթիկական նորմերի խստացմանն ուղղված պետական քաղաքականության լծակը: Վերջինս, ի վերջո, կտանի ՀՀ-ում սովերային եկամուտների չեզոքացմանն ու հարկային վարչարարության արդյունավետության աստիճանի բարձրացմանը:

¹ Andreoni, J., B. Erard, and J. Feinstein. 1998. "Tax Compliance." *Journal of Economic Literature* 36 (2). 60p. (818p.)

ИРИНА АКОПЯН

*старший научный сотрудник Института
экономики им.М.Котаняна НАН РА, канд.экон.наук.*

ОСНОВНЫЕ ПРИНЦИПЫ НАЛОГООБЛОЖЕНИЯ ДОХОДОВ И ИМУЩЕСТВА ФИЗИЧЕСКИХ ЛИЦ

Новые тенденции в развитии мировой экономики, углубление социальных проблем в развивающихся странах требуют соответствующих изменений в финансовой сфере, в частности, в налоговых системах постсоветских стран. Это в первую очередь относится к налогообложению физических лиц, что связано с низким уровнем доходов населения и значительной их поляризацией в большинстве этих стран. Особенно неблагоприятная ситуация сложилась в Армении, о чем свидетельствуют нижеприведенные данные.

Величина среднемесячной заработной платы в Армении не обеспечивает социальный стандарт жизни. По данным исследовательской группы среднемесячная заработная плата в республике составила в 2013г. \$ 368,9 (для сравнения, в Грузии - \$ 460, в Азербайджане -\$ 539 , в России - \$ 939).¹ Кроме того, в стране наблюдается социальная инфляция, то есть повышение цен на предметы первой необходимости (первостепенные товары). Надо отметить также, что по сравнению с 2012 годом в 2013 году качественно ухудшилось соотношение между инфляцией и темпом роста номинальной среднемесячной заработной платы. По официальным данным, если в 2012г. индекс потребительских цен в республике составил 102,6 %, а средняя заработная плата повысилась на 5,1 %, то в 2013г. инфляция составила 5,8%, а темпы роста заработной платы - 4,8%.²

Имея целью установление в стране общественного согласия, построение социального государства и обеспечение социальной справедливости, политику правительства в ближайшие годы необходимо направить на сокращение поляризации общества, снижение разницы в уровне жизни работающего населения и пенсионеров, а также на решение других схожих задач. По программе правительства Армении на 2013 - 2017гг. запланировано до 2017г. повысить минимальную заработную плату до 70 тыс.драмов. Следует отметить, что эти цифры не дают реального представления о повышении благосостояния работающих граждан без учета показателя инфляционных ожиданий и экономически обоснованных расчетов минимальной потребительской корзины.

Таким образом, в Армении, как и в других постсоветских странах, остро стоят социальные проблемы, что актуализирует также вопрос совершенствования структуры налогов в направлении повышения доли прямых налогов в общих налоговых поступлениях бюджета, которые обладают более высокими возможностями выравнивания доходов по сравнению с косвенными (преобладание в большинстве этих стран, в особенности в Армении, косвенных налогов в основном связано со слабым развитием промышленности, с особой ролью внешней торговли, а также низким уровнем государственного регулирования экономики). Отметим, что косвенные налоги, в особенности налог на добавленную стоимость, можно охарактеризовать как наиболее социально несправедливые налоги.

Известно, что наиболее тесную связь с социальными проблемами имеют налоги с физических лиц, а именно подоходный налог, налог на имущество физических лиц, социальные платежи, поскольку именно эти виды налогов и платежей, в особенности это касается подоходного налога, могут выполнять социальные функции, в частности, функцию

¹ [http // www.ru, businessforecast, by](http://www.ru.businessforecast.by)

² [http //www armstat](http://www.armstat)

выравнивания доходов. Налогообложение физических лиц в РА регулируется законами о подоходном налоге с доходов, включающих: а) доходы в связи с работой по найму, б) доходы от предпринимательской деятельности и некоторые другие виды доходов, в) иные доходы. Надо отметить, что по сравнению с другими постсоветскими странами соотношение подоходного налога к ВВП в Армении находится на самом низком уровне. По данным за 2009-2010гг. подоходный налог по отношению к ВВП составил в республике 1,5%, а в среднем по всем странам СНГ 2,5%, а производительность подоходного налога, то есть соотношение динамики роста ВВП и налоговых отчислений по данному виду налога достигла в Армении всего 0,08%. Для сравнения отметим, что производительность подоходного налога составила: в Азербайджане – 0,50, в Беларуси- 0,27, в Грузии - 0,11, в Казахстане - 0,17, в Киргизии – 0,14, Молдове – 0,15, в России – 0,31, в Таджикистане – 0,13, в Украине – 0,32, Узбекистане - 0,09, а в среднем – 0,22 процентов.¹

По показателю доли поступлений подоходного налога в общей сумме доходов бюджета (по результатам анализа Статкомитета СНГ за 2011-2012гг.) Армения (в 2011г. – 9,2%, в 2012г. – 9,8%) отстает в основном от Украины и Беларуси (соответственно 15,1 и 15,3%, 10,9 и 12,2%). В целом доля подоходного налога по странам СНГ варьировала от 4,7% - в Казахстане, до 15,3% – в Украине.

В большинстве бывших социалистических государств подоходный налог взывается по прогрессивной шкале, которая в определенной степени влияет на выравнивание доходов. Исключение в этом вопросе составляют Российская Федерация, Республика Беларусь, Казахстан, Туркмения, в которых действует так называемая адвальной система налогообложения, то есть единая ставка налога по всем категориям физических лиц. В указанных странах она составляет: в России - 13%, в Беларуси – 12%, в Казахстане и Туркмении – по 10%. При этом законодательство стран СНГ содержит перечень освобожденных от налогообложения доходов, среди которых общими для всех стран является заработная плата, получаемая сотрудниками дипломатических служб, государственные пособия, пенсии, стипендии, материальная помощь из средств бюджета и ряд других.

В российской налоговой системе к настоящему времени сложилась регрессивная модель налогообложения доходов физических лиц. Надо отметить, что в России среди специалистов и ученых уже длительное время идет дискуссия по поводу перехода от введенной более десяти лет тому назад регрессивной системы к прогрессивной системе налогообложения.² Отказ от шкалы налогообложения доходов физических лиц в России в основном обосновывается тем, что с введением прогрессивной шкалы поступления в бюджет могут снизиться в связи с возможным ростом практики укрывательства доходов со стороны наиболее состоятельной части населения страны. Сторонники пропорционального изъятия считают, что в условиях плоской шкалы налогообложения доходов физических лиц принцип справедливости обеспечивается за счет того, что более состоятельные платят соответственно большую сумму налога. Что касается прогрессивной формы, то его сторонники утверждают, что при плоской шкале налогообложения принцип справедливости нарушается, поскольку оставшиеся после уплаты подоходного налога средства не могут обеспечивать низкооплачиваемым категориям средства для гарантирования минимального уровня жизни. Получается, что удельный вес налоговых платежей в оставшейся части доходов низкооплачиваемых слоев населения оказывается выше, чем у высокооплачиваемых работников,

¹ <http://taxservice-finance.am/>:

² В.Пансков.Каким быть налогу на роскошь в российской системе налогообложения. Журн. "Финансы", №6, 2013г., с.9.

и тем самым нарушается принцип социальной справедливости. По существу складывается ситуация, когда с ростом дохода ставка подоходного налога фактически снижается.

Одним из аргументов в пользу перехода на прогрессивную систему налогообложения является также то, что установленная ставка в 13% находится в противоречии с относительно более высокой по сравнению с ней ставкой налога на прибыль. Кроме того, принципы равенства и справедливости, игнорируемые принятой системой подоходного налога, присутствуют при налогообложении движимого и недвижимого имущества. Между тем налоговая система страны должна быть цельной и входящие в ее состав элементы должны быть взаимосвязаны между собой. В качестве яркого примера прогрессивного налогообложения можно привести США, где подоходный налог взимается по прогрессивной шкале, включающей необлагаемый минимум и три ставки, причем может облагаться либо отдельный человек, либо семья. Следует заметить, что до 1986 года в стране действовало 14 ставок подоходного налога, величина которого возрастала от 0 до 50%. В ходе налоговой реформы шкала ставок снижена, а необлагаемый минимум увеличен, но при этом уменьшено количество льгот. Что касается налогообложения семьи, то в отдельных странах, например во Франции, действует данный порядок, и там объектом налогообложения является совокупный доход семьи, независимо от количественного состава (такая система используется для стимулирования семьи – ставки от 0 до 56,8%).

В Армении вопрос перехода на налогообложение совокупного дохода семьи в настоящее время дискутируется среди ученых и специалистов.

Возвращаясь к российской налоговой политике отметим, что принятые правительством Российской Федерации основные направления и планируемые изменения в налоговой сфере на трехлетний период (2014-2016 годы), все же не предусматривают введения прогрессивной шкалы налогообложения физических лиц. Основным доводом при этом является тот, что с точки зрения развития человеческого капитала важно, чтобы в долгосрочном периоде сохранялась действующая система налогообложения доходов физических лиц. При этом важным следует признать изменение принципа предоставления имущественного налогового вычета по налогам на доходы физических лиц, предоставляемого при приобретении жилья. Предусматривается переход к новому порядку, когда этот вычет предоставляется налогоплательщику вне зависимости от количества приобретаемых им объектов (долей в приобретаемых объектах), но в пределах установленного максимального размера имущественного вычета, равного 2 млн. рублей.

Основные направления налоговой политики на перспективу в РФ предусматривают также выравнивание налоговых условий для различных видов инвестиций физических лиц. В настоящее время в РФ доходы от широко распространенных видов долгосрочных инвестиций, не относящихся к вложениям в ценные бумаги, освобождены от налогообложения, поэтому с налоговой точки зрения получается, что инвестиции в ценные бумаги менее выгодны по сравнению с другими инвестициями и правительство страны намерено провести соответствующие изменения в налоговое законодательство для выравнивания налоговых условий при инвестировании в ценные бумаги. Ставится также вопрос целесообразности освобождения от налогообложения процентов, получаемых физическими лицам по банковским вкладам и от реализации жилой недвижимости, земельных участков, гаражей и долей в этом имуществе. Что касается Армении, то здесь, в соответствии с девятой статьей закона РА “О подоходном налоге”, доходы от ценных бумаг, в том числе дивиденды, вычитаются из совокупного дохода налогоплательщика, что нельзя считать логичным в нынешней ситуации в республике.

В Армении с 2012 года вместо двухступенчатой ставки была установлена трехступенчатая ставка налога (10%, 20% и 25%). Ежемесячный облагаемый доход физических лиц в размере свыше 2,0 млн. драмов начал облагаться по ставке 25%. Надо отметить, что хотя в Армении действует прогрессивная шкала подоходного налога, однако по степени прогрессии мы заметно уступаем многим развивающимся и, тем более, развитым странам.

По сравнению с другими постсоветскими странами, в Армении был низок также уровень поступлений социальных платежей по отношению к ВВП (в последние годы этот показатель составлял примерно 3 %, в 2011г. он достиг 3,3%, а в 2012г. составил 3,2%). Что касается развитых стран, то, например, во Франции он составляет более 20%, в Германии более 15%, и т.д.. Причиной низкого уровня социальных платежей к ВВП в странах СНГ являлись не только ограниченная база расчета этих платежей, но и низкий уровень собираемости платежей в результате нарушения законодательства со стороны работодателей. Эти факторы явились причиной того, что в докризисный период (до 2008г.) при росте ВВП и доходов Госбюджета, удельный вес социальных платежей почти не вырос. В этих условиях необходимы были меры ужесточения в отношении работодателей, допустивших наличие неоформленных наемных работников, что было осуществлено и введено в действие с 2011г. принятым решением правительства с конкретным указанием размера платы за каждого неоформленного работника. В целях обеспечения эффективной политики социальной защиты населения были приняты меры по увеличению поступлений этих платежей.

Как известно, до последнего времени основными источниками поступлений по социальному обеспечению являлись платежи по обязательному социальному страхованию и неналоговые доходы. Принятый в 2011г. пакет изменений в налоговое законодательство предусматривал, что в отношении социальных платежей с 2012г. будут действовать двухступенчатые ставки расчета – при заработной плате и приравненных к ней доходах свыше двух миллионов драмов социальные платежи будут исчисляться по ставке 8% вместо ранее действующих 3 %. Был пересмотрен также размер социальных взносов за неоформленных в данном месяце наемных работников (например, если количество неоформленных работников составляет свыше 9 человек, этот платеж предусмотрен в сумме 600 тыс. драмов).

Необходимость дальнейшего совершенствования налогообложения физических лиц потребовала осуществления кардинальных реформ в этой сфере. Принятый в 2012г. новый закон РА “О подоходном налоге” (который вступил в силу с 2013г.) предусматривал объединение подоходного налога, обязательных социальных платежей и выплат индивидуального социального страхования. Эти три составляющие объединились в единый подоходный налог. Задача состояла в том, чтобы оптимизировать отчеты работодателей. Работодатели по закону обязаны представить налоговому органу в электронном виде сводный расчет подоходного налога, куда включены также персонифицированные сведения относительно подсчитанных и удержанных социальных взносов. Преимущество данной системы налогообложения состоит и в том, что отныне работодатели не будут заинтересованы в сокрытии реальной численности работников и их истинных доходов, поскольку социальные платежи будут осуществляться из доходов самих работников. С внедрением этой системы средства для социальных платежей поступают уже не в пенсионный фонд, а аккумулируются в бюджете. По существу правительство с введением новой модели подоходного налога подготовило почву для перехода на накопительную пенсионную систему.

По идее новая модель налогообложения физических лиц должна была привести к росту поступлений подоходного налога, а, следовательно, к росту доли прямых налогов в общих налоговых поступлениях бюджета. Анализ фактических данных за 2013 год показал,

что этот рост не столь значителен. Если в 2012г. сумма подоходного налога (91,7млн. драмов), обязательных социальных платежей (129,1 млн. драмов) и социальных взносов составила 240млн. драмов, то в 2013г. единый подоходный налог составил всего около 274,6 млн. драмов, (при этом еще 5,8 млн., драмов составила перешедшая с прошлого года сумма подоходного налога и свыше 17,6 млн.драмов – платежи по обязательному социальному обеспечению). Здесь, однако, надо учесть, что с переходом с 1 января 2013г. объектов малого бизнеса на систему налога с оборота несколько понизилась сумма взимаемых с них подоходных налогов. Следовательно, по итогам прошлого года трудно делать обоснованные выводы по поводу новой системы взимания подоходного налога. Что же касается ожидания роста удельного веса прямых налогов в общих налоговых поступлениях бюджета, то параллельно с ростом суммы прямых налогов росли также суммы и удельные веса косвенных налогов, в результате чего соотношение между двумя группами налогов не изменилось. Наибольший вклад в увеличение косвенных налогов внес налог на добавленную стоимость, абсолютный прирост по которому составил свыше 32,2 млн. драмов. Неясно также, какую сумму составил в 2013году долг по единому подоходному налогу.

Новый проект закона о введении с 1 января 2014г. накопительной пенсионной системы также создаст проблемы для определенной части населения республики. При введении этой системы работник будет платить в пенсионный фонд 5% от зарплаты, а остальные 5% будет доплачивать государство. Эта схема действует лишь в отношении тех, чья зарплата не превышает 500 тыс. драмов, для тех же, у кого она превышает эту сумму, процент выплаты в пенсионный фонд увеличивается, поскольку государство ограничивает свой вклад размером в 25 тысяч драмов, остальные же суммы для доведения взноса до 10% от зарплаты должен платить сам работник. Однако данные выплаты особенно обременительны для низкооплачиваемых работников, которые, кстати, составляют большинство работающего населения страны, включая молодое население. Вызывает возражение и тот факт, что удержанные средства планируется частично переправлять на внешние рынки, а это чревато большими рисками потери накопленных сумм, имея в виду вероятность возникновения политических и экономических потрясений, а также кризисных ситуаций.

Опыт различных, в том числе развитых стран свидетельствует о том, что никогда эти государства не требовали от населения принятия одной единственной, обязательной накопительной системы, а была предоставлена возможность выбора. Считаем, что как бы государство ни нуждалось в создании “длинных” денег для инвестиций, оно не должно делать это в ущерб выполнению социальных задач в стране.

Отдельной проблемой является налогообложение имущества (движимого и недвижимого) физических лиц. В Армении действует два вида поимущественного налога: налог на имущество и на землю. Надо отметить, что поступления по этим видам налогов составляют ничтожную долю в общих налоговых доходах Госбюджета. Так, поступления по налогам на имущество (включая имущество юридических лиц) с 2009 г. не увеличиваются, составив всего 0,3% по отношению к ВВП. Налоги на имущество в общих доходах консолидированного бюджета составили: в 2008г. - 1,3%, в 2009г.- 2,0%, в 2010г. – 1,9% , в 2011г.-1,8%, в 2012г.- 1,4 % , в 2013г. – 1,3%. Данные свидетельствуют даже о некотором снижении доли указанных налогов, причем основная доля приходится на налоги от юридических лиц. Что касается физических лиц, то объемы поступлений в бюджет их налогов крайне малы. В развитых странах платежи по налогам на имущество физических лиц составляют 3 - 5% налоговых доходов бюджета, в Армении же менее 1%. Между тем, учитывая сегодняшние реалии – необходимость ориентации на повышение роли прямых налогов, обеспечения социальной направленности налоговой политики, а также с учетом направленности на

устойчивое развитие экономики и ряда других факторов, низкие объемы поступления этих налогов не вполне оправданны, тем более, если учесть, что они обладают высоким налоговым потенциалом, который можно реализовать при условии совершенствования методики и процедуры взимания данного налога. Кроме того, требуется установить более дифференцированные ставки данного налога в соответствии со стоимостью недвижимого и движимого имущества. Изучение зарубежного опыта налогообложения собственности показывает, что этот вопрос не находит однозначного решения в разных странах. В России, например, уже достаточно долгое время идет дискуссия по поводу введения налога на недвижимость.¹ Идея состоит в том, чтобы объединить в одном налоге земельный налог и налоги на имущество организаций и физических лиц с рыночной оценкой объектов обложения

Однако, наряду с множеством трудностей технического характера (учет недвижимости и ее владельцев, установление ставок, льгот и т.д.) введение данного налога натолкнулось на такое препятствие, как отсутствие методики оценки недвижимости. Развитые страны, имея многовековой опыт обложения имущества в рыночных условиях, до сих пор не пришли к единой методике оценки недвижимости и используют их многочисленные разновидности. Отсюда ясно, что Армения должна делать упор не на кардинальные изменения в налоговом законодательстве по имущественным налогам, а на совершенствование методов оценки имущества и установление обоснованных ставок налога на различные виды собственности, дифференциацию ставок по стоимости этого имущества. В то же время зарубежный опыт свидетельствует о достаточно высоких ставках налогов на недвижимость. Например, в Великобритании ставка установлена на уровне 1% рыночной стоимости жилья, но при этом действует система вычетов: недвижимость до 120 тыс. фунтов стерлингов не облагается налогом вообще. В США взимается единый налог на недвижимость в виде земельно-имущественного комплекса, ставка налога составляет в США 2- 6% от рыночной стоимости недвижимости, в Финляндии установлена специфическая ставка – примерно один евро за один квадратный метр площади. В Армении, согласно закону, для строений жилого назначения, нежилых площадей в многоквартирном доме, а также незавершенного строения – до 3 млн. драмов 0% , а от 3млн.драмов ставки дифференцированы (от 3 до 10, от 10 до 20, от 20 до 30,от 30 до 40, от 40 и выше млн. драмов), начиная с 100драмов плюс 0,1% с суммы, превышающей 3 млн.драмов, кончая 127100 драмов плюс 1% с части, превышающей 40 млн. драмов.

По нашему мнению, роль указанных налогов, в частности, по линии поступлений от физических лиц, должна возрасти, что можно мотивировать рядом факторов, из которых следует выделить следующие:

1. То обстоятельство, что эти налоги перечисляются в местные бюджеты, обеспечивает условия для стимулирования выполнения региональных программ и развития самоуправления отдельных территорий.
2. Налоги на имущество физических лиц обладают регулирующими возможностями, в частности в нынешних условиях поляризации уровня жизни населения в стране очень важно использовать потенциальную возможность этого налога в вопросе выравнивания доходов.

Поэтому считаем, что низкие объемы поступления этих налогов, с учетом сегодняшних реалий и ориентирования на устойчивое развитие экономики, неоправданны. Требуется меры по совершенствованию методики и процедуры взимания налога на имущество, усилению социальной функции налога на имущество физических лиц в республике. Прогрессивная шкала в сочетании с системой налоговых льгот позволит обеспечить справед-

⁵ В.Горский. Налог на недвижимость: за и против. Журн. “Финансы”, №2,2012, с.37.

ливое распределение налоговой нагрузки в соответствии с платежеспособностью налогоплательщика. Можно ожидать, что мероприятия по совершенствованию механизма налогообложения имущества физических лиц позволят более полно реализовать фискальную (более высокие ставки на более дорогостоящее имущество), регулируемую (механизм позволит стимулировать легализацию недостроенных жилых объектов и доходов от сдачи их в аренду), социальную (сочетание прогрессивной шкалы обложения с системой налоговых льгот), контрольную (контроль за доходами от аренды жилья и недостроенными объектами жилой недвижимости). В России, например, по разным оценкам, от 50 до 70% элитного индивидуального жилья не зарегистрировано под предлогом его незавершенности, в Армении же ситуация еще более неблагоприятная. В Армении при налогообложении имущества наряду с наличием множества трудностей технического характера (учет недвижимости и ее владельцев, установление ставок, льгот и др.) необходимо учесть также такой фактор, как слабое развитие рынка недвижимости.

К числу имущественных налогов, как уже было указано, относится также налог на землю, регулируемый законом РА “О земельном налоге”. Следует отметить, что сумма налога на землю и его доля по отношению к ВВП в последние годы не только не растет, но и имеет тенденцию к снижению. Если в 2009г. она составляла 0,2% к ВВП, то в 2011г. и 2012г. уже 0,1% к ВВП.

Надо отметить, что в настоящее время в республике разработан и обсуждается законопроект, предусматривающий внедрение с 1 января 2015года единого налога на имущество, объединяющего налог на недвижимое имущество и на землю. Фактически земельные участки и строения на них принимаются в качестве единого имущества, а в качестве базы налогообложения применяется кадастровая стоимость недвижимого имущества. При этом, однако, сохраняются действующие ныне ставки налогов на имущество и землю, то есть налог составит суммарное выражение двух видов налогов. Преимущество этих поправок в закон состоит в том, что он упрощает налоговое администрирование, сокращает количество налоговых отчетов, что облегчает для юридических и физических лиц выполнение налоговых обязательств. В то же время законопроект не предусматривает кардинальных изменений в обеспечении большей дифференцированности ставок налога в отношении физических лиц.

Таким образом, вышеприведенные доводы свидетельствуют о необходимости внесения соответствующих изменений в налоговое законодательство, направленных на повышение стимулирующей и социальной функций при налогообложении физических лиц в республике. В целом надо ориентироваться на социальную направленность налоговой системы, учитывая одновременно необходимость экономического развития страны, включая состояние финансового рынка, уровень инфляции, безработицы, задачу выравнивания социально - экономического развития регионов.

լուրից բացի հայտնաբերված են նաև շատ այլ տարրեր, ինչպես օրինակ, բիսմուտը, գերմանիումը (Ազարակի, Դաստակերտի, Այգեծորի, Հանքավանի, Քաջարանի հանքավայրերում), սկանդիումը, երկաթը, վանադիումը, տիտանը, պլատինոիդների խմբի պլատինը և պալադիումը (Քաջարանի հանքավայրում): Այնպես որ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի լիարժեք ու մանրակրկիտ հետազոտության պարագայում նշված հարակից տարրերից շատերի հայտնաբերումը բացառված չէ:

Պարզորոշ երևում է, որ Թեղուտի հանքավայրը երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հետազոտված է ոչ լիարժեք՝ թերի և ոչ բազմակողմանի:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման իրավունքը տրվել է «Արմենիան քափըր փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությանը, որն էլ 2001թ.՝ ԽՍՀՄ Պաշարների պետական հանձնաժողովի կողմից հաստատված պաշարների հավաստիության մեջ հանդգցվելու նպատակով, Հայաստան է հրավիրել կանադական «Strathkona Mineral Services Ltd» ընկերության մասնագետներին: Վերջիններս իրենց հաշվետվության մեջ նշել են. «Հանքաքարերի պաշարները նախկինում հաստատված պաշարներից ավելի կարող են լինել 15%-ով, իսկ պղնձի և մոլիբդենի պարունակությունները ավելի կարող են լինել համապատասխանաբար 19 և 26 տոկոսներով»: Միևնույն ժամանակ «Արմենիան քափըր փրոգրամ» ընկերությունն էլ իր հերթին՝ իր 2006թ. կազմած «Աշխատանքային նախագծում» գրում է, որ. «Հանքավայրի տարածքում կատարվել են լրահետախուզական աշխատանքներ՝ հանքաքարերի պաշարներն ու մետաղների պարունակությունները ճշտելու նպատակով»: Դե, եթե այդ բոլորը ճիշտ է, ապա ինչու՞ ընկերությունը հանքավայրը չի հետազոտել բազմակողմանի, չի որոշել հիմնական մետաղների հետ հարակից տարածված բոլոր տարրերի պարունակությունները (որոնցից մի քանիսը շատ ավելի թանկ են քան ամենաթանկ մոլիբդենը), և ինչու՞ ճշտված պաշարները վերահաստատման չեն ներկայացվել Հայաստանի Պաշարների պետական գործակալությանը:

Մեր կարծիքով, դա չի արվել միտումնավոր, որպեսզի տեսանելի չդառնա թե որքան արժեքավոր տարրեր են թափվելու պոչամբարներ, կամ օտարներին նվիրվելու խտանյութերի վաճառքի ժամանակ (մոլիբդենի խտանյութերի վաճառքի ժամանակ չի գնահատվում և չի փոխհատուցվում մոլիբդենի հետ սերտորեն կապված, շատ արժեքավոր՝ մոլիբդենից 125 անգամ թանկ, ռենիումը, իսկ պղնձի խտանյութերի վաճառքի պարագայում ոսկին, արծաթը, սելենը, տելուրը, բիսմուտը և այլն), և որքան թունավոր տարրեր են թափվելու պոչամբարներ (սելենը, տելուրը, մկնդեղը խիստ թունավոր տարրեր են նույնիսկ իրենց միացությունների տեսքով) ու թունավորելու միջավայրը:

Նշենք, որ Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման պարագայում, Ջանգեզուրի և Ազարակի կոմբինատների օրինակով, վաճառքի պետք է հանվեն պղնձի և մոլիբդենի խտանյութերը, սակայն, եթե Ջանգեզուրի կոմբինատի կողմից թողարկվող պղնձի խտանյութի վաճառքի պարագայում պղնձից բացի գնահատվում է նաև խտանյութ անցած ոսկու մի մասը (ո՞ր մասը, մեզ հայտնի չէ՝ դա կոմերցիոն գաղտնիք է), ապա այս (Թեղուտի) պարագայում ոսկու և ոչ մի մասնիկ էլ չի գնահատվելու, քանի որ պղնձի խտանյութ անցած ոսկու պարունակությունը ցածր է լինելու 3,5 գ/տ-ից (գնորդի պայմաններից մեկն էլ այն է, որ ոսկու պարունակությունը խտանյութում պակաս չպետք է լինի 3,5 գ/տ-ից):

Ընկերությունն այդ թունավոր տարրերի մասին խոսել չէր կարող, քանի որ «Նախագծում» (էջ 39) պոչանքները դասում է «վտանգավորության 4-րդ դասին»՝ «ոչ հրդեհավտանգ»: Թե ինչու՞ պոչանքների հրդեհավտանգավորության մասին է խոսվում, այլ ոչ թե թունավորության, պարզից էլ պարզ է: Չէ որ ընկերությունը խիստ շահագրգռված է այդ հանքավայրի շահագործման գործում. պղնձի, մոլիբդենի, ոսկու և այլ մետաղների գները 2004թ. համեմատ բազմիցս աճել են և շարունակում են աճել (ոսկու գինը այժմ գերազանցում է 2004թ. պլատինի գնին) և կարող են խոշոր շահույթներ բերել: Շահագործման թույլտվություն ստանալու համար անհրաժեշտ էր հասարակությանը և ՀՀ կառավարությանը ցույց տալ, որ այդ հանքավայրի շահագործումը շրջակա միջավայրի համար էական վնասակար ազդեցություն չի ունենա: Հենց դրա համար էլ 2005թ. ընկերության կողմից կազմվել է «Թեղուտի լեռնահարստացման կոմ-

բինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման» կեղծիքներով ու խաբեությամբ հարուստ «հիմնավորումը» և ներկայացվել է բնապահպանության նախարարության «դատին»:

Մինչ կարևորագույն հարցերից մեկին՝ Թեղուտի հանքավայրը շահագործել, թե՞ ոչ, պատասխանելը, հաշվարկենք դրա ընդերքի հարստությունների արժեքը՝ 2007թ. նախաճգնա-ժամային տարվա գներով:

Աղյուսակ

Թեղուտի պղնձամուլիբդենային հանքավայրի ընդերքի հարստությունների՝ հաստատված պաշարների և վերջիններիս հետ հարակից տարածված տարրերի արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, ԱՄՆ դոլար	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, ԱՄՆ դոլար
Պղինձ	տ	1630200	7465	12.169.443.000
Մոլիբդեն	տ	99117	62200	6.165.077.400
Ոսկի	կգ	4776	31500	150.444.000
Արծաթ	տ	303,8	450000	136.710.000
Ռենիում	տ	120.71	7777700	938.846.167
Սելեն	տ	2210,15	52220	115.414.033
Տելուր	տ	409,3	116000	47.478.800
Ծծումբ	տ	17021500	650	11.063.975.000
Երկաթ	տ	14.000.000	300	36.987.388.400
Ընդամենը				4.200.000.000

Տեղեկացնենք, որ կորզված, մաքրված, զտված ու գերզտված տարրերի գինը միջազգային շուկայում գնահատվում է 15-ից մինչև մի քանի հարյուր (նույնիսկ հազար) անգամ թանկ, քան դրանց սովորական տեսակներինը: Համոզիչ լինելու համար բերենք օրինակներ. սովորական կապար մետաղի մեկ տոննան այժմ արժե 2270 ԱՄՆ դոլար, 99,999%-ով գերզտված կապարինը (1999թ. գներով, երբ սովորական կապարի մեկ տոննան արժե 480 ԱՄՆ դոլար)՝ 320 հազ. ԱՄՆ դոլար, իսկ 99,9999%-ով գերզտվածինը՝ 870 հազ. ԱՄՆ դոլար (իր սովորական տեսակից թանկ է 383 անգամ): Սովորական ռենիումի մեկ տոննան 2007թ. գներով արժե 7777700 ԱՄՆ դոլար (մեկ գրամը՝ 7,78 ԱՄՆ դոլար), իսկ 99,9999%-ով գերզտվածինը (1999թ. գներով, երբ մեկ տոննա ռենիումը արժե 1,5 մլն ԱՄՆ դոլար)՝ 900 մլն ԱՄՆ դոլար (մեկ գրամը՝ 900 դոլար), իր սովորական տեսակից թանկ էր ավելի քան 115 անգամ:

Մեր հարգարժան կառավարությանն ու հանքարդյունահանող ձեռնարկություններին ու գործարարներին տեղեկացնենք մի շատ կարևոր իրողության մասին, որ մեր օրերում և մեր հանրապետությունում մոռացության է տրվել ու չի կիրառվում: ԽՍՀՄ-ի օրոք գործում էր մի պարտադիր հրահանգ՝ շահագործվող հանքավայրերի տարածքում (խոր հորիզոններում ու թևերում) P₁ կատեգորիայի ռեսուրսների սահմանագծում (հետագայում նաև դրանցից դուրս) յուրաքանչյուր տարի հետախուզել և հաստատման ներկայացնել հանքաքարերի այնքան պաշարներ, որքան արդյունահանվում է տվյալ հանքավայրի ընդերքից: Եվ դա կատարվում էր այնքան ժամանակ, մինչև իրավամբ սպառվում էր տվյալ հանքավայրի ընդերքի ռեսուրսը: Դրանով իսկ կրկնակի, երբեմն էլ շատ ավելի երկարացվում էր լեռնահանքային ձեռնարկության «կյանքի տևողությունը»: Այժմ այդ կարգը ՀՀ-ում չի գործում և ԽՍՀՄ-ի փլուզումից հետո իսպառ մոռացության է տրվել:

Այժմ հիմնավորենք, որ պիրիտ հանքանյութի քանակը Թեղուտի հանքավայրում (ինչպես նաև մյուս բոլոր հանքավայրերի հանքաքարերում) բազմակի անգամ մեծ է պղնձի խալկոպիրիտ հանքանյութի քանակից: Թեղուտի հանքավայրի հետախուզման ընթացքում ծծմբի գծով անալիզի են տրվել հանքաքարերը (հանքանյութի մեջ ծծմբի պարունակությունը հանրահայտ է) և ստացվել է, որ Թեղուտի հանքաքարերում ծծմբի պարունակությունը կազմում է 3,7% և դրա հիման վրա էլ ծծմբի պաշարների քանակը (հանքաքարերի արդյունաբերական պաշարներում)

կազմել է 17 մլն 21,5 հազ. տ: Սեզ հայտնի են մոլիբդեն և պղինձ մետաղների պաշարները, որոնք համապատասխանաբար կազմում են 99117 տ և 1630200 տ: Հաստատված պաշարների հիման վրա կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքաքարերում առկա մոլիբդենի մոլիբդենիտ և պղնձի խալկոպիրիտ սուլֆիդային հանքանյութերի քանակները կազմում են 165360 տ և 4708260 տ, որոնց մեջ էլ ծծմբի քանակը համապատասխանաբար կազմում է 67136 տ և 1645066 տ, իսկ երկու հիմնական հանքանյութերում համատեղ՝ 1712202 տ: Սեզ մնում է հաշվարկել, թե որքան ծծումբ է բաժին հասնում Թեղուտի հանքավայրի հանքաքարերում առկա երրորդ՝ սուլֆիդային պիրիտ հանքանյութին: Ծծմբի հաստատված 17021500 տ պաշարներից հեռացնելով մոլիբդենիտ և խալկոպիրիտ հանքանյութերի ծծմբի բաժինը, կստանանք պիրիտ հանքանյութի բաժինը՝ 17021500-1702202=15309298 տ: Հայտնի է, որ պիրիտ հանքանյութում ծծմբի պարունակությունը կազմում է 53,45%, հետևապես Թեղուտի հանքաքարերում առկա պիրիտ հանքանյութի քանակը իրականում կազմում է 28 մլն 642,3 հազ. տ: Հետևապես սելեն և տելուր տարրերի քանակները պիրիտ հանքանյութի մեջ կկազմեն. սելենինը՝ 572,85 տ, տելուրինը՝ 401,0 տ:

Այսպիսով, սելեն և տելուր թունավոր տարրերի քանակները Թեղուտի հանքաքարերում՝ հաշվարկված մեր կողմից Գ.Փիջյանի տվյալների հիման վրա, կազմում են՝ սելենինը՝ 2210,15տ, տելուրինը՝ 409,3տ:

Ինչու՞ կատարվեց սույն հաշվարկը: Մենք արդեն իսկ գրել ենք, որ «Արմենիան քափըր փրոգրամ» փակ բաժնետիրական ընկերությունը, որը պատրաստվում է շահագործել Թեղուտի հանքավայրը, չի պատրաստվում շուկա մտնել վերջնարտադրանքներով և թողարկելու է միայն պղնձի ու մոլիբդենի անջատ խտանյութեր, որոնք վաճառվելու են արտասահմանյան երկրներին՝ առանց գնահատվելու հիմնական մետաղների հետ հարակից տարածված տարրերը, հետևապես և առանց փոխհատուցվելու դրանց արժեքները: Այս պարագայում պիրիտ հանքանյութի խտանյութ չի թողարկվելու, քանի որ մետալուրգիական գործարան չի կառուցվելու և դրա մեջ գտնվող օգտակար տարրերը՝ ծծումբը, երկաթը, սելենը, տելուրը և սպասվող շատ այլ տարրեր չեն կորզվելու: Հետևապես պիրիտը որպես «անպետք թափոն» թափվելու է պոչամբարներ իր սելենի ու տելուրի հսկա պարունակություններով հանդերձ և թունավորելու է միջավայրը:

Տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում պոչամբարներ թափվող պիրիտի քանակը կարող է կազմել 232 հազ. տ. ծծմբինը՝ 124 հազ. տ, երկաթինը՝ 108 հազ. տ, սելենինը՝ 4,64 տ, տելուրինը՝ 3,25 տ: Հարց է առաջանում. պոչամբարներ թափվող օգտակար (կորզելու պարագայում) և թունավոր (միջավայր թափվելու պարագայում) տարրերի այս քանակները շա՞տ են, թե՞ քիչ: Պատասխանենք. շատ-շատ են՝ թե՛ իրենց արժեքային առումով, և թե՛ վտանգավորության (թունավոր լինելու) առումով:

2008թ. մայիսի վերջին օրերին ստացված տեղեկությունների համաձայն ծծմբի գինը միջազգային շուկայում մեծ թռիչք է ապրել՝ 21-րդ դարի առաջին տարիներին ունեցած 30 ԱՄՆ դոլարից 2008թ. մայիսի 29-30-ի դրությամբ աճել է մինչև 600-700 ԱՄՆ դոլարի՝ Միջինասիական հանրապետություններում և 680-700 ԱՄՆ դոլարի՝ ԱՄՆ-ում: Եթե ընդունենք, որ համաշխարհային շուկայում ծծմբի մեկ տոննայի միջին գինն այժմ կազմում է 650 ԱՄՆ դոլար. ապա պարզ կդառնա թե որքան անտնտեսվար աշխատանք ենք կատարում մենք և կկատարենք այսուհետև, եթե աշխատենք նույն ոճով:

Տարրական հաշվարկները ցույց են տալիս, որ Թեղուտի հանքավայրի շահագործման պարագայում միայն ծծումբ տարրի չկորզման հետևանքով յուրաքանչյուր տարի (տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում) կփոշիացվի 80,6 մլն ԱՄՆ դոլարի հարստություն, իսկ հանքավայրի ամբողջ պաշարների շահագործման պարագայում՝ 5287,4 մլն ԱՄՆ դոլարի:

«Արմենիան քափըր փրոգրամ» ընկերությունը «հանրության դատին» է ներկայացրել հսկա կեղծիքներ պարունակող երկու փաստաթուղթ՝ «Թեղուտի լեռնահարստացման կոմբինատի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում» և «Աշխատանքային նախագիծ», որոնցում ամենուրեք շահարկվում է, որ Թեղուտի հանքավայրի ընդերքից արդյունահանվելու և մշակվելու է 7 մլն տ հանքաքար (թաքցվում ու քողարկվում է, որ առաջին 8 տարիներից հետո

ձեռնարկության արտադրական հզորությունը մեծացվելու է կրկնակի, իսկ դրանից 4 տարի անց՝ եռակի, այսինքն հանքավայրի շահագործման 13-րդ տարուց հետո դրա ընդերքից տարեկան արդյունահանվելու և մշակվելու է 21 մլն տ հանքաքար): Այստեղից պարզ է դառնում, որ հարստապոչերի հետ պոչամբարներ (միջավայր) թափվող թունավոր տարրերի քանակներն էլ եռապատկվելու են:

Ինչևհետե, Թեղուտի հանքավայրի ընդերքից տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու և մշակելու պարագայում ձեռնարկությունը հետախուզված պաշարներով (459,24 մլն տ) ապահովված կարող է լինել ավելի քան 65 տարի, իսկ պաշարներով ու կանխատեսումային ռեսուրսներով համատեղ՝ ավելի քան 109 տարի: Սակայն նշված ձեռնարկության տերերը, մտածելով, որ մեկ սերունդ (այժմյան տերերը) ի վիճակի չէ այդքան երկար ապրելու, որպեսզի հիմնովին «չորացնի» Թեղուտի ընդերքը, որոշել է դա կատարել 25-28 տարվա ընթացքում:

Տարեկան 7 մլն տ հանքաքար արդյունահանելու, մշակելու և մետալուրգիական փուլով վերամշակելու պարագայում՝ կիրառելով տարրերի կորզման առաջավոր երկրների ժամանակակից տեխնոլոգիաները (տարրերի վերջնական կորզումները հասցնելով 90%-ի) լեռնամետալուրգիական ձեռնարկության հասույթը կարող է կազմել 293 մլն ԱՄՆ դոլար, որից շահույթը՝ 117,0 մլն ԱՄՆ դոլար: Սա, իհարկե, շատ մեծ թիվ է, սակայն ո՛չ ՀՀ կառավարությունը, ո՛չ հանքավայրը շահագործման «ընդունած» ձեռներեց մարդիկ (հատկապես հայրենիքի սիրով համակված՝ ձեռներեց հայերը) և ո՛չ էլ Հայաստանում ապրող ժողովուրդը, իրավունք չունեն հրապուրվելու մեծամեծ շահույթներով՝ շահագործելու Հայաստանի գողտրիկ վայրերից մեկում՝ Լոռվա գեղատեսիլ դրախտավայրում, չքնաղ անտառներով ծածկված լեռնալանջերում ծվարած Թեղուտի հանքավայրը: Բերենք փաստարկներ այդ հանքավայրի շահագործումից սպասվող վտանգների ու վնասների մասին, որոնք կշեռքի մժարին դնելու պարագայում շատ ավելի ծանրակշիռ կլինեն, քան միլիոն-միլիարդավոր դոլարների շահույթը, առավել ևս այն շահույթը, որը չի մնալու մեր ժողովրդին և իր գերակշիռ մեծամասնությամբ (մոտ 80%-ով) մտնելու է օտարների գրպանն ու դուրս է տարվելու Հայաստանից:

1. Թեղուտի հանքավայրը շահագործվելու է «Արմենիան քափըր փրոգրամ» ընկերության կողմից: Այս ընկերությանն է հատկացվել 1970 հեկտար հողատարածք, որից 1589,6 հեկտարը անտառային ֆոնդի հողերն են (Հ.Սանասարյան, 2007, էջ 20)¹: Հանքավայրի շահագործման համաձայն՝ բաց հանքի տարածքը զբաղեցնելու է 240 հեկտար, պոչամբարների տարածքը՝ 214 հեկտար, մակաբացման ապարների լցակույտերինը՝ 107,4 հեկտար, սակայն պարոն Հ.Սանասարյանի գրքում չենք հայտնաբերել, թե որքան տարածք են զբաղեցնում մյուս բոլոր օժանդակ կառույցները՝ ճանապարհները, զանազան պահեստները, մեխանիզմների նորոգման հրապարակները, շենքերն ու շինությունները և այլն: Կարծում ենք՝ վերջիններիս զբաղեցրած տարածքը 200 հեկտարից պակաս լինել չի կարող:

Ինչևհետե, ընկերությանը հատկացված հողատարածքն ամբողջությամբ դրվելու է Թեղուտի հանքավայրի շահագործման և շահագործման հետ կապված օժանդակ կառույցների տակ (հակառակ դեպքում ինչու՞ է հատկացվել), անտառահատման ու ոչնչացման է ենթարկվելու ոչ միայն 1589,6 հա «անտառային ֆոնդը», այլ դրանից շատ ավելին:

Սակայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ եթե զառիթափ լեռնալանջերում անտառապատ բաց հանքի տարածքը զբաղեցնում է 240 հեկտար, ապա ոչնչացման ենթակա անտառները ոչ թե կարող են զբաղեցնել հենց այդքան (240 հա) տարածք, այլ դրանից մոտ 3 անգամ ավելի: Բանն այն է, որ բաց հանքից լեռնալանջերով վերև ընկած անտառները ևս ենթակա են ոչնչացման՝ այդ տարածքի ծառերը սնուցող ջրերը, կորցնելով ներքևի ապարների դիմադրությունը, ազատ և սրընթաց հոսելու են դեպի բաց հանքի դատարկ տարածքը, որի հետևանքով էլ բաց հանքից վերև ընկած տարածքի (մակերեսով մոտ 2 անգամ ավելի, քան բաց հանքի տարածքն է) ամբողջ ծառերը չորանալու և ոչնչանալու են: Հետևապես ոչնչացման ենթակա անտառների մակերեսը կազմելու է ոչ թե 1589,6 հա, այլ մոտ 2070 հա:

¹ Սանասարյան Հ.Ա., Թեղուտ, Երևան, 2007:

2. Նախագծում անտառին հասցվող վնասի չափը հաշվարկելիս զարմանալիորեն հաշվի է առնվել փայտանյութը. այստեղ գրված է. «Հատման կենթարկվի մոտավորապես 127000 ծառ՝ 60400 խոր. մ փայտանյութի մասսայով»:

Անհավատալի ու անհասկանալի է, թե ինչպես կարող է նշված տարածքի հսկա ծառերից յուրաքանչյուրը, միջին հաշվով, «տալ» ընդամենը 0,47 խոր.մ փայտանյութ: Կարծում ենք, այս «անշառ ու անվտանգ» գործում ևս խաբեության հոտ է փչում:

Այսուհետև, ի՞նչ փայտանյութի մասին է խոսքը և ինչո՞ւ է, անտառը դիտվում որպես միայն փայտանյութ տվող «աղբյուր»:

Անտառը թթվածին ու ֆիտոնցիդներ, հատապտուղներ ու մրգեր տվող, ջուր, բազմատեսակ կենդանիներ ու դեղաբույսեր պահող ու պահպանող միջավայր է:

Գ.Ա.Բելլերը (1988)¹ գրում է. «Մեկ հեկտար անտառը տարեկան մաքրում է 20 մլն խոր. մ մթնոլորտ, խոնավացնում է օդը տասն անգամ ավելի, քան դա անում է մեկ հեկտար մակերեսով ջուրը: Անտառը արտադրում է «մթնոլորտի վիտամիններ»՝ ֆիտոնցիդներ կոչվող նյութը, որի մի քանի տասնյակ կիլոգրամը բավարար է միջին չափերի (մոտ 600 հազար բնակչություն ունեցող) քաղաքի բոլոր մանրեները ոչնչացնելու համար: Հատկապես առատ՝ օրական մինչև 30 կգ, ֆիտոնցիդներ է արտադրում գիհի (можжевеловый) մեկ հեկտար անտառը» (էջ 252):

«Այժմ հանրահայտ է անտառի ազդեցությունը մթնոլորտի ջերմային հաշվեկշռի վրա, ջրերի պահպանության, կենդանական ու բուսական աշխարհի բազմազանության գործում, որոնց կրճատումը փոխում է էվոլյուցիայի ուղին: Արևադարձային անտառները հարուստ ծագումնաբանական (գենետիկական) միջավայր են, որոնցում կենտրոնացված է երկրի բուսական ու կենդանական տեսակների կեսից ավելին:

Բժիշկները գտնում են, որ արևադարձային անտառների ոչնչացումը կարող է լրջորեն խանգարել հիվանդությունների դեմ ուղղված մեր պայքարին, հատկապես օնկոլոգիական» (Բելլեր, էջ 64):

«Մեր մոլորակի մերկացման հետ կապված՝ սկսվել է պայքարը անտառների պահպանության համար: 1701թ. Ռուսաստանի թագավոր Պետրոս I-ի կողմից հրահանգներ են արձակվել՝ ուղղված անտառների պահպանությանը, որոնցում մասնավորապես արգելվել է անտառահատումը գետահովիտներում: Այնուհետև նշվել են արգելված առանձին տեսակի ծառերը: 16-րդ դարում անտառների պահպանությունն ամրագրվել է Ֆրանսիայում, իսկ հաջորդ հարյուրամյակում այստեղ հրապարակվել է այն ժամանակների համար օրինակելի բնապահպանական փաստաթուղթը՝ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս 16-րդի օրդոնանսը ջրերի և անտառների վերաբերյալ: Իսկ բնապահպանական առաջին գրավոր փաստաթուղթը համարվում է Բաբելոնի արքա Համմուրաբիի օրենսգիրքը (1792թ. մ.թ.ա.), որն ընդգրկում է անտառների պահպանության մասին հոդված, որի խախտողը դատապարտվում էր մահապատժի: Դրանից քիչ ավելի ուշ (1122թ. մ.թ.ա.) անտառների պահպանությանն ուղղված դեկրետ է ընդունվել նաև Չինաստանում» (Բելլեր, էջ 24, 25):

Դե՛, մեծարգո՛ տիկնայք և պարոնայք, եկեք տեսնենք, թե ինչպես են պահպանվել անտառները դեռևս մեր թվարկությունից շատ առաջ, և ինչպես ենք պահպանում մենք այժմ՝ 21-րդ դարում: Հավանաբար շատերը Բաբելոնի բնակչությանը համարել և համարում են բարբարոսներ. այդ դեպքում եկեք գնահատենք մեր գործողությունները, մեզ՝ որպես ժողովուրդ, և տեսնենք, թե ավելի քան 3000 տարի Բաբելոնից հետո ովքեր ենք մենք, երբ մեր երկիրը՝ մենք, ինքներս, մեր իսկ ձեռքով, անապատ ենք դարձնում:

Հ.Սանասարյանը գրում է. «Թեղուտի խախտվող տարածքը գտնվում է Լալվարի անտառտնտեսության արևելյան մասում: Այստեղ առկա են բոխի, կաղնի, թխկի, սոճի, հացենի, հաճարենի, լորենի, դաժի, ընկուզենի, խնձորենի, տանձենի և այլ ծառատեսակներ, թփերից՝ հոնի, մասրենի, սզնի, զկեռենի, մոշենի և այլն» (էջ 20): Նշենք, որ ապագա լեռնահանքային ձեռնարկությանը հատկացված անտառները հարուստ են նաև բազմատեսակ դեղաբույսերով ու

¹ Беллер Г.А. Экзамен разума. М.: Мысль, 1968, 252с.

կենդանիներով, որոնք ենթակա են ոչնչացման (ավելի մանրամասն գրված է Հ.Ա.Սանասարյանի գրքում):

Թե ինչ վտանգներ են սպասվում Թեղուտի հանքավայրի տարածքի երկու՝ Թեղուտ և Շնող գյուղերի բնակչությանը այդ հանքավայրի շահագործման ընթացքում և դրանից հետո, շատ ճշմարտացի ու պատկերավոր գրված է Հ.Սանասարյանի գրքում:

Դժվար չի լինի պատկերացնել, թե ինչ չափերի կարող է հասնել շրջակայքի աղտոտվածություները ծանր և թունավոր մետաղներով, եթե սկսվեն Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման աշխատանքները: Եթե Թեղուտի հանքավայրից տարեկան արդյունահանվեն ու մշակվեն՝ 7,14 և 21 մլն տ հանքաքարեր, ինչպես նախատեսել են հանքավայրի շահագործման իրավունք ստացողները, կարող են ստացվել պղնձի խտանյութ՝ 85902 տ, 171804 տ և 257706 տ, մոլիբդենի խտանյութ՝ 1596 տ, 3192 տ և 4788 տ:

25 տարի հետո Թեղուտի հանքավայրից կարող է արդյունահանվել 385 մլն տ հանքաքար (հանքաքարերի կորուստներն այդ պարագայում կարող են կազմել 74 մլն տ): Արդյունահանվող և մշակվող 385 մլն տ հանքաքարերից խտանյութերի տեսքով պետք է կորզվի 4 մլն 812 հազ. 388տ, որը կկազմի արդյունահանվող հանքաքարերի (385 մլն տ) 1,25%-ը: Պոչամբարներ թափվող հանքաքարերի քանակը կկազմի 380 մլն 187 հազ. 612տ, կամ ամբողջի (385 մլն տ-ի) 98,75%-ը: Նշված քանակի պոչամբների մեջ կարող է պարունակվել 24 մլն տ պիրիտ հանքանյութ, իսկ վերջինիս մեջ էլ սելեն թունավոր տարրի քանակը կկազմի 480տ, տելուրիներ՝ 336տ, երկաթիներ՝ 11,172 մլն տ, ծծմբիներ՝ 12,828 մլն տ:

Թեղուտի հանքաքարերից օգտակար տարրերի՝ պղնձի և մոլիբդենի թերկորզման հետևանքով (նախագծի համաձայն պղնձի կորզումը հանքաքարերից խտանյութերի մեջ պետք է կազմի 86%, իսկ մոլիբդենիներ՝ 70%) պոչամբարներ թափվող 380,188 մլն տ հանքաքարերում կարող են պարունակվել.

- պղնձ՝ 191438տ, կամ 552969տ խալկոպիրիտ հանքանյութ,
- մոլիբդեն՝ 24924տ, կամ 41612 մոլիբդենիտ հանքանյութ,
- սելեն (խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի հետ)՝ 193,39տ,
- տելուր (մոլիբդենիտ հանքանյութի հետ)՝ 2,09տ,
- ծծումբ (խալկոպիրիտ և մոլիբդենիտ հանքանյութերի հետ)՝ 209877տ,
- երկաթ (պղնձի խալկոպիրիտ հանքանյութի հետ)՝ 168268տ,
- ռենիում՝ 30,37տ, ոսկի՝ 560,9կգ:



Այսպիսով, պոչամբարներ թափվող օգտակար տարրերի ընդհանուր քանակները կկազմեն.

պղնձիներ՝ 191438տ, մոլիբդենիներ՝ 24924տ, սելենիներ՝ 673,39տ, տելուրիներ՝ 338,09տ, ծծմբիներ՝ 13.037.877տ, երկաթիներ՝ 11.340.268տ, ռենիումիներ՝ 30,37տ, ոսկուներ՝ 560,9կգ:

Պոչամբարներ կթափվեն նաև ոչ մեծ քանակության մկնդեղի արսենոպիրիտ (FeAsS), ծարիրի անտիմոնիտ (Sb_2S_3), կապարի գալենիտ (PbS), ցինկի սֆալերիտ (ZnS) հանքանյութեր, որոնք առկա են Թեղուտի հանքաքարերում, սակայն ուշադրության չեն արժանացել հետախույզ-երկրաբանների կողմից իրենց շատ փոքր պարունակության պատճառով: Մենք գտնում ենք, որ ամեն դեպքում դրանք ուշադրության պետք է արժանանային: Անհրաժեշտ էր թեկուզ մի քանի տասնյակ (20-30) նմուշներով որոշել դրանց պարունակությունները, քանի որ մկնդեղն իր արսենոպիրիտ, իսկ ծարիրն իր անտիմոնիտ հանքանյութերով իրենց մեջ մեծ վտանգներ են պարունակում:

Բանն այն է, որ դրանք թունավոր տարրեր են, հատկապես մկնդեղը և ծարիրը, որոնք պոչամբարներում կարող են առաջացնել խիստ թունավոր արսին (AsH_3) և ստիբին (SbH_3) գազեր ու թունավորել պոչամբարների տարածքը հարյուրավոր ու հազարավոր տարիներ (այնքան ժամանակ, որքան պահպանվում են պոչամբները տվյալ պոչամբարներում): Դրանց առաջացման «մեխանիզմը» մենք տեսնում ենք հետևյալ կերպ. պոչամբարներ թափվող պոչամբներում, ինչպես նշվել է, պարունակվելու են շատ մեծաքանակ պիրիտ (FeS_2) հանքանյութ, որը նույն պոչամբարներում առկա սուլֆիդային հանքանյութերից ամենից արագ և հեշտ է ենթարկվում օքսիդացման ու տարանջատման: Պիրիտի քայքայման հետևանքով առաջանում

են ծծմբային գազեր՝ SO_2 և ապա SO_3 , վերջինս էլ միանալով մթնոլորտային տեղումների հետևանքով պոչանքներ թափանցող ջրի (H_2O) հետ առաջացնում է ծծմբական թթու (H_2SO_4): Ծծմբաթթուն ռեակցիայի մեջ մտնելով արսենոպիրիտ և անտիմոնիտ հանքանյութի հետ առաջացնում է արսին և ստիրին թունավոր գազերը՝



Ծծումբ տարրի և ծծմբային գազերի վտանգավոր ազդեցությունը շրջակայքում ապրող բնակչության վրա կարող է ունենալ աղետալի հետևանքներ: Այդ մասին՝ լրագրողներ Արփի Հարությունյանի և Սարիաննա Գրիգորյանի հոդվածների (www.armenianaw.com, 2006, №17, ապրիլ) հիման վրա պատկերավոր գրված է Հ.Սանասարյանի գրքում¹ (էջ 66). «... 1992թ., երբ Ալավերդու սև պղնձի մետալուրգիական գործարանը չէր աշխատում, չի արձանագրվել արատավոր ծննդի ոչ մի դեպք, ապա 2001թ. Ալավերդում գրանցվել է բնածին շեղումով 28 դեպք, իսկ 2004թ. այդ թիվն աճել է մոտավորապես 5 անգամ՝ հասնելով 107-ի: Վերջին մեկ տարվա ընթացքում հայտնաբերվել է հիդրոցեֆալիա (երբ ուղեղի փոխարեն պտղի մոտ ջուր է՝ ուղեղի գերշրջություն), անենցեֆալիա՝ գլխի դիմային մասը կա, իսկ ուղեղը չկա, ողնաշարի ճողվածք, «երկու գլխանի» պտուղ (գլխանման պարկ լցված ջրով) և այլ արատներ: Դրանք հիմնականում կյանքին անհամատեղելի արատներ են, և մինչև ծննդաբերությունը արհեստական վիժում է կատարվում (ասում է Ալավերդու ծննդատան գլխավոր բժիշկ Ամալյա Ազատյանը)»:

Արտասահմանյան գրականության (Вредные химические вещества, Ленинград, 1989, с. 170-256) հիման վրա պարոն Սանասարյանը տեղեկություններ է բերում ծծմբի և նրա միացությունների (ծծմբային գազերի) առաջացրած հիվանդությունների մասին՝ նյարդային, լյարդի, երիկամների, թոքերի, սրտանոթային, ատամների, աղետամոքսային, շնչառական ուղիների հիվանդություններ, ընդհանուր թուլություն, գլխացավ, գլխապտույտ, հազ, լուսավախություն, գրգռվածություն, շնչահեղձություն, խոպոտություն և այլն:

Գնահատելով Թեղուտի պղծամոլիբդենային հանքավայրի պոչանքները, կտեսնենք, որ հանքավայրի շահագործման ամբողջ 25 տարիների ժամանակահատվածում արդյունահանվող և մշակվող 385 մլն տ հանքաքարերից պոչանքարներ թափվող տարրերի արժեքը կազմելու է ավելի քան 15,18 մլրդ դոլար, այն պարագայում, երբ կորզվող պղինձ և մոլիբդեն տարրերից սպասվող հասույթը՝ մետալուրգիական գործարան ունենալու պարագայում, կարող է կազմել 12,3 մլրդ դոլար, իսկ խտանյութերի վաճառքի պարագայում՝ 6,765 մլրդ դոլար, այն էլ, եթե հանքավայրը շահագործվի նախագծով նախատեսված ցուցանիշներին համապատասխան (պղինձը կորզվի 85%-ով, իսկ մոլիբդենը՝ 70%-ով, որը Հայաստանի Հանրապետությունում պատահում է խիստ հազվադեպ): Քաջարանի և Ազարակի պղծամոլիբդենային հանքավայրերի փորձը ցույց է տալիս, որ Թեղուտի նույնանման հանքավայրի հանքաքարերի մշակման գործընթացում պղնձի կորզումը լավագույն դեպքում կարող է կազմել 70-71% (Քաջարանի հանքավայրի 2003թ. հետխորհրդային տարիների ամենալավագույն ցուցանիշը):

ՀՀ ԳԱԱ էկոլոգամոնիթերային հետազոտությունների կենտրոնի հետազոտություններով Քաջարան քաղաքի մթնոլորտում հայտնաբերվել են մի շարք ծանր մետաղներ, որոնք անցնում են բուսահողի և ջրի մեջ, իսկ այնտեղից էլ սննդանյութերի մեջ և, ի վերջո, մարդկանց օրգանիզմ:

Ծանր մետաղները խիստ վտանգավոր են նրանով, որ դրանք կայուն են և ունեն կուտակվելու հատկություն: Դրանք թունավոր և քաղցկեղածին են, առաջացնում են մուտացիաներ:

Բոլորին է հայտնի, որ Թեղուտի հանքավայրը պատկանում է Քաջարանի հանքավայրի տիպին, այսինքն՝ պղծամոլիբդենային կազմավորման է և, համոզված ենք, որ պարունակում է նույն ծանր մետաղներն ու թունավոր տարրերը, որոնք հայտնաբերված են Քաջարանի հանքավայրում:

Սյունիքի մարզի Կապանի շրջանի քաղաքների (Կապան, Քաջարան) ու գյուղական համայնքների (Արծվանիկ, Գեղանուշ, Սյունիք, Լեռնածոր և այլն) բնակիչների առողջական վիճակը խիստ վտանգված է պոչանքարներում կուտակված ծանր մետաղների և թունավոր տարրերի

¹ Հակոբ Սանասարյան, Աղետաբեր Թեղուտը, Հայաստանի կանաչների միություն, Երևան, 2008, 118 էջ:

առկայության պատճառով: (Այդ մասին ստույգ տվյալներ կան ՀՀ ՊԱԱ էկոլոգամոնիտորինգի հետազոտությունների կենտրոնում, որի մի մասը բերված է Յու.Կուլեշովայի հոդվածում՝ «Горнодобывающие компании убивают все вокруг», «Деловой Экспресс» №12, апрель, 2011г.)

Նշված նույն վտանգները (ոչ պակաս և ոչ էլ շատ ավել) սպասվում են Թեղուտի հանքավայրի շահագործման ընթացքում և դրա շահագործումն ավարտվելուց հարյուրավոր ու հազարավոր տարիներ հետո Թեղուտի շրջակայքում տեղադրված գյուղերի և Ալավերդի քաղաքի բնակչության համար:

Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրն արդեն իսկ պատրաստվում է շահագործման՝ տարածքի անտառներն ամբողջությամբ արդեն իսկ հատվել են, չնայած տասնյակ հասարակական կազմակերպությունների բողոքին ու դժգոհությանը, կառուցվում են հանքավայրի շահագործման հետ առնչվող ենթակառուցվածքներ՝ ճանապարհներ, շենքեր ու շինություններ, հեռացվում են բացահանքի վերին հողային շերտը և այլն: Մի խոսքով արհամարհվում է ժողովուրդը, և հանքավայրը, ի վերջո, շահագործվելու է: Շահագործվելու է «պապենական եղանակներով»՝ օգտակար երկու տարրերի ցածր տոկոսներով կորզումով, ծանր մետաղների ու թունավոր տարրերի մեծաքանակ թափոններով, հանքավայրի հարևանությամբ տեղադրված երկու՝ Թեղուտ և Շնող գյուղերի, ինչպես նաև պոչամբարից գիպսմետրիկ ցածր հորիզոններում (Դեբետի կիրճում) տեղադրված մի քանի գյուղերի ոչնչացմամբ և այլն:

«Երկրի հրովարտակ» գրքույկի I գլխում գրված է՝ «Ընդունել, որ բնական պաշարներին տիրելու, կառավարելու և օգտագործելու իրավունքի հետ միասին առաջանում է շրջակա միջավայրին հասցվելիք վնասը կանխարգելելու և մարդկանց իրավունքները պաշտպանելու պարտավորություն»: Իրականացվում է արդյոք այս պահանջը Թեղուտի հանքավայրի շահագործման պարագայում: Պատասխանը միանշանակ է՝ ոչ:

Նույն I գլխի 4-րդ կետում՝ «Ներկա և ապագա սերունդների համար պահպանել երկրի առատաբերությունն ու գեղեցկությունը» «բ» ենթակետում գրված է. «Ապագա սերունդներին փոխանցել երկրի մարդկային ու էկոլոգիական համակեցությունների ծաղկունը երկարաժամկետ հեռանկարով ապահովող արժեքներ, ավանդույթներ և սահմանակարգեր»: Ի՞նչ ենք մենք փոխանցելու մեր ապագա սերունդներին Թեղուտի հանքավայրի շահագործումից հետո.

- հնձված ու 2000հա տարածքում ոչնչացված անտառներ,
- 240հա տարածքի թեք լեռնալանջով ձգված ջրափոս,
- 200-300հա տարածքի վրա ծանր մետաղներով ու թունավոր տարրերով լեցուն պոչամբարներ,
- Լոռու մարզի մի քանի (4-5) բնակավայրերի ամայացում,
- լեռնային փոքրիկ գետակների զուլալ ջրերի աղտոտում ու թունավորում,
- պոչամբարների շրջակայքում օդային ավազանի թունավորում արսին (AsH₃) և ստիբին (SbH₃) գազերով,
- անտառներում ապրող կենդանական ու բուսական աշխարհի ոչնչացում:

Մեր կողմից նշված 5, 6 և 7-րդ կետերին համահունչ «Երկրի հրովարտակ» գրքույկի II գլխի 5-րդ կետի «բ» ենթակետում գրված է՝ «Երկրի կենսապահովման համակարգերի պաշտպանության, կենսաբազմազանությանն օժանդակելու և բնության ժառանգության պահպանման համար ստեղծել ու պաշտպանել կենսունակ բնական և կենսոլորտային արգելոցներ, ներառյալ անարատ հողերը և ջրային տարածքները»: Մենք այս պահանջները կատարում ենք հակառակ իմաստով՝ ի վնաս բնությանը:

Հոդվածի այս բաժինը՝ կապված Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման հետ, ցանկանում ենք ավարտել ՀՀ բնապահպանության պետական տեսչության պետ՝ Ա.Ավագյանի կարծիքով (023/Ն.1402,11.09.2006թ.)՝ ուղղված ՀՀ բնապահպանության նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն պարոն Ա.Սանթրոսյանին, որում գրված է. «Ըստ աշխատանքային նախագծի՝ տարածքը հիմնականում անտառածածկ է: Հատման ենթակա է 127700 ծառ: Բացի այդ, նշված տարածքը հարուստ է օգտակար բուսականությամբ, առաջին հերթին, եզակի դեղաբույսերով:

Նշված տարածքի կենդանական աշխարհը հարուստ է իր բազմազանությամբ... Նշված անտառի վերացումը անդառնալի է... Գտնում ենք, որ «Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ն՝ Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացրած աշխատանքային նախագիծը բացասական ազդեցություն կունենա բուսական և կենդանական աշխարհի վրա, որն իր հերթին բացասաբար կանդրադառնա շրջակա միջավայրի և տվյալ տարածքի էկոլոգիական հավասարակշռության վրա: Ելնելով վերը նշվածից՝ Բնապահպանական պետական տեսչությունը, «Արմենիան քափըր փրոգրամ» ՓԲԸ-ն Թեղուտի պղնձամոլիբդենային կոմբինատի աշխատանքային նախագծի վերաբերյալ տալիս է բացասական կարծիք»:

Հ.Սանասարյանն էլ իր հերթին գրքի «Ամփոփում» բաժնում գրում է. «Թեղուտի հանքավայրի շահագործումը կործանարար կլինի ողջ տարածաշրջանի համար: Այն կաղքատացնի մեր հանրապետության կենսաբազմազանությունը, կոչնչացնի անկրկնելի մի բնական համակարգ՝ իր սարերով, կիրճերով, բուսականությամբ, ջրագոյացման ու ջրաբաշխման բնական օբյեկտներով, պատմամշակութային հուշարձաններով, և անգամ շրջակա տարածքներում անհնար կդարձնի գյուղատնտեսական անվտանգ մթերքի արտադրությունն ու մարդու նորմալ կյանքը»:

«Նախագծի իրականացումը բխում է սահմանափակ թվով մարդկանց, գլխավորապես օտարերկրյա ընկերությունների շահերից և հակասում է մեր ազգի ու պետականության շահերին»:

Լոռու մարզում արդեն իսկ հետախուզված և արդյունաբերական գնահատական ստացած հանքավայրերի հետ մեկտեղ այժմյան դրությամբ առկա են մի քանի հեռանկարային հանքաերևակումներ, որոնցից առավել հեռանկարայիններն են Հանքածորի պղինձ-հրաքարային, Մարցիգետի, Տանձուտի և Մարգահովտի ոսկի-սուլֆիդային, Պրիվոլնիի կապար-ցիկային և Բազումի երկաթաքարային հանքավայր-հանքաերևակումները:

Մենք գտնում ենք, որ Լոռու մարզի դեռևս չհետախուզված, բայց հանքավայր անվանված հանքաերևակումները հետախուզելիս անհրաժեշտ է հաշվի առնել դրանց տեղանքը, հանքամարմինների ձևերը, չափերը, անկումները և շահագործման եղանակները:

Անտառապատ տարածքներում անհրաժեշտ է հետախուզել միայն և միայն երակային տիպի (ոչ հզոր) մարմիններով ներկայացված հանքավայր-հանքաերևակումները, որոնք հետագայում կարող են շահագործվել բացառապես ստորգետնյա փորվածքների օգնությամբ, որոնք էլ հետագայում (շահագործական աշխատանքներին զուգընթաց և դրանց ավարտից հետո) հնարավոր կլինի լցնել շրջապատի դատարկ ապարներով և վերականգնել միջավայրի անադարտ դիրքն ու դրվածքը՝ առանց էական վնաս հասցնելու անտառներին: Մենք գտնում ենք, որ անտառապատ տարածքներում ոչ մի դեպքում չի կարելի թույլատրել բաց հանքերի եղանակով շահագործական աշխատանքներ կատարել: Չի կարելի նույնիսկ թույլատրել այն հանքավայրերի հետախուզումը, որոնք տեղադրված են անտառներում և վաղօրոք հայտնի է, որ դրանք հետագայում պետք է շահագործվեն բաց հանքերի եղանակով:

Երկիր մոլորակը համատարած տաքանում է: Այսպիսի տաքացմանն այժմ անվանում են «Երկրի գլոբալ տաքացում»: Բացառություն չի կազմելու նաև «Հայաստան աշխարհը», որը շատ ու շատ այլ տարածքների համեմատ տաքանալու է ավելի «ուժգին»: Մեր անտառները մեր իսկ սեփական ձեռքերով, օրինական և ապօրինի կարգով, ոչնչացվում են, իսկ դա նշանակում է, որ մեր «Երկիրը» անապատացվում է: Իսկ թե ինչ է կատարվում անապատներում՝ բոլորին է հայտնի: Մենք, Հայաստանի բնակիչներս, պատսպարվելու տեղ չենք ունենալու, ենթարկվելու ենք արևահարության բառիս բուն իմաստով (Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթները «հարվածելու են» մեր «մերկ» գլխին): Հանրապետության ջրերը խիստ նվազելու են՝ տեղումների քանակը պակասելու է, իսկ գոլորշիացումը ավելանալու, փոշու, վնասակար մանրէների և վտանգավոր շատ նյութերի քանակներն ավելանալու են, օդի մեջ կենդանական աշխարհի համար խիստ կենսական թթվածնի քանակը նվազելու է: Այս բոլորն, ի վերջո, կարող է բերել կենդանական աշխարհի, այդ թվում նաև մարդկանց ոչնչացման կամ տեղահանության (այս տարածքից փախուստը հավասարազոր է ոչնչացման):

Թեղուտի հանքավայրի շահագործումը և մեր վերաբերմունքը դեպի բնաշխարհը, ի վերջո, բերելու է շատ մեծ աղետների:

Ահա այն բոլորը, ինչ ցանկանում էինք ասել Թեղուտի աղետի հետ կապված:

Հազվագյուտ հողատարրային մետաղների խոշոր չափերի կիրառող է հանդիսանում ապակու արտադրությունը: Ցերիում պարունակող ապակին չի խունանում ռադիոակտիվ ճառագայթման ազդեցության ներքո և կիրառվում է միջուկային տեխնիկայում: Լանտանոիդների օքսիդների փոքր քանակների հավելումը կիրառվում է ապակիների գունավորման և գունաթափման համար: Այսպես, նեոդիմի օքսիդը ապակուն տալիս է վառ կարմիր գույն, իսկ պրոմեթիումի օքսիդը՝ կանաչ: Լանտանոիդների օքսիդները կիրառվում են նաև ճենապակու, ջնարակի և արծնապակու գունավորման համար:

Ամերիկյան «Վեստինգաուզ» ֆիրման ցիրկոնիումի և իտտրիումի օքսիդների հիման վրա մշակել է բարձրջերմաստիճանային վառելիքային սարք, որը 35-60 տոկոսով մեծացնում է ջերմային էլեկտրակայանների օգտակար գործողության գործակիցը:

Ճապոնիայում և ԱՄՆ-ում ստեղծվել են լյումինաֆորային լամպեր, որոնք պարունակում են իտտրիում, եվրոպիում, տերբիում և ցերիում, որոնք էլ էլեկտրաէներգիայի խնայողություն են ապահովում 200-300%-ով:

Հազվագյուտ հողատարրերի և ռենիումի կիրառությունը նավթի կրեկինգում հնարավորություն է ընձեռել խիստ կրճատելու պլատինի կիրառությունն այդ գործում և բարձրացնելու գործընթացի օգտակար գործողության գործակիցը՝ 15%-ով մեծացնելով բարձր օկտանային թիվ ունեցող բենզինի ելքը:

Սկանդիումը՝ մի քանի հատկությունների համատեղման շնորհիվ, այժմ մեծ ուշադրության է արժանացել ինքնաթիռաշինության, հրթիռաշինության և լազերային տեխնիկաներում:

Հազվագյուտ տարրերը, այդ թվում նաև հազվագյուտ հողատարրերը, այժմ համարվում են «արդյունաբերության վիտամիններ», քանի որ առանց դրանց արդյունաբերության առաջընթաց ապահովելը դառնում է անհնարին:

Վերջին 20-30 տարիներին հազվագյուտ հողատարրերի համար բացահայտվել է նոր ուղղություն ավտոմոբիլաշինության մեջ, և այդ ուղղությունը դարձել է հեռանկարային բոլոր երկրների ավտոմոբիլաշինության գործում:

Գիտնականները գտնում են, որ հազվագյուտ մետաղների (այդ թվում առաջին հերթին հազվագյուտ հողատարրային մետաղների) նկատմամբ պահանջարկը երկարատև հեռանկարում ոչ միայն չի նվազի, ոչ միայն չի մնա կայուն, այլ դանդաղ և կայուն թափով կարող է աճել¹:

Հազվագյուտ հողատարրեր են հայտնաբերված ՀՀ երկաթաքարային հանքավայրերի մեծ մասի տարածքում, այն հանքավայրերի, որոնց տարածքը որոշակի աստիճանի հետախուզված և հետազոտված է: Դրանցից են՝ Աբովյանի մանրագնին հետախուզված (հաշվեկշռային պաշարներով) հանքավայրը, Սվարանցի և Բազումի նախնական փուլով հետախուզված հանքավայրերը, որոնց տարածքում առկա են հեղինակային հաշվարկված պաշարներ: Նշված հանքավայրերից բացի, Հայաստանի տարածքում հայտնաբերված են հարյուրից ավելի փոքր ու մեծ հանքաերևակումներ, որոնք դեռևս չեն հետախուզվել և երկաթի հետ տարածված հարակից բաղադրիչների գծով չեն հետազոտվել: Վերջիններիս թվին են պատկանում Թթուջուր-Մարտունու և Կամաքարի հանքաերևակումները, որոնք երկաթի պարունակությամբ և քանակային առումով առավել հեռանկարային են: Վերջերս, Գորիսում իր ծերության «հաճույքը» վայելող, Մեղրու շրջանի անխոնջ հետազոտող իմ երկրաբան ընկեր Գ.Խոջաբաղյանն ինձ էր ուղարկել մեկ էջի վրա Կամաքարի երկաթի հանքավայրի գաբրոիդներից վերցված նմուշների անալիզների տվյալները, որոնք մեծ հեռանկար են կանխատեսում հողատարրային մետաղների և 16 այլ տարրերի գծով: Գիշտ է, ինձ հանձնված էջից չի երևում, թե քանի նմուշի անալիզների տվյալներ են բերված, որտեղից են (է) վերցված այդ նմուշները (նմուշը), որքան է երկաթի պարունակությունը և այլն: Սակայն այդ տվյալները, որոնք մենք հետագայում կբերենք սույն հոդվածի վերջնամասում, մեծ հեռանկարներ են խոստանում ՀՀ-ում հողատարրային մետաղների պաշարների հայտնաբերման գծով: Նշենք նաև այն, որ հողատարրային մետաղների արդյունաբերական

¹ <http://www.m-economy.ru/art.php?nArtId-3796>

պաշարները համաշխարհային մասշտաբով հաշվարկվում են մի քանի տասնյակ միլիոն տոննա և ոչ ավելի: Կան երկրներ, որտեղ հողատարրային մետաղների պաշարները կազմում են մի քանի հազար տոննա, և այդ երկրները ձեռնարկել են այդ պաշարների արդյունահանման և կիրառման գործընթաց: Վերջիններիս թվին են պատկանում Բրազիլիան՝ 48 հազ.տ, Մալայզիան՝ 30 հազ.տ և այլն: Հազվագյուտ հողատարրային մետաղների համաշխարհային պաշարները 2009թ. տվյալներով գնահատված են 99 մլն տ (դրանց օքսիդների հաշվարկով), որից Չինական ժողովրդական Հանրապետությանը՝ 36 մլն տ, իսկ Հնդկաստանինը՝ 3,1 մլն տ¹:

Հողատարրային մետաղներն ընդհանրապես կիրառվում են շատ փոքր քանակներով, որի հետ էլ կապված միջազգային շուկայում դրանք վաճառվում են կիլոգրամներով: Հողատարրային մետաղների մենաշնորհը պատկանում է Չինական ժողովրդական Հանրապետությանը (ՉԺՀ-ին է պատկանում հողատարրային մետաղների արդյունահանման 90%-ը), և միջազգային շուկայում այդ մետաղների գները կախված են նրանից, թե ՉԺՀ-ն որքան մետաղ դուրս կբերի շուկա: 2011թ. սկանդիումի մեկ կգ-ը վաճառվել է 5216,7 ԱՄՆ դոլարով, իսկ եվրոպիումինը՝ 4015-ից մինչև 4324 դոլարով (մասնագետները նշում են, որ եղել է ժամանակ, երբ սկանդիումի գինը 10-ն անգամ գերազանցել է ոսկու գինը):

Հազվագյուտ հողատարրեր են հայտնաբերված ՀՀ երկաթաքարային՝ որոշակի աստիճանի հետազոտված, հանքավայրերի մեծ մասի տարածքում, հատկապես այն հանքավայրերի, որոնք հետազոտվել են գիտնական-երկրաբանների (ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների) կողմից (հետախույզ-երկրաբաններին չէր հետաքրքրում հիմնական մետաղների հետ հարակից տարածված տարրերը. օրինակ՝ երկաթի հանքավայր հետախուզելիս նմուշներն անալիզի էին հանձնում միայն երկաթ մետաղի պարունակությունը որոշելու համար, պղնձի հանքավայր հետախուզելիս՝ պղնձի պարունակությունը որոշելու համար և այլն): Այդ իսկ պատճառով էլ մեր հետազոտությունները՝ հազվագյուտ հողատարրային մետաղների գծով, հիմնված են լինելու ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի աշխատակիցների՝ գիտնական-երկրաբանների աշխատանքների վրա: Եվ այսպես՝

Արովյանի երկաթի հանքավայրի հանքաքարերում՝ Ի.Մաղաթյանի և Գ.Փիջյանի (1972)¹ տվյալներով՝ հայտնաբերված հազվագյուտ հողատարրերի պարունակությունները կազմում են. մագնետիտ-ապատիտային հոծ հանքաքարերում. ցերիումինը՝ 1-3% (միջին պարունակությունն ընդունվում է 2 %), լանտանինը՝ 0,3-0,5% (միջինը՝ 0,4%), իտտրիումինը՝ 0,05%: Ապատիտային հանքանյութում, որի պարունակությունը Արովյանի հանքաքարերում կազմում է 3-ից մինչև 13% (միջինը՝ 8%) հազվագյուտ հողատարրային մետաղների ընդհանուր պարունակությունը կազմում է 2,48-ից մինչև 4,32%: Այս, միահանքանյութային ապատիտներում հայտնաբերված իտտրիումի պարունակությունը կազմում է 0,1-0,14% (միջինը՝ 0,12%), լանտանինը՝ 0,64-1,1% (միջինը՝ 0,87%), ցերիումինը՝ 1,36-2,3% (միջինը՝ 1,83%), իտտերբիումինը՝ 0,002-0,004% (միջինը՝ 0,003%), պրազեոդիմինը՝ 0,05-0,09% (միջինը՝ 0,07%), նեոդիմինը՝ 0,22-0,44% (միջինը՝ 0,33%), գադոլինիումինը՝ 0,03-0,04% (միջինը՝ 0,035%), դիսպրոզիումինը՝ 0,06-0,17% (միջինը՝ 0,115%), էրբիումինը՝ 0,0014-0,004% (միջինը՝ 0,0022%), թուլիումինը՝ 0,0003-0,0004% (միջինը՝ 0,00035%), լուտեցիումինը՝ 0,0003-0,003% (միջինը՝ 0,00165%), սամարիումինը՝ 0,02-0,03% (միջինը՝ 0,025%), եվրոպիումինը՝ 0,001-0,0016% (միջինը՝ 0,0013%):

Նշենք, որ Արովյանի երկաթի հանքավայրի հանքաքարերի ընդհանուր (հետախուզված) պաշարների քանակը կազմում է 260,6 մլն տ, որոնց մեջ էլ միահանքանյութային ապատիտի քանակը կազմում է 20,848 մլն տ, իսկ մագնետիտ-ապատիտային հոծ հանքաքարերի պաշարները՝ 243,6 մլն տ: Վերջիններիս մեջ հազվագյուտ հողատարրային մետաղների քանակները՝ հաշվարկված մեր կողմից դրանց միջին պարունակություններով, կազմում են. ցերիումինը՝ 4 մլն 872 հազ.տ, լանտանինը՝ 974,4 հազ.տ, իտտրիումինը՝ 121,8 հազ.տ:

¹ Магакьян И.Г., Пиджян Г.О. и др. Редкие и благородные элементы в рудных формациях Армянской ССР. Ереван, Изд. АН АрмССР, 1972, 394 с.

Միահանքանյութային ապատիտներում մյուս հողատարրային մետաղների քանակները՝ հաշվարկված մեր կողմից, կազմում են. իտտերբիումինը՝ 625,4տ, պրազեոդիմինը՝ 14.593,6տ, նեոդիմինը՝ 68.798,4տ, գադոլինիումինը՝ 7296,8տ, դիսպրոզիումինը՝ 23.975,2տ, էրբիումինը՝ 458,7տ, թուլիումինը՝ 73տ, լուտեցիումինը՝ 3440տ, սամարիումինը՝ 5212տ, եվրոպիումինը՝ 271տ:

Այսպիսով, Աբովյանի հանքավայրի հողատարրային մետաղների ընդհանուր քանակը (ռեսուրսը) կազմում է 6.092.944,1տ:

Աբովյանի հանքավայրի հողատարրային մետաղների ընդհանուր ռեսուրսների արժեքն ընդերքում հաշվելու համար մեզ անհրաժեշտ է ունենալ դրանցից յուրաքանչյուրի գինը միջազգային շուկայում: Դրանք ունենալու համար երկար փնտրտուքներն ի վերջո մեզ բերեցին էլեկտրոնային փոստի՝ սայթ <http://tdm96.ru/?=829> հասցեն, որտեղ 13 տարրերից 11-ի համար տվյալներ կային: Տվյալներ չկային սամարիումի և թուլիումի համար, որոնց համար մենք ընդունում ենք նշված 11 տարրերի համար միջին հավասարակշռված գինը՝ 129.081,4 դոլ/տ:

Աղյուսակ 1

Աբովյանի երկաթի հանքավայրի հողատարրային մետաղների ռեսուրսների արժեքի հաշվարկը

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի գինը, դոլ/տ	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Ցերիում	տ	4.872.000	121.800	593.409.600.000
Լանտան	տ	974.400	105.100	102.409.440.000
Իտտրիում	տ	121.800	173.000	21.071.400.000
Պրազեոդիում	տ	14.593,6	257.200	3.753.473.920
Նեոդիմ	տ	68.798,4	308.100	21.196.787.040
Եվրոպիում	տ	271	4.168.000	1.129.528.000
Դիսպրոզիում	տ	23.975,2	1.470.000	35.243.544.000
Էրբիում	տ	458,7	248.900	114.170.430
Լուտեցիում	տ	3440	1.714.200	5.896.848.000
Գադոլինիում	տ	7296,8	198.100	1.445.496.080
Իտտերբիում	տ	625,4	213.100	133.272.740
Սամարիում	տ	5212	129.081,4	672.772.257
Թուլիում	տ	73	129.081,4	9.422.942
Ընդամենը		6.092.944,1		786.485.755.409

Վերը բերված հաշվարկից պարզվում է, որ Աբովյանի երկաթի հանքավայրի երկաթ մետաղի հետ հարակից տարածված հազվագյուտ հողատարրային 13 մետաղների՝ 6 մլն 92 հազ. 944,1տ քանակն ընդերքում արժենում է 786 մլրդ 485,75 մլն ԱՄՆ դոլար: Բայց Աբովյանի հանքավայրը միակը չէ, որ պարունակում է հազվագյուտ հողատարրեր: Մինչ այժմ, դեռևս նախկին ԽՍՀՄ-ի տարիներից, մեզ հայտնի էր, որ հազվագյուտ հողատարրեր են պարունակում նաև Բազումի և Սվարանցի երկաթի հանքավայրերը՝ յուրաքանչյուրում 50 հազ.տ քանակով: Այդ առթիվ տվյալներ չկային դեռևս չհետախուզված և չհետազոտված երկաթի մյուս հանքավայրերի վերաբերյալ: Սակայն, ինչպես նշվել է վերևում, 2013թ. վերջերին, ավելի ստույգ նույնների սկզբին, մեզ՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրու շրջանի գաբրոփոլային ապարների վերաբերյալ, որոնց մեջ էլ տեղադրված է Կամաքարի երկաթի հանքաերևակումը, տվյալներ բերեց մի երիտասարդ, որը մտնելով իմ աշխատասենյակ ասաց. «Սա Ձեզ են ուղարկել Գորիսից»,– և ինձ տվեց մեկ էջ: Այդ տվյալներն իրենց որոշակի թերություններով հանդերձ (մի քանի կարևորագույն տեղեկությունների պակասով) մեծ հույս են ներշնչում, որ Կամաքարի հանքաերևակման տարածքում և շրջակայքում մենք կարող ենք ունենալ հազվագյուտ հողատարրերի շատ ու շատ ավելի մեծաքանակ ռեսուրսներ, քան դրանք գնահատված են Աբովյանի հանքավայրի տարածքում (ստորև բերում ենք այդ տվյալները):

Նշված թերությունները հետևյալներն են.

1. հայտնի չէ, թե բերված անալիզները քանի նմուշի հիման վրա են,
2. այդ անալիզները իսկապե՞ս պատկանում են գաբրոիդային ապարներին, թե՞ գաբրոիդների մեջ տեղադրված երկաթի (Կամաքարի հանքաերակաման) կամ այլ հանքանյութերին,
3. ինչպիսի՞ տարածք են բնութագրում վերցված նմուշները (նմուշը)՝ մե՞կ կետ, 2 քա՞ռ.կմ մակերես, 100 խ.մ ծավալ, թե՞...

Ինչևիցե, եթե բերված անալիզները իսկապես պատկանում են գաբրոիդային ապարներին, որոնք Մեղրու շրջանում զբաղեցնում են ավելի քան 100 քառ.կմ մակերես, ապա. մինչև 100մ խորությունը (գաբրոիդային ապարների քաշը՝ 26 մլրդ տ) հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսները կարող են կազմել. լանտանինը՝ 3.202.680տ (լանտանի պարունակությունը կազմում է 0,012318%), ցերումինը՝ 5.660.330տ (ցերումի պարունակությունը կազմում է 0,0217705%), պրազեոդիմինը՝ 1885000տ (պարունակությունը՝ 0,00725%), նեոդիմինը՝ 4.030.780տ (պարունակությունը՝ 0,015503%), սամարիումինը՝ 569.400տ (պարունակությունը՝ 0,00219%), եվրոպիումինը՝ 143.000տ (պարունակությունը՝ 0,00055%), գադոլինիումինը՝ 439.400տ (պարունակությունը՝ 0,00169%), տերբիումինը՝ 52000տ (պարունակությունը՝ 0,0002%), դիսպրոզիումինը՝ 265.200տ (պարունակությունը՝ 0,00102%), հոլմիումինը՝ 38.740տ (պարունակությունը՝ 0,000149%), էրբիումինը՝ 104.000տ (պարունակությունը՝ 0,0004%), թուլիումինը՝ 13.000տ (պարունակությունը՝ 0,00005%), իտտերբիումինը՝ 76.180տ (պարունակությունը՝ 0,000293%), լուտեցիումինը՝ 10.920տ (պարունակությունը՝ 0,000042%), սկանդիումինը՝ 6.994.000տ (պարունակությունը՝ 0,0269%), իտտերբիումինը՝ 884.000տ (պարունակությունը՝ 0,0034%): Հազվագյուտ հողատարրային 16 մետաղների ընդհանուր քանակը կարող է կազմել 24 մլն 368 հազ.630տ:

Հազվագյուտ հողատարրային մետաղներից բացի հայտնաբերված են ևս 15 այլ տարրեր, որոնցից 11-ը պատկանում են հազվագյուտ տարրերի թվին: Այստեղ անհրաժեշտ է նշել ֆոսֆորի բավականին բարձր պարունակությունը (0,7%), որն էլ մեզ ուղղորդում է այն հարցի վրա, որ վերցված նմուշներում (նմուշում) հավանաբար առկա է հազվագյուտ հողատարրերի մոնացիտ (CePO_4) հանքանյութը, որի մեջ պարունակվում են շատ այլ հողատարրեր (չի բացառվում նաև բաստնեզիտ՝ CeCO_3F հանքանյութի առկայությունը):

Այլ տարրերի քանակները գաբրոիդային ապարների մեջ (մինչև 100մ խորությունը) կարող են կազմել.

տանտալինը՝ 122.200տ (պարունակությունը՝ 0,00047%), միոբիումինը՝ 2.080.000տ (պարունակությունը՝ 0,008%), լիթիումինը՝ 3.640.000տ (պարունակությունը՝ 0,014%), բերիլիումինը՝ 447.200տ (պարունակությունը՝ 0,00172%), բորինը՝ 23.400.000տ (պարունակությունը՝ 0,09%), ֆոսֆորինը՝ 182.000.000տ (պարունակությունը՝ 0,7%), տիտանինը՝ 780.000.000տ (պարունակությունը՝ 3,0%), քրոմինը՝ 13.520.000տ (պարունակությունը՝ 0,052%), կոբալտինը՝ 14.040.000տ (պարունակությունը՝ 0,054%), միկելինը՝ 5.720.000տ (պարունակությունը՝ 0,022%), պղնձինը՝ 33.800.000տ (պարունակությունը՝ 0,13%), ցինկինը՝ 221.000.000տ (պարունակությունը՝ 0,85%), գալիումինը՝ 3.900.000տ (պարունակությունը՝ 0,015%), գերմանիումինը՝ 286.000տ (պարունակությունը՝ 0,0011%), մկնդեղինը՝ 4.420.000տ (պարունակությունը՝ 0,017%):

«Արբանյակ» (այսպես են անվանել անալիզի հեղինակները հողատարրային մետաղների հետ հարակից (զուգակցվող) տարրերին) տարրերի նշված քանակներով «առկայությունը» մեզ ասում է այն մասին, որ մեզ փոխանցված անալիզները չեն կարող պատկանել գաբրոիդային ապարներին: Այդ տվյալները շատ մեծ հավանականությամբ պատկանում են Կամաքարի երկաթի հանքաերակամանը, որի կանխատեսումային ռեսուրսները հանքաքարերի գծով գնահատված են մեկ մլրդ տոննա քանակով, ուստի հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսները կարող են կազմել.

լանտանինը՝ 123.180տ, ցերիումինը՝ 217.705տ, պրազեոդիմինը՝ 72.500տ, նեոդիմինը՝ 155.030տ, սամարիումինը՝ 21.900տ, եվրոպիումինը՝ 5500տ, գադոլինիումինը՝ 16.900տ, տերբիումինը՝ 2000տ, դիսպրոզիումինը՝ 10.200տ, հոլմիումինը՝ 1490տ, էրբիումինը՝ 4000տ, թու-

լիումինը՝ 500տ, իտտերբիումինը՝ 2930տ, լուտեցիումինը՝ 420տ, սկանդիումինը՝ 269.000տ, իտտրիումինը՝ 34.000տ: Հողատարրերի ընդհանուր քանակն այս պարագայում կարող է կազմել 937259տ:

Հողատարրերի հետ հարակից տարածված տարրերի ռեսուրսները կարող են կազմել տանտալինը՝ 4700տ, նիոբիումինը՝ 80000տ, լիթիումինը՝ 140.000տ, բերիլիումինը՝ 17.200տ, բորինը՝ 900.000տ, ֆոսֆորինը՝ 7.000000տ, տիտանինը՝ 30.000.000տ, քրոմինը՝ 520.000տ, կոբալտինը՝ 540.000տ, նիկելինը՝ 220.000տ, պղնձինը՝ 1.300.000տ, ցինկինը՝ 8.500.000տ, գալիումինը՝ 150.000տ, գերմանիումինը՝ 11.000տ, մկնդեղինը՝ 170.000տ:

Բերված տվյալները, չնայած նրան, որ բնութագրական չեն Կամաքարի երկաթի հանքա-երևակման համար, այնուամենայնիվ, վկայում են այն մասին, որ Կամաքարի երկաթի հանքա-երևակումը մեծ հետաքրքրություն է ներկայացնում և դա պետք է հետախուզվի և հետազոտվի մանրակրկիտ:

Հազվագյուտ տարրերն ու հողատարրերն իրենց մեջ մեծ արժեք են պարունակում: Արժե դրանցով զբաղվելը:

Այժմ տանք Կամաքարի երկաթի հանքաերևակման հողատարրային մետաղների և դրանց հետ հարակից տարածված այլ տարրերի (այդ թվում հազվագյուտ տարրերի) նախնական գնահատականն անջատ-անջատ:

Աղյուսակ 2

Կամաքարի երկաթի հանքաերևակման հազվագյուտ հողատարրային մետաղների ռեսուրսների արժեքի հաշվարկն ընդերքում

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Լանտան	տ	123.180	105.100	12.946.218.000
Ցերիում	տ	217.705	121.800	26.516.469.000
Պրազեոդիում	տ	72.500	257.200	18.647.000.000
Նեոդիմ	տ	155.030	308.100	47.764.743.000
Սամարիում	տ	21.900	129.081,4	2.826.882.660
Եվրոպիում	տ	5500	4.168.000	22.924.000.000
Գադոլինիում	տ	16900	198.100	3.347.890.000
Տերբիում	տ	2000	3.527.400	7.054.800.000
Դիսպրոզիում	տ	10.200	1.470.000	14.994.000.000
Հոլմիում	տ	1490	644.900	960.901.000
Էրբիում	տ	4000	248.900	995.600.000
Թուլիում	տ	500	129.081,4	64.540.700
Իտտերբիում	տ	2930	213.100	624.383.000
Լուտեցիում	տ	420	1.714.200	719.964.000
Սկանդիում	տ	269.000	5.216.700	1.403.292.300.000
Իտտրիում	տ	34.000	173.000	5.882.000.000
Ընդամենը				1.569.561.691.360

Համոզված ենք, որ բերված անալիզները պատկանում են Կամաքարի հանքաերևակման երկաթաքարային և հարակից տարածված տարրերին: Բայց, ինչն՞ է չկան երկաթ մետաղի անալիզի տվյալները, հասկանալի չէ: Կարող ենք ենթադրել, որ նշված անալիզները կատարվել են Չինական ժողովրդական Հանրապետությունում, և երկաթի անալիզի տվյալներն էլ չեն բերվել միտումնավոր (հողատարրային մետաղներով շահագրգիռ հետաքրքրություն ներկայացնող երկիրը չբացահայտելու համար):

Կամաքարի երկաթի հանքաերակաման հողատարրային մետաղների հետ հարակից տարածված այլ տարրերի ռեսուրսների հաշվարկը (առանց բորի և ֆոսֆորի)

Տարրերը	Տարրերի քանակի միավորը	Տարրերի քանակը	Տարրերի միավորի արժեքը, դոլ.	Տարրերի ընդհանուր քանակի արժեքը, դոլ.
Տանտալ	տ	4700	200.000	940.000.000
Նիոբիում	տ	80.000	193400	15.472.000.000
Լիթիում	տ	140.000	7000	980.000.000
Բերիլիում	տ	17.200	110.000	1.892.000.000
Տիտան	տ	30.000.000	18.000	540.000.000.000
Քրոմ	տ	520.000	7900	4.108.000.000
Կոբալտ	տ	540.000	66.660	35.996.400.000
Նիկել	տ	220.000	44.780	9.851.600.000
Պղինձ	տ	1.300.000	7465	9.704.500.000
Ցինկ	տ	8.500.000	3400	28.900.000.000
Գալիում	տ	150.000	460.000	69.000.000.000
Գերմանիում	տ	11.000	680.000	7.480.000.000
Սկնդեղ	տ	170.000	1220	207.400.000
Ընդամենը				724.531.900.000

Աղյուսակ 3-ում բերված 13 տարրերից 11-ը պատկանում են հազվագյուտ մետաղների թվին, որոնց արժեքն ընդերքում կազմում է 685 մլրդ 927,4 մլն դոլար, իսկ մյուս երկու՝ ոչ հազվագյուտ մետաղների (պղինձի և ցինկի) արժեքը՝ 38 մլրդ 604,5 մլն դոլար:

Այս հաշվարկներում չի մասնակցում Կամաքարի հանքաերակաման երկաթ մետաղի 340 մլն տ ռեսուրսի արժեքը: Վերջինս կազմում է 102 մլրդ դոլար: Հետևապես, Կամաքարի հանքաերակաման ընդերքի ողջ հարստության ընդհանուր արժեքը կազմում է 2 տրիլիոն 396 մլրդ 93,6 մլն դոլար (սա մոտավոր թիվ է, որը կարող է ճշտվել միայն հանքաերակումը մանրակրկիտ հետախուզումից ու հետազոտումից հետո):

իսկ գյուղացիական տնտեսություններն էլ հեռու են իրացման շուկաներից, ուստի տվյալ պարագայում ապրանքային կաթի փոքր ծավալի ժամանակ էլ տրանսպորտային ծախսերն ավելանում են: Հետևապես, այդ իրավիճակից դուրս գալու միակ ելքը դա կոոպերացման ուղին է, որի դեպքում կբարձրանա նաև արտադրության արդյունավետությունը, կընդլայնվի գյուղատնտեսական արտադրանքի իրացումը՝ կորուստների կրճատման, որակի պահպանման, տրանսպորտային ծախսերի նվազեցման հաշվին:

Գյուղատնտեսության ոլորտի բարելավման առումով, արդեն 2012թ. մշակվել է «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման հայեցակարգի» նախագիծ, որով հստակեցվել են կոոպերացիայի խթանման քաղաքականության հիմնական ուղղությունները, և որին համահունչ էլ, ներկայումս հանրապետության գյուղատնտեսությունում ձևավորվել ու գործում են տարբեր ուղղվածություն ունեցող 140-ից ավելի կոոպերատիվներ՝ միջազգային կազմակերպությունների և վարկային ծրագրերի աջակցությամբ, մասնավորապես ԱՄՆ-ի գյուղատնտեսության դեպարտամենտի մարքեթինգի աջակցության ծրագրի, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի, «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի, «ԱՄՔՈՐ»-ի, «ՕՔՍՖԱՄ»-ի և այլ կազմակերպությունների աջակցությամբ: Գործում է նաև «Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը, որը հիմնադրվել է 2001-ին և ունի 23 սպառողական կոոպերատիվներ, որոնցում ներառված են 1200 գյուղացիական տնտեսություններ: Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում հանրապետության՝ Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի 49 համայնքներում հիմնադրվել են «Համայնքների արոտագտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվներ, որոնց տրամադրվում է աջակցություն՝ համապատասխան գործունեություն շարունակելու հնարավորություններ:

Հայաստանի կառավարության կողմից ներկայացված է գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և դրանց գործունեությանը խթանող օրենսդրական հիմքերի կատարելագործմանն ուղղված միջոցառումներ: Այս նպատակով մշակվել է «Կոոպերատիվների օրենսդրական բարեփոխումներ ուղեցույցը Հայաստանի համար», որը ներկայացնում է կոոպերատիվների համար Հայաստանի և միջազգային օրենսդրությունը, ինչպես նաև օրենսդրական բարեփոխումների ուղղությունները, որոնցով պայմանավորված էլ պետք է ուսումնասիրվի ոչ միայն գյուղատնտեսության ոլորտը, այլ ընդհանուր կոոպերացիայի բնագավառը:

Կոոպերացիայի զարգացումը հանրապետության ագրարային հատվածի մրցունակության բարձրացման և գյուղական աղքատության կրճատման կարևոր ուղղություն է, որը կարիք ունի բազմակողմանի և հետևողական պետական աջակցության: Այս նպատակով անհրաժեշտ է իրականացնել.

1. Հանրապետության գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման ապահովում:
2. Անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ համայնքներին աջակցություն:
3. ՀՀ գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծմանն ու հավաքակազմի աստիճանաբար նորացմանն ուղղված աշխատանքների իրականացում:

Այսինքն, գյուղատնտեսության տնտեսվարման ձևերի զարգացման համատեքստում միջոցառումները կնպատակաուղղվեն ինչպես կոոպերացիայի տարբեր ձևերի խթանմանը, այնպես էլ ոլորտում տարբեր ուղղվածություն ունեցող կոոպերատիվների համար օրենսդրության բարելավմանը՝ կապված դրանց ձևավորման և գործունեության բարենպաստ պայմանների ստեղծման հետ:

Հստակեցման առումով ավելի մանրամասն ներկայացնենք պետական աջակցության ուղղությունները:

1. Հանրապետության գյուղական համայնքներում գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման ապահովման բաժնում առաջարկվել են.

- հանրապետության գյուղական համայնքներում 20 կոոպերատիվի ստեղծում: Դրանցից արդեն 33 գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսության մարզային կենտրոն» ՓԲԸ-ների (ԱՄԿ) աջակցությամբ 33 Կոտայքի մարզի՝ Սոլակ, Ակունք, Լոռու մարզի՝ Լուսաղբյուր, Տավուշի մարզի՝ Բերդավան, Սյունիքի մարզի՝ Դարբաս, Նորավան համայնքներում և Մեղրի քաղաքում ստեղծվել են 8 գյուղատնտեսական կոոպերատիվներ:
- գյուղատնտեսության ոլորտում գործող կոոպերատիվների կարողությունների հզորացմանն ուղղված միջոցառումներ: Վերջիններով պայմանավորված 37 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել են 105 միավոր գյուղտեխնիկա, այդ թվում՝ 15 կոոպերատիվի՝ 17 անհիվավոր տրակտոր, 11 կոոպերատիվի՝ 14 մամլիչ-բարդոցիչ և 25 կոոպերատիվի՝ 74 միավոր տարբեր գյուղգործիքներ, իսկ 12 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվների համար 32 միավոր գյուղտեխնիկան գտնվում է մատակարարման փուլում,

2. Անասնապահական ուղղվածություն ունեցող բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքներին աջակցություն ցուցաբերելու առումով.

- իրականացնել հեռագնա արոտների անցանելիության ապահովման, ջրարբիացման, դեգրադացված արոտների վերականգնման, կաթի ընդունման և վերամշակման կարողությունների ստեղծմանն ուղղված միջոցառումների աջակցություն: Վերջիններիս համահունչ, շարունակվում է «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրի շրջանակներում հանրապետության 6 մարզի (Արագածոտն, Լոռի, Ծիրակ, Տավուշ, Գեղարքունիք, Սյունիք) 55 համայնքում արոտավայրերի ջրարբիացման համակարգերի շինարարական աշխատանքների կատարումը,
- համայնքներում ստեղծված արոտագտագործողների սպառողական կոոպերատիվների կարողությունների հզորացման միջոցառումների իրականացում: Հանրապետությունում վերոնշյալ 6 մարզի 67 համայնքում հիմնադրվել են «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման» հանձնաժողովներ: Նշված մարզի 67 համայնքի համար մշակվել և Համաշխարհային բանկ է ուղարկվել «Համայնքի արոտավայրերի կառավարման և անասնապահության զարգացման պլաններ»: 37 համայնքի արոտագտագործողների միավորում սպառողական կոոպերատիվներին տրամադրվել է 105 միավոր գյուղտեխնիկա (17 անհիվավոր տրակտոր, 14 մամլիչ-բարդոցիչ, 74 միավոր տարբեր գյուղգործիքներ),
- հանրապետության 6 մարզում վերապատրաստված անասնաբույժներով, համապատասխան սարքավորումներով հագեցված անասնաբուժական սպասարկման կենտրոնների ստեղծում: «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» վարկային ծրագրով նախատեսված են Սյունիքի մարզի Խնձորեսկ համայնքում անասնաբուժական կենտրոնի կառուցման շինարարական, Արագածոտնի մարզի Արտաշավան համայնքում և Գեղարքունիքի մարզի Գամբարակ համայնքում հողի նկատմամբ իրավունքի փոխանցման աշխատանքներ,
- խորհրդատվական համակարգի միջոցով նորագույն տեխնոլոգիաների ներդրման, անասնաբուժական և տոհմային աշխատանքների բարելավման միջոցառումների իրականացում: Վերջինիս հասնելու համար, վերը նշված 6 մարզի 42 համայնքի ղեկավարների, արոտագտագործողների կոոպերատիվների նախագահների և այլ խորհրդի ներկայացուցիչների համար իրականացվում է ուսուցում՝ արոտագտագործման, կոոպերատիվի բյուջեի կազմման, ֆինանսական գործերի կառավարման բնագավառի և կարգավորող օրենսդրական դաշտի պարզաբանման և այլ հարցերով,

- նախատեսված է 10 մարզում իրականացնել «Տեխնոլոգիաների գնահատման ծրագրեր»՝ նորարարական առաջարկությունները ֆերմերային տնտեսություններում տարածելու նպատակով:

3. Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծմանն ու դրանց հավաքակազմի աստիճանաբար նորացմանն ուղղված աշխատանքների իրականացում: Ուստի այդ առումով անհրաժեշտ է.

- գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման նպատակով դրանք մատակարարող լիզինգային ընկերությունների և արտերկրյա արտադրողների հետ բանակցությունների վարում: Այսպես, Բելառուսի հանրապետության նախարարությունների և տեխնիկա արտադրող ընկերությունների հետ վարած բանակցությունների արդյունքում, ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 20-ի N 650-Ն որոշման հիման վրա բավականին ցածր գներով Հայաստան է ներկրվում գյուղատնտեսական տեխնիկա՝ 120 միավոր «Բելառուս» ՄՏՁ-82.1 մակնիշի տրակտորներ իրենց գյուղատնտեսական գործիքներով, որոնց իրացումն իրականացնում է «ՓՍՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային կազմակերպությունը՝ 9% տոկոսադրույքով,
- գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղացիական տնտեսությունների պահանջարկը բավարարելու նպատակով նախատեսվում է հանրապետություն ներկրել փոքր և մեծ հզորության տրակտորներ, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայներ,
- դրամաշնորհների և այլ աղբյուրների հաշվին գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման հնարավորությունների օգտագործում: Դրանց արդյունքում հանրապետություն ներկրվող գյուղատնտեսական տեխնիկայի՝ տրակտորների, հացահատիկահավաք և կերահավաք կոմբայների, տրակտորային կցասայլերի և գյուղատնտեսական գործիքների, կաթի պահպանման և վերամշակման սարքավորումների բաշխման ժամանակ առաջնահերթությունը տալ գյուղատնտեսական կոոպերատիվներին: Միաժամանակ, գյուղատնտեսական տեխնիկայի ներմուծման նպատակով չինական դրամաշնորհի տրամադրման և ճապոնիայի կառավարության զարգացմանն ուղղված պաշտոնական օգնության ծրագրի իրականացում,
- օժանդակություն լիզինգային ընկերություններին՝ ՀՀ-ում դուստր կազմակերպություններ ստեղծելու և գործունեություն ծավալելու գործում: Ուստի այդ առումով, հանրապետությունում «Ռոսագրոլիզինգ» ԲԲԸ ենթակայությամբ դուստր կազմակերպություն ստեղծելու և գործունեություն ծավալելու համար, որը կարող է իրականացվել Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությունից հետո,
- գյուղացիական տնտեսություններին լիզինգային եղանակով գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու վերաբերյալ համապատասխան տեղեկատվության տրամադրում:

Այսպիսով, հանրապետության գյուղատնտեսությունում ստեղծված իրավիճակին համահունչ ուսումնասիրման արդյունքները ցույց են տալիս, որ գյուղատնտեսական ոլորտի խնդիրների որոշակի մեղմացմանը կամ լուծմանը կարող են նպաստել ոլորտում կոոպերացման գործընթացի արմատավորումն ու զարգացումն՝ ունենալով նպաստավոր պայմաններ և ստեղծման մեխանիզմներ: Միաժամանակ, տնտեսական գործընթացների բարելավման առումով պետք է հստակ տեղ հատկացնել ագրարային ռազմավարությանը, որի միջոցով հնարավոր կլինի բացահայտելու կոոպերացիայի ձևավորման պետական աջակցության անհրաժեշտությունը և դրան հասնելու ուղիները, քանի որ դրանով իսկ գյուղատնտեսական կոոպերատիվների գործընթացը կբարձրացնի գյուղական բնակչության զբաղվածության մակարդակը, կավելացնի գյուղատնտեսական մթերքների ու դրանց վերամշակումից ստացվող արտադրանքի ծավալները, և դրանցով պայմանավորված՝ կավելանան բնակչության եկամուտներն ու երկրի պարենային անվտանգության ապահովման մակարդակը:

²Paî '²Ú², Ú²Û
ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý íÝí»³.ÇíáðÃÚ³Ý
ÇÝèiÇíáðiÇ ·ÉÉ³íáñ ·Çí³βÉ³íáð, ì.·¹.,áñáy»éáñ

í²Ú²Ú² úÐ²ÚÚ²Ú
ÐÐ ¶²² Ø.øáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý íÝí»³.ÇíáðÃÚ³Ý
ÇÝèiÇíáðiÇ ³í³. ·Çí³βÉ³íáð, ì.·Ã.

ÎÈ²èí²δ²ÚÆÛ ø²Ô²ø²Î²ÚàðÁÚ²Û ØÆæ²¼¶²ÚÆÛ ðàðÒÀ °í ,δ² Û°ð,δØ²Û ÐÛ²δ²íàððÁÚàðÛÛ°ðÀ ÐÐ-àðØ

Անցումային տնտեսություն վարող երկրի համար, ինչպիսին նաև Հայաստանն է, փոքր և միջին ձեռնարկատիրական (ՓՄՁ) գործունեության խթանումը որոշիչ դեր ունի արտադրության մրցունակության մակարդակի բարձրացման գործում: Այն իր ուրույն տեղն ունի նաև ինչպես տեղական, այնպես էլ ազգային մրցակցային առավելությունների զարգացման համար: Սակայն անցած երկու տասնամյակների ընթացքում պարզ դարձավ, որ միայն ՓՄՁ գործունեության գծով ռազմավարության մշակումը դեռևս բավարար չէ երկրի կամ տարածաշրջանի մրցունակության մակարդակի բարձրացման համար: Ուստի կայուն տնտեսական աճին նպաստող արտադրական գործընթացները խրախուսելու համար, միջազգային փորձին համահունչ անհրաժեշտ են ՓՄՁ գործունեությանը զուգակցված կլաստերային քաղաքականությանն ու նորանվտայնությունների խթանմանն ուղղված միջոցառումների իրականացում, արդյունաբերական բնույթի ռազմավարության ընտրանքային նախաձեռնությունների ձևավորում, ինչպես նաև կազմակերպական նախապայմանների ստեղծում:

Ներկայումս տնտեսապես զարգացող երկրների պետական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը, դա կլաստերային քաղաքականության իրականացումն է, որն ուղղված է ազգային և տարածաշրջանային մրցունակության մակարդակի բարձրացմանը: Կլաստերային քաղաքականությունը որոշ երկրներում և առանձին տարածաշրջանների կտրվածքով՝ տնտեսական ծրագրերի իրագործման հարցում հնարավորություն է տալիս հասնել ավելի մեծ արդյունքների: Ըստ կլաստերների ոլորտի մասնագետ ամերիկացի գիտնական Մայքլ Պորտերի. «Կլաստերը դա փոխկապակցված տարբեր բնույթի կազմակերպությունների և հիմնարկությունների տեղաբաշխումն է մեկ աշխարհագրական վայրում, առանձին տարածաշրջանի կտրվածքով»¹: Միաժամանակ, շատ կլաստերներ ընդգրկում են ոչ միայն կազմակերպություններ, այլ նաև ուսումնական հաստատություններ, ստանդարտացման կենտրոններ, առևտրային ընկերություններ, որոնք ըստ էության իրականացնում են մասնագետների վերապատրաստում, տեխնիկական աջակցություն, անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում և նմանատիպ այլ գործընթացներ:

Կլաստերների ստեղծումը և դրանց համահունչ կազմակերպությունների կլաստերային մոդելի արմատավորումը, դա յուրաքանչյուր երկրի կառավարության ու բիզնեսի միջև հավատի վերականգման միջոց է, առանձին գործող կազմակերպությունների ներգրավումն ու համախմբումն է, ինչպես նաև տեխնոլոգիական կլաստերների ներդրումը: Վերջինիս տակ հասկանում ենք զանազան ընկերությունների և հաստատությունների համագործակցությունը որոշակի տարածքում, որոնց միասնական նպատակը առաջընթաց տնտեսական աճի ապահովումն է՝ նոր տեխնոլոգիական նվաճումների յուրացման շնորհիվ:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ կլաստերների մրցակցության բարձրացման գործում էական նշանակություն ունեն օգտագործվող ռեսուրսների և նորակառուցվածքների որակը, որոնք հանդես են գալիս յոթ հիմնական խմբով և իրենց առկայությամբ ու էությամբ նպաստում են արդյունավետ տեխնոլոգիական կլաստերի ստեղծմանը: Այդ խմբերն են.

1. Բնական ռեսուրսները:


¹ Асаул А.Н. Организация предпринимательской деятельности: Санкт-Петербург,2005,с.110.

2. Աշխատանքային ռեսուրսները:
3. Ֆինանսական ռեսուրսները:
4. Նյութատեխնիկական և արտադրական ենթակառուցվածքները:
5. Գիտատեխնոլոգիական ենթակառուցվածքները:
6. Տեղեկատվական ենթակառուցվածքները:
7. Վարչարարական ենթակառուցվածքները:

Մի շարք երկրներում գիտատեխնոլոգիական և արդյունաբերական բնույթի գործունեության քաղաքականության իրականացումը նպատակաուղղված է կլաստերների ստեղծմանը, քանի որ դրանց միջոցով է հնարավորություն ընձեռվելու ավելի արագ տեմպերով առաջ տանելու բիզնեսի գործընթացը: Միաժամանակ կլաստերները դրանք տվյալ երկրի տնտեսական ռազմավարությունների գերակայություններ են և ծառայում են որպես փոքր ու միջին ձեռնարկատիրության մրցունակության ու նորամուծությունների խթանման գործիք: Կլաստերային նախաձեռնության զարգացման և դրա իրականացման վառ օրինակ է Ավստրիան: Հատկապես այդ նախաձեռնությունը իր լայնածավալ կիրառությունն է գտել Վերին Ավստրիայում, որտեղ «կլաստեր» տերմինն օգտագործվել է որպես «բրենդ»՝ տարածաշրջանի վարկանիշի բարձրացման և օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման նպատակով: Կլաստերային գործունեության ակտիվ զարգացումը հանդիսանում է նորամուծական ձեռնարկատիրության արդյունավետ ուղղություն, քանի որ կլաստերում տեղի ունեցող կոոպերացումն ապահովում է ձեռնարկատիրական գործունեության մասնագիտացում և շուկայի մասնատում առանձին հատվածների, որոնք նվազեցնում են տրանսպորտային ծախսերը, ապահովում են աշխատանքի ռացիոնալ բաժանումը, փորձի և տեխնոլոգիաների փոխանակումը: Վերոնշյալներին հասնելու համար կարևորվում են կլաստերների ներդրումից ակնկալվող արդյունքները (տես՝ գծապատկերը):

Գծապատկեր

Կլաստերների ներդրումից ակնկալվող արդյունքները¹



Կլաստերների առավելությունը կայանում է նրանում, որ եթե մի քանի առաջատար կազմակերպություններ համատեղ թողարկում են վերջնական արտադրանք, ապա ձևավորում են փոխկապվածություններ հումք մատակարարողի, վերամշակող և իրացնող կազմակերպությունների, գիտական ընկերությունների, ինչպես նաև կադրերով ապահովող հաստատությունների միջև:

Որպես այդպիսին, օրինակ կալիֆոռնիական գինեգործական կլաստերն ընդգրկում է մոտ 680 առևտրային կազմակերպություններ, զինու գործարաններ, գյուղացիական տնտեսություններ,

¹ Асаул А.Н. А.Н. Организация предпринимательской деятельности: Санкт-Петербург, 2005,с.117.

կրթական ու գիտահետազոտական կազմակերպություններ, գինեգործական ընկերություններ և այլ կազմակերպություններ¹:

Շատ երկրներում, ելնելով կլաստերային քաղաքականության դրսևորումներից, կենտրոնական կամ տարածաշրջանային վերադաս մարմիններն իրենց ֆինանսական օժանդակությունն են բերում կլաստերների ստեղծմանն ու զարգացմանը:

Ուստի, ելնելով պետության իրականացրած դերից, տարբերակվում են կլաստերային քաղաքականության 4 փուլեր², որոնք կարող են իրականացվել նաև ՀՀ-ում: Դրանք են.

1. Խթանող քաղաքականությունը, երբ պետությունը հանդիսանում է միջնորդ՝ շահագրգիռ կողմերի (մասնավոր կազմակերպությունների և հետազոտական կառույցների) միջև՝ ապահովելով սահմանափակ ֆինանսական աջակցություն՝ կլաստերային նախագծի իրականացման համար:
2. Աջակցող կլաստերային քաղաքականությունը, որի դեպքում պետության կողմից աջակցությունը լրացվում է ներդրումային քաղաքականությամբ՝ ուղղված տարածաշրջանի ենթակառուցվածքների զարգացմանը, մարքեթինգային ծառայությունների առաջընթացին, կադրերի վերապատրաստմանը և նմանատիպ այլ գործընթացներին:
3. Դիրեկտիվ կլաստերային քաղաքականությունը, երբ պետության աջակցությունից բացի, իրականացվում են հատուկ ծրագրեր՝ ուղղված տարածաշրջանի մասնագիտացմանը:
4. Ինտերվենցիոն կլաստերային քաղաքականությունը, որի դեպքում կառավարությունն իր դիրեկտիվ գործառույթի իրականացումից բացի, ստանձնում է կլաստերների հետագա զարգացման վերաբերյալ որոշումների ընդունման պատասխանատվությունը, իրացնելով ակտիվ կարգավորման գործառույթ՝ տրանսֆերների, սուբսիդիաների տեսքով, նպաստելով կլաստերների գործունեությանը:

Հիմք ընդունելով վերոնշյալները՝ ՀՀ-ում կլաստերային քաղաքականության իրականացման դեպքում առաջին փուլի ժամանակ արդյունաբերական ոլորտի զարգացման նպատակով պատասխանատու պետական լիազորված մարմինը պետք է հանդիսանա միջնորդ՝ շահագրգիռ կողմերի (միջազգային կազմակերպությունների, հետազոտական կառույցների, ֆինանսավարկային կազմակերպությունների, հացի ու հրուշակեղենի արդյունաբերության կազմակերպությունների) միջև, խթանի սահմանափակ ֆինանսական աջակցություն տարբեր նախագծերի իրականացման համար:

Կլաստերային քաղաքականության իրականացման երկրորդ փուլում պետության խթանիչ գործառույթը պետք է լրացվի աջակցող ներդրումային քաղաքականությամբ՝ ուղղված կլաստերի մասնակիցների մրցունակության բարձրացմանը, կատարելով.

- առավել արդյունավետ ներդրումային նախագծերին աջակցություն,
- կլաստերների կառավարման լավագույն փորձի ուսումնասիրության և խորհրդատվական աջակցության տրամադրում,
- կոլեկտիվ մարքեթինգային նախագծերին աջակցություն՝ հետազոտությունների համատեղ ֆինանսավորմամբ,
- երկարաժամկետ պայմանագրային հարաբերությունների հաստատման աջակցություն:

Երրորդ և չորրորդ փուլերում, պետության կողմից խթանող և աջակցող քաղաքականություններից բացի, անհրաժեշտ է կլաստերի մասնագիտացմանը ուղղված ծրագրերի մշակում և դրանց նպատակային իրագործման վերաբերյալ ճիշտ որոշումների ընդունում:

Պետք է նշել, որ հանրապետության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում և գերակա ճյուղերում կլաստերների ստեղծումը կնպաստի բնակչությանը սեփական արտադրության մթերքներով ապահովման մակարդակի բարձրացմանը: Քանի որ, օրինակ, հացահատիկով իր ազգաբնակչությանն ապահովելը եղել և մնում է հանրապետության պարենային ապահովության խնդիրը: Կլաստերների ստեղծման շնորհիվ պետությունը սեփական

¹ Портрет, Майкл Э. Конкуренция, пер с англ.М. Издательский дом Вильямс, 2005, с.260.

² Enright M.J.Regional Clusters.What we know and should know // paper prepared for the Kier Institute international Workshop on innovation Clusters and interregional Competition, 2002, p.18.

ռեսուրսների հաշվին կկարողանա ապահովել հացահատիկի արդյունավետ արտադրության զարգացում՝ ցանկացած տնտեսական և կազմակերպական միջոցներով, նվազագույնի հասցնելով կախվածությունը հացահատիկ ներմուծողներից: Միաժամանակ հացահատիկի արտադրությունով պայմանավորված՝ հացի և հրուշակեղենի արտադրության բնագավառում նպատակահարմար կլինի գյուղատնտեսության նախարարության կառուցվածքում ստեղծել պետական կառավարման մարմին, որը կապող օղակ կհանդիսանա վերամշակող կազմակերպությունների, գյուղացիական տնտեսությունների և հետազոտական կառույցների միջև, ֆինանսական աջակցություն կապահովի տարբեր նախագծերի իրականացման համար և միաժամանակ պետական գնումների տեսքով կնպաստի տեղական արտադրողի մրցունակության բարձրացմանը: Ուստի, այդ նպատակին հասնելու համար կծնավորվեն վերամշակող կազմակերպությունների արդյունավետության բարձրացմանը նպաստող հիմնախնդիրներ և դրանց լուծման ուղիներ (տե՛ս աղյուսակը).

Աղյուսակ

Հացի և հրուշակեղենի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրներն ու լուծման ուղիները ՀՀ-ում

Հիմնախնդիրները	Լուծման ուղիները
Արտադրողականության աճի ապահովում	<ul style="list-style-type: none"> • հացի փռերի արտադրական կոոպերացում, • կազմակերպությունների տեխնիկական, • հնարավորությունների օպտիմալացում, մասնագիտական խորացում:
Արտադրական բազայի վերազինում	<ul style="list-style-type: none"> • արտադրական կոոպերացիայի շնորհիվ, • ինովացիոն կազմակերպությունների ներգրավման միջոցով կլաստերների ընդգրկման, գիտահետազոտական ինստիտուտների, կոնստրուկտորական բյուրոների, համագործակցության արդյունքում:
Ռիսկերի նվազեցում	<ul style="list-style-type: none"> • հումքի համատեղ գնման արդյունքում, • մարքեթինգային հետազոտությունների համատեղ իրականացման արդյունքում , • հրուշակեղենի համատեղ արտահանման իրականացման արդյունքում, • նոր տեխնիկայի համատեղ ներդրման շնորհիվ:
Որակի միջազգային չափանիշներին համապատասխանեցում	<ul style="list-style-type: none"> • պետություն – կլաստեր համագործակցությամբ ժամանակակից լաբորատորիաների ստեղծում, • արտադրանքի որակի ստուգման ու մեխանիզմների կատարելագործում:
Ոլորտի կազմակերպությունների մրցունակության բարձրացում	ի հաշիվ կլաստերի ձևավորման , որը հնարավորություն կտա բարձրացնել ոլորտում ընդգրկված կազմակերպությունների մրցունակությունը, գիտության և արտադրության կապերի ստեղծումն ու կատարելագործումը:
Ձեռնարկատիրական գործունեությանն առնչվող օրենսդրաիրավական ակտերի և դրանցում տեղի ունեցող փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվության, տեղեկատվության աղբյուրների պակաս	Ձեռնարկատիրական կլաստերում անհրաժեշտ խորհրդատվության ընդգրկումը, որը կընձեռի տեղեկատվություն ստանալու և փոխանակելու հնարավորություն:

Այսպիսով, կլաստերային քաղաքականության միջազգային փորձի կիրառումը հնարավորություն կտա կլաստերի մասնակիցների միջև երկարաժամկետ, կայուն, փոխշահավետ տնտեսական կապերի ստեղծմանը և ամրապնդմանը, բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը, կազմակերպությունների տեխնիկական վերազինմանը և հացի ու հացամթերքի որակի բարելավմանը: Արդյունքում հացի գործարանների և արտադրամասերի համար նոր սարքավորումների ներդրման և նյութատեխնիկական մատակարարումների գինն ավելի ցածր կլինի՝ մեծածավալ գնումների կատարման շնորհիվ: Միաժամանակ, կլաստերի անդամների փոխգործունեությունը կկրի անընդհատ բնույթ, որը հնարավորություն կտա նվազեցնելու ֆինանսական և առևտրային ռիսկերը՝ գործարքների կնքման ժամանակ:

ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ
ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ

ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ
ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ

ՀՀ Կառավարության կողմից հաստատված

Հոդվածում մանրամասնորեն ուսումնասիրվում է կլաստերային քաղաքականության միջազգային փորձը: Ցույց է տրվում կլաստերների մրցունակության բարձրացման ուղիները և դրանց ստեղծման առավելությունները: Ցուցաբերվում է կլաստերային քաղաքականության 4 փուլերը, որոնք կարող են զարգացում ունենալ ՀՀ-ում: Գծապատկերի տեսքով բերված է կլաստերների մոդելների ներդրումից ակնկալվող արդյունքները: Աղյուսակի տեսքով բերված է հացի և հրուշակեղենի կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և լուծման ուղիները: Միևնույն ժամանակ նշվում է, որ կլաստերի անդամների փոխգործունեությունը պետք է կրի անընդհատ բնույթ, որը կնպաստի ֆինանսական և առևտրային ռիսկերի նվազեցմանը՝ գործարքների կնքման ժամանակ:

ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ
ՀՀ Կառավարության կողմից հաստատված
Պատժամանակի մասին Ըրկնադրական Դրոճի Կրկնակ

ЗАРУБЕЖНЫЙ ОПЫТ КЛАСТЕРНОЙ ПОЛИТИКИ И ВОЗМОЖНОСТИ ЕГО ВНЕДРЕНИЯ В РА

АШОТ БАЯДЯН, д.э.н., профессор
главный научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

ТАТЬЯНА ОГАНЯН, к.э.н.
старший научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье подробно рассматривается зарубежный опыт формирования и развития кластерной политики. Показаны пути повышения конкурентоспособности кластеров и преимущества их создания. Представлены четыре этапа кластерной политики, которые могут быть осуществлены в РА. Описана схема получения ожидаемых результатов после внедрения кластерных моделей. В виде таблицы приведены основные проблемы повышения эффективности деятельности предприятий по производству хлеба и мучных кондитерских изделий и пути их решения. Одновременно указывается, что взаимодействие между участниками кластера должно носить непрерывный характер, что способствует снижению финансовых и торговых рисков при заключении сделок.

Ключевые слова: кластерная политика, мировой опыт, конкурентоспособность, инвестиционная возможность, предпринимательская деятельность, предприятие по производству хлеба и мучных кондитерских изделий, повышение эффективности.

CLUSTER POLICY BEST PRACTICES AND THEIR POSSIBLE APPLICATION IN THE REPUBLIC OF ARMENIA

ASHOT BAYADYAN, Doctor of Sciences (Economics)
Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

TATYANA OHANYAN, Candidate of Sciences (Economics)
Senior Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

The article provides a detailed study of cluster policies implemented in other countries. The article presents approaches to improving the competitiveness of clusters and provides the advantages of building/developing clusters. The authors present 4 stages of cluster policy that could be utilized/implemented in the Republic of Armenia. The article presents a chart/framework of expected results upon adopting cluster building/developing strategy. A separate table provides the issues and approaches to address them in order to make the performance of bread and pastry/confection producing companies more efficient. Meanwhile, the authors state that cooperation among cluster member companies could reduce financial and commercial risks on making various transactions.

Keywords: cluster policy, best practices worldwide, competitiveness, investment opportunity, entrepreneurship, bread and pastry/confectionery producing companies, increase in efficiency.

²∂ŕŕ²¼, Â², °iæÚ²Ü, i. . . Ã, 'áo»Ýŕ
ĐäÖĐ §ÖÚáðÖÇ ŕÝŕ»ē³·ÇiáðÃÚáðÝ
& Ī³ē³iñáðÚ 2| ³ÚμÇáÝÇ i³ñÇã

ŕ²Â°iÆĪ Ü²èàÚ²Ü
ĐäÖĐ ³èäÇñ³Ýŕ

Đ°è²Đ²Öáð, ²ĪðáðÂÚáðÜÀ áðã°è Üáð ŕ°ÊÜàÈà¶Æ²Ü°ðÆ ĪÆð²èØ²Ü, Øðð²ĪðáðÂÚ²Ü °i Ø²ðø°ÂÆÜ¶Æ
¶áðĪÆø²ŕ¼ØÆ ÊÂ²ÜØ²Ü àÈàðŕ

Գիտության և տեխնոլոգիաների առաջընթացով պայմանավորված՝ արտադրողական ուժերի զարգացումն ու դրանց միջազգայնացումը, ինչպես նաև ազգային տնտեսությունների ազատականացումը, ապահովելով կապի ու տեղեկատվության փոխանակման միջոցների աննախադեպ աճ, հանգեցրել են պետությունների, դրանցում գոյություն ունեցող ինստիտուտների, ընկերությունների, ազգային մշակույթների չլսված ու չտեսնված փոխկապվածության¹: Ինչպես նկատում է Մայքլ Պորտերը, այսպիսի գործընթացներն ինքնին խթանում են մրցակցությունը²:

Այսօր այս գործընթացների անմիջական խթան է հեռահաղորդակցությունը, որը կրճատելով տարածությունները, թափանցիկ դարձնելով ազգային և պետական սահմանները, կայծակնային արագությամբ ընդհանուրի սեփականությունն է դարձնում ամենահրատապ նորություններն ու իրադարձությունները: Բուռն զարգացումները համաշխարհային հեռահաղորդակցության ոլորտում հանգեցնում են ցանցային տնտեսությունների աննախադեպ ընդլայնմանը, նոր տեխնոլոգիաների ներդրման խթանմանը, տարբեր հասարակություններում տարաբնույթ և այդ թվում՝ սոցիալական խնդիրների լուծմանը, կրթական բարեփոխումների ակտիվացմանը և մի շարք այլ դրական փոփոխությունների:

Պետք է նկատել, որ այս գործընթացներում իրենց ուրույն տեղն ու դերակատարումն ունեն վերազգային կորպորացիաները:

Բնական է, վերջին տասնամյակներում համաշխարհային ընկերությունների դասակարգման առաջին շարքերում պետք է գտնվեին ֆինանսական և էներգետիկ ռեսուրսներ վաճառող ընկերությունները: Սակայն իրենց դինամիկայով աննախադեպ են նաև տեղեկատվահեռահաղորդակցայինները: Եթե փաստենք, որ ոլորտը սկսել է ակտիվ զարգանալ վերջին 20-30 տարիների ընթացքում, ապա արդյունքները կարելի է համարել գերազանց:

Այսպես, ըստ Forbes Global 2000-ի 2013թ. տվյալների, 63 երկրներ ներկայացնող 2000 խոշոր ընկերությունների եկամուտները կազմել են 38 տրիլիոն ԱՄՆ դոլար, իսկ շահույթը՝ 2.43 տրիլիոն³: Ամերիկյաններն այստեղ կազմում են 543-ը, որին հետևում է ճապոնիան՝ 251 ընկերություններով:

Ուշագրավ է 2000-ի մեջ 68 հեռահաղորդակցության ընկերությունների փաստը (ադյուսակ1), ընդ որում, չորսը՝ France telecom-ը, Vimpelcom-ը, Megafon-ը և Rostelecom-ը, ակտիվ գործունեություն են ծավալում Հայաստանում:

Այս ընկերությունների կողմից կապիտալի վերազգայնացումը զարգացող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, արագացնում է սոցիալ-տնտեսական բարեփոխումները, նպաստում է նոր տեխնոլոգիաների ներդրմանը, արտադրության կազմակերպման և ծառայությունների մատուցման նոր ձևերի, մարքեթինգային ռազմավարությունների կիրառմանը, բնական և աշխատանքային ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը՝ այս ամենով նաև խթանելով միջազգային խոշոր այլ ծրագրերի իրականացումը տվյալ երկրներում:

¹ "Capital Markets". Investopedia.
² Майкл Портер, Конкурентные преимущества стран, 2004, ст 512.
³ <http://www.forbes.com/sites/scottdecarlo/2013/04/17/the-worlds-biggest-companies-2>

Forbes Global 2000-ի 2013թ. ի հեռահաղորդակցության ոլորտի խոշորագույն ընկերությունները (ներկայացված են 68-ից մի քանիսը)

Կարգ	Ընկերություն	Երկիր	Սպառողների քանակ, հազար մարդ	Աշխատակիցների քանակ, հազ. մարդ	Եկամուտ, մլրդ դոլար	Շահույթ, մլրդ դոլար	Ակտիվներ, մլրդ դոլար	Շուկայի կապիտալացում, մլրդ դոլար
24.	AT&A	ԱՄՆ	126.7	243,360	127.4	7.3	273.2	200.1
29.	China Mobile	Չոնկոնգ	759	175,336	88.8	20.5	168.7	213.8
33.	Vodafone	Մեծ Բրիտանիա	411	91,272	74.7	11.1	219.9	135.7
169.	France telecom	Ֆրանսիա	229.8	170,000	57.4	1,5	113,9	29,2
270.	Vimpelcom	Չոլանդիա	219	66,000	23.1	2.1	55.4	19
433.	Deutsche Telecom	Գերմանիա	37	229,456	76.7	-6.9	136.1	48.4
647.	Rostelecom	Ռուսաստան	9.8	170,000	10.4	1.1	17.7	11.3
696.	Megafon	Ռուսաստան	68.1	21,000	8.8	1.2	11.5	17.6


Իսկ ինչպիսի՞ն՞ են եղել տեխնոլոգիական զարգացումները ոլորտում, որոնք այսօր հանգեցրել են որակական թռիչքի, առաջարկվող ցածր գների, ցանկացած վայրում հասանելիության և ամբողջական ծածկույթի առկայության, սպառողների հարաբերությունների կառավարման կատարելագործված համակարգերի կիրառմանը, առողջ մրցակցության առկայության, սպառողների համար մրցավազքի և այս ամենով պայմանավորված՝ մարքեթինգային տարբեր գործիքակազմերի կիրառման անհրաժեշտությանը:

Այսպես, 1980-ական թվականների սկզբին Եվրոպայում սկսվեց բջջային կապի անալոգային համակարգերի բուռն զարգացումը, հատկապես Սկանդինավյան երկրներում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Մեծ Բրիտանիայում: Յուրաքանչյուր երկիր մշակում էր իր սեփական, մյուսներին ինչպես սարքավորումներով, այնպես էլ ծառայությունների մատուցմամբ չհամընկնող համակարգը: Դրա արդյունքում յուրաքանչյուր երկրի բջջային կապի համակարգի սարքավորումներն օգտագործվում էին միայն տվյալ երկրի սահմաններում և ունեին սահմանափակ իրացման շուկա: Այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ ստեղծել համաեվրոպական միասնական բջջային կապի ստանդարտ:

1982թ. Եվրոպական փոստային և հեռուստահաղորդակցման կոնֆերանսը (Conference of European Posts and Telegraphs) ձևավորեց մի խումբ, որի նպատակն էր ուսումնասիրել և մշակել ընդհանուր օգտագործման համաեվրոպական բջջային շարժական կապի համակարգ, որն անվանվեց Group Special Mobile (GSM): Մշակված շարժական կապի համակարգը, որը հետագայում վերանվանվեց շարժական կապի գլոբալ համակարգ (GSM)¹, պետք է բավարարեր հետևյալ չափանիշներին՝

- ունենալ խոսակցական ինֆորմացիայի փոխանցման բարձր որակ,
- ապահովել սարքավորումների և մատուցվող ծառայությունների ցածր արժեք,
- լինել բջջային կապի համաեվրոպական համակարգ,
- ռադիոհաճախականություններն առավել արդյունավետ օգտագործել, ունենալ աճող պահանջներին համապատասխանող մեծ տարողունակություն,
- լինել համատեղելի ֆվային ցանցի ինտեգրացված ծառայություններին (ISDN, Integrated Services Digital Network) և այլ տվյալների փոխանցման համակարգերին,
- ապահովել ինֆորմացիայի հաղորդման անվտանգություն և միջազգային ռոունդինգ,
- ապահովել օգտագործողի համար հարմար սարքավորումներ և այլն:

¹ Global System for Mobile communication loba System for Mobile GSM.



Ընդհանուր բջջային կապի տեխնոլոգիաների՝ ցանցերի էվոլյուցիան անալոգայինից այսօր դարձել է Լայնաշերտ, անլար: Ցանցի միջոցով բարձր արագության, տվյալների փոխանցման, մուլտիմեդիա դիտումների նկատմամբ անընդհատ աճող պահանջարկը բավարարելու համար 90-ականներին մշակվեց 3G համակարգը, որը հնարավորություն տվեց սպառողներին բացի ձայնային փոխանցումից, կատարել նաև տվյալների փոխանցում: Նոր տեխնոլոգիաների առաջացումն ու սպառողական պահանջարկի անընդհատ աճը ստիպեցին ոլորտի հետազոտողներին արդեն 2000-ականների սկզբին հանդես գալ չորրորդ սերնդի՝ 4G բջջային կապի համակարգով: 4G տեխնոլոգիան ներառում է բոլոր նախկին համակարգերը և ամբողջովին հիմնված է IP անլար ինտերնետ համակարգի վրա, որն ապահովում է բազմաթիվ հեռահաղորդակցության ծառայություններ, այդ թվում՝ բջջային և ֆիքսված:


Թվային մեթոդների առավելությունները, որոնք օգտագործվում են GSM ստանդարտի բջջային շարժական կապի համակարգում, հանգում են հետևյալին.

- խոսակցության թվային կոդավորում ավելի ցածր արագություններով,
- թվային մոդուլյացում, որը թույլ է տալիս բարձրացնել հաճախականության շերտի օգտագործման արդյունավետությունը,
- հաճախականությունների շերտի լայնության ճկուն փոփոխում,
- թվային համակարգերի ավելի բարձր կայունություն խանգարումների դեմ,
- կանչերի հաղորդման և մուտքի հնարավորության, կառավարման արդյունավետության բարձրացում, հաճախականության շերտի ֆիքսված բաշխման համար ունակության տարողունակության մեծացումը ենթադրում է համապատասխանաբար բջիջների փոքրացում,
- լավագույն էներգետիկ բնութագրեր,
- կապի ավելի բարձր որակ,
- կապի անվտանգություն և գաղտնիություն:

Տեխնոլոգիական այսպիսի զարգացումները կարևոր էին և առաջատար դիրքեր կնդեին բջջային կապը սպառողների շրջանում: Այսօր փաստ է, որ բջջայինն առավել գործառույթներ ու գործիքներ է ընդգրկում և կապի այլ միջոցները դուրս մղում մեր առօրյայից և պահանջարկի շուկայից:


Այդ է վկայում նաև համաշխարհային հեռահաղորդակցության բնագավառում բջջային, ֆիքսված, ինտերնետից օգտվողների դինամիկան (գծապատկեր 1):

Համաշխարհային հեռահաղորդակցության զարգացումները 2001-2013թթ.



Ակտիվանում է 2010թ-ից նաև լայնաշերտ բջջային կապի և ինտերնետից օգտվողների քանակը, և սրան հակառակ՝ ֆիքսված կապը փորձում է պահպանել իր դիրքերը այս մրցավազքում (գծապատկեր 2):

2001-2013թթ. ֆիքսված կապի բաժանորդների թիվը 100 բնակչի հաշվով




Աշխարհն արագ քայլերով մոտենում է 7 միլիարդ բջջային կապի բաժանորդների թվին, որը, սակայն, շարունակում է արագընթաց աճել օր-օրի¹: 2013 թ. դրությամբ բջջային կապի ներթափանցումը գլոբալ մակարդակով 96% է, զարգացած երկրներում՝ 126%, իսկ զարգացող երկրներում՝ 89%²:

Ուշագրավ է ինտերնետի բուռն ընդլայնումն ամբողջ աշխարհում: Այսօր այն դարձել է ինֆորմացիայի, կրթության կատարելագործման, կողմնորոշման, հաղորդակցման և կենսակերպի համար անհրաժեշտ տարր (գծապատկեր 3):

¹ <http://www.itu.int/ict/statistics>
² ICT Facts and Figures.

2001-2013թթ. ինտերնետից օգտվողների քանակը ըստ 100 բնակչի հաշվով



Անհրաժեշտ է անդրադառնալ նաև կապի ծառայությունների ստեղծման և օգտագործման համար սարքավորումներ արտադրող կազմակերպություններին, քանի որ տնտեսության այս ոլորտի գլոբալացման և հատկապես մրցակցության սրման հարցում պակաս կարևոր չէ նրանց ազդեցությունը: Աղյուսակ 1-ում բերված են հեռախոսային սարքավորումներ արտադրող կազմակերպությունների վաճառքները 2011 և 2012 թվականներին¹:

Աղյուսակ 1

Բջջային հեռախոս արտադրող կազմակերպությունների վաճառքները և շուկայում զբաղեցրած մասնաբաժինը 2011-2012 թթ

Կազմակերպություն	Վաճառքներ		Մասնաբաժինը շուկայում	
	2011	2012	2011	2012
Samsung	384.6	315.1	22.0%	17.7%
Nokia	333.9	422.5	19.1%	23.8%
Apple	130.1	89.3	7.5%	5.0
ZTE	67.3	56.9	3.9%	3.2%
LG	58	86.4	3.3%	4.9%
Huawei	47.3	40.7	2.7%	2.3%
TCL	37.2	34	2.1%	1.9%
BlackBerry (RIM)	34.2	51.5	0,02	2.9%
Motorola	33.9	40.3	1.9%	2.3%
HTC	32.1	43.3	1.8%	2.4%
Այլ	587.4	595.9	33.6%	33.6%
Ընդամենը	1,746.2	1,775.7	100.0%	100.0%

Ինչպես նկատում ենք, առաջին եռյակի մասնաբաժինը կազմում է շուկայի կեսը: Թվում է, թե Apple-ն անկում է ապրել, սակայն նոր և սպասվելիք (5-րդ և 6-րդ սերնդի) մոդելների առաջարկումը 2013թ-ին հեղաշրջում էր այս շուկայում: Ընկերության առաջարկին արագ պատասխանեցին առաջատարները: Սա է հեղափոխականը այս բնագավառում, սա է մրցակցությունը, որից շահում է միմիայն սպառողը:

Որոշ հետազոտողներ գտնում են, որ GSM կապի այս հաջողությունները կապված են գլոբալացման երևույթի հետ: Այս ընթացքի որոշ ասպեկտները հետևյալն են.

¹ ICT Facts and Figures.

- գլոբալ ստանդարտների ստեղծում,
- գլոբալ շուկաներ,
- բջջային հեռախոսների գլոբալ արտադրողներ:

Այս ամենի հետ մեկտեղ, բջջային կապի բաժանորդների աճի հիմնական խթանիչներն են նաև.

- մրցակցությունը բջջային օպերատորների միջև,
- կանխավճարային համակարգի ներդրումը և գնագոյացման նորարարական եղանակների մշակումը,
- նորարարական ծառայությունների ներդրումը,
- ենթակառուցվածքի ծախսերը,
- բջջային սարքավորումների արժեքը:

Այս ամենը ապահովեց մեկ ընդհանուր արժեքի՝ 2005թ-ից սկսած անշեղորեն նվազող դինամիկան աշխարհում, զարգացած և զարգացող երկրներում: Այն 25 ցենտից հասել է 5.4-ի, և դեռ շարունակվում է անկումը:

Սա ևս մեկ անգամ վկայում է հեռահաղորդակցության ոլորտում նոր տեխնոլոգիաների ներդրման և օպտիմալ կառավարման փաստը, ազատ մրցակցության առկայությունը, սպառողների ակտիվությունը և փոխադարձությունը ընկերությունների գործունեության մեջ, պետական ակտիվ միջամտությունը սակագների վերահսկմանը և մրցակցային միջավայրի պահպանմանը: Իսկ այս պայմաններում մարքեթինգային գործիքակազմի՝ որակի վերահսկման, գնային ճկուն քաղաքականության, հասանելիության ընդլայնման, հետսպասարկային ծառայությունների ակտիվացման, սպառողների նկատմամբ ուշադրության կատարելագործման անհրաժեշտությունը դառնում է պարտադրված: Փաստ է. այսօր հեռահաղորդակցության ոլորտում առանց լուրջ մարքեթինգային ռազմավարության կիրառման, կործանարար կարող է լինել:

Այսպիսին են զարգացումները համաշխարհային հեռահաղորդակցությունում, որոնցից ամենասն չէ նաև Հայաստանը՝ ոլորտի դինամիկ և ակտիվ զարգացումներով, հեռահաղորդակցության բնագավառի առաջատարների նկատմամբ հետաքրքրությունների շեշտադրումներով, սպառողներին օգտակար արդյունք ապահովելու նորանոր հնարավորություններով:

ԹձԹՄՄՔԻ ԻձԷՄՄՄՄ

ԾԾ Պ²² Օ. թձՁՄՄՄՄՄՄ ՄՄՄՄ
ԻՄՄՄՄՄՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄՄՄՄՄ
ՄՄՄՄՄՄՄՄՄՄ

ԷՔՄՄՄՄ 21/4ՄՄՄՄ

ԾԾ Պ²² Օ. թձՁՄՄՄՄՄՄ ՄՄՄՄ
ԻՄՄՄՄՄՄՄՄՄՄՄՄ ՄՄՄՄՄՄՄՄՄՄՄՄ
ՄՄՄՄՄՄՄՄՄՄ

ՍԾՊՄՄՄՄՄՄ ՊՄձձՕՄՄՄՄՄՄՄՄՄՄՄՄ 1/4ՄՄՄՄՄՄՄ ՕՔԻձձՕՄՄՄՄՄՄ

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների հաղթահարման գործընթացում մեծ տեղ է հատկացվում գյուղատնտեսական արտադրության զարգացմանը, որի կարևոր ուղղություններից է օրգանական (էկոլոգիական) գյուղատնտեսությունը:

Օրգանական գյուղատնտեսությունը համակարգ է, որը նպատակաուղղված է բարելավելու և խրախուսելու գյուղատնտեսական արտադրությունը՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական տեսանկյունից: Այս համակարգը հողի բարելավումը դիտարկում է որպես հիմնական առանցքային ուղղվածություն որակյալ մթերքների արտադրության գործընթացում: Ինչպես գյուղատնտեսական մթերքները, այնպես էլ սննդամթերքները օրգանական են կոչվում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների, մասնավորապես սկսած հողի մշակումից մինչև իրացում: Օրգանական գյուղատնտեսությունը մի համակարգ է, որտեղ չեն կիրառվում թունավոր նյութեր, կայուն պեստիցիդներ և քիմիական պարարտանյութեր:

Օրգանական գյուղատնտեսության կազմակերպման մեթոդների ու միջոցառումների կիրառման դեպքում, օգտագործելով բուսական և կենդանական ծագման մնացորդներ, զոմաղբ, թռչնաղբ, կենսահումուս (տորֆ, կոմպոստ և այլն) և կատարելով կանաչ պարարտացում, իրականացնելով ճիշտ ոռոգում և ցանքաշրջանառություն, բացառվում է էկոհամակարգերի, հողերի բերրիության և կենսաբազմազանության վրա բացասական ազդեցությունը:

Հայաստանյան շուկայում դեռևս լայն տարածում չունի օրգանական սննդամթերքը: Պատճառը նմանօրինակ արտադրանքի փոքր շուկան է, որը սակայն կարող է մեր երկրում զարգացման և ընդլայնման լուրջ հեռանկարներ ունենալ: Օրգանական սննդամթերքների արտադրությունը մեկնարկային փուլում համեմատաբար ավելի ծախսատար է, քան պարարտանյութերի վրա շեշտը դրած գյուղմթերքների արտադրությունը, սակայն, հետագայում այն դառնում է առավել կայուն, էկոլոգիապես մաքուր, նաև շահութաբեր արտադրողի համար :

Օրգանական գյուղատնտեսության և հետևաբար էկոլոգիապես մաքուր արտադրության զարգացման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես ներքին շուկայի պահանջներով (քանի որ բնակչության առողջության երաշխիք է հանդիսանում) այնպես էլ արտաքին շուկայում մրցունակության ապահովման գործով:

Օրգանական գյուղատնտեսության համակարգն աշխարհում ունի 30-ամյա պատմություն, արտադրված արտադրանքը դեռևս աննշան է և չի գերազանցում ընդհանուրի 1-2%-ը: Սակայն պետք է նշել, որ մի քանի զարգացած երկրներում այդ արտադրանքը հասնում է 8%-ի: Այդ երկրներում (Գերմանիա, Ավստրիա, Անգլիա, Բելգիա, ԱՄՆ և այլն) ֆերմերների միջին հողատարածքը կազմում է 40-50 հեկտար, որի շրջանակներում հնարավոր է ապահովել օրգանական երկրագործության համակարգի բոլոր միջոցառումները:

Օրգանական արտադրանքը սկիզբ է առել Գերմանիայում և կարճ ժամանակաընթացքում վերածվել է մեծ բիզնեսի: Օրգանական գյուղատնտեսությունը Գերմանիայում աճում է տարեկան 10%-ով և ըստ հավաստի տվյալների, նույնիսկ ֆինանսական ճգնաժամի պայմաններում այն ունեցել է աճման միտում:

Եվրոպայում օրգանական գյուղատնտեսությունը հատկապես 1980-ականներից հետո մեծ զարգացում ապրեց շնորհիվ սուբսիդավորման և խրախուսվում է ոչ միայն որպես գյուղատնտեսության, այլ նաև բնապահպանական հարցերի լուծման ձև, որի շնորհիվ զուգորդվում են տնտեսական և բնապահպանական շահերը, ինչն էլ իր հերթին ապահովում է երկրի տնտեսության կայուն զարգացումը:

2008թ. ապրիլի 8-ին ընդունվել է «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը, որը կարգավորում է օրգանական գյուղատնտեսության մթերքի և հումքի արդյունավետության, պահպանման, վերամշակման, փոխադրման, իրացման, ինչպես նաև վայրի բույսերի մթերման հետ կապված հարաբերությունները, սահմանում է օրգանական գյուղատնտեսության վարման իրավական հիմքերը, սկզբունքները, արտադրանքի շրջանառությանը ներկայացվող հիմնական պահանջները, պետական աջակցության ուղղությունները և լիազոր մարմնի պարտավորությունները: Սույն օրենքը ուժի մեջ է մտել 2009թ. մայիսի 14-ից¹:

Տվյալ իրավիճակում հանրապետությունում օրգանական գյուղատնտեսության արմատավորումը պահանջում է այդ ոլորտի գծով տարածաշրջաններում հանրապետության կայուն տեղի ապահովում, որը սակայն լուրջ միջոցառումներ է պահանջում: Այդ միջոցառումների շրջանակներում հատկապես առաջնային են օրգանական գյուղատնտեսության ձևավորման և զարգացման աջակցության մեխանիզմները:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությամբ կամ օրգանական սննդամթերքի արտադրությամբ զբաղվող կազմակերպություններին հավաստագիր է շնորհում «Էկոզլոբ» ընկերությունը, որը 2002թ. և 2003թ.-ից արդեն ներդրել է օրգանական գյուղատնտեսության և սննդամթերքների վերամշակման հավաստագրման ծառայություններ: Ընկերությունը հիմնադրվել է շվեյցարական EPER և SDC զարգացման աջակցությամբ և ստացել է միջազգային ճանաչման հավաստագիր DAP գերմանական կազմակերպության կողմից:

«Էկոզլոբ» ՍՊԸ-ն Հայաստանում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքների հավաստագրմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է, որն առաջնորդվում է այդ ոլորտի գործընթացով ու իր ծառայություններով բացում է դռները դեպի օրգանական սննդամթերքների շուկա: Ընկերության հավաստագրման ոլորտներն են բուսաբուծությունը, անասնապահությունը, մեղվաբուծությունը, սննդի արտադրությունն ու վերամշակումը, ինչպես նաև դրանց իրացումը: Ընդհանրական առումով պետք է նշել այն իրողությունը, որ օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեր երկրում ունի իրատեսական հիմքեր, որոնցից են բնակչի մասնակցությունը և բնատնտեսական հնարավորությունները, մասնագիտական ու գիտական մեծ ներուժը, ինչպես նաև մեր ֆերմերների աշխատասիրությունը:

Հայաստանում օրգանական գյուղատնտեսությունը զարգացման միտումներ ունի, և գնալով ավելի շատ հողատարածքներ են ընդգրկվում, ու դրանց համահունչ ավելանում են վերամշակող գյուղատնտեսական արտադրանքի ծավալները: Վերջին տվյալներով օրգանական գյուղատնտեսությամբ զբաղվում են հանրապետության նախալեռնային և լեռնային շրջանների 850-1000 հեկտար տարածքում, 2003թ. 70 հեկտարի փոխարեն: Այն ֆերմերները, որոնք իրենց ցանքատարածություններում կիրառել են հանքային պարարտանյութեր և ցանկություն ունեն սովորական մշակումից անցնելու օրգանական գյուղատնտեսությանը, պարտադիր պետք է անցնեն անցումային շրջան, որը կարող է տևել 2-3 տարի:

Այժմ օրգանական մթերք արտադրելու և իրացնելու հավաստագիր ունեն թվով 34 ֆերմեր, 3 մեղվապահական և 7 վերամշակող ընկերություններ: Հավաստագիր ունեն «Ծիրանի այգի» ՍՊԸ-ն, «Ծիրանամուտ» ՓԲԸ-ն անհատ ֆերմերներ, վերամշակող կազմակերպություններից՝ «Երևանի գարեջուր» ընկերությունն իր «Արևա» օրգանիկ հյութերով, «Թամարա ֆրուտի» մի շարք արտադրատեսակներ, «Սիս նատուրալ»-ը «Յան» արտադրատեսակներով, «Նեկտար բոնուս» ընկերության բուսական յուղերը, եթերայուղերն ու օշարակների արտադրությունը, «ԱԲԴԱ» ընկերությունն իր «Սարի թեյ» արտադրատեսակներով, «Բիզոն» ընկերությունը մրգային

¹ «Օրգանական գյուղատնտեսության մասին» ՀՀ օրենքը 04.2008թ.:

բուսական թեյերով, մեղրի արտադրությամբ զբաղվող «Անուշակ» ՓԲԸ-ն և այլն: Հավաստագիրը տարին մեկ անգամ վերահաստատվում է¹:

Օրգանական գյուղատնտեսության զարգացումը մեծապես կախված է պետական աջակցությունից և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից դրամաշնորհների հատկացումներից: Այդ ոլորտը ընդհանուր առմամբ լինելով հանրապետության տնտեսության իրական հատվածում և, մասնավորապես, ունենալով ագրարային համակարգում նոր արմատավորվող ուղղվածություն, դրա ձևավորումն ու հաջող կենսագործունեությունն անհնարին է առանց այդ բնագավառի համար բարենպաստ պայմաններ ապահովող տնտեսական և այլ գործուն մեխանիզմների մշակման ու դրանց կիրառման: Ջանազան ծրագրերի նպատակն է շրջակա միջավայրի պաշտպանության և սննդի անվտանգության կարևորագույն խնդիրների վերաբերյալ մարդկանց իրազեկության բարձրացումը՝ ֆերմերներին ավանդական գյուղատնտեսությունից օրգանական գյուղատնտեսության անցման մեթոդների և տեխնոլոգիաների ցուցադրման միջոցով:

Շահառուներին տրամադրվելու են բնապահպանական ուսուցումներ և առաջարկելու են կիրառել արդյունավետ տեխնոլոգիաներ, ֆերմերներին իրազեկելու են օրգանական գյուղատնտեսության վարման հիմունքներին ու տեխնոլոգիաների կիրառման մեթոդներին, իսկ ՏԻՄ-երի ղեկավարներին՝ շրջակա միջավայրի պահպանության և բնապահպանության կարևորագույն խնդիրների լուծման համար տեղական բյուջեից միջոցներ հատկացնելուն:

ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (Ի-Դի-Էմ-Սի)» հնգամյա ծրագիրն ուղղված է Հայաստանի բիզնես միջավայրի և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը²:

«Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի հիմնական նպատակն է աջակցել հայաստանյան փոքր ու միջին ձեռնարկություններին՝ նպաստելով դրանց գործունեության կառավարման և մարքեթինգի հմտությունների բարելավմանը, սննդի որակի և անվտանգության բարձրացմանը, օրգանական չափորոշիչներին համապատասխանելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև հնարավոր շուկաների բացահայտմանը:

2013թ. փետրվարին պտուղ-բանջարեղենի վերամշակման ոլորտի հայաստանյան 7 ձեռնարկությունների օրգանական սննդամթերք հավաստագրող «Էկոգլոբ» ընկերության գլխավորությամբ մասնակցեցին BIOFACH 2013-ին, որը կազմակերպվում է Գերմանիայի Նյուրնբերգ քաղաքում: Ընկերությունների մասնակցությունը ցուցահանդեսներին հնարավոր եղավ ԱՄՆ ՄԶԳ ձեռնարկությունների զարգացման ու շուկայի մրցունակության «Ի-Դի-Էմ-Սի» ծրագրի կողմից տրամադրված աջակցության և վերապատրաստումների շնորհիվ, որն ուղղված է եղել ընկերությունների արտադրանքի հավաստագրերի և օրգանական արտադրանքին համապատասխանեցմանը:

BIOFACH օրգանական արտադրանքի համաշխարհային ցուցահանդեսին առաջին անգամ ներկայացվեց «Սարի թեյ» ապրանքանիշի նոր տեսականին, նոր դիզայնով:

«Սարի թեյ» ապրանքանիշի 3 տեսակ ստացել են Եվրոպական կարգի օրգանիկ սննդի հավաստագիր, որոնք «Սարի թեյ» շուկայում արդեն հայտնի են որպես բարձրորակ բուսական թեյ արտադրող ապրանքանիշեր:

Այն վերամշակող ընկերությունները, որոնք մուտք ունեն միջազգային շուկա, հետաքրքրված են օրգանական մթերքի ձեռքբերմամբ: Այսինքն, վերամշակողը պետք է դառնա օրգանական հումքի պատվիրատու, ստեղծի իր հումքային բազան, պայմանագիր կնքի ֆերմերների հետ:

- Օրգանական գյուղատնտեսությանը աջակցելու և զարգացնելու համար անհրաժեշտ է՝
- իրավաօրենսդրական հիմքի ձևավորմամբ օրգանական գյուղատնտեսության գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծում,
 - օրգանական եղանակով գործող տեղական արտադրողների շահերի պաշտպանություն,

¹ Տվյալները «Էկոգլոբ» ՍՊԸ-ի:

² «Ի-Դի-Էմ-Սի» ԱՄՆ:

- պետական ծրագրերում, մասնավորապես՝ ագրարային ոլորտի առաջնային ուղղություններում օրգանական գյուղատնտեսության կայուն դիրքի պահպանում և պետական աջակցության շրջանակներում՝ դրանց ներառում,
- նպատակային վարկերի կիրառմամբ օրգանական գյուղատնտեսության զարգացման խթանում,
- ագրարային ոլորտում իրականացվող վարկային ծրագրերում օրգանական գյուղատնտեսության զարգացման բաղադրիչների նախատեսում և կիրառում,
- օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,
- միջպետական մակարդակով էկոլոգիական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում,
- օրգանական գյուղատնտեսության տեղեկատվական և խորհրդատվական համակարգի ձևավորում, որը կներառի ինչպես տեղական, այնպես էլ արտաքին շուկաները,
- հանրապետության, մարզերի և տարածաշրջանների կտրվածքով օրգանական գյուղատնտեսության կազմակերպման միավորների՝ մասնավորապես կոոպերացման սկզբունքով նոր կառույցների ձևավորում:

Վերջին տարիներին իրականացրած գործողությունների արդյունքում բարձրացել է մարդկանց իրազեկությունը կայուն գյուղատնտեսության և այլընտրանքային մոտեցումների մասին: Ձեռք բերված տեղեկատվությունը և հմտությունները, այլընտրանքային մեթոդների կիրառումը, օրգանական հողօգտագործությամբ զբաղվելը նպաստում են գյուղաբնակների եկամուտների ավելացմանը, աղքատության կրճատմանը և շրջակա միջավայրի կայունությանը: Շահագրգիռ կազմակերպությունների հետ ֆերմերների համագործակցությունն ու արդյունավետ փոխգործակցությունը համարվում է մարդու կենսապայմանների բարելավման ու կայունությանն ուղղված ծրագրերի հաջողության երաշխիքը:

Պարզաբանման առումով նշենք, որ «Աջակցության ՀՀ Արագածոտնի մարզի գյուղական համայնքների զարգացումը» ծրագիրը 2013թ. իրականացվում է Գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» ՀԿ «ԱՄԴ» միջազգային հիմնադրամի հետ համատեղ: Սկզբնական փուլում ընտրվել են Ապարանի տարածաշրջանի 6 համայնքներ, որտեղ ծրագիրն իրականացնող կանայք զբաղվում են առանց թունաքիմիկատների օգտագործման հատապտուղների՝ հատկապես մորու արտադրությամբ: Ծրագիրը ֆինանսավորվում է ԵՄ-ի կողմից, 133.943 մլն. եվրո արժողությամբ¹:

Բացի վերոնշյալից իր հերթին կարևորվում է մեղվաբուծությունը, որը զարգանալու և արտահանվելու մեծ հեռանկարներ ունի: Այժմ պահվում է մոտ 200 հազար մեղվաընտանիք:

Ներկայումս եվրոպական երկրներում մեղրի պահանջարկը մեծացել է և հարցումների արդյունքում պարզվել է, որ մեղվաբուծական տնտեսությունները հնարավորություն ունեն 3-4 անգամ ավելացնելու արտադրությունը, եթե լուծվի արտահանման հարցը:

Հայկական գյուղատնտեսության առավել հեռանկարային ոլորտներից մեկը նաև կարելի է համարել չրերի արտադրությունը: Բարձրակարգ չիր արտադրելու համար նպաստում են երկրի աշխարհագրական դիրքը, տարեկան արևային օրերի քանակը, թարմ մրգերի՝ որպես հումքի, բարձր որակը և այլն: Չրի արտադրությունը իրականացվում է գրեթե բոլոր մարզերում, սակայն առաջատար են համարվում Արմավիրի և Արարատի մարզերը: Համաձայն «Չորացված մթերք արտադրանքի ասոցիացիայի» տվյալների Հայաստանում գործում են 5400 փոքր, 100 միջին և 21 խոշոր չիր արտադրողներ:

Վերջին տարիներին պետական աջակցության հետ մեկտեղ արտասահմանյան մի շարք կազմակերպություններ օգնություն են ցուցաբերում չրագործներին, քանի որ այդ ոլորտն ունի ռազմավարական կարևորագույն նշանակություն: Այսպես, 2013թ. ՓՄՁ Ջակը, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության «Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության» ծրագրի (EDMG) և ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի հետ համատեղ ՀՀ մարզերում շարունակվում են

¹ «Կանաչ արահետ» ՀԿ, «Բի- Էս-Սի» բիզնեսի աջակցման կենտրոն:

«Աջակցություն չիր արտադրողների զարգացմանը Հայաստանում» ծրագիրը, «Օրինակելի բիզնես մոդելի մշակում» բաղադրիչի շրջանակներում աջակցություն է ցուցաբերվել Արմավիրի, Արարատի, Տավուշի մարզերի չրագործներին էլեկտրոնային, արևային չորանոցների ձեռքբերման գործում, կարևոր աշխատանքներ են տարվում նաև արտահանման ուղղությամբ: Այսպես, օրինակ, Բագրատաշենում հիմնադրվել է «Չրի հավաքման կենտրոն», որն ի վիճակի կլինի ապահովել արտահանման գործը: Արմավիրում ընթացքի մեջ է չրերի հավաքման, ընդունման, փաթեթավորման կենտրոնի ստեղծումը¹:

Այսպիսով, օրգանական գյուղատնտեսության զարգացման համար անհրաժեշտ է արագացնել հողերի խոշորացման աշխատանքները և կոոպերացիայի զարգացումը:

Մեր կարծիքով գյուղատնտեսության ոլորտում ի վերջո կոոպերատիվների ձևավորումը հնարավորություն կստեղծի համատեղ օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակերպելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոոպերատիվի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ օգուտ, այնպես էլ կձգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի: Կարելի է համոզված լինել, որ նաև կիսթանվի ագրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարենպաստ պայմաններ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ագրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ-տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Գյուղատնտեսության պետական աջակցության նախորդ տարիների վերլուծությունը վկայում է, որ անհրաժեշտ է լայնորեն օգտագործել պետական ռեսուրսները, միջազգային դոնոր կազմակերպությունների դրամաշնորհները, իսկ ներգրավված փոխառու միջոցները ուղղել գյուղացիական տնտեսություններին, կոոպերատիվներին տրամադրվելիք վարկային և այլ տիպի ֆինանսավորման հնարավորությունների ընդլայնմանը:

¹ ՀՀ ՓՄՁ - ՁԱԿ:

Բաժնատեր Ինժեներներ
ԸԸ ՊԸ Օ. ԹԱՅՆՅԱՆՅԱՆ
ԻՄՊԸՅՆՅԱՆՅԱՆՅԱՆ
ՀՀ ՄԱԿ-ի Կառավարության
կողմից 2008 թ. ապրիլի 8-ին
ընդունված օրգանական

ԸԸ ՊԸ Օ. ԹԱՅՆՅԱՆՅԱՆ
ԻՄՊԸՅՆՅԱՆՅԱՆՅԱՆ
ՀՀ ՄԱԿ-ի Կառավարության
կողմից 2008 թ. ապրիլի 8-ին
ընդունված օրգանական

ԸԸ ՊԸ Օ. ԹԱՅՆՅԱՆՅԱՆ

Օրգանական գյուղատնտեսությունը համակարգ է, որը նպատակաուղղված է բարելավելու և խրախուսելու գյուղատնտեսական արտադրությունը՝ բնապահպանական, սոցիալական ու տնտեսական տեսանկյունից: Ինչպես գյուղատնտեսական մթերքները, այնպես էլ սննդամթերքները օրգանական են կոչվում, եթե համապատասխանում են որոշակի չափանիշների, մասնավորապես սկսած հողի մշակումից մինչև իրացում: Օրգանական արտադրանքը սկիզբ է առել Գերմանիայում մոտ 20 տարի առաջ, այն ժամանակին մեծ բիզնեսի է վերածվել: 2008 թ. ապրիլի 8-ին ընդունվել է օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքը: «Էկոգլոբ» ՍՊԸ-ն Հայաստանում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքների հավաստագրմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է: Օրգանական գյուղատնտեսությանը աջակցելու և զարգացնելու համար անհրաժեշտ է՝

- օրգանական գյուղատնտեսության արտադրանքի իրացման երաշխավորված մեխանիզմների ստեղծում,
- միջազգային մակարդակով օրգանական գյուղատնտեսության արտադրանքի արտահանման հնարավորությունների ստեղծում:

ՀՀ ՄԱԿ-ի Կառավարության կողմից 2008 թ. ապրիլի 8-ին ընդունված օրգանական գյուղատնտեսության մասին ՀՀ օրենքը: «Էկոգլոբ» ՍՊԸ-ն Հայաստանում օրգանական գյուղատնտեսական արտադրանքի և սննդամթերքների հավաստագրմամբ զբաղվող առաջին կազմակերպությունն է:

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ОРГАНИЧЕСКОГО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА

ШУШАНИК КОСТЯНЯН
научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

ЛИАНА АЗАТЯН
научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

Аннотация

Органическое сельское хозяйство - это система, нацеленная на улучшение и стимулирование сельскохозяйственного производства с экологической, социальной и экономической позиций. Сельскохозяйственные и пищевые продукты относятся к категории экологически чистых (органических) продуктов, если они соответствуют определенным критериям, в частности, начиная с обработки земли до реализации продовольствия. Органическое производство зародилось около 20 лет тому назад в Германии, превратившись в то время в крупный бизнес. Закон РА «Об органическом сельском хозяйстве» принят 8 апреля 2008 г. ООО «Экоглоб» является первой компанией в Армении, получившей сертификат на лицензирование органической сельхоз-продукции и продуктов питания.

Для поддержки и развития органического сельского хозяйства необходимо:

- создание механизмов гарантирования реализации продукции органического сельского хозяйства;
- создание возможностей экспорта продукции органического сельского хозяйства на межгосударственном уровне.

Ключевые слова: органическое сельское хозяйство, экосистема, чистый продукт, бенефициар, сертификат, контроль, экспорт.

TRENDS OF ORGANIC AGRICULTURE DEVELOPMENT

SHUSHANIK KOSTANYAN
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

LIANA AZATYAN
Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

Abstract

Organic agriculture is a system that is aimed at improving and promoting agricultural production from various aspects: environmental, social and economic. Agricultural products and food items in order to be classified as organic ones need to meet specific standards/criteria, namely: starting from soil cultivation to sales of products/items. Organic production has originated in Germany since 1990s, and has been transformed into a large business. On 8th of April, 2008 the Law of the Republic of Armenia on Organic Agriculture was adopted. ECOGLOBE LTD is the first company in Armenia offering organic certification services. In order to support and develop organic agriculture it is required to:

- build/offer guaranteed schemes/mechanisms in order to promote sales of organic products;
- ensure state support in order to promote exports of organic agricultural products.

Keywords: organic agriculture, ecosystem, pure product, beneficiary, certificate, control, exports.

- Մուլտիտոտերի բազմացումը զգալիորեն կրճատվում է, եթե ոչ բացառվում:
- Ամբողջ համակարգը ավտոմատացված է, և անհրաժեշտության դեպքում այն կարող է միացվել համակարգչին: Այս ամենը թույլ է տալիս աշխատաժամանակը կրճատել մոտ 60 տոկոսով:

Սակայն այս ամենի հետ մեկտեղ, կաթիլային ոռոգումն ունի նաև որոշակի թերություններ, դրանք են՝

- Կաթիլային ոռոգման համակարգերի կիրառումը բավականին ծախսատար է: Մեծ ներդրումներ են պահանջվում դրա տեխնիկական սպասարկման և վերանորոգման համար: Կաթոցիկների միացումը, խողովակների վիճակը մշտական ստուգումների կարիք են ունենում: Համակարգի միջին արժեքը 1 հեկտարի համար, ըստ Terra LTD մասնավոր ընկերության տվյալների, կազմում է 1000-3000 ԱՄՆ դոլար¹: Գինը տատանվում է կախված ցանվող կուլտուրայի տեսակից, ցանքատարածությունից, ոռոգման նպատակով օգտագործվող ջրի որակից (այստեղ հիմնականում հարցը գտիչ կայաններին է վերաբերում) և այլն:
- Կաթիլային ոռոգման համակարգի արժեքը բավականին մեծ է, այդ իսկ պատճառով պետք է հստակ և ճիշտ պլանավորել համակարգի շահագործման հետ կապված բոլոր աշխատանքները: Եթե պլանավորումը ճիշտ չիրականացվի, ապա համակարգը ճիշտ չի շահագործվի, որի հետևանքով սպասվելիք արդյունքը չի ստացվի, հետևաբար նաև շահույթը փոքր կլինի կամ վատագույն դեպքում ընդհանրապես չի լինի: Շատ կարևոր է ճիշտ ընտրել գտակայանը: Այն կախված է ջրամատակարարման աղբյուրից: Համակարգի ներմուծման արժեքը կախված է նաև ցանքի ժամկետից: Եթե պլանավորվում է համակարգը շահագործել մեկ տարի, ապա կարելի է ընտրել առավել բարակ և էժան խողովակներ: Իսկ եթե ցանքի տևողությունը երկարաժամկետ է, ապա ավելի նպատակահարմար է գումարը ներդնել առավել ամուր խողովակներով թանկարժեք համակարգի մեջ:

Հողվածի շրջանակներում փորձ է արվել գնահատել կաթիլային ոռոգման ներդրման արդյունավետությունը միավոր տարածության լուրիկի մշակության դեպքում: Հաշվարկի արդյունքները ներկայացված են աղյուսակում:

Աղյուսակ

Գյուղացիական տնտեսություններում ոռոգման նոր տեխնոլոգիայի (կաթիլային) ներդրման արդյունավետությունը հիմնավորող հաշվարկային ամփոփ տվյալները 1 հա լուրիկի համար

Ցուցանիշները	Չափի միավորը	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում
1հա-ի հաշվով կաթիլային ոռոգման համար պահանջվող ներդրումները	հազ. դրամ	0	1100
Ոռոգման ջրի ծախսը	մ ³	8000	3200
Կաթիլային ոռոգման սարքավորումների պահպանման ծախսերը	հազ. դրամ	0	35
Ջրի խնայողությունը արժեքային, 1 մ ³ -11դրամ սակագնի դեպքում	հազ. դրամ	0	52.8
Ջրումների քանակը	ջրում	9	9
Ջրման համար պահանջվող աշխատանքային ծախսումները 1հա-ի հաշվով	մարդ.օր	6	2.4

¹ http://agrodovidka.info/Terra_LTD_Kompanija

Ցուցանիշները	Չափի միավորը	Ոռոգման սովորական եղանակի դեպքում	Կաթիլային ոռոգման դեպքում
Տնտեսումը աշխատանքային ժախսումների կրճատման հաշվին (1 մարդ.օրը-5000 դրամին համարժեք հաշվարկի դեպքում)	հազ. դրամ	0	18.0
Լուլիկի 1 հա-ից ստացվող բերքը	ց/հա	390	429.0
Հաշվարկային արտադրական ծախսերը (չհաշված ոռոգման սարքավորման տեղադրման ծախսերը) ¹	հազ. դրամ	3510	3439.2
Իրացման գինը 1 կգ-ի հաշվով	դրամ	128.6	129
Արտադրանքի իրացումից հասույթը	հազ. դրամ	5015.4	5516.9
Զուտ եկամուտը	հազ. դրամ	1505.4	2042.7
Զուտ եկամուտի հավելաճը	հազ. դրամ	0	537.3
Նոր տեխնոլոգիայի ներդրման ծախսերի փոխհատուցման ժամկետը	տարի		2.05

Ինչպես երևում է վերը բերված աղյուսակից, կաթիլային ոռոգման դեպքում միակ թերութունը դրա ներդրման բարձր արժեքն է: Հաշվարկներից ակնհայտ երևում է, որ նույն 9 ջրումների դեպքում 1 հա-ից ստացվող բերքը կաթիլային ոռոգման պարագայում ոռոգման սովորական եղանակից ավելին է ստացվում 39.0 ցեցետներով: Ակնառու է, որ զուտ եկամտում ևս տարբերությունը զգալի մեծություն է կազմում՝ մոտ 537.3 հազ. դրամով ավելի: Իսկ ներդրման ծախսերի փոխհատուցման ժամկետը կազմում է շուրջ 2 տարի: Նմանատիպ հաշվարկներ արվել է նաև պտղի և խաղողի համար, որոնց դեպքում կաթիլային ոռոգման ներդրման ծախսերը փոխհատուցվում են համապատասխանաբար՝ 4.2 և 2.7 տարում:

¹ Հաշվարկային արտադրական ծախսերի բարձր մակարդակը պայմանավորված է նրանով, որ հաշվարկները կատարվել են հիմք ունենալով ագրոտեխնիկական պահանջներին համապատասխան միջոցառումների և ռեսուրսների (կալյունական, ֆոսֆորական, ազոտական պարարտանյութեր, անհրաժեշտ թունաքիմիկատներ) ծախսերը, ինչպես նաև զնահատվել է աշխատանքային ժախսումների դիմաց վարձատրությունը՝ 1 մարդ*օրվա համար 5000 դրամ: Վերջինս գյուղացիական տնտեսությունների կողմից աշխատանքները իրականացնելիս չի հաշվարկվում և ծախսերի մեջ սովորաբար չեն ներառում:

Օրինակ 2: Ծառի սնուցում

Ծծ Պ՝ Թ. օգնությունները հանրային տնտեսական կազմակերպությունների կողմից

Ծծ Պ՝ Թ. օգնությունները հանրային տնտեսական կազմակերպությունների կողմից

Հոդվածում փորձ է արվել առաջադրել կաթիլային ոռոգման ներդրումը և գնահատել 1 հա լուրիկի, ինչպես նաև պտղի և խաղողի համար ոռոգման նոր տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում) ներդրման արդյունավետությունը: Հաշվարկները ցույց են տալիս, որ ոռոգման ջրի ծախսերի, աշխատանքային ծախսումների կրճատման և սնուցման վիճակի բարելավման արդյունքում բարձրանում է մշակաբույսերի բերքատվությունը, արդյունքում ավելանում է զուտ եկամուտը, որը հնարավորություն է տալիս նոր տեխնոլոգիաների ներդրման ծախսերը փոխհատուցել կարճ ժամանակահատվածում. լուրիկի համար շուրջ 2 տարի, իսկ պտղի և խաղողի համար՝ համապատասխանաբար 4.2 և 2.7 տարի:

Հոդվածում փորձ է արվել առաջադրել կաթիլային ոռոգման ներդրումը և գնահատել 1 հա լուրիկի, ինչպես նաև պտղի և խաղողի համար ոռոգման նոր տեխնոլոգիաների (կաթիլային ոռոգում) ներդրման արդյունավետությունը:

ОЦЕНКА ЭФФЕКТИВНОСТИ ВНЕДРЕНИЯ ТЕХНОЛОГИИ КАПЕЛЬНОГО ОРОШЕНИЯ

ЕВГЕНИЯ АКОПЯН

соискатель Института экономики им. М. Котаяна НАН РА

Аннотация

В статье автор предлагает внедрить систему капельного орошения и дает оценку эффективности внедрения новых технологий ирригации (капельное орошение) для томата, плодов и винограда на площади 1 га. Расчеты показывают, что в результате сокращения расходов воды на орошение, затрат труда и улучшения общего уровня питания повышается урожайность сельскохозяйственных культур. Следовательно, увеличивается и чистая прибыль, позволяющая возмещать затраты на внедрение новых технологий в наиболее короткие сроки: для томата в течение около двух лет, а для плодов и винограда соответственно - 4.2 и 2.7 лет.

Ключевые слова: сельскохозяйственные культуры, капельное орошение, обычная система орошения, новая технология ирригации, внедрение, эффективность внедрения.

EFFICIENCY ASSESSMENT OF DRIP IRRIGATION SYSTEM BEING INTRODUCED

YEVGENYA HAKOBYAN

Ph.D. Student M. Kotanyan Institute of Economics National Academy of Sciences Republic of Armenia

Abstract

The article attempts to propose introduction of drip irrigation and assess the efficiency of new irrigation technology (drip irrigation) if introduced to irrigate 1 hectare of soil on which tomatoes are growing (separately for fruits and grapes as well). Based on calculation results, with declining irrigation and other operational costs and as a result of better nutrition increase in crop yields is reported, thus resulting in higher net incomes earned allowing to ensure shorter payback periods in case of cultivating the followings: 2 years for growing tomatoes; and respectively 4.2 and 2.7 years in case of growing fruits and grapes.

Keywords: crops, drip irrigation, traditional irrigation method, new irrigation method, introduction. efficiency of introduction

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ժողովուրդի Ժողովուրդի Ժողովուրդի Ժողովուրդի Ժողովուրդի

Ներկա պայմաններում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հիմնական ուղղությունը, թերևս, տնտեսականն է, քանի որ առանց տնտեսական գործառույթի իրականացման տեղական ինքնակառավարումը չի կարող կայանալ: Խոսքը հատկապես վերաբերում է այնպիսի հսկա և տնտեսապես հզոր քաղաքներին, ինչպիսին Երևանն է: Համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման կառավարումը, իր հերթին, տեղական ինքնակառավարման տնտեսական գործառույթի հիմքն է: Ընդհանրապես, ցանկացած քաղաքային համայնք իր տնտեսական և սոցիալական զարգացմանը կարող է ցուցաբերել 2 մոտեցում: Առաջինը՝ նվազագույն միջամտության ուղին է, երբ համայնքի տնտեսությունը կախված է պետական մակարդակում ընդունված որոշումներից, իսկ տեղական ինքնակառավարման մարմիններն իրականացնում են բյուջեի միջոցները ստացողի պասիվ դերը: Այնպես է, որ այս պարագայում համայնքի արդյունավետ զարգացումը դժվար է պատկերացնել: Երկրորդ ուղին, որն անհամեմատ ավելի առաջանցիկ է, համայնքի տնտեսական զարգացման արդյունավետության բարձրացման ուղիների ակտիվ որոնումն է՝ հենվելով ներքին ռեսուրսների վրա: Կարևոր է, որ սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացը չստանա տարերային բնույթ, այլ, ընդհակառակը, լինի կառավարվող մի գործընթաց, որը հենված է համայնքի զարգացման ռազմավարական տեսլականի, սեփական հնարավորությունների և զարգացման միտումների գիտական կանխատեսման և տնտեսական, սոցիալական ռազմավարական ծրագրերի հետևողական մշակման վրա:

ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգի զարգացման հիմնական խոչընդոտներից մեկն այն է, որ տեղական ինքնակառավարման մարմինները իրենց գործունեությամբ, ինչպես նաև եկամուտների աղբյուրների կառուցվածքով կտրված են համայնքում ծավալվող գործարարությունից: Սակայն, Երևանի տնտեսության նկատմամբ նման վերաբերմունքը ոչ միայն անընդունելի է արդյունավետ տեղական ինքնակառավարման իրականացման տեսանկյունից, այլև, հաշվի առնելով Երևանի դերը ՀՀ տնտեսությունում, բացասական հետևանքներ կարող է ունենալ ամբողջ երկրի մասշտաբով: ***Սա է պատճառը, որ անչափ կարևորում ենք գործարարության՝ որպես շահառուների առանձին խմբի մասնակցությունը Երևան քաղաքի կառավարմանը, որի դրսևորումները հետագայում կարող են նախադեպ հանդիսանալ ՀՀ ամբողջ տեղական ինքնակառավարման համակարգի համար:***

Ինչպես արդեն խոսվել է, Երևանի քաղաքապետի լիազորությունները խիստ սահմանափակ են գործարարության աջակցման և տնտեսական զարգացման ոլորտում, բացի դրանից, ֆինանսական աղբյուրները ևս չեն ենթադրում գործարարության զարգացման արդյունքում քաղաքի եկամուտների ավելացում: Մայրաքաղաքի արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ են համապատասխան կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան փոխազդեցության հենքով համագործակցելու տեղական ինքնակառավարման մարմիններին և գործարարության ներկայացուցիչներին և կնպաստեն մասնակցային կառավարման հետագա զարգացմանը՝ ***ապահովելով ոչ միայն Երևանի բնակիչների, այլ նաև գործարար հատվածի մասնակցությունը քաղաքի կառավարմանը:*** Սակայն, հանրային կառավարման հայաստանյան փորձը ցույց է տալիս, որ գործարարության զարգացումը մշտապես եղել է պետական կառավարման մարմինների գործառույթը, բավական ցածր է ապակենտրոնացման մակարդակը համայնքի գործարարության զարգացման բնագավառում, մասնավոր հատվածի և տեղական ինքնակառավարման մարմինների հարաբերությունները հասցվել է նվազագույնի, և հետևաբար՝ երկու կողմերի համար էլ բացակայում են այն խթանները, որոնց միջոցով հնարավոր կլիներ ապահովել գործարարության մասնակցությունը քաղաքի կառավարմանը: Միաժամանակ,


համաշխարհային փորձը վկայում է, որ հատկապես փոքր և միջին գործարարության զարգացումը ոչ միայն պետական կառավարման մարմինների գործառույթն է, այլ նաև տեղական ինքնակառավարման մարմինների, որոնք հաճախ առավել լավ են տիրապետում տեղական գործարարության պահանջներին, խնդիրներին և զարգացման հնարավորություններին: Իսկ խոշոր քաղաքների պարագայում (եվրոպական շատ մայրաքաղաքներ), տեղական գործարարության զարգացումը համարվում է քաղաքի կառավարման մարմինների կարևորագույն խնդիրներից մեկը:

Միևնույն ժամանակ, ինչպես արդեն ներկայացվել է, Երևանում կենտրոնացված է երկրի տնտեսական ներուժի գերակշիռ մասը, ինչը մի կողմից լրացուցիչ բեռ է քաղաքի կառավարման համար, մյուս կողմից՝ հնարավորությունների մեծ դաշտ՝ օգտագործելու այդ ներուժը ի օգուտ քաղաքի զարգացման: Այս առումով, կարծում ենք, որ Երևան քաղաքում կենտրոնացված գործարար հատվածը կարող է էականորեն նպաստել մայրաքաղաքի կառավարման արդյունավետության բարձրացմանը: Մեր կողմից իրականացված նախնական հետազոտությունների արդյունքում, փորձել ենք բացահայտել, թե քաղաքի կառավարման մարմինները որ դեպքում և ինչ պայմաններում պատրաստ կլինեն մասնակից դարձնելու գործարար հատվածին որոշումների ընդունման գործընթացին, ինչպես նաև, թե Երևանում գործող տարբեր կազմակերպությունները որքանով են պատրաստ ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքի կառավարման գործընթացին: Քաղաքի կառավարման մարմինների մոտեցումը այս հարցին միասնական է¹. թե քաղաքապետարանի և վարչական շրջանների վարչակազմի, և թե՛ ավագանու անդամների գերակշիռ մասը առանձնացնում է երկու հիմնական պատճառ, թե ինչու գործարարության ոլորտը չպետք է ներկա պայմաններում մասնակցություն ունենա որոշումների ընդունման գործընթացին: Առաջինն այն է, որ քաղաքապետը գործարարության աջակցության և զարգացման բնագավառում գրեթե լիազորություն չունի: Եվ երկրորդը՝ գործարարության զարգացումը անմիջապես կապված չէ քաղաքի բյուջեի եկամուտների հետ: Եվ այս առումով, գործարար հատվածը, կառավարչական որոշումների ընդունման գործընթացին մասնակցելու դեպքում, կարող է առաջ մղել սեփական շահերը, ինչը, ֆինանսական մուտքերի բացակայության պարագայում, անընդունելի է: Այդ պատճառով մայրաքաղաքի գործարարության մասնակցությունը սահմանափակվում է քաղաքապետին կից խորհրդակցական մարմիններին անդամակցությամբ: Վերջինս ենթադրում է զուտ խորհրդակցական բնույթի գործունեություն, ինչի արդյունքում մասնակիցները կամ շատ քիչ են, կամ բավականաչափ մոտիվացված չեն իրապես մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին, մասնավորապես՝ բյուջեի և զարգացման ծրագրերի մշակման քննարկումներին:

Միաժամանակ, մեր կողմից փորձագիտական հարցում է անցկացվել Երևան քաղաքում գործունեություն ծավալող կազմակերպությունների շրջանում՝ պարզելու համար, թե որքան են վերջիններս կարևորում քաղաքի կառավարմանն առնչվող որոշումներին մասնակցություն ունենալու երևույթը: Հարցման ընտրանքում ընդգրկվել են 132 առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, այդ թվում՝ խոշոր, միջին և փոքր: Հարցմանը մասնակցել են Երևան քաղաքում գործունեություն ծավալող գործարարներ, կազմակերպությունների ղեկավար կազմի աշխատողներ: Հարցման հիմնական արդյունքները ներկայացված են գծապատկեր 1-ում և գծապատկեր 2-ում:


¹ Տեղեկատվությունը ստացվել է դիտարկման մեթոդով՝ քաղաքապետարանի, վարչական շրջանների վարչակազմերի, ինչպես նաև ավագանու անդամների հետ անանուն հարցազրույցների արդյունքում:

Ո՞րոնք են քաղաքի կառավարմանը անմիջական մասնակցություն չունենալու առաջնային պատճառները



Գծապատկեր 1-ում ներկայացված հարցման արդյունքները վկայում են, որ Երևան քաղաքում գործունեություն ծավալող կազմակերպությունները հիմնականում պատրաստ են մասնակցելու որոշումների ընդունման գործընթացին, սակայն 89%-ը փաստում է քաղաքապետարանի կողմից հետաքրքրվածության պակասը (ինչի պատճառները արդեն իսկ քննարկվել են), իսկ 93%-ը նշում է նաև այն հանգամանքը, որ մասնակցության ձևերը չեն ենթադրում իրական ազդեցության լծակներ ընդունվող որոշումների վրա, այդ իսկ պատճառով մասնակցությունը համարում են անօգուտ: Միևնույն ժամանակ, ընդամենը 7%-ն է համարում, որ քաղաքի կառավարումը կազմակերպության գործունեության վրա ազդեցություն չունի: Վերոնշյալ պատկերը, ըստ էության, հաստատվում է նաև այն պատասխանների վիճակագրությամբ, որոնք տրվել են գծապատկեր 2-ում ներկայացված հարցին:

Պատրաստ եք արդյոք անդամակցելու մի կառույցի, որը բաղկացած է մայրաքաղաքի կազմակերպությունների ներկայացուցիչներից և ուղղակի ազդեցություն ունի քաղաքի բյուջեի ծախսային ուղղությունների վրա



Գծապատկերում ներկայացված հարցման արդյունքներից պարզ է դառնում, որ ուղղակի ֆինանսական ազդեցություն ունենալու պարագայում կազմակերպությունների ամնշան հատվածը (44%) պատրաստ չէ մասնակցություն ունենալու Երևան քաղաքի կառավարմանն առնչվող որոշումների ընդունման գործընթացին: Ընդ որում, կազմակերպությունների այն ներկայացուցիչները, ովքեր նշել են, որ դժվարանում են պատասխանել, հիմնականում մեկնաբանում են սա այն տրամաբանությամբ, որ իրենց որոշումը կախված է հետևյալ գործոններից, թե ինչպիսի ֆինանսական և ժամանակային ծախսեր են իրենք կրելու այդ անդամակցության հետևանքով, ինչպես նաև, թե որքանով է նմանատիպ կառույցի կողմից որոշումների ընդունման կառուցակարգը լինելու արդար և անաչառ:

Չնայած այն հանգամանքին, որ Երևանում գործող կազմակերպությունների գերակշիռ մեծամասնությունը պատրաստ է ակտիվ մասնակցություն ունենալու քաղաքի կառավարմանն առնչվող որոշումների ընդունման գործընթացին, այդուհանդերձ, ինչպես արդեն նշվեց, տեղական ինքնակառավարման մարմինները պատրաստ չեն վերջիններիս մասնակից դարձնելու, քանի որ այդ կազմակերպությունների գործունեությունը ֆինանսական առումով կապված չէ Երևանի բյուջեի եկամտային մուտքերի հետ: Դեռ ավելին՝ Երևանի բյուջեի եկամուտներում սեփական եկամուտների մասնաբաժինը վերջին տարիներին տատանվում է ընդամենը 30%-ի սահմաններում, իսկ է ԶԶ պետական բյուջեից ստացվող մուտքերի մասնաբաժինը գերազանցում է 70%-ը: Հաշվի առնելով երկրի տնտեսությունում մայրաքաղաք Երևանի հսկայական մասնաբաժինը, ինչպես նաև դրա միջոցով սեփական եկամուտներ ապահովելու զգալի ներուժը՝ կարծում ենք, որ վերանայման կարիք ունի քաղաքի ֆինանսական կառավարման մոդելը, ինչը պետք է ենթադրի սեփական եկամուտների մասնաբաժնի ավելացում՝ ի հաշիվ Երևանում գործող կազմակերպությունների կողմից վճարվող հարկերից կատարվող մասհանումների: Սա պետք է խրախուսի նաև քաղաքի կառավարման մարմիններին, որ վերջիններս շահագրգռված լինեն ինչպես գործարարության զարգացմամբ, այնպես էլ կառավարմանը մասնավոր հատվածի մասնակցությունը ապահովելու գործում: Խոշոր քաղաքի տնտեսական ներուժի հաշիվն զգալի սեփական եկամուտներ ապահովելու նպատակահարմարությունը հաստատվում է նաև խոշոր քաղաքների կառավարման համաշխարհային փորձով: Օրինակ՝ Տոկիոյի կառավարման մարմինները տարեկան բյուջեի եկամտային մասը 70%-ով ապահովում են տեղական հարկերի շնորհիվ: Իսպանիայի, ինչպես նաև սկանդինավյան երկրների խոշոր քաղաքների տեղական ինքնակառավարման մարմինները կրկին հնարավորություն ունեն զգալի սեփական եկամուտներ ապահովելու՝ ի հաշիվ ֆիզիկական անձանց եկամտային հարկի, իսկ, օրինակ, Նյու Յորքի քաղաքային բյուջեն օգտվում է նաև այնպիսի հարկատեսակներից, ինչպիսիք են մանրածախ առևտրի վաճառքի հարկը, կորպորատիվ եկամտային հարկը, ինչպես նաև այլ տեսակի կորպորատիվ հարկատեսակներ: Այս մոտեցման շնորհիվ, դիցուք, Ստոկհոլմը սեփական ռեսուրսների հաշիվն ապահովում է քաղաքի բյուջեի եկամուտների շուրջ 80%-ը¹: Առհասարակ, ԶԶ տեղական ինքնակառավարման համակարգում համայնքների սեփական եկամուտների ցածր մասնաբաժինը տարբեր գործոններով է պայմանավորված: Նախ՝ ցածր է լիազորությունների ապակենտրոնացման մակարդակը, և հետևաբար՝ ֆինանսական ապակենտրոնացման մակարդակը ևս պետք է ցածր լինի: Բացի դրանից՝ հարկային վարչարարությունը հատկապես փոքր համայնքներում կարողությունների պակասի պատճառով արդյունավետորեն չի իրականացվում: Եվ, վերջապես՝ տնտեսական զարգացման ներկա պայմաններում (որոշ դեպքերում՝ ներդրումների իսպառ բացակայության) շատ համայնքներ պարզապես ի գորու չեն կազմակերպությունների հարկերի միջոցով ապահովելու օրենքով իրենց վերապահված լիազորությունների ֆինանսավորումը: Այս ամենի արդյունքում պետության կողմից տրամադրվող ֆինանսական միջոցները (սուբվենցիաներ և դոտացիաներ) ԶԶ տեղական ինքնակառավարման համակարգում դեռևս համայնքների եկամուտների հիմնական մասն են կազմում: Եվ բնական է, որ հատկապես փոքր համայնքներում մասնավոր հատվածի մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը իրատեսական

¹ United Cities and Local Governments. 2010. Local Government Finance: The Challenges of the 21st Century, Second Global Report on Decentralization and Local Democracy, Barcelona, pages 68-70.

չէ: Բնականաբար, իրավիճակը ամբողջովին այլ է Երևանում, որտեղ, մեր համոզմամբ, պետք է ավելացնել քաղաքի սեփական եկամուտները ի հաշիվ գործարարության կողմից վճարվող հարկատեսակների: Այս մտտեցումը անհրաժեշտ է ոչ միայն տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը քաղաքի տնտեսության զարգացմանն ուղղորդելու, այլ նաև քաղաքի կառավարմանը մասնավոր հատվածի մասնակցության համար նախադրյալներ ստեղծելու առումով:

ԹԵՄԱԾ ԾՊՈՒԼԵ ԹԵՄԱԾ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԱՊՐԱՆՈՒՄ ԹՅՈՒՄ ԹԵՄԱԾ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ

ԵՍՈՒՄ ԾՊՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ, Ի.Ն.Ա.

ԾՊՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ

ԾՊՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ

Հոդվածում քննարկվում են Երևան քաղաքի կառավարմանը մասնավոր հատվածի մասնակցության հնարավորությունները և առկա խոչընդոտները: 132 առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունների հարցման միջոցով նախ պարզվել է քաղաքի կառավարման մասնակցություն չունենալու հիմնական պատճառները, այնուհետև բացահայտվել է, թե արդյոք կազմակերպությունները պատրաստ կլինեն մասնակցելու, եթե բյուջեի ծախսային ուղղությունների վրա անմիջապես ազդելու հնարավորություն ունենան: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել են հաղթահարման ենթակա հիմնական խոչընդոտները:

ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ ԻՍՏԻՄԱԾՈՒՄ

УЧАСТИЕ ЧАСТНОГО СЕКТОРА В УПРАВЛЕНИИ ГОРОДОМ ЕРЕВАН

РУБЕН АЙРАПЕТЯН, *к.э.н.*

доцент кафедры управления АГЭУ

Аннотация

В статье обсуждаются возможности и существующие препятствия для участия частного сектора в управлении городом Ереван. Посредством опроса 132 коммерческих и некоммерческих организаций сначала были выяснены основные причины неучастия частного сектора в управлении городом, а затем было выявлено, будут ли организации готовы к участию, если им будет предоставлена возможность напрямую повлиять на распределение бюджетных средств города. В ходе исследования выяснены основные препятствия, необходимые для преодоления.

Ключевые слова: *частный сектор, участие, управление, бюджет, доход, налог, местное самоуправление.*

PRIVATE SECTOR ENGAGEMENT IN THE MANAGEMENT OF YEREVAN CITY

RUBEN HAYRAPETYAN, *Candidate of Sciences (Economics)*

Associate Professor

Management Department

Armenian State University of Economics

Abstract

The article discusses the opportunities and obstacles for private sector engagement in the management of Yerevan City. Based on the survey results conducted among 132 commercial and non-commercial organizations, first, the main reasons for non-engagement in the management of the City are identified, and then the willingness/readiness of these organizations to engage in the management if they are provided a chance to directly affect budget spending/allocation decisions is discussed. The results of the studies identify the main obstacles to be addressed.

Keywords: *private sector, engagement, management, budget, revenue, tax, local governance.*

èàð´°Û Ð²Úð²á°Û²Û, ì. . .
ÐäiÐ Ìé³i³ñÛ³Ý ³ÛµÇáÝÇ 'áó»Ýi

Ø²èÛ²Íð²ÚÆÛ Í²é²i²ðØ²Û ¶àðÌÀÛÀ²ðÆ
Í²ð¶²àðØ²Û Í²èàðð²Í²ð¶²À ÐÐ-àðØ

Մասնակցային կառավարումը, և մասնավորապես՝ բնակիչների մասնակցությունը հանրային կառավարման գործընթացներին վերջին ժամանակներում բավական տարածված և տարբեր հարթություններում կիրառվող հասկացություն է, սակայն, ինչպես ցույց է տալիս տեղական ինքնակառավարման միջազգային և հայրենական փորձը, շատ դեպքերում այն ընդամենը վերածվում է ամբոխահաճո նպատակներով շահարկվող եզրույթի: Եվ հաճախ, այնպիսի հարցեր, ինչպիսիք են «ո՞վ կարող է մասնակցել», «ե՞րբ է մասնակցությունը նպաստավոր», «ինչպե՞ս պետք է ապահովել մասնակցությունը», «արդյոք այդ մասնակցությունը ցանկալի՞ է», մնում են անպատասխան, ինչը հանգեցնում է մասնակցային կառավարման գործընթացի ձևական բնույթ ստանալուն: Այս առումով, աշխատանքի տվյալ հատվածում բացահայտվելու է Հայաստանի Հանրապետությունում և, մասնավորապես՝ Երևան քաղաքում, տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության հնարավորությունները՝ վերլուծելով ՀՀ օրենսդրական դաշտը, քննարկելով պետության կողմից բնակիչների մասնակցությունը երաշխավորելու կառուցակարգերը և համապատասխան մեթոդաբանությամբ գնահատելով բնակիչների մասնակցության աստիճանը ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում՝ Երևան քաղաքի առանձնահատկություններով հանդերձ: Բնակիչների մասնակցության հասկացությունը կարելի է դիտարկել տարբեր հարթություններով. այն կարող է համարվել որպես առանձին տեսական խնդիր, իրավական հասկացություն, բայց միևնույն ժամանակ որպես գործնականում փաստացիորեն կիրառվող գործընթաց: Վերջին դրսևորումը գերակշռաբար տարբերվում է նախորդ երկուսից՝ ներկայացնելով գիտական հետազոտության առանձին խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է տալ իրավական դաշտի և գործնական կիրառության արդյունքների ուսումնասիրության արդյունքում: Այս առումով, հետազոտության նախնական ենթադրությունն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը կարելի է դիտարկել իբրև ձևավորված իրավական հասկացություն, սակայն գործնականում համակարգը բախվում է բնակիչների մասնակցության բավական ցածր մակարդակի հետ՝ պայմանավորված ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ գործոններով:

Ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ բոլոր երկրների տեղական ինքնակառավարման համակարգերում բնակչների մասնակցության գործում չափազանց էական է պետության, մասնավորապես՝ կենտրոնական իշխանության դերը: Եվ, չնայած այս գաղափարը կարող է հակասական համարվել՝ հաշվի առնելով տեղական ինքնակառավարման համակարգի առանձին և ինքնուրույն գործելու փաստը, սակայն տրամաբանությունն այն է, որ պետական կառավարման մարմինները անմիջապես պատասխանատու են տվյալ երկրի օրենսդրության ձևավորման համար, որում, անշուշտ, պետք է արտացոլված լինեն նաև տեղական մակարդակում մասնակցային կառավարումը կարգավորող դրույթներ: Վերջիններս կարող են ունենալ ինչպես ուղղորդող և հնարավորություն ընձեռող, այնպես էլ պարտադրական բնույթ: Ընդ որում, հասկանալի է, որ մասնակցային կառավարումը կարգավորող օրենսդրության առկայությունը կարող է դիտարկվել իբրև սոսկ անհրաժեշտ պայման, բայց ոչ մի դեպքում՝ բավարար: Այս առումով, թե՛ պետական մակարդակով ընդունված օրենքները, և թե՛ դրանց հիման վրա քաղաքի մակարդակով ավագանու որոշմամբ սահմանած կարգերը պետք է հիմնված լինեն բնակիչների և այլ շահառուների պահանջների բացահայտման և մասնակցության իրական հնարավորության ապահովման վրա: Առանց հստակ կանոնների, ընթացակարգերի և քաղաքականության մասնակցային կառավարումը, հատկապես խոշոր քաղաքներում, չի կարող արդյունավետորեն գործել: Բայց, միևնույն ժամանակ, ճիշտ է նաև հակառակ պնդումն առ այն, որ առանց մասնակ-

ցության իրական խթանների և գործնական քայլերի, օրենքները, կանոնները և ընթացակարգերը ոչինչ են:

Մեր երկրում տեղական ինքնակառավարման համակարգը, որպես հանրային կառավարման բաղադրիչ, կազմավորվել է 1996 թվականի նոյեմբերի 10-ին, երբ առաջին անգամ տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները: Մինչ այդ տեղական ինքնակառավարման սահմանադրական հիմքերն ամրագրված էին 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությամբ, իսկ տարածքային կառավարման հիմքերը՝ նույն թվականի նոյեմբերին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքով: Այսինքն՝ տեղական ինքնակառավարման համակարգի գաղափարն արմատավորվեց, երբ Հայաստանը որդեգրեց ժողովրդավարական արժեքների ուղիով գնալու ճանապարհը: Մինչև տեղական ինքնակառավարման համակարգի կազմավորումը, անկախության ձեռքբերումից հետո շարունակում էին պահպանվել խորհրդային ժամանակաշրջանից գործող վարչատարածքային բաժանումը և տեղերում իշխանության իրականացման համակարգը¹:

Եվրոպայի խորհրդին Հայաստանի Հանրապետության անդամակցությունն էական նշանակություն ունեցավ տեղական ինքնակառավարման համակարգի բարեփոխման և զարգացման համար: Մասնավորապես՝ Հայաստանը վավերացրեց Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագիրը, 2002 թվականին ընդունվեց «Տեղական ինքնակառավարման մասին» նոր օրենքը, իսկ 2005 թվականի սահմանադրական փոփոխությունները նոր էջ բացեցին համակարգի հետագա զարգացման համար:

Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրի գաղափարական հենքը, ինքնին, կառավարմանը բնակիչների մասնակցության ապահովումն է: Ամրագրելով այն հանգամանքը, որ ինքնակառավարման մարմինները հանդիսանում են ժողովրդավարական հասարակարգերի կարևորագույն հիմքերից մեկը՝ հռչակագիրը հանրային գործերի կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքը դասում է եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունների համար ընդհանուր ժողովրդավարական սկզբունքների շարքում: Ընդ որում, հռչակագրում բնակիչների մասնակցության իրավունքը կարևորվում է հատկապես տեղական ինքնակառավարման համակարգում, քանի որ այն անմիջականորեն կարող է իրականացվել հենց տեղական մակարդակով: Եվ, ընդհանրապես, հռչակագիրը ստորագրող երկրները ելնում են այն հանգամանքից, որ իրական իշխանությամբ օժտված տեղական ինքնակառավարման մարմինների գոյությունն ապահովում է արդյունավետ և, միաժամանակ, քաղաքացուն մոտեցված կառավարում²: Այս հանգամանքը հատկապես համահունչ է այն գաղափարին, որ **քաղաքների պատշաճ կառավարումը կարող է դիտարկվել միայն մասնակցային կառավարման համատեքստում:**

Հարկավոր է նշել նաև, որ **Հայաստանի Հանրապետությունը 2010թ. վավերացրել է Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրի լրացուցիչ արձանագրությունը տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին**՝ ստանձնելով օրենսդրական նոր պարտավորություններ: Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրի լրացուցիչ արձանագրությունն ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից՝ 2009թ. սեպտեմբերի 9-ին: Այն ստորագրման համար բացվել է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների տեղական ինքնակառավարման ոլորտի պատասխանատու նախարարների 16-րդ նստաշրջանում, Ուտրեխտ քաղաքում: Լրացուցիչ արձանագրության ստորագրման բացման օրը (2009թ. նոյեմբերի 16) այն ստորագրել են 12 երկրներ՝ Բելգիան, Էստոնիան, Ֆինլանդիան, Ֆրանսիան, Հունգարիան, Իսլանդիան, Լիտվան, Սոնտենեգրոն, Նիդեռլանդները, Նորվեգիան, Սլովենիան և Մեծ Բրիտանիան: Արձանագրությունը հստակեցնում է բնակիչների մասնակցության իրավունքի հասկացությունը, դրա իրականացման միջոցները, ինչպես նաև կիրառելիության սահմանները: Ըստ դրա՝ մասնակից պետությունները, իրենց իրավասությունների շրջանակներում, պետք է ապահովեն տեղական իշխանության գործերին բոլորի մասնակցության իրավունքը: Ընդ որում, տեղական իշխանության գործերին մասնակցության իրավունքը նշանակում է

¹ <http://www.mta.gov.am>, ՀՀ Տարածքային կառավարման նախարարության պաշտոնական համացանցային կայք:

² Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագիր, Ստրասբուրգ, 1985, Ներածություն:

տեղական իշխանության լիազորությունների և պարտավորությունների իրականացման ձևերը **փնտրելու, որոշելու կամ դրանց վրա ազդելու իրավունքը**¹: Սրանով արձանագրությունը, ըստ էության, ենթադրում է մասնակցության տարբեր աստիճաններ:

Արձանագրության պահանջներից մեկն այն է, որ իրավունքի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը **պետք է սահմանվեն օրենքով**: Վերջինս, բացառելով ցանկացած անձի կամ խմբի նկատմամբ խտրականությունը, կարող է տարբեր իրավիճակների կամ մարդկանց խմբերի համար սահմանել մասնակցության հատուկ միջոցներ: Համաձայն Սահմանադրության և միջազգային պարտավորությունների՝ օրենքը կարող է, մասնավորապես, սահմանել մասնակցության ընթացակարգեր միայն ընտրողների համար: Սակայն, միևնույն ժամանակ, որպեսզի բնակիչների և շահագրգիռ խմբերի մասնակցությունը չվտանգի տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ գործունեությունը՝ արձանագրությունը ենթադրում է նաև օրենքով սահմանափակումների պարտադիր ամրագրում²:

Մասնակցության իրավունքի իրականացման միջոցների առումով արձանագրությունը հստակորեն պահանջում է, որ վավերացնող պետությունը իրականացնի բոլոր անհրաժեշտ միջոցառումները, որոնք կապահովեն մասնակցության իրավունքի կիրարկումը մասնավորապես՝ լիազորել տեղական իշխանություններին՝ ապահովելու, խրախուսելու և աջակցելու մասնակցության իրավունքի իրականացմանը: Ձուգահեռաբար, արձանագրությունը անհրաժեշտ է համարում հետևյալ պարտադիր տարրերի ապահովումը՝

- մարդկանց ներգրավման հստակ ընթացակարգերի առկայություն, այդ թվում՝ խորհրդատվական գործընթացներ և հանրաքվեներ (երևանի պես խոշոր համայնքներում, որոնք առանձնանում են աշխարհագրական մեծ տարածքով կամ բնակիչների թվով, այդ ընթացակարգերը պետք է ապահովեն բնակիչների մասնակցությունը վերջիններիս առավել մոտ գտնվող կառավարման մակարդակի միջոցով),
- տեղական իշխանությունների պաշտոնական փաստաթղթերին բնակիչների հասանելիության ապահովման ընթացակարգեր,
- մասնակցության որոշակի դժվարություններ ունեցող խմբերի կարիքները հաշվի առնելու ընթացակարգեր,
- տեղական իշխանությունների և նրանց կողմից մատուցվող հանրային ծառայությունների վերաբերյալ ստացված բողոքները և առաջարկությունները քննարկելու ու արձանագրելու կառուցակարգեր և ընթացակարգեր³:

Այս ամենն իրագործելու համար տեղական իշխանությունները խրախուսվում են՝ օգտագործելու տեղեկատվական և հեռահաղորդակցության նորագույն տեխնոլոգիաները: Ընդ որում, ընթացակարգերը, միջոցները և կառուցակարգերը կարող են տարբել լինել տեղական իշխանությունների համար՝ հաշվի առնելով նրանց չափերը և կարողությունները: Այս առումով, կարևոր ենք համարում հատկապես խոշոր քաղաքների կողմից 21-րդ դարին համահունչ նոր ուղիների և կառուցակարգերի մշակումը՝ հաշվի առնելով տվյալ քաղաքային համայնքի առանձնահատկությունները և ռեսուրսային ներուժը:

Ըստ արձանագրության 3-րդ հոդվածի՝ այն տարածվում է վավերացնող երկրի տարածքում գործող բոլոր տեսակի տեղական իշխանությունների վրա: Սակայն յուրաքանչյուր պետություն, վավերացման, ընդունման կամ հավանության արժանացնելու վերաբերյալ փաստաթղթերն ի պահ հանձնելիս, կարող է նշել տեղական կամ տարածաշրջանային իշխանությունների այն տեսակները, որոնց վրա տարածվում է դրա կիրառումը, կամ այն տեսակները, որոնք ինքը նախատեսում է հանել դրա կիրառման շրջանակից⁴: ՀՀ Ազգային ժողովը, մասնավորապես,

¹ Տե՛ս Տեղական ինքնակառավարման եվրոպական հռչակագրի լրացուցիչ արձանագրություն տեղական իշխանությանը մասնակցելու իրավունքի մասին, Ուտրեխտ, 16.11.2009, հոդված 1: Հասանելի է անգլերեն տարբերակով հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ <http://conventions.coe.int/Treaty/en/Treaties/Html/207.htm>

² Նույն տեղում, հոդված 1:

³ Նույն տեղում, հոդված 2:

⁴ Տե՛ս նույն տեղում, հոդված 3:

2010թ. արձանագրությունը վավերացնելիս Հայաստանի Հանրապետության բոլոր համայնքները նշել է որպես տեղական ինքնակառավարման միավորներ:

Խոսելով համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության մասին՝ հարկ է փաստել, որ ՀՀ-ում բավական ամուր է այդ գործընթացի իրավական հիմքը: Սա բնական է, քանի որ տեղական ինքնակառավարման գաղափարն ինքնին արտահայտում է բնակիչների առավել մոտ գտնվելը կառավարման գործընթացին և նրանց անմիջական մասնակցությունը կառավարման մարմինների ձևավորման և որոշումների ընդունման գործընթացներին. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, հանրաքվեների անցկացումը հենց դրա դրսևորման ձևերն են: Եվ լիովին տրամաբանական է, որ տարբեր իրավական փաստաթղթերում հանդիպում են մի շարք դրույթներ, որոնք վերաբերում են այդ գործընթացներին: Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության մեջ հստակորեն նշվում է, որ համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով¹: Բացի դրանից, մեկ այլ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության՝ տասնութ տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք²:

Տեղական ինքնակառավարման մակարդակում մասնակցային կառավարման զարգացմանը անդրադարձ կա նաև ՀՀ գործադիր իշխանության ծրագրերում: Մասնավորապես՝ ՀՀ կառավարության 2012-2017թթ. ծրագրով նախատեսված է ապահովել համայնքի ղեկավարի կողմից ընդունվող որոշումների և գործունեության վերահսկողության արդյունավետ կառուցակարգեր, ինչպես նաև բարձրացնել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության թափանցիկությունը, ինչը, իհարկե, մասնակցության պասիվ ձևերին է վերաբերում³: Իսկ, 2013թ. ծրագրում նշվում է, որ կառավարությունը նախատեսում է իրականացնել տեղական մակարդակում որոշումների ընդունմանը և հանրային կառավարմանը քաղաքացիների մասնակցության խթանումն ապահովող միջոցառումներ, ինչն արդեն ենթադրում է առավել ակտիվ ձևերի զարգացում⁴:

Վերը ներկայացված ՀՀ միջազգային պարտավորություններով, ինչպես նաև ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մասնակցության իրավունքի իրացման համար ՀՀ օրենսդրությունում ևս տեղ են գտել մի շարք դրույթներ, որոնք կարգավորում են համայնքի կառավարմանը բնակիչների մասնակցության գործընթացը: Իրավական այս նորմերը վերաբերում են ինչպես կառավարման մարմինների կազմավորման (անուղղակի մասնակցություն), այնպես էլ արդեն ձևավորված մարմինների որոշումների ընդունման գործընթացներին բնակիչների մասնակցությանը (ուղղակի մասնակցություն): Սակայն, ի տարբերություն առաջին հատվածի, որը բավական հստակ կերպով և ամենայն մանրամասնությամբ է կարգավորվում օրենսդրությամբ, որոշումների ընդունման գործընթացին բնակիչների մասնակցության կառուցակարգերի շրջանակն առավել ընդարձակ է, իսկ հստակությունը բացակայում է: Այս առումով որոշակի առաջընթաց գրանցվեց 2013թ., երբ ՀՀ Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ ընդունեց «Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Լրացումները հիմնականում վերաբերում են համայնքի կառավարմանը բնակիչների ուղղակի մասնակցությանը և բխում են ուտրեխտյան արձանագրության պահանջներից: Ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՀՀ Սահմանադրությունից բացի բնակիչների մասնակցության վերաբերյալ դրույթներ են պարունակում հետևյալ օրենքները՝

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, «Տիգրան Մեծ», 2005, հոդված 107:

² Նույն տեղում, հոդված 30:

³ Հայաստանի Հանրապետության կառավարության 2012-2017թթ. ծրագիրը, ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 18-ի N 730 - Ա որոշում, էջ 33: Հասանելի է հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ <http://www.gov.am/files/docs/970.pdf>:

⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013թ. ծրագիրը, ՀՀ կառավարության 2013 թվականի մայիսի 16-ի N 515 - Ա որոշում, էջ 54: Հասանելի է հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ <http://www.gov.am/files/docs/1149.pdf>:

- «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2002թ.,
- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, 2008թ.,
- «Տեղական հանրաքվեի մասին ՀՀ օրենքը», 2002թ.,
- ՀՀ ընտրական օրենսգիրքը, 2011թ.,
- «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, 1997թ.,
- «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, 2003թ.,
- «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքը, 1998թ.,
- «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը, 2005թ.,
- «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, 2009թ.,
- «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենք, 2003թ.:

Նախ և առաջ, հարկավոր է նշել, որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված տեղական ինքնակառավարման սկզբունքներից երեքը առնչվում են բնակիչների մասնակցությանը: Դրանցից մեկը համայնքի անդամների առջև տեղական ինքնակառավարման մարմինների հաշվետու լինելն է, հաջորդը՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Եվ, վերջապես՝ վերոնշյալ լրացումների արդյունքում օրենքում ավելացվել է մի դրույթ, որն արդեն հստակորեն սահմանում է տեղական ինքնակառավարմանը համայնքի բնակիչների մասնակցությունը՝ որպես առանձին սկզբունք¹: Մինչ այդ բնակիչների ուղղակի մասնակցությունը համայնքի կառավարմանը որևէ կերպ արտացոլված չէր տեղական ինքնակառավարման սկզբունքներում:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով համայնքի ղեկավարին վերապահված է պարտադիր լիազորություններ քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության բնագավառում, որտեղ համայնքի ղեկավարը պարտավոր է ընդունել քաղաքացիներին, ինչպես նաև քննության առնել նրանց կողմից ներկայացված առաջարկությունները, դիմումները, բողոքները և դրանց ուղղությամբ համապատասխան միջոցներ ձեռնարկել²: Իհարկե, օրենքի այս դրույթը նախատեսում է, որ բնակիչների մասնակցության համար խոչընդոտներ չեն կարող լինել, սակայն մյուս կողմից՝ ձևակերպումը ընդհանուր է և անորոշ, ինչը համայնքի ղեկավարներին հնարավորություն է տալիս փաստացիորեն խուսափելու այս լիազորության իրականացումից: Նույն լիազորության իրականացումը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով վերապահված է ոչ թե Երևանի քաղաքապետին, այլ վարչական շրջանի ղեկավարին՝ որպես բնակիչներին առավել մոտ գտնվող կառավարման մարմնի³:

Տեղական ինքնակառավարմանը ուղղակի մասնակցություն ունենալու կարևորագույն միջոցներից է տեղական հանրաքվեի կազմակերպումը, որի մասին ընդունվել է առանձին օրենք: Տեղական հանրաքվեի նախաձեռնության իրավունք ունի համայնքի բնակիչներից ձևավորված նախաձեռնող խումբը, սակայն մինչ այժմ այն կիրառություն չի ստացել: Գլխավոր պատճառը, մեր կարծիքով, այն է, որ օրենքի ընդունման հիմնական պատճառը սոսկ եղել է միջազգային պարտավորություններ ունենալը, սակայն դրա կիրառելիության շատ խնդիրների լուծում չի տրվել: Բացի դրանից, օրենքը պարունակում է մի շարք սահմանափակումներ (համայնքի բյուջե, համայնքի սեփականության օտարում և այլն),⁴ որոնք էականորեն նվազեցնում են տեղական հանրաքվեի իրական նշանակությունը տեղական խնդիրների լուծման գործում: Ընդ որում, Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի հանձնարարականում ասվում է, որ տեղական

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 21 (196), Երևան, 2002թ., հոդված 9:

² Տե՛ս նույն տեղում, հոդված 33:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 3 (669), Երևան, 2009, հոդված 92:

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական հանրաքվեի մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 11 (186), Երևան, 2002, հոդված 5.2:

հանրաքվեի դրվող հարցերի շրջանակը պետք է հստակ նշված լինի օրենքով¹, սակայն «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով այդ հարցերի շրջանակը կարծես կրկին ձևականորեն է արտացոլում վերոնշյալ պահանջը՝ լինելով խիստ ընդհանուր և անորոշ, այն է՝ Սահմանադրությամբ նախատեսված և օրենքով տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությանը վերապահված, ինչպես նաև օրենքով նախատեսված հարցեր²:

Մեր երկրի օրենսդրության մեջ կարելի է նաև հանդիպել որոշակի դրույթների, որոնք նախատեսում են համայնքային բյուջեների հրապարակայնության ապահովում և բնակիչների մասնակցություն համայնքի բյուջետավարման գործընթացին: Մասնավորապես՝ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նշվում է, որ Երևանի բյուջեն Երևանի բնակչության համար առավել նատչելի դարձնելու համար պատրաստվում և հրատարակվում են հիմնական ցուցանիշներ, վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուներ ու գրքույկներ³: Այս գործընթացը կարգավորվում է նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով, որով սահմանվում է, որ համայնքի բյուջեի հրապարակայնությունը ապահովելու համար համայնքի բյուջեի մասին որոշման նախագիծը համայնքի ավագանուն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում հրապարակվում է տեղական մամուլում, իսկ բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հրապարակվում է ավագանու հաստատելուց հետո հնգօրյա ժամկետում: Ըստ օրենքի՝ համայնքների ղեկավարները պետք է պայմաններ ստեղծեն, որ համայնքի բյուջեի նախագծին, ինչպես նաև տարեկան հաշվետվությանը ծանոթանալու և դրանք ուսումնասիրելու ցանկություն ունեցող համայնքի անդամները դյուրությամբ ձեռք բերեն համապատասխան փաստաթղթերը⁴:

Այս բոլոր միջոցների և եղանակների առկայությամբ հանդերձ՝ մեր երկրում դեռևս անհրաժեշտ մակարդակով չի ապահովվում բյուջեի հրապարակայնությունը: Շատ դեպքերում պարզապես չեն կատարվում օրենքի համապատասխան պահանջները, իսկ կատարման դեպքում էլ բնակիչներն են հաճախ ցուցաբերում ակնհայտ անտարբերություն: Բնակիչների մեծ մասը նույնիսկ տեղյակ էլ չէ մամուլում բյուջեի նախագծի հրապարակումների կամ վիճակագրական և գրաֆիկական տվյալներ պարունակող տեղեկատուների ու գրքույկների մասին: Այս անտարբերությանը և անտեղյակությանը նպաստում է նաև ավագանու նիստերի գերակշռաբար դռնփակ լինելը՝ թեև օրենքով ավագանու նիստերը պետք է լինեն հրապարակային⁵: Խնդիրն այն է, որ բնակիչները չեն կարող շահագրգռված լինել բյուջեի մասին տվյալներ պարունակող տեղեկատուների և գրքույկների ընթերցմամբ, եթե զգում են, որ կտրված են բյուջեի մշակման և քննարկման գործընթացներից, և ոչ ոք իրենց կարծիքը, տեսակետը չի հարցրել, առավել ևս՝ հաշվի առել:

Ամփոփելով քաղաքացիների մասնակցության ձևերի արտացոլման վիճակի վերլուծությունը ՀՀ օրենսդրությունում՝ պետք է փաստել, որ պասիվ ձևերին վերաբերող դրույթները զգալիորեն գերակշռում են ակտիվ ձևերին: Համայնքի քաղաքացիները և հասարակական սուբյեկտները հիմնականում ապահովված են բավարար հնարավորություններով՝ տեղեկանալու համայնքի խնդիրների և դրանց լուծման ուղղությամբ ՏԻՄ-երի ծավալած գործունեության մասին, սակայն ապահովված չեն լիարժեք հնարավորություններով՝ իրենց մասնակցությունը ցուցաբերելու՝ համայնքում արդյունավետ տեղական ինքնակառավարում իրականացնելու գործում:

¹ Տե՛ս Եվրոպայի Խորհրդի նախարարների կոմիտեի թիվ (96) 2 հանձնարարականը՝ տեղական մակարդակում հանրաքվեների և հանրային նախաձեռնությունների վերաբերյալ, 1996թ.: Հասանելի է անգլերեն տարբերակով՝ հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ <http://www.migm.gov.tr/AvrupaKonseyi/Ek9.pdf>

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական հանրաքվեի մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 11 (186), Երևան, 2002, հոդված 5.1:

³ Հայաստանի Հանրապետության օրենքը «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» () ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 3 (669), Երևան, 2009, հոդված 77:

⁴ Հայաստանի Հանրապետության օրենքը «Բյուջետային համակարգի մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 18, Երևան, 1997, հոդված 36:

⁵ Հայաստանի Հանրապետության օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին», ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 21 (196), Երևան, 2002, հոդված 14:

Ես Դավիթ Ինձնակազմի նախագահն եմ: Մարտի 20-ին
Դավիթ Ինձնակազմի նախագահն եմ: Մարտի 20-ին

Գրեց՝ Ս. Չի

Հոգևորական քննարկում են օրենսդրական այն հիմքերը, որոնք կարգավորում են մասնակցային կառավարման գործընթացը Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման համակարգում: Տարբեր օրենսդրական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր երկրում դեռևս գերակշռում են տեղական ինքնակառավարմանը բնակչների մասնակցության պասիվ ձևերը, այնինչ օրենսդրությունը լիարժեք հնարավորություն չի տալիս բնակիչներին ուղղակի ազդեցություն ունենալու տեղական մակարդակում ընդունվող կառավարչական որոշումների վրա:

«ՅՋԵ ՀՀ-ն»: Նշանակալիքային ինքնակազմ, «Պատվական իմաստով ինձ հարգելի է ձեր հարգանքը», Նշանակալիքային, անհրաժեշտ է հարգել, «ՅՋԵ ՀՀ-ն», Նշանակալիքային: ՀՀ-ն է:

МЕХАНИЗМЫ РЕГУЛИРОВАНИЯ ПРОЦЕССА ПАРТИЦИПАТИВНОГО УПРАВЛЕНИЯ В РА

РУБЕН АЙРАПЕТЯН, *к.э.н.*
доцент кафедры управления АГУУ

Аннотация

В статье обсуждаются законодательные основы, регулирующие процесс партисипативного управления в системе местного самоуправления РА. Изучение различных законодательных актов показывает, что в нашей стране все еще преобладают пассивные формы участия жителей в местном самоуправлении, в то время как законодательство не позволяет жителям непосредственно влиять на управленческие решения, принимаемые на местном уровне.

Ключевые слова: партисипативное управление, местное самоуправление, управленческое решение, община, законодательство, механизм, совет старейшин.

MECHANISMS OF REGULATING PARTICIPATORY GOVERNANCE PROCESS IN THE REPUBLIC OF ARMENIA

RUBEN HAYRAPETYAN, *Candidate of Sciences (Economics)*
Associate Professor
Management Department
Armenian State University of Economics

Abstract

The article discusses the legislative provisions that regulate the participatory governance process in the system of local self-governance in the Republic of Armenia. The review of various legislative acts shows that still passive forms of participation of residents in local self-governance prevail in our country; meanwhile, the existing legislation prevents residents from directly affecting managerial decisions made by the representatives of local self-governance bodies.

Keywords: participatory governance, local self-governance, managerial decision, community, legislation, mechanism, council of elders.

È°Û² ÐàìÐ²ÛÛÆêÛ²Û, i. . Æ.

ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÛ³ÝÇ³Ýí³Ý
iÝi»è³·ÇiáðÃÛ³Ý ÇÝèiÇiáðiÇ
³í³. ·Çi³ßÈ³iáÕ

ÐÐ ²¶ðà²ð, ÛàðÛ²°ð²Ï²Û Ð²Ø²Ï²ð¶Æ ä²ð°Û²ØÂ°ðøÆ
Æð²ðØ²Û °ÛÂ²Ï²èàðòì²ìøÆ ÐÆØÛ²Ð²ðð°ð

Հայաստանի տնտեսությանը վերաբերող վիճակագրական տվյալները վկայում են, որ 2012թ. դրությամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի բացարձակ գերակշռող մասը՝ 97%-ը, բաժին է ընկնում գյուղացիական տնտեսություններին: Այդ նույն տարվա կտրվածքով գյուղատնտեսական համախառն արտադրանքի արժեքը 2012թ. կազմել է 840.4 մլրդ դրամ, որը գերազանցել է նախորդ տարվա մակարդակը 9.5%-ով: Ընդ որում, համախառն արտադրանքի 60.9%-ը բաժին է ընկնում բուսաբուծության ճյուղին, իսկ 39.1%-ը՝ անասնապահությանը:

Դրական տեղաշարժեր են գրանցվել նաև հողային ռեսուրսների՝ մասնավորապես վարելահողի օգտագործման բնագավառում, որի նպատակային օգտագործման մակարդակը 2012 թվականին կազմել է 67.7%, նախորդ տարվա 63.8%-ի դիմաց:

Հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները և երկրի անվտանգության հետ կապված հիմնախնդիրները, գյուղատնտեսության պետական աջակցության քաղաքականությունն ուղղված է ագրարային ոլորտում իրավական հիմքի կատարելագործմանը, տնտեսվարող սուբյեկտների գործունեության բարենպաստ պայմանների ապահովմանը և ենթակառուցվածքների զարգացմանը:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունը կազմել է 303.6 հազ. հա, որը գերազանցում է 2011թ. մակարդակը 16.9 հազ. հա-ով: Բարձրացել է այգիների ինտենսիվացման մակարդակը, որը պայմանավորված է խաղողի և պտղի իրացման հիմնախնդրի որոշակի մեղմացմամբ: Միաժամանակ, գյուղատնտեսական մթերքների վերամշակման գծով զարգացած արդյունաբերություն և իրացման կայուն համակարգ ունենալը գյուղատնտեսության արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայմաններից է: Մասնավորապես դրան հասնելու համար գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների և կապիտալ ներդրումների ներգրավումը հնարավորություն կտան ավելացնելու աշխատանքի արտադրողականությունն ու բարձրացնելու արտաքին շուկայում հայկական ապրանքների մրցունակությունը:

Գյուղմթերքների արտադրման համակարգի բարելավումը պահանջում է ավելի հուսալի տեխնիկական միջոցներով վերամշակման ապահովում, շուկաների նկատմամբ ավելի ճկուն քաղաքականության կողմնորոշում, ավելի մեծ ուշադրություն արտադրանքի որակի նկատմամբ, ինչը հնարավոր կլինի կազմակերպել միայն ավելի նպաստավոր համագործակցության դեպքում: Հայաստանում նոր ձևավորվող արդյունաբերական բնույթի գյուղատնտեսության հատվածը, որը ենթադրում է մեծ կապիտալ ներդրումների իրականացում ջերմոցային, այգեգործական, ձկնաբուծական տնտեսություններում, իր հերթին կապահովի տեղական արտադրության գյուղատնտեսական արտադրանքների մրցունակության բարձրացում, ըստ նպատակահարմարության ներմուծվող պարենամթերքի փոխարինում և արտահանման ուղղվածություն ունեցող գյուղատնտեսության զարգացում:

Հանրապետության արդյունաբերության ճյուղի մեջ գյուղատնտեսական հունք վերամշակող արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է 33.6%, իսկ մշակող արդյունաբերությունում՝ 57.5%:

Ագրոպարենային համակարգի հետագա զարգացման համար գյուղմթերքների և դրանց վերամշակումից ստացվող սննդամթերքի (պարենամթերքի) իրացման խնդրի լուծումն ունի վճռորոշ դեր, քանի որ արդյունավետ չէ այն արտադրությունը, որը չի ունենում շահավետ իրացում: Գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման հարցը մի կողմից պայմանավորված է տեղական շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, իսկ մյուս կողմից գյուղատնտե-

սական մթերք գնող-իրացնող ենթակառուցների բացակայությամբ, որոնք ձևավորվում են դանդաղ և ունեն արտահանման դժվարություններ:

Ըստ ուսումնասիրությունների, վերջին տարիների ընթացքում, գյուղացիական տնտեսություններում արտադրվող գյուղմթերքներից իրացվում է ընդամենը 50-55 %, իսկ դրանց կողմից արտադրված մթերքների իրացման գործընթացում ձևավորվող դժվարություններն իրենց բացասաբար ազդեցությունն են թողնում արտադրանքի գների վրա:

Ներկա վիճակում գյուղացիական տնտեսությունների վարկավորման, նյութատեխնիկական միջոցների մատակարարման, որակի ստանդարտների կիրառման, տեխնոլոգիաների կատարելագործման և այլ կարևոր խնդիրներ առավել արդյունավետ կարող են լուծվել ագրովերամշակող կազմակերպությունների հետ համագործակցության խորացման միջոցով:

Սննդամթերքի անվտանգության և որակի բարելավման հիմնախնդիրը՝ արտադրողների և վերամշակողների ներքին պահանջարկն է, որակյալ ներկրվող ապրանքների առկայությունը պահանջում է գոյություն ունեցող ստանդարտների խստացում, որակի կառավարման և անվտանգության ներքին վերահսկողության անհրաժեշտություն, որպեսզի պահպանվի ներքին շուկան, ներկրվող սննդամթերքը փոխարինվի տեղական արտադրությամբ և վերջիններիս համահունչ էլ կընդլայնվեն արտահանման հնարավորությունները:

Այժմյան պայմաններում խիստ կարևորվում է վերամշակող ընկերությունների և գյուղացիական տնտեսությունների միջև փոխհարաբերությունների զարգացումը: Սակայն կան խոչընդոտող հանգամանքներ, որոնցից կուզենայինք առանձնացնել հետևյալները՝

- վերամշակողները աշխատում են պահպանել իրենց եզակի լինելու առավելությունները, որն արտադրողներին ձեռնտու չէ,
- հողի սեփականաշնորհումը չի համապատասխանեցված վերամշակող կազմակերպությունների ապապետականացմանը,
- արտադրողից դեպի սպառողը գյուղմթերքների ազատ վաճառքին նպաստող կառուցվածքային բարեփոխումների իրականացումը,
- մեծածախ շուկաների շուկայական ենթակառուցների բացակայությունը:

Այսօր, որպես անհրաժեշտություն կարևորվում է ներքին շուկայում բնակչության պահանջարկը պարենամթերքի նկատմամբ, որը 55%-ով է բավարարվում տեղական արտադրության հաշվին: Ըստ կանխատեսումների այդ ցուցանիշը միջին և երկարաժամկետ հեռանկարում կարող է ավելանալ 10-20%-ով: Ինչ խոսք, ներքին շուկայի տարողունակությունը սահմանափակվում է բնակչության ցածր գնողունակությամբ, որի մակարդակի բարձրացումը հիմնականում պայմանավորված է մակրոտնտեսական կայունությամբ:

Գյուղացիական տնտեսությունների կողմից գյուղատնտեսական հիմնական մթերքների իրացման կառուցվածքի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տվյալները 2012 թվականի վերջի դրությամբ (տե՛ս աղյուսակ 1):

Ակնհայտ է, որ բավականին ցածր է գյուղատնտեսական մթերքների ապրանքայնության մակարդակը: Հիմնական մասը սպառվում է տնտեսություններում և՛ արտադրական, և՛ անձնական կարիքների համար: Հացահատիկային մշակաբույսերի (37.7%), կարտոֆիլի (28.6%), կաթնամթերքի (42.1%), ձվի (54.4%), բրդի (22.6%) գծով սպառվել է գյուղացիական տնտեսություններում: Ակնհայտ է, որ այս վիճակում տնտեսվարող սուբյեկտները չեն կարող ապահովել ընդլայնված վերարտադրության, տեխնիկական վերազինման և արդյունավետության բարձրացման պահանջները: Ապրանքայնության մակարդակը, կախված գյուղատնտեսական մթերքների կառուցվածքից և իրացման պայմաններից, հանրապետության տարբեր մարզերում տարբեր է: Այսպես, ըստ 2012 թվականի վիճակագրական տվյալների հացահատիկային մշակաբույսերի ապրանքայնությունը բարձր է Գեղարքունիքի (47.4%), Կոտայքի (35.5%), Արմավիրի (39.7%) մարզերում, կաթի և կաթնամթերքի ապրանքայնությունը բարձր է Արագածոտնի (63.9%), Արմավիրի (69.4%), Կոտայքի (67.9%) մարզերում:

ՀՀ -ում գյուղատնտեսական մթերքների իրացման կառուցվածքը 2012թ. տվյալներով *

(արտադրության ծավալի նկատմամբ՝ տոկոսներով)

Հ/հ	Գյուղատնտեսական մթերքների անվանումը	Գյուղացիական տնտեսությունների կողմից			Օգտագործվել է տնտեսությունում, որից վերամշակվել է	Մնացորդը տնտեսությունում
		Վաճառվել է	Տրվել է ապրանքափոխանակման	Տրվել է բնամթերքով		
1.	Հացահատիկ և հատիկաղնդեղեն մշակաբույսեր	24.0	6.4	2.6	37.7/50.8	29.3
2.	Կարտոֆիլ	34.1	5.1	1.6	28.6/-	30.3
3.	Բանջարեղեն	71.1	6.3	0.6	18.5/47.4	3.5
4.	Բոստան	90.5	4.7	-	4.8/-	
5.	Պտուղ	60.5	4.9	0.5	24.9/42.8	9.2
6.	Խաղող	81.9	3.3	0.4	11.8/62.2	2.6
7.	Միս	81.1	2.4	0.2	15.9/2.8	0.4
8.	Կաթ, կաթնամթերք (վերածած կաթի)	45.1	5.4	0.6	42.1/58.5	6.8
9.	Չուլ	36.6	8.0	0.9	54.4/-	0.1
10.	Բուրդ	42.0	6.7	0.3	22.6/3.3	28.3

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Վերջին տասնամյակում գյուղատնտեսական մթերքների գծով վերամշակող համակարգը զարգացում է ապրում: Հաշվի առնելով Հայաստանում աճող մրգերի և բանջարեղենի բարձր որակն ու անասնաբուժական արտադրանքի բարձր համային և էկոլոգիական հատկանիշները, ներդրողներին ավելի հրապուրիչ են դարձնում և քաջալերում՝ նորանոր ապրանքներ դուրս բերելով արտաքին շուկա, որի արդյունքում օգնում են նոր վերամշակող կազմակերպությունների ստեղծմանը և առողջ մրցակցային պայմանների ապահովմանը:

Ուսումնասիրություններից պարզվում է, որ գյուղատնտեսական մթերքների՝ պտղի, խաղողի, բանջարեղենի հիմնական մասը գնվում է վերամշակող կազմակերպությունների կողմից (տե՛ս աղյուսակ 2):

Գյուղատնտեսական հումքի գնումների ծավալները ՀՀ վերամշակող կազմակերպություններում ըստ 2008-2012թթ. *

(հազ. տոննա)

Գյուղատնտեսական մթերքներ	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	հինգ տարվա միջինը	հինգ տարվա աճի միջին տեմպը, %
Խաղող	137.4	127.7	135.0	129.0	156.6	137,1	103,3
Բանջարեղեն	39.0	32.3	29.7	51.0	33.7	37,1	96,4
Պտուղ	19.4	11.2	3.6	14.3	25.5	14,8	107,1
Ընդամենը	195.8	171.2	168.3	194.3	215.8	189,1	102,5

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Աղյուսակ 2-ի տվյալներից ակնհայտ է դառնում, որ չնայած պտղի գծով, ըստ ուսումնասիրվող տարիների աճի, միջին տեմպը կազմել է 107.1%, սակայն այդ նույն տարիներին, բնամթերքի ծավալը միջին հաշվով կազմել է 14.8 հազ. տոննա, որը նույնիսկ ցածր է եղել 2008 թվականի մակարդակից 6.1 հազ. տոննայով:

Միաժամանակ, ըստ աղյուսակի, 2012թ.-ին վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 59.2 հազ. տոննա պտուղ- բանջարեղեն: Պտղի մթերման ծավալը գերազանցում է

նախորդ տարվա մակարդակը 1.8 անգամ: Խաղողի մթերունը կատարվել է 40 ընկերության կողմից, մթերվել է 156.6 հազ. տոննա խաղող, որը գերազանցում է նախորդ տարվա մթերման ծավալը 21.5%-ով: Մթերված գյուղատնտեսական մթերքների արժեքը կազմել է 26.8 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ, ագրովերամշակվող արդյունաբերության ոլորտում առկա խնդիրները կապված են գյուղատնտեսական հումքի վերամշակումից ստացվող արտադրատեսակների մրցունակության բարձրացման, որակի բարելավման, իրացման և արտահանման հետ, քանի որ տեղական շուկայի պահանջարկը կազմում է արտադրվող պահածոների ընդհանուր ծավալի 20-40%-ը, իսկ խաղողի հումքով ոգելից խմիչքներինը՝ մինչև 12%-ը:

Կարևորելով գյուղատնտեսական հումք արտադրողների և վերամշակող կազմակերպությունների միջև գործող փոխադարձ պայմանագրային հարաբերությունների և դրանց սպասարկող առևտրային բանկերի միջոցով իրականացվող ապրանքի դիմաց անմիջական վճարումները, այնուամենայնիվ այս բնագավառում դեռևս կան չլուծված հիմնախնդիրներ: Մասնավորապես, գյուղմթերքների իրացման հարցը կապված է արտադրանքի պահպանման, փոխադրման, փաթեթավորման խնդիրների լուծման հետ: Գյուղացիական տնտեսություններն իրենց թարմ արտադրանքը հիմնականում սեփական միջոցներով փոխադրում են մոտակա քաղաքների շուկաները, և օգտվելով նպաստավոր պայմաններից, վերավաճառողները գյուղացիներից գնում են այնքան մթերք, որը կարող են իրացնել մեկ օրում, քանի որ բացակայում է դրանց երկար պահելու սառնարանային հնարավորությունները: Վերջին տարիներին ձեռնարկվել է սառնարանային տնտեսությունների վերագործարկման որոշ աշխատանքներ, որը գյուղատնտեսական մթերքների իրացման ծավալների ավելացման և որակական հատկանիշների պահպանման ու սպառման գների կայունության վրա ունի իր դրական ազդեցությունը:

Կատարված ուսումնասիրություններից ակնհայտ է դառնում, որ գյուղատնտեսության վերամշակված սննդամթերքի իրացման հարցը կապված է նաև պարենամթերքի արտահանման և ներմուծման խնդիրների հետ: Այսպես, գյուղատնտեսության ոլորտում արտադրության ծավալների ավելացումը դրական է անդրադարձել հանրապետության արտաքին ապրանքաշրջանառության ծավալների վրա: Միայն 2012թ. հանրապետությունից արտահանվել է 31.3 հազ. տոննա պտուղ, խաղող, բանջարեղեն և կարտոֆիլ, որից՝ 12.6 հազ. տոննա ծիրան, 1.6 հազ. տոննա դեղձ, 10.4 հազ. տոննա խաղող, 1.1 հազ. տոննա կեռաս և 2.4 հազ. տոննա բանջարեղեն: Արտահանման ծավալները գերազանցում են 2011թ. մակարդակը՝ 85.3%-ով, որը շատ դրական երևույթ է և իրականացվել է բավականին սահուն: Ներկայումս մեծ աշխատանքներ են տարվում տեղական արտադրության պարենամթերքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում բարձրացնելու ուղղությամբ, որը պայմանավորված է արտադրանքի ինքնարժեքի նվազմամբ, որակի բարձրացմամբ: Հայաստանի գյուղատնտեսության մրցունակության բարձրացմանը համահունչ են տեղական սպառողների սննդամթերքի անվտանգության պահանջները և ներկրվող ապրանքների որակը: Հատկապես սննդամթերքի անվտանգության և որակի բարձրացումը սպառողների ու արտադրողների ներքին պահանջարկն է:

Սննդամթերքի իրացման գործընթացում կարևորվում է նաև հավաստի տեղեկատվության առկայությունը, որը հանդիսանում է արտադրողների միջև մրցունակության կարևոր նախադրյալ: Ուսումնասիրված գյուղատնտեսական մթերքների իրացման բնագավառի համար կարևոր հիմնախնդիրներից են՝

- գյուղմթերքների վերամշակումից ստացված արտադրանքի իրացման համակարգի անկատարելիությունը,
- մեծածախ շուկաների համակարգի բացակայությունը,
- մթերքների ապրանքային տեսքի, փաթեթավորման և տարավորման անբավարար վիճակը,
- գնող–պահպանող–արտահանող շղթայում կազմակերպված միջնորդված կազմակերպությունների բացակայությունը,
- տեխնիկական հագեցվածության անբավարար վիճակը,
- բնակչության գնողունակության ցածր մակարդակը,

- միջազգային չափանիշներին համապատասխանող սննդամթերքի որակի երաշխավորման համակարգի բացակայությունը, սննդամթերքի իրացման, արտահանման գործընթացին օգնող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտությունը,
- արտահանվող արտադրանքը՝ բարձր գների պատճառով արտաքին շուկայում ոչ մրցունակ լինելը:

Վերջին տարիներին Հայաստանի արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների ծավալների վերաբերյալ ավելի պարզ պատկերացում ունենալու համար ներկայացնենք աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3

ՀՀ արտաքին ապրանքաշրջանառության ընդհանուր և գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների ծավալներն ըստ 2010-2012 թթ.*

(մլն ԱՄՆ դոլար)

	Արտահանում			Ներմուծում		
	2010թ.	2011թ.	2012թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Ընդամենը	1041.1	1334.3	1428.1	3748.9	4145.3	4266.4
Այդ թվում՝ կենդանի և կենդանական ծագման	23.6	30.1	33.1	101.4	133.3	136.3
Բուսական ծագման արտադրանք	15.8	23.2	34.7	214.1	242.1	259.8
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր	0.029	0.025	0.056	49.2	57.9	59.6
Պատրաստի սննդի արտադրանք	131.1	183.8	255.3	308.8	347.9	356.9
Ընդամենը գյուղատնտեսական ծագման արտադրանք	170.5	237.1	323.8	673.5	782.2	812.6

* ՀՀ ԱՎԾ տվյալներ:

Ըստ աղյուսակի տվյալների՝ վերջին երեք տարիներին ընդհանուր ծավալում գյուղատնտեսական ծագման արտադրատեսակների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմել է 16.4, 17.8, 22.6%, իսկ ներմուծման ընդհանուր ծավալում՝ համապատասխանաբար՝ 18,0, 18.9, 19.1%:

Այսպիսով, գյուղատնտեսական մթերքներ վերամշակող արդյունաբերության կայուն զարգացման նպատակով բոլոր խոչընդոտներից խուսափելու համար, անհրաժեշտ է ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ և որակի ու անվտանգության կառավարման համակարգեր, որպեսզի ապահովվի որակական և անվտանգության կայուն ցուցանիշներ ունեցող խիստ մրցունակ ապրանքների արտադրություն՝ խթանելով երկրից արտահանման հնարավորությունները:

ÈÆÈÆÀ ê²ð¶ēÚ²Û, i. . . Æ.

ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý
iÝi»è³·ÇiáðÃÚ³Ý ÇÝēiÇiáðiÇ
·Çi³βÈ³iáÕ

²ðØ²Û ø²ðà´Ú²Û, i. . . Æ.

ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÚ³ÝÇ ³Ýí³Ý
iÝi»è³·ÇiáðÃÚ³Ý ÇÝēiÇiáðiÇ
İñiē»ñ ·Çi³βÈ³iáÕ

ÐÐ ²ðí²øÆÛ ²è²iðÆð ²İÛ²ÈiàÕ ú¶iðiÛ²ðÀ
Ø²øè²ÚÆÛ ØÆàðÃÚ²ÛÛ ²Û,²Ø²İð²Èàð ã²ð¶²ÚàðØ

ԽՍՅՄ փլուզումից անմիջապես հետո մի շարք երկրների ղեկավարներ ձեռնամուխ եղան հետխորհրդային տարածքի փլատակների վրա մի նոր տնտեսական և քաղաքական համակարգ վեր խոյացնելու, որը կգար փոխարինելու «խորհրդային կարգերին», բայց իր բնույթով ու բովանդակությամբ ավելի համահունչ կլիներ համաշխարհային տնտեսությանը և նրանում արձանագրվող զարգացումներին: Սակայն նոր համակարգի ստեղծումը գնաց բավականին դժվարին ու ժամանակի տեսանկյունից բավականին երկար ճանապարհով, ինչը պայմանավորված էր մի շարք նպաստող և արգելակող գործոններով:

Նպաստող գործոններից ամենախոսունը բազմամյա համատեղ կեցությունն ու գործունեությունն էր, որը ԽՍՅՄ երկրների տնտեսությունների տարբեր ճյուղերի միջև ստեղծել էր տնտեսական և տեխնոլոգիական բավականին մեծ փոխկապվածություն, ինչպես նաև լուրջ հիմքեր հետագա համագործակցություն ապահովելու տեսանկյունից:

Արգելակող գործոնների թվում ամենաազդեցիկներից կարելի է համարել այն, որ 70-ամյա տնտեսական և քաղաքական կախվածությունից հետո ձեռք բերված անկախությունը հետխորհրդային երկրներին ոգևորեց ամրապնդել իրենց ինքնավարությունը և պետականությունը: Եվ, քանի որ ցանկացած ինտեգրացիա, նույնիսկ ամենաչափավորը, ենթադրում է որոշակի իրավունքների փոխանցում ինտեգրացիոն միավորման միասնական օրգանին, որն իր հերթին ենթադրում է որոշակի ոլորտներում սուվերենիտետի ինքնական սահմանափակում, ուստի ավելի մեծ ջանքեր էր և է պահանջում հետխորհրդային երկրներից՝ շատ հարցերում ընդհանուր հայտարարի գալու համար:

Դրան զուգահեռ գնալով մեծանում էր ԱՊՀ երկրների ֆինանսական և քաղաքական կախվածությունն Արևմուտքից (դա ավելի նկատելի է դարձել նոր հազարամյակում), ինչը նույնպես իր հերթին չէր կարող խոչընդոտ չհանդիսանալ հետխորհրդային տարածքում ընթացող ինտեգրացիոն գործընթացների համար:

Այս ոչ միանշանակ, իրար հակադրող գործոնները նպաստեցին այն բանին, որ հետխորհրդային տարածքի վրա սկսեցին ձևավորվել տնտեսական, քաղաքական և ռազմական բովանդակությամբ նոր ինտեգրացիոն խմբավորումներ, որոնք հիմքերի ամրության տեսանկյունից նույնպես կրում են ոչ միանշանակ բնույթ:

Հետխորհրդային տարածքում ստեղծվել են այնպիսի ինտեգրացիոն միավորումներ, ինչպիսիք են՝ Եվրասիական տնտեսական ընկերակցությունը, Ռուսաստանի և Բելառուսի դաշնային պետությունը, ԳՈՒԱՄ-ը (1995թ. Վրաստանը, Ուկրաինան, Ադրբեջանը և Մոլդովան հիմնադրեցին այս ոչ ֆորմալ միջպետական միավորումը՝ որպես հակակշիռ Եվրասիական տնտեսական ընկերակցությանը), «Կենտրոնական-ասիական ընկերակցություն» կազմակերպությունը, Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ, որը հիմնադրվել է 2002թ. Հայաստանի, Ռուսաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Դրոզդուստանի և Տաջիկստանի մասնակցությամբ):

Վերը նշված ինտեգրացիոն միավորումներից ամենանշանակալին Եվրասիական տնտեսական ընկերակցությունն է, որի ստեղծման հիմքերը դրվել են շուրջ 20 տարի առաջ: Դեռևս 1995թ. Ռուսաս-

տանը, Ղազախստանը, Բելառուսը, իսկ ավելի ուշ Ղրղզստանը, Ուզբեկստանը և Տաջիկստանը ստորագրեցին համաձայնագիր Մաքսային միություն ստեղծելու վերաբերյալ, որը հետագայում վերածվեց Եվրասիական տնտեսական ընկերակցության:

Մաքսային միության (ՄՄ) ստեղծումը ժամանակակից տեսքով սկսվեց 2006թ., երբ Բելառուսի, Ղազախստանի և Ռուսաստանի ղեկավարները պայմանավորվեցին ստեղծել լիամասշտաբ և լիարժեք Մաքսային միություն: Այս պայմանավորվածությունն էլ 2007թ. հիմք դարձավ, որպեսզի նույն առաջնորդները պայմանագիր ստորագրեն միասնական մաքսային տարածք ստեղծելու վերաբերյալ և բոլոր մասնակից երկրների համապատասխան մարմինները լուրջ աշխատանքներ իրականացնեն համապատասխան իրավական բազա ստեղծելու ուղղությամբ: 2010թ. հունիսի 1-ից ուժի մեջ մտան Մաքսային միության մաքսային օրենսդրությունը և այլ իրավական ակտեր, ինչն էլ այսօր ապահովում է Մաքսային միության անդամ երեք երկրների մաքսային համակարգերի ներդաշնակ գործունեությունը¹:

2011թ. ստորագրվեց պայմանագիր Եվրասիական տնտեսական հանձնաժողով ստեղծելու համար, ինչպես նաև Բարձրագույն Եվրասիական խորհրդի կողմից որոշվեց ուժի մեջ մտցնել բոլոր այն միջազգային պայմանագրերը, որոնք անհրաժեշտ էին միասնական տնտեսական տարածք ձևավորելու համար: 2012թ. սկսեցին գործել ինչպես Եվրասիական տնտեսական հանձնաժողովը, այնպես էլ միասնական տնտեսական տարածքը: 2015թ. հունվարի 1-ից ակնկալվում է ստեղծել Եվրասիական տնտեսական միություն:

Մաքսային միության, ինչպես նաև Եվրասիական տնտեսական միության ստեղծման ժամանակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մինչև 2007թ. այս կառույցների ստեղծմանն ուղղված աշխատանքները ժամանակային առումով եղել են բավականին մեծ խզումներով, ինչը նպաստել է հետխորհրդային երկրների միջև առևտրատնտեսական կապերի համեմատական թուլացմանն ու այլ երկրների հետ հարաբերությունների ուժեղացմանը: Բացի հետխորհրդային երկրներից այլ երկրների հետ կապերի հաստատումը ինչ-որ առումներով նպաստել է այդ երկրներում առկա ներուժի ավելի արդյունավետ օգտագործմանը: Դա ավելի վառ կերպով նկատելի է դառնում աղյուսակ 1-ի տվյալների ուսումնասիրության արդյունքում:

Աղյուսակ 1

Մաքսային միության անդամ երկրների և Հայաստանի ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման ծավալներն ըստ ընթացիկ գների (մլրդ. ԱՄՆ դոլար)²

		2001	2004	2007	2010	2012
Հայաստան	ՀՆԱ	2,12	3,58	9,21	9,26	9,95
	Արտահանում	0,54	1,06	1,77	1,93	2,49
	Ներմուծում	0,98	1,62	3,6	4,2	4,9
Ռուսաստան	ՀՆԱ	306,6	591	1300	1525	2015
	Արտահանում	113,12	203,41	392,04	445,51	593,11
	Ներմուծում	74,25	131	280	322,37	446,09
Ղազախստան	ՀՆԱ	22,15	43,15	104,8	148,1	203,5
	Արտահանում	10,17	22,65	51,84	65,08	96,88
	Ներմուծում	10,4	18,95	44,82	43,25	61,73
Բելառուս	ՀՆԱ	12,35	23,14	45,28	55,22	63,27
	Արտահանում	8,25	15,71	27,59	29,97	51,65
	Ներմուծում	8,68	17,18	30,43	37,49	48,78

Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ 1990-ական թվականները հետխորհրդային բոլոր երկրների համար եղել են անկայունության և շուկայական տնտեսությանն անցման ու այդ

¹ Могилевский Р., Таможенный союз Беларуси, Казахстан и России: создание и отклонение торговли в Центральной Азии в 2010-2011гг., Доклад, №12, 2013 г.
² www.worldbank.org

համակարգի կայացմանն անհրաժեշտ ինստիտուտների ու ենթակառուցվածքների ձևավորման տարիներ, ապա 2000-ական թթ. այդ առումով եղել են ավելի կայուն, և, հետևաբար, այդ ժամանակաշրջանի ցուցանիշներն ավելի լավ են արտահայտում վերոնշյալ ներուժի դրսևորումը:

Այսպես, եթե դիտարկենք հետխորհրդային 4 երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի (վերջին 3 երկրներն հանդիսանում են Մաքսային միության անդամ)՝ աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշների դինամիկան, ապա կարելի է տեսնել, որ շուրջ 11-12 տարիների ընթացքում այս ցուցանիշներն աճել են բազմակի անգամ:

Արտաքին աշխարհի հետ կապերի սերտացման արդյունքում Հայաստանին հաջողվել է գրանցել ՀՆԱ-ի, արտահանման և ներմուծման ծավալների ավելի քան քառակի աճ: Ավելի տպավորիչ են արդյունքները մյուս երկրների դեպքում: Ռուսաստանի ՀՆԱ-ն 2001-2012թթ. աճել է մոտ 6,6 անգամ, արտահանումը՝ 5,2 անգամ, ներմուծումը՝ 6 անգամ: Ղազախստանի և Բելառուսի դեպքում ՀՆԱ-ի աճը կազմել է 9,2 և 5,1 անգամ, արտահանման դեպքում՝ 9,5 և 6,3 անգամ, իսկ ներմուծման դեպքում՝ 5,9 և 5,6 անգամ:

Այս ցուցանիշների նման աճը հնարավորություն է տվել, որպեսզի այս երկրների ընդհանուր ՀՆԱ-ի մասնաբաժինը համաշխարհային ՀՆԱ-ում 1%-ից աճի մինչև 3,2%, արտահանման մեջ՝ 1,7%-ից 3,3%, իսկ ներմուծման մեջ՝ 1,2%-ից 2,5%:

Ինչպես կարելի է տեսնել վերը բերված թվային տվյալներից, ամենահամեստ արդյունքներն արձանագրվել են Հայաստանի պարագայում, որը 2013թ. ցանկություն հայտնեց անդամակցել Մաքսային միությանը: Ի դեպ նման արդյունքներ ապահովվել են այն պարագայում, երբ Հայաստանն ունեցել է մեծ հնարավորություններ կապ հաստատելու ոչ միայն հետխորհրդային երկրների հետ, այլ նաև մնացյալ աշխարհի հետ: Այդ կապերի շնորհիվ հնարավոր է դարձել արդեն 2012թ. մնացյալ աշխարհի մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ դարձնել ավելի քան 75%, իսկ ներմուծման մեջ՝ մոտ 70%: Նույն տարեթվի դրությամբ ԱՊՀ երկրների մասնաբաժինը ՀՀ արտահանման մեջ կազմել է 24,4%, իսկ ներմուծման մեջ 31,1%, իսկ Մաքսային միության անդամ երկրների մասնաբաժինն արտահանման և ներմուծման մեջ համապատասխանաբար՝ 21% և 25,8%: Ի դեպ պետք է նշել, որ այդ 21% և 25,8%-ից 20,2% և 24,8% բաժին են ընկնում միայն Ռուսաստանի Դաշնությանը¹:

Ինչպես հայտնի է, ցանկացած ինտեգրացիոն միավորման մեջ ներգրավումը ենթադրում է երրորդ երկրների հետ ավելի սահմանափակ առևտրատնտեսական հարաբերություններ: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ենթադրվում է, որ ՀՀ-ի՝ Մաքսային միության մեջ ներգրավումը կարող է հանգեցնել 3-րդ երկրների հետ առևտրի ծավալների զգալի նվազման (եթե իհարկե Հայաստանին այդ միավորման մեջ յուրահատուկ կարգավիճակ չտրվի), այդ թվում նաև ԱՊՀ այն երկրների, որոնք ընդգրկված չեն այդ միավորման մեջ: Այս պարագայում առաջանում է շատ տրամաբանական հարց՝ ինչի՞ հաշվին ՀՀ-ն կարող է փոխհատուցել այս կորուստները: Այս հարցին որոշ չափով կարելի է պատասխանել՝ բացահայտելով որոշ ապրանքախմբերի դեպքում արտահանման և ներմուծման ոլորտում ՀՀ-ի համեմատական առավելությունները Մաքսային միության անդամ-երկրների հետ:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, ՄՄ անդամ-երկրներից Հայաստանի հիմնական առևտրային գործընկերն է ՌԴ-ն, որին բաժին է ընկնում ՀՀ-ից դեպի ՄՄ անդամ-երկրներ ընդհանուր արտահանման և ներմուծման 80%-ից ավելին. 2013թ. Հայաստանից դեպի ՄՄ անդամ-երկրների արտահանման (ներմուծման) միայն «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք» ապրանքախմբի մասով է, որ ՌԴ տեսակարար կշիռը կազմել է մոտ 80%, իսկ մնացած ապրանքախմբերի արտահանման (ներմուծման) մեջ ՌԴ տեսակարար կշիռը կազմել է դեպի ՄՄ անդամ-երկրներ տվյալ ապրանքախմբի արտահանման (ներմուծման) 85%-ից ավելին:

¹ Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա՝ www.armstat.am

ՀՀ արտահանումն ու ներմուծումը ՄՄ անդամ երկրների հետ, հազար ԱՄՆ դոլար¹

Ապրանքախումբ՝ ըստ SITC 4 դասակարգման	Երկրներ	Արտահանում		Ներմուծում	
		2007թ.	2013թ.	2007թ.	2013թ.
Սննդամթերք և կենդանի կենդանիներ	Բելառուս	51,1	398,0	2106,7	3631,2
	Ղազախստան	13,2	346,7	10377,0	157,5
	ՌԴ	8066,0	85851,8	119846,7	193766,9
Խմիչք և ծխախոտ	Բելառուս	906,6	6781,7	3,8	226,2
	Ղազախստան	199,1	2804,5	609,2	0,0
	ՌԴ	33396,2	171173,5	34126,2	28830,7
Չմշակված նյութեր, սննդի համար ոչ պիտանի նյութեր՝ բացառությամբ վառելիքի	Բելառուս	66,7	205,1	0,0	129,4
	Ղազախստան	512,3	1,0	9,8	0,0
	ՌԴ	8799,9	4262,8	5521,9	7810,7
Հանքային վառելանյութեր, քսուքներ և հարակից նյութեր	Բելառուս	0,0	0,0	0,0	2804,6
	Ղազախստան	0,0	0,0	225979,3	14,5
	ՌԴ	0,0	0,0	38124,2	602169,6
Կենդանական և բուսական ծագման յուղեր և ճարպեր, սննդային ճարպեր և մեղրամոմ	Բելառուս	0,0	0,0	0,4	14,7
	Ղազախստան	0,0	0,0	0,0	0,0
	ՌԴ	0,0	0,0	10216,3	21835,1
Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր	Բելառուս	298,6	228,1	1180,6	2643,4
	Ղազախստան	0,0	124,4	0,1	0,2
	ՌԴ	842,1	3878,9	21799,1	36901,5
Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի	Բելառուս	0,4	172,6	5346,0	14174,5
	Ղազախստան	87,9	1522,3	3315,2	484,8
	ՌԴ	24833,4	44831,4	132934,0	110939,7
Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ	Բելառուս	49,5	21,0	13413,0	14689,0
	Ղազախստան	1531,8	605,0	303,3	57,7
	ՌԴ	8345,9	8090,1	101898,2	87319,8
Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք	Բելառուս	113,1	429,1	1497,4	2530,9
	Ղազախստան	1360,5	1527,8	2,3	15,2
	ՌԴ	5370,1	8382,2	14310,9	9587,1

Այդուհանդերձ, ՀՀ-ից Բելառուս արտահանվող հիմնական ապրանքախմբերն են՝ «Խմիչք և ծխախոտ», «Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր», «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք», իսկ Ղազախստան արտահանվող ապրանքախմբերում հիմնական տեսակարար կշիռ ունեն «Խմիչք և ծխախոտ», «Տարբեր տեսակի պատրաստի արտադրանք», «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի», «Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ», «Սննդամթերք և կենդանի կենդանիներ»: Անդրադառնալով ՀՀ ներմուծմանը՝ նշենք, որ 2013թ. Բելառուսից ներմուծվող հիմնական ապրանքախմբերն են «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի», «Մեքենաներ և տրանսպորտային միջոցներ», «Սննդամթերք և կենդանի կենդանիներ» և «Քիմիական արտադրության ապրանքներ և հարակից իրեր», իսկ Ղազախստանից ներմուծումը գրեթե բացակայում է, չնչին ծավալներով ներմուծվում են «Արդյունաբերական ապրանքներ՝ դասակարգված ըստ հիմնական նյութերի» և «Սննդամթերք և կենդանի կենդանիներ»: Բնական է, որ ՄՄ անդամակցելիս ՀՀ-ն չի կարող ավելացնել բոլոր ապրանքների արտահանումը, այլ միայն՝ այն

¹ <https://wits.worldbank.org>

ապրանքների, որոնց արտահանման գծով ունի համեմատական առավելություն: Ուստի, անհրաժեշտ է պարզել, թե որ ապրանքների արտահանման գծով ՀՀ-ն ունի համեմատական առավելություն: Փորձելով պատասխանել վերոնշյալ հարցին՝ մենք կբացահայտենք ՀՀ-ում արտահանման տեսանկյունից համեմատական առավելություններ ունեցող ճյուղերն ու ապրանքատեսակները՝ օգտագործելով Բելլա Բալասայի կողմից մշակված մեթոդաբանությունը և հաշվարկելով բացահայտված համեմատական առավելությունների (ԲՀԱ) ինդեքսը¹ Հայաստանի համար: Ընդ որում՝ երկիրն ունի i-րդ ապրանքի արտահանման գծով բացահայտ համեմատական առավելություն, եթե $ԲՀԱ_i > 1$: Հենց այս մեթոդաբանությամբ էլ կհաշվարկենք արտահանման տեսանկյունից Հայաստանի ԲՀԱ ինդեքսը 2007-2013թթ. համար՝ ըստ ապրանքային խմբերի HS2002 դասակարգման (Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ԲՀԱ ինդեքսը²

	2007	2013
Կենդանի կենդանիներ	4,55	2,1
Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ	0,87	4,06
Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր	0,01	1,79
Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ	0,18	1,87
Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ	1,98	2,16
Սուրճ, թեյ, մատե, այլ համեմունքներ	6,08	1,5
Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք	0,62	1,05
Բանջարեղենի, պտուղների, ընկույզների և բույսերի մասերի վերամշակումից մթերք	3,11	3,31
Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ	17,98	18,93
Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	4,51	20,25
Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ	5,68	4,36
Հանքաքար, խարամ և մոխիր	19,53	13,25
Քիմիական գործվածք	1,51	0,02
Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով	0,65	3,81
Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից	1,69	1,79
Ապակի և դրանից իրեր	3,46	2,77
Բնական կամ արհեստական մարգարիտ, թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ	5,79	4,6
Սև մետաղներ	6,09	2,7
Պղինձ և դրանից իրեր	11,32	5,83
Ալյումին և դրանից իրեր	9,8	6,56
Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	16,29	12,76
Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր	5,38	0,46
Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր	0,05	1,05
Ժամացույցներ և դրանց մասեր	1,92	10,14

Իրականացված հաշվարկների հիման վրա՝ HS 2002 դասակարգմամբ 97 ապրանքախմբերից առանձնացվել են այն ապրանքախմբերը, որոնց արտահանման գծով ՀՀ-ն ունի

¹ $ԲՀԱ_i = (x_i : X) / (x_i^w : X^w)$, որտեղ՝ x_i -ն տվյալ երկրում i-րդ ապրանքի արտահանումն է, X-ը՝ տվյալ երկրի ընդհանուր արտահանումը, x_i^w -ն՝ i-րդ ապրանքի համաշխարհային արտահանումը, իսկ X^w -ն ընդհանուր համաշխարհային արտահանումը: Balassa, B. (1965), Trade Liberalisation and Revealed Comparative Advantage, The Manchester School, V 33, May 1965, pp. 99-123.

² Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից՝ ըստ Համաշխարհային բանկի վիճակագրական տվյալների՝ <https://wits.worldbank.org>

բացահայտված համեմատական առավելություն 2007թ. կամ 2013թ.: Արդյունքում ստացվել է, որ դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ-ն նշված 97-ից բացահայտված համեմատական առավելություն է ունեցել 24 ապրանքախմբերի արտահանման մեջ, որոնք էլ ամփոփված են Աղյուսակ 2-ում: Համաձայն աղյուսակի տվյալների՝ 2007թ. ՀՀ-ն բացահայտված համեմատական առավելություն ունեցել է 18 ապրանքախմբերի արտահանման գծով (աղյուսակում՝ այդ ապրանքախմբերի համար ԲՀԱ ինդեքսը >1), որոնցից 2-ի գծով՝ «Քիմիական գործվածք» և «Լոկոմոտիվներ, տրամվայներ և դրանց մասեր», 2013թ. կորցրել է իր բացահայտված համեմատական առավելությունը, փոխարենը՝ 2013թ. ՀՀ արտահանման մեջ բացահայտված համեմատական առավելություն ունեցող ապրանքախմբերը 2007թ. համեմատ ավելացել են 6-ով՝ «Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Կենդանի ծառեր, թփեր և այլ բույսեր», «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ», «Մսից, ձկներից և այլ ծովային անողնաշարավորներից արտադրանք», «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր»:

Այսպիսով, 2013թ. ՀՀ-ն արտահանման մեջ բացահայտված համեմատական առավելություն ունի 22 ապրանքախմբերի գծով, որոնցից 4-ը՝ «Հանքաքար, խարամ, մոխիր», «Սև մետաղներ», «Պղինձ և դրանից իրեր», «Ալյումին և դրանից իրեր», հանդիսանում են հանքահումքային ապրանքներ, որոնց արտահանումը մեր կարծիքով չարժե խրախուսել¹: Ուստի մնացած 18 ապրանքախմբերը հենց այն ապրանքախմբերն են, որոնց արտահանման ծավալներն ունեն աճի իրական պոտենցիալ, ինչը կարող է լավագույնս դրսևորվել ՄՍ անդամ-երկրների շուկաներ առավել ազատական մուտքի արդյունքում: Սակայն՝ արդյո՞ք նշված 18 ապրանքախմբերը հետաքրքրություն են ներկայացնում ՄՍ անդամ-երկրների համար ներմուծման տեսանկյունից: Այդ նպատակով ուսումնասիրել ենք ՄՍ անդամ-երկրների ներմուծման կառուցվածքում նշված ապրանքախմբերի ունեցած տեսակարար կշիռները: Մասնավորապես՝ «Ձուկ և խեցգետնավորներ և այլ ծովային անողնաշարավորներ», «Ոգելից և ոչ ոգելից ըմպելիքներ և քացախ» ապրանքախմբերը զգալի ծավալ ունեն Բելառուսի և Ռուսաստանի ներմուծման մեջ, «Տրիկոտաժե հագուստ և հագուստի պարագաներ, բացի մեքենայական կամ ձեռքի գործվածքով», «Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր» ապրանքախմբերը՝ Ղազախստանի և Ռուսաստանի ներմուծման մեջ, «Աղ, ծծումբ, հող և քար, սվաղման նյութեր, կրաքար և ցեմենտ»-ը՝ Բելառուսի, «Իրեր քարից, գիպսից, ցեմենտից և նմանատիպ նյութերից» և «Ապակի և դրանից իրեր» ապրանքախմբերը՝ Ղազախստանի, «Բանջարեղեն և այլ կերային արմատապտուղներ և ելապտուղներ»-ը՝ Ռուսաստանի, իսկ «Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային կամ բոստանային մշակաբույսերի կեղևներ և կլեպներ» ապրանքախումբը՝ 3 երկրների ներմուծման մեջ: Այսպիսով, նշված 18 ապրանքախմբերից 9-ը կազմում են ՄՍ անդամ-երկրների ներմուծման զգալի մասը, իսկ մյուս 9-ը ներմուծվում են ավելի քիչ ծավալով: Փաստորեն, ստացվում է, որ այն ապրանքները, որոնց արտահանման մասով Հայաստանն ունի բացահայտված համեմատական առավելություն, զգալի պահանջարկ ունեն ՄՍ անդամ-երկրներում: Ուստի, սա կարող է նոր հնարավորություն լինել ՀՀ արտահանման աճի տեսանկյունից:

¹ Ներկայումս նույնիսկ չափազանց մեծ ռեսուրսային հնարավորություններ ունեցող երկրները հրաժարվում են հումքի ուղղակի արտահանումից: Իսկ առավել ևս Հայաստանի համար հումքային ապրանքների արտահանման ուղղությամբ մասնագիտացումը չի կարող նպաստել Հայաստանի տնտեսության զարգացմանը:

ÆðÆÛ² ²²ð²Û²Û²

ÐÐ ¶²² Ø. øáÃ³ÝÛ³ÝÇ³ Ýí³Ý
iÝi»è³·ÇiáðÃÛ³Ý ÇÝëiÇiáðiÇ
·Ç³βË³iáÕ

¼²Û¶¹¼áððÆ äÕÛÒ²ØàÈÆ', °Û²ÛÆÛ ÍàØ'ÆÛ²iÆ ÍàÕØÆð
âÍàð¼iáÕ ú¶²²²ð ²²ðððÆ ðàÆÆ²ðØ²Û Ð²ðððÀ

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի ընդերքում պարունակվող բազմաթիվ օգտակար տարրերից պաշարների հաշվարկում գնահատված և հաշվառված են 8-ը՝ պղինձը, մոլիբդենը, ոսկին, արծաթը, ռենիումը, բիսմութը, սելենը և տելուրը: Սակայն, մի քանի հետազոտողների՝ Գ.Փիջյանի¹, Պ.Ալոյանի² և ՀՀ ԳԱԱ երկրաբանության ինստիտուտի քիմիական լաբորատորիայի կողմից Քաջարանի հանքավայրի հանքաքարերում հայտնաբերված են մեկ տասնյակից ավելի օգտակար տարրեր (երկաթ, տիտան, վանադիում, սկանդիում, նիկել, կոբալտ, կապար, ցինկ, մագնեզիում, մկնդեղ, պլատին, պալադիում), որոնցից մի քանիսի (նիկել, կոբալտ, կապար, ցինկ, մկնդեղ, պլատին, պալադիում) 60-70, եզակի դեպքերում, 80%-ն անցնում է խտանյութերի մեջ, սակայն խտանյութերի վաճառքի պարագայում դրանք չեն գնահատվում և նվիրվում են գնորդներին, իսկ մյուս մասը՝ երկաթը, վանադիումը, սկանդիումը, ինչպես նաև պիրիտ հանքանյութն իր երկաթ և ծծումբ բաղադրիչներով հանդերձ, չեն կորզվում բոլորովին (բացառություն է կազմում պիրիտ հանքանյութը, որի մոտ 6%-ն, անկախ հանքահարստացնողների կամքից, անցնում է պղնձի և մոլիբդենի խտանյութեր) և թափվում են պոչամբարներ՝ թունավորելով ու ապականելով շրջակա միջավայրը:

Պ.Ալոյանի կողմից Քաջարանի 1958,7 մլն տ հանքաքարերում հայտնաբերված վանադիումի ռեսուրսները կազմել են 630 հազ.տ, որից ըստ Ալոյանի, դրա կորզելի քանակը կազմում է 21 հազ.տ (ինչն⁰ւ այդքան քիչ, Ալոյանը չի բացատրում. մեր կարծիքով այդ քանակությունն անմիջականորեն կապված է երկաթի մագնետիտ հանքանյութի հետ, որի կորզման պարագայում էլ զուգահեռաբար կորզվում է նաև վանադիում մետաղը), սկանդիում հողատարրի ռեսուրսները կազմել են 10,5 հազ.տ, որոնցից կորզելի քանակը գնահատվում է 30տ (թե ինչն⁰ւ այդքան քիչ, պարոն Ալոյանը դարձյալ չի բացատրում. մեր կարծիքով դարձյալ մագնետիտ հանքանյութն է դրա «մեղավորը»), երկաթ մետաղի ռեսուրսները՝ կապված մագնետիտ հանքանյութի հետ, Պ.Ալոյանը գնահատել է 14,0 մլն տ (մագնետիտ հանքանյութի պարունակությունը կազմել է 1,0%):

Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարները 2006 թվականին վերագնահատվել և վերահաստատվել են, որոնցից հաշվեկշռային գնահատված պաշարների քանակը հանքաքարերի առումով կազմել են 2.230.763,6 հազ.տ, իսկ արտահաշվեկշռային գնահատվածներինը՝ 3.071.051 հազ.տ:

Քաջարանի հանքավայրի պաշարների վերջին (2006թ.) հաստատումից հետո հանքավայրը շահագործվել է և Ջանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից այդ ընթացքում (մինչև 01.01.2013թ.) արդյունահանվել և մշակվել է 56 մլն 363,6 հազ.տ հանքաքար, որի արդյունքով հանքավայրում մնացած հաշվեկշռային պաշարների քանակը 01.01.2013թ. դրությամբ կազմում է 2174,4 մլն տ:

Հանքավայրը հետազոտող երկրաբանների և Պ.Ալոյանի տվյալներով մեր կողմից կատարված վերահաշվարկի արդյունքով Քաջարանի հանքավայրի հաշվեկշռային պաշարներում վանադիումի, սկանդիումի, մագնետիտ և պիրիտ հանքանյութերի ու դրանց հետ կապված

¹ Пиджян Г.О. Медно-молибденовая формация руд Армянской ССР. Ереван, Изд. АН Арм.ССР, 1975, 310с.
² Алоян П.Г., Геология горнорудных регионов Армении (повышение эффективности освоения рудных месторождений), Ереван, Геоид, 2001, 244 с.

օգտակար տարրերի՝ երկաթի, ծծմբի քանակները կազմում են. վանադիումինը՝ 695800տ, սկանդիումինը՝ 11654,8տ, մագնետիտ հանքանյութինը՝ 21,744 մլն տ, մագնետիտ հանքանյութի հետ կապված երկաթինը՝ 15,66 մլն տ, պիրիտ հանքանյութի քանակը՝ 20,8 մլն տ, պիրիտ հանքանյութի հետ կապված երկաթինը՝ 9,7 մլն տ, ծծմբինը՝ 11,1 մլն տ, երկաթ մետաղի ընդհանուր քանակը կազմում է 25,36 մլն տ:

Ռուս տնտեսագետ Ս.ժուկովի կարծիքով, «Ծառայությունների ոլորտը, որի կառուցվածքային տարրերն ուղղված են տարբեր տեսակի նյութական, հոգևոր և այլ պահանջմունքների բավարարմանը, կարևոր դեր է խաղում սպառողական շուկայում հավասարակշռության պահպանման, աշխատուժի վերարտադրության և աշխատողների ազատ ժամանակի ռացիոնալ օգտագործման բնագավառներում: Ծառայություններին են վերաբերվում աշխատանքի բոլոր այն տեսակները, որոնք անմիջականորեն զբաղված չեն նորմաիրային ձևերի և բնության ուժերի փոփոխությամբ, ստեղծում են հատուկ տեսակի սպառողական արժեք, որն օգտագործվում է տնտեսության տարբեր ճյուղերում և իրացվում արտադրական ու ոչ արտադրական սպառողների կողմից»²:

Այսպիսով, ծառայությունները հանդես են գալիս որպես աշխատանքային կոնկրետ գործունեության տեսակ կամ տնտեսական հարաբերությունների ձև, որոնց արդյունքում ստեղծվում է յուրահատուկ սպառողական արժեք:

Ընդհանուր առմամբ, եթե ի մի բերենք տարբեր հեղինակների մոտեցումները, կարելի է հանգել այն հետևության, որ ծառայությունները նյութական արտադրությունից տարբերվում են հետևյալ հիմնական հատկանիշներով.

- Ծառայություններն ընդհանրացվում են իրենց տեսակների ծագման և պատմական զարգացման բնույթով, որոնք սկզբնական շրջանում անմիջականորեն ներգրավված են եղել արտադրության ոլորտում, իսկ հետագայում (աշխատանքի հասարակական բաժանման խորացման արդյունքում) առանձնացել են տնտեսության ինքնուրույն ճյուղերի և ենթաճյուղերի տեսքով: Ներկայումս այդ գործընթացը շարունակվում է, որի օրինակ կարող է ծառայել տեղեկատվական-հաղորդակցական ոլորտի ձևավորումը:
- Ծառայությունների և նյութական բարիքների արտադրությունները միմյանցից տարբերվում են ծառայությունների վերջնական սպառմանն ավելի մոտ գտնվելու հատկանիշով: Ավելին, ծառայությունների շատ տեսակների մատուցումն ու սպառումը ժամանակի և տարածության տեսանկյունից համընկնում են: Ծառայության օգտակարությունը սպառողի կողմից գնահատվում է մատուցելուց հետո, քանի որ սպառողը նախօրոք չի կարող իմանալ ծառայության սպառողական հատկությունների մասին: Սպառողը ծառայության ոլորտի աշխատողների աշխատանքը կարող է գնահատել միայն այլ սպառողների կարծիքի և գովազդի հիման վրա, որը կարող է նաև ճիշտ չընկալվել: Մի շարք ծառայություններ մարմնավորվում են նյութական օբյեկտներում և իրացվում են որպես ապրանքներ (օրինակ տեսաֆիլմերը, նկարները և այլն): Բայց այս դեպքում ևս ծառայության օգտակարությունը որոշվում է հաղորդվող տեղեկատվության որակով, իսկ դրա նյութական հիմքը՝ տեղեկատվության կրողը, ուղեկցող և օժանդակող դեր է խաղում:

¹ Նույն տեղում:

² Жуков С.В. “Развивающиеся страны: сфера услуг и экономический рост”, стр. 5.

- Ծառայությունների «շոշափելի չլինելու» արդյունքում դժվարանում է դրանց պահպանումն ու տեղափոխումը, իսկ ընդհանուր առմամբ՝ շուկայի կենտրոնացումը (օրինակ՝ թատրոնի չզբաղեցված տեղերից ստացվելիք եկամուտն անվերադարձ կորչում է), իսկ ծառայության պահպանման անհնարինությունը մեծացնում է այն մատուցողի ռիսկի աստիճանը: Ծառայությունների ոլորտում, նյութական արտադրության համեմատ, ավելի շատ պետք է հաշվի առնվի ժամանակի գործոնը (առաջարկի սեզոնային նվազեցումը, օրվա ընթացքում պահանջարկի տատանումները), որի հետ կապված ծառայությունների շուկայում առաջարկի ու պահանջարկի հավասարակշռման հատուկ միջոցառումների իրականացման անհրաժեշտություն է առաջանում (օրինակ նախնական պատվերների, դիֆերենցված գների կիրառումը, ժամանակավոր աշխատողների ներգրավումը և այլն):
- Ծառայությունը, որպես կանոն, չի բաժանվում իր արտադրողից, և ծառայությունների ոլորտն էլ իրենից ներկայացնում է ծառայություն մատուցողի և սպառողի անձնական կապերի մեծ դաշտ: Ծառայությունների նկատմամբ սպառողների պահանջների խստացման և ծառայությունների տեսականու հետզհետե ընդլայնման արդյունքում աճում է անհատական փոխհարաբերությունների (կապերի) և ծառայություն մատուցողի (արտադրողի) որակավորման դերը:
- Ծառայությունների շատ տեսակներ հանդես են գալիս մարդկային «կենդանի» գործունեության տեսքով: Մարդը մասնակցում է ոչ թե որպես տեխնիկական, այլ որպես սուբյեկտիվ գործոն, որը հաճախ բացասական ազդեցություն է թողնում և նույնիսկ տեխնիկական միջամտության արդյունքում հնարավոր չի լինում փոքրացնել այդ ազդեցությունը: Ծառայությունների ոլորտի ընդլայնման գործում զգալի դեր խաղաց նաև գիտատեխնիկական առաջընթացը (ԳՏԱ): Արտադրանքի գիտատարության մակարդակի բարձրացումը առաջին հերթին տարավ ապրանքների արժեքում ծառայությունների արժեքի, իսկ վերջին հաշվով նաև տրանսակցիոն ծախսերի տեսակարար կշռի բարձրացմանը, և երկրորդը ԳՏԱ-ի ազդեցությամբ որոշ ապրանքներ նույնիսկ դասվեցին ծառայությունների շարքում: Ըստ Ֆ.Նիկոլեյդի. «Ծառայությունների ոլորտի աճի հիմնական խթանը հանդիսանում է ԳՏԱ արագացումը և նոր տեխնոլոգիաների ներդրումը, ինչը անհրաժեշտ նախապայմաններ է ստեղծում տնտեսության մասնագիտացման հետագա խորացման և ծառայությունների ոլորտի սոցիալականացման միտման ուժեղացման համար»¹:

Ռուս տնտեսագետ Ե.Ժիլցովը գտնում է, որ բացի ԳՏԱ-ի ազդեցությամբ նյութական արտադրությունում աշխատանքի արտադրողականության և հիմնական միջոցների հատույցի աճից, ծառայությունների ոլորտի աճին նպաստում են նաև որոշ այլ գործոններ, մասնավորապես ուրբանիզացիան և բնակչության ծերացումը: Քանի որ քաղաքներում ծառայությունների սպառման մակարդակն ավելի բարձր է, ուստի ուրբանիզացիայի բարձր մակարդակն էլ իր հերթին ազդում է ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճի վրա:

Ամերիկյան տնտեսագետ Ք.Լավելոքը գտնում է, որ ծառայությունների ոլորտի աճի դինամիկան փոփոխվում է հետևյալ գործոնների ազդեցությամբ.

- պետական կարգավորման մոդելների փոփոխություն,
- ստանդարտացման մասնագիտացված ասոցիացիաների գործունեության փոփոխություն,
- սեփականաշնորհում,
- համակարգչային տեխնիկայի և տեխնոլոգիաների զարգացում,
- «ֆրանչայզինգի» զարգացում,
- վարձույթի և վարձակալական հարաբերությունների ընդլայնում,
- արտադրող կազմակերպություններում մասնավոր ծառայությունների կենտրոնի ստեղծում,
- հասարակական և ոչ եկամտաբեր կազմակերպությունների վրա ֆինանսական ճնշում,

¹ Nicolaidis P.H. The problem of regulation in traded services. The implications for reciprocal liberalization: Aussenwirtschaft-Zurich 1989, p. 32.

- ծառայությունների գործարարության միջազգայնացում (գլոբալացում):
Ջարգացող երկրներում ծառայությունների ոլորտի դինամիկայի վրա բացասաբար ազդող հիմնական գործոններն են.

- մեկ շնչին ընկնող սպառման ցածր մակարդակը,
- բնակչության գնողունակ պահանջարկի անհավասարաչափ բաշխվածությունը,
- գյուղական և քաղաքային բնակչության սպառման միջև առկա լուրջ տարբերությունները,
- ապրանքների տարբեր խմբերի նկատմամբ եղած պահանջարկի ճկունության տարբերությունները, որտեղ մի կողմից արտահայտվում են սպառողական նախասիրություններն ու հնարավորությունները, իսկ մյուս կողմից՝ գների հարաբերական դինամիկան:

Ներկայումս, զարգացած երկրներում տեղի է ունենում անցում արդյունաբերական տնտեսությունից դեպի, այսպես կոչված, «սպասարկման տնտեսություն», որը կապված է ծառայությունների ոլորտի դերի ու նշանակության բարձրացման հետ: Ըստ Նևշաթել (Շվեյցարիա) քաղաքի համալսարանի պրոֆեսոր Մ.Կոստեցկիի, ծառայություններն աստիճանաբար դառնում են տնտեսության զարգացմանը նպաստող գլխավոր ուժը: Նա սպասարկման տնտեսության ձևավորման բնորոշ գծերն է համարում¹.

- նյութական արտադրության աճի ցածր տեմպերը,
- նյութական արտադրանքի իրացման բարդացումը, սպասարկման տնտեսությունում արդյունաբերական շատ կազմակերպությունների կողմից ծառայությունների մատուցման ընդլայնումը,
- ծառայությունների շուկայում մրցակցության ուժեղացումը,
- պետական ծառայությունների ոլորտի ապաբյուրոկրատացումը, որն աստիճանաբար ենթարկվում է արդյունավետության բարձրացման պահանջներին,
- պլանային տնտեսության վերափոխումները (անցումը սպասարկման տնտեսությանը նպաստեց պլանային հիմունքներով գործող տնտեսությունների փլուզմանը),
- տնտեսության ճյուղային կառուցվածքում ծառայությունների կենտրոնական տեղը:

Ծառայությունների ոլորտի աճի ընթացքում տեղի ունեցող կազմակերպչական և սոցիալ-տնտեսական տեղաշարժերում կարևոր նշանակություն ունի արտադրության և կապիտալի կենտրոնացումը, թեև այդ գործընթացը ծառայությունների մատուցման ոլորտում սկսվեց ավելի ուշ, քան նյութական արտադրության ճյուղերում: Ծառայությունների մատուցման ոլորտում արտադրության և կապիտալի խոշորացման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծվեցին ի հաշիվ տեխնիկական, տնտեսական և սոցիալական գործոնների: Արտադրության կենտրոնացմանը խթանում էին նաև սպառողական պահանջարկում տեղի ունեցող փոփոխությունները, որոնք բավականին սուր մրցակցություն բերեցին իրացման և կապիտալի շարժի իմաստով: Միաժամանակ, ծառայություններին բնորոշ յուրահատկությունները (անտեղափոխելիությունը, ժամանակի և տարածության մեջ արտադրության և սպառման համընկնելը) առանձին տնտեսավարող սուբյեկտներին թույլ չէին տալիս զարգանալ: Հետևաբար՝ այդ պայմաններում անհրաժեշտություն է առաջանում միավորելու մի քանի ոչ արտադրական կազմակերպություններ: Միավորման բազմաթիվ ձևերից, ծառայությունների ոլորտում առավել տարածված են շղթայական համակարգերը, որոնք համակցում են մի շարք միատեսակ գործունեություն իրականացնող կազմակերպություններ, որոնց հաճախորդների հետ ունեցած գործառնությունները (տարածքային առումով) ապակենտրոնացված են, իսկ վարչական, ֆինանսական և այլ տեսակի գործունեությունները՝ կենտրոնացված: Շղթայական համակարգերի կազմակերպչական սկզբունքներում կան որոշ տարբերություններ: Այսպես, մի քանի ֆիրմաներում օպերատիվ միավորների գործունեությունը ստանդարտացված է և կարգավորվում է կենտրոնից, իսկ մյուսներում՝ թույլ է տրվում սպասարկման մեթոդների բազմազանություն: Վերջիններիս կառա-

¹ М. Костецкий, Становление “сервисной экономики” журнал: “Проблемы теории и практики управления” 1995 г., N 1, стр. 11.

վարման մարմիններն ինքնուրույն են հանդես գալիս ընդգրկուն հարցերի հետ կապված որոշումներ ընդունելիս, իսկ կազմակերպության տարածքային ապակենտրոնացումը թույլ է տալիս ծառայության մատուցումը մոտեցնել սպառողներին: Կազմակերպչական գործառույթի կենտրոնացման հաշվին կրճատվում են վարչական ծախսումները: Շղթայական համակարգերը լայն հնարավորություն ունեն վերահսկելու սպասարկման որակը:

Ծառայությունների միավորումները հանդես են գալիս նաև այլ ձևերով: Նկատելիորեն աճում են արտադրական կազմակերպությունների գործունեության սահմաններում, սպասարկման գծով մի քանի ձևերի համակցման տեսակները: Քանի որ մրցակցային սուր պայմանները ստիպում են միևնույն տեղում սպառողին մատուցել ծառայության մի քանի տեսակներ:

Ծառայությունների կենտրոնացման բնորոշ գիծը կայանում է նրանում, որ այդ գործընթացը, որպես կանոն, չի տանում փոքր և միջին ձեռնարկատիրական գործունեության լուծարմանը, այլ ուժեղացնում է արտադրության կառուցվածքի տարանջատումը (դիֆերենցումը):

Այսպիսով, ծառայությունների արտադրության ժամանակակից կառուցվածքը ներկայացվում է տարբեր չափերի և մասնագիտացման տարբեր մակարդակների արտադրական կազմակերպություններով, որոնց գոյությունը և կառուցվածքը պայմանավորված է սպառողական պահանջարկին համապատասխան գործառույթների տարանջատմամբ: Ծառայությունների ոլորտի կազմակերպչական կառուցվածքի տեղաշարժերը կապված են արտադրության աճի, աշխատանքի հասարակական բաժանման խորացման, ԳՏԱ-ի, սպառողական պահանջարկի ընդլայնման և տարանջատման, ծառայությունների մատուցման բնույթի և այլ պատճառների հետ: Ի վերջո, ծառայությունների կենտրոնացումը տեղի է ունենում գրեթե նույն այն պատճառներով, ինչ որ նյութական արտադրության կենտրոնացումը և զարգանում է մոտավորապես նույն ուղղություններով, միայն այն տարբերությամբ, որ եթե նյութական արտադրությունում քիչ են միջին չափի կազմակերպությունները, ապա ծառայությունների ոլորտում մեծ մասշտաբներով պահպանվում է մանր արտադրությունը, և լայն տարածում են գտնում այդ կազմակերպությունների շղթայական միավորումները: Վերջիններս էլ պայմանավորված կազմակերպությունների մասնագիտացման միտումն էլ իր հերթին ուղեկցվում է տարածքային առումով դրանց տարբեր տեսակների ակտիվ համախմբմամբ:

Ի՞նչ է ծառայությունը, և ինչպե՞ս է դրա դասակարգումը, և ինչպե՞ս է դրա ազդեցությունը
ՀՀ տնտեսության վրա

ՀՀ տնտեսության վրա

ՀՀ տնտեսության վրա

ՀՀ տնտեսության վրա

ՀՀ տնտեսության վրա

ՀՀ տնտեսության վրա

Ընդհանուր առմամբ «ծառայությունների ոլորտ» իր մեջ ներառում է մարդու տնտեսական գործունեության բազմաթիվ տեսակների մի համակարգ: Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունի դրա բնորոշման մի քանի տարբերակներ, որոնք, երբեմն, հակասում են մեկը մյուսին: Դա նշանակում է, որ ուսումնասիրվող երևույթը բավականին բարդ է ու բազմաբնույթ: Ծառայությունների ոլորտի ընդլայնման գործում զգալի դեր խաղաց նաև գիտատեխնիկական առաջընթացը: Արտադրանքի գիտատարության մակարդակի բարձրացումը տարավ ապրանքների արժեքում ծառայությունների մատուցման արժեքի բարձրացմանը:

ՀՀ տնտեսության վրա

ЭКОНОМИЧЕСКАЯ СУЩНОСТЬ УСЛУГ, ИХ КЛАССИФИКАЦИЯ И ВОЗДЕЙСТВУЮЩИЕ НА НИХ ФАКТОРЫ В УСЛОВИЯХ РЫНОЧНОГО ХОЗЯЙСТВА

ЭБА БАБАЯН, к.геогр.н., профессор

ведущий научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА

АРАМ ГЕВОРГЯН

экономист

Аннотация

«Сфера услуг» в целом включает в себя совокупность различных видов экономической деятельности человека. В экономической литературе существует несколько вариантов определения понятия «сфера услуг», которые иногда, противоречат друг другу, что связано со сложностью и разнохарактерностью исследуемого явления. Значительную роль в расширении сферы услуг сыграл научно-технический прогресс. Повышение уровня наукоемкости выпускаемой продукции привело к увеличению стоимости оказываемых услуг в стоимости продукции.

Ключевые слова: сфера услуг, хозяйство, рынок, привлекательность, производственный процесс, материальные блага, потребитель, работники.

THE ECONOMIC MEANING, CLASSIFICATION OF SERVICES AND FACTORS THAT AFFECT THE DEVELOPMENT OF SERVICES SECTOR IN THE MARKET ECONOMY

EBA BABAYAN, Candidate of Sciences (Geography)

Leading Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia

ARAM GEVORGYAN

Economist

Abstract

Services are types of specific economic activity or forms of relations that create definite value to consumers. One of the main directions specific to services is the fact that these types of activities, as a rule, don't cause closure of small and medium-sized enterprises, but they strengthen the differentiation of production structure. Science and technology progress has played a crucial role in increasing the share of services in GDP. The growth of production of knowledge intensive products has resulted in increase in share of services in the cost structure of goods.

Keywords: services industry, economy, market, attractiveness, production process, material goods, consumer, employees.

- Պետությունը պետք է գործի որպես իրազեկ և ակտիվ սեփականատեր և մշակի սեփականության իրավունքի իրացման հստակ և շարունակական քաղաքականություն:
- Պետությունը և պետական ընկերությունները պետք է ճանաչեն բոլոր բաժնետերերի իրավունքները:
- Պետության քաղաքականությունը պետք է ամբողջությամբ ճանաչի պետական ընկերությունների պարտավորությունները՝ բոլոր շահագրգիռ կողմերի հանդեպ:
- Պետական ընկերությունները պետք է պահպանեն թափանցիկության անհրաժեշտ մակարդակ:
- Պետական ընկերությունների տնօրենների խորհուրդները պետք է օժտված լինեն անհրաժեշտ իշխանությամբ, լիազորություններով և օբյեկտիվությամբ՝ կառավարիչների գործունեության ռազմավարական կառավարման և վերահսկողության գործառույթի իրականացման համար:

Ինչպես հայտնի է, պետական ընկերությունները մասնավոր ընկերությունների հետ միասին հանդիսանում են կայուն արդյունաբերական զարգացման կարևորագույն գործոններ: Սեփականության այլ ձևերի տնտեսավարող սուբյեկտներից պետական ընկերությունները տարբերվում են նրանով, որ վերահսկողության տեսանկյունից բոլոր պետական ընկերությունները այս կամ այն չափով վերահսկվում են կառավարության կողմից: Պետական ընկերությունները հետապնդում են ոչ միայն առևտրային նպատակներ, այլև ոչ առևտրային՝ ազգաբնակչության զբաղվածությունը, սոցիալական ոլորտի ֆինանսավորումը, արդյունաբերության ցածր շահութաբեր և նախապես վնասաբեր (սակայն սոցիալապես կարևոր) ճյուղերում գործունեությունը և այլն:

Համաշխարհային տնտեսական պրակտիկան վկայում է, որ պետական ընկերությունները շահույթի ստացման հարցում ոչնչով չեն տարբերվում սեփականության այլ ձևեր ունեցող ընկերություններից:

Շուկայական տնտեսության պայմաններում բոլոր տնտեսավարող սուբյեկտները ձգտում են հնարավոր նվազագույն ծախսումներով ստանալ առավելագույն շահույթ և խուսափել հնարավոր վնասներից: Գոյություն ունեն տնտեսական գործունեության ոլորտներ, որտեղ կապիտալի վերադարձի ժամանակահատվածը բավականին երկար է, ներդրումների ծավալը մեծ է, սոցիալականացման մակարդակը բարձր է, և տնտեսական արդյունավետությունն ակներև չէ, ինչը ընդհանուր առմամբ կարող է բերել վնասների: Մասնավոր ընկերությունը չի ցանկանում աշխատել այսպիսի ոլորտներում, քանի որ նրա համար կարևոր և միակ չափանիշն է հանդիսանում շուկայական գերիշխող դիրքերի և տնտեսական արդյունավետության ապահովումը: Այսինքն, գոյություն ունեն տնտեսական ճյուղեր և ուղղություններ, որտեղ մասնավոր ընկերությունը պարզապես չի մտնի, չնայած որ այս ոլորտները և նրանց արտադրանքը կենսապես կարևոր են հասարակության համար: Տվյալ իրավիճակում առաջացող հիմնախնդիրները լուծում են պետական ընկերությունները:

Պետական ընկերությունները սովորաբար «կրում են» մեծ սոցիալական բեռ, որպես կանոն ունեն ցածր տնտեսական արդյունավետություն և, միաժամանակ, զբաղեցնում են կենտրոնական դիրքեր ազգային տնտեսությունում: Բացի այդ, պետական ընկերությունները սովորաբար գտնվում են ռեսուրսների տեղաբաշխման վայրերում, քաղաքական և վարչական կենտրոններում, «զգայուն» (օրինակ սահմանամերձ) գոտիներում, որպեսզի կառավարության կողմից ավելի հարմար լինի իրականացնել իր մակրոկառավարման գործառույթը: Պետական ընկերությունները, զբաղվելով տնտեսական գործունեությամբ, միաժամանակ, նաև պետք է իրենց վրա վերցնեն կառավարության վարչական գործառույթների մի մասը և նպաստեն մակրոտնտեսական կարգավորման քաղաքականության հաջող իրականացմանը: Պետական ընկերությունների նպատակները բազմաբնույթ են, քանի որ նրանք լուծում են կարևոր խնդիր՝ ապահովել ազգաբնակչության հնարավորինս բարձր կենսամակարդակը: Պետական ընկերությունը ազգային տնտեսության սուբյեկտ է և կառավարության կողմից մակրոկարգավորման իրականացման հիմնական միջոց: Պետական ընկերությունները պետք է կրեն սոցիալական

պատասխանատվություն, ինչպես իրենց ներսում, այնպես էլ նրանից դուրս (կրթություն, առողջապահություն, շրջակա միջավայր, բնակարանաշինություն, հանգիստ, ժամանց և այլն):

Պետական սեփականություն հանդիսանալու հետևանքով պետական ընկերությունները հանդիպում են նաև որոշակի դժվարությունների. ծանր սոցիալական բեռ, տնտեսավարման գործընթացում չափազանց մեծ վարչարարություն, շուկայական տնտեսության հետ անհամատեղելիության խնդիրներ: Բացի այդ, պետական ընկերությունների տնտեսական գործունեության կառավարման գործընթացում միաժամանակ կարևորվում են և՛ սոցիալական արդարությունը, և՛ տնտեսական արդյունավետությունը: Հասկանալի է, որ սցիալական արդարության և տնտեսական արդյունավետության միաժամանակյա ապահովումը բավականին բարդ գործ է: Հատկապես, դրա համար պետական ընկերությունների ստեղծումը կրում է համակարգային, բազմակողմանի և երկարաժամկետ բնույթ:

Ինչպես հայտնի է, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունները շարունակում են տնտեսության մեջ կատարել նշանակալի դեր: Ստորև բերված աղյուսակը և գծապատկերը տվյալներ են պարունակում պետական գույքի հաշվառման գրանցամատյանում հաշվառված պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի վերաբերյալ:


Աղյուսակ 1

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը (1998-2013թթ.)¹

Անվանումը	1998	1999	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններ	854	837	693	661	648	641	635	579	513	513	493	478	438	424	423	404

Գծապատկեր 1

Պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը (1998-2013թթ.)²



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 1998-2013թթ. տեղի է ունենցել պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թվաքանակի աստիճանական նվազում: Այսպես, 2013թ. 1998թ. համեմատությամբ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների թիվը նվազել է 450-ով և կազմել 404: Վերջինս արդյունք է ինչպես ընկերությունների մասնավորեցման, այնպես էլ նրանց սնանկացման և լուծարման: Ինչպես հայտնի է, լուծարվող ընկերությունների մի մասը երկու անգամ մասնավորեցման ներկայացված և գնորդների մոտ հետաքրքրություն չառաջացրած ընկերություններ են, իսկ մյուս մասը՝ ՀՀ

¹ http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM
² http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM

քաղաքացիական օրենսգրքով չնախատեսված իրավական կարգավիճակ ունեցող, չաշխատող, ֆինանսատնտեսական վատ ցուցանիշներ ունեցող կամ գործունեության հեռանկարներ չունեցող ընկերություններ են¹: Ստորև բերված աղյուսակը և գծապատկերը տվյալներ են պարունակում մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված ընկերությունների թվաքանակի վերաբերյալ:


Աղյուսակ 2

Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը (2001-2013թթ.)²

Անվանումը	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013
Լուծարված ընկերությունները	36	43	49	56	62	82	98	134	173	259	319	347	359

Գծապատկեր 2

Մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված կազմակերպությունների թիվը (2001-2013թթ.)³



Ինչպես վկայում են վերոբերյալ աղյուսակի տվյալները, 2013թ.-ին 2001թ. համեմատությամբ մասնավորեցման ծրագրերում ընդգրկված և լուծարված առևտրային կազմակերպությունների թիվն ավելացել է 323-ով և կազմել 359: Իհարկե, լուծարված ընկերությունների թվաքանակի ավելացումը բացասական երևույթ է, սակայն, եթե այն տեղի է ունենում շուկայի սանիտարական գործառնության գործողության հետևանքով, ապա դա կարելի է համարել դրական երևույթ: Հասկանալի է, որ միայն արդյունավետ գործող ընկերությունների թվաքանակի ավելացմամբ է պայմանավորված մեր երկրի տնտեսության զարգացման ապագան:

Այժմ անդրադառնանք պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների թվաքանակին՝ ըստ պետության մասնակցության չափի ստորև բերված աղյուսակի և գծապատկերի միջոցով:

¹ http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM

² http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM


³ http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների քանակն՝ ըստ պետության մասնակցության չափի (1994-2013թթ.)

Տարեթիվը	ՊԲ<10%		10%<ՊԲ<50%		50%<ՊԲ<75%		75%<ՊԲ<100%		ՊԲ=100%	
	ՓԲԸ	ԲԲԸ	ՓԲԸ	ԲԲԸ	ՓԲԸ	ԲԲԸ	ՓԲԸ	ԲԲԸ	ՓԲԸ	ԲԲԸ
1994					1		2			
1995			32	5	16		251	14		9
1996			4	6	3	2	20	1	2	3
1997			3	8	2		2		1	
1998	9		7	16	1	1	3		88	
1999			2	2	2		2		123	
2000			1		1		1	2	62	1
2001					1	1	2	4	39	2
2002								1	26	7
2003								2	13	4
2004									15	1
2005						1		1	6	2
2006									6	1
2007								2	99	1
2008									16	
2009									12	3
2010			1						3	
2011									3	
2012										
2013										

Գծապատկեր 3

Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների քանակն՝ ըստ պետության մասնակցության չափի (1994-2013թթ.)



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում գրանցված պետական և պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների թվաքանակում, հիմնականում, գերակայում են ամբողջությամբ պետական (ՊԲ=100%) և 75% և ավելի բաժնեմասով (75%<ՊԲ<100%) պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունները: Այս հանգամանքը կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի

Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը նպատակ ունի Հայաստանի տնտեսության համար ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտների բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի հսկիչ ծրարը «պահել իր ձեռքում», որը կառավարության համար ամուր լծակներ է ստեղծում այդ ոլորտները կարգավորելու և կառավարության որդեգրած քաղաքականությունը կյանքի կոչելու համար:

Այժմ անդրադառնանք նաև պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեությանը ստորև բերված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 4

Հայաստանի Հանրապետությունում 50% և ավելի պետական բաժնետոմսերով ընկերությունների բնութագիրը (2012-2013թթ. առ 01.01)¹

h/h	Անվանումը	2012	2013
1.	Մոնիթորինգի ենթարկված ընկերությունների թիվը	347	355
2.	Շահույթով աշխատած ընկերությունների թիվը	271	267
3.	Վնասով աշխատած ընկերությունների թիվը	65	47
4.	Շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվը	11	17
5.	Շահույթի ծավալը	3080341100	1954165000
6.	Վնասի ծավալը	1387159800	15513313000
7.	Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	147775095000	160575821000
8.	Ընդամենը ընթացիկ ակտիվներ	105290609000	111239431000
9.	Աշխատողների քանակը	29119	27826

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքներին համապատասխան՝ 2013թ. 2012թ. համեմատությամբ շահույթով աշխատած ընկերությունների թիվը նվազել է 4-ով, վնասով աշխատած ընկերությունների թիվը՝ 18-ով, շահույթ կամ վնաս չձևավորած ընկերությունների թիվն ավելացել է 6-ով, ընկերությունների շահույթի ծավալը նվազել է 1 126 176 100 դրամով, վնասի ծավալն ավելացել է 14 126 153 200 դրամով, ընթացիկ պարտավորություններն ավելացել են 12 800 726 000 դրամով, ընթացիկ ակտիվներն ավելացել են 5 948 822 000 դրամով, և աշխատողների քանակը նվազել է 1293-ով: 01.01.2013թ. դրությամբ ՀՀ պետական բյուջե շահութաբաժիններ են վճարել թվով 211 ընկերություն՝ 506 689 000 դրամի չափով: Հասկանալի է, որ նշված բոլոր ցուցանիշների բարելավումը լուրջ խնդիր է հանդիսանում ինչպես պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների, այնպես էլ ողջ հասարակության համար:

Ինչպես հայտնի է, պետական ընկերությունների շահութաբերությունը, որպես կանոն, ցածր է մասնավորներից: Շահույթը չի հանդիսանում պետական ընկերությունների գործունեության առաջնային նպատակը, իսկ վնասները փոխհատուցվում են բյուջեյից: Այդ պատճառով պետական հատվածը զարգացած երկրներում դարձել է էժան ծառայությունների մատակարարը, մասնավորապես՝ տրանսպորտային, փոստային, էլեկտրաէներգիայի և հունքի, նվազեցնելով ծաղքերը մասնավոր հատվածում: Նրան է պատկանում տնտեսությունում կայունացնող դերը՝ զնաճին հակազդելու, տնտեսական միջավայրում մրցակցության խթանման և համաշխարհային շուկայում ազգային արտադրանքի մրցունակության համար պայմանների ստեղծման միջոցով:


¹ http://www.privatization.am/index.php?page=aaa&hl=am_AM

² В. Дасковский, В. Киселев, О мерах и формах государственного участия, Экономист, N 8, 2011, с. 36.

Այժմ նկարագրենք պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ՝ ըստ ընկերությունների թվաքանակի ստորև բերված գծապատկերի միջոցով:

Գծապատկեր 4

Պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների տնտեսական գործունեության վիճակը 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ



Վերոբերյալ տվյալները վկայում են, որ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ 33 կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության կողմից մոնիթորինգի ենթարկած ընկերություններից 267-ն աշխատել են շահույթով, 47-ը՝ վնասով, իսկ 17 ընկերություններում շահույթ կամ վնաս չի ձևավորվել: Հոլսանք, որ ապագայում շահույթով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների թիվն աստիճանաբար կավելանա:

Համաշխարհային տնտեսական պրակտիկան բազմիցս ապացուցել է պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների դերակատարման կարևորությունը (հատկապես ճգնաժամային պայմաններում): *Ernst & Young* բրիտանական աուդիտորական-խորհրդատվական ընկերության կողմից իրականացված հարցման արդյունքները վկայում են, որ 24 երկրից 12000 հարցվողների 40%-ը գտնում են, որ պետական ձեռնարկությունները մասնավորների համեմատ ապահովում են սպասարկման լավագույն որակ, ինչպես նաև կարող են հաջողությամբ մրցակցել նրանց հետ իրենց գործունեության արդյունավետության մակարդակով: Միաժամանակ, Չինաստանից հարցվողների 72%-ը և Ռուսաստանից հարցվողների 83%-ը գտնում են, որ ռազմավարական նշանակություն ունեցող ճյուղերի հանդեպ պետական վերահսկողության պահպանումը համապատասխանում է շատ երկրների շահերին¹:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության «Պետական գույքի մասնավորեցման 2001-2003, 2006-2007 թվականների ծրագրերում» ընդգրկված և պետության համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք պետական ընկերություններ հանվել են մասնավորեցման գործընթացից, քանի որ պետությունն այլևս մտադիր չէ վաճառել դրանք: Ավելին, այդ ընկերությունների համար մշակվելու են համապատասխան համակարգային ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավորություն կընձեռվի ապահովել այդ ընկերությունների բնականոն և արդյունավետ գործունեությունը²:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք առաջարկել պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

- Կառավարչական որակյալ կադրերի ընտրություն և կառավարման որակի բարելավում:

¹ В. Дементьев, Госкорпорации в экономической стратегии России: К продолжению дискуссии в связи с «антигоскапиталистическими» установками федеральных властей, Российский экономический журнал, N 3, 2011, с. 20.

² http://www.privatization.am/index.php?page=-20&hl=am_AM

- Արդյունավետ ներդրումային նախագծերի մշակում և իրացում:
- Նոր մրցունակ արտադրատեսակների արտադրության կազմակերպում:
- Վնասով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերություններում ճգնաժամային կառավարման ներմուծում:
- Վնասով աշխատող պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների վերակազմակերպում:
- Կորպորատիվ կառավարման հիմնական սկզբունքների ներդրում:
- Գործունեության թափանցիկության անհրաժեշտ մակարդակի ապահովում:

Այսպիսով, պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումը կարևոր նշանակություն ունի Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման համար, ուստի վերջինս պետք է գտնվի պետության և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

ՀՀ Կառավարության Կենտրոնական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդիրը

ՀՀ Կառավարության Կենտրոնական ընկերությունների մեծամասնությունում առկա գործունեության բարելավման
հիմնախնդիրը, հոդվածում փորձ է արվել բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են նպաստել
նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հատուկ ուշադրություն է հատկացվել երկրի տնտեսու-
թյան զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունները պետական սեփականության
կազմում պահպանելու խնդիրին:

ՀՀ Կառավարության Կենտրոնական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդիրը

Քանի որ պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումն ունի
ռազմավարական նշանակություն տնտեսության հետագա զարգացման համար, ապա վերջինս պետք է գտնվի
պետության և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

Քանի որ պետական և պետական մասնակցությամբ ընկերությունների գործունեության բարելավումն ունի
ռազմավարական նշանակություն տնտեսության հետագա զարգացման համար, ապա վերջինս պետք է գտնվի
պետության և հասարակության մշտական ուշադրության կենտրոնում:

ՀՀ Կառավարության Կենտրոնական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդիրը
ՀՀ Կառավարության Կենտրոնական ընկերությունների մեծամասնությունում առկա գործունեության բարելավման
հիմնախնդիրը, հոդվածում փորձ է արվել բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են նպաստել
նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Հատուկ ուշադրություն է հատկացվել երկրի տնտեսու-
թյան զարգացման համար ռազմավարական նշանակություն ունեցող ընկերությունները պետական սեփականության
կազմում պահպանելու խնդիրին:

ОБ УЛУЧШЕНИИ ДЕЯТЕЛЬНОСТИ ГОСУДАРСТВЕННЫХ КОМПАНИЙ И КОМПАНИЙ С ГОСУДАРСТВЕННЫМ УЧАСТИЕМ

ԱՐՄԻՆԵ ՅԱԿԱՐՅԱՆ, *կ. թ. ռ.*

*преподаватель Международного
научно-образовательного центра НАН РА*

Аннотация

Настоящая статья посвящена проблеме улучшения деятельности государственных компаний в РА. Учитывая наличие проблемы улучшения деятельности в большинстве государственных компаний в РА, в статье сделана попытка выявить основные факторы, способствующие повышению эффективности их деятельности. Особое внимание уделено задаче сохранения в государственной собственности компаний, имеющих стратегическое значение для развития экономики страны.

Поскольку улучшение деятельности государственных компаний и компаний с государственным участием имеет стратегическое значение для дальнейшего развития экономики, то эти компании должны постоянно находиться в центре внимания как государства, так и общества.

Ключевые слова: *государственные компании, компании с государственным участием, государственная собственность, улучшение деятельности, эффективность, экономика, государство, общество.*

ON BETTER AND MORE EFFICIENT PERFORMANCE BY STATE-OWNED (FULLY OR PARTIALLY OWNED) ENTERPRISES

ARMINE ZAKHARYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Lecturer
International Scientific - Educational Center
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

The article discusses the issues on improving the performance of state-owned enterprises in the Republic of Armenia. Taking into account the current issues on improving performance of majority of the state-owned enterprises, the article attempts to identify the main factors that could increase the efficiency of the performance of these companies. Particular attention is paid to the issue on keeping companies of strategic importance to the economic development among state-owned (fully or partially owned) enterprises.

Since the better or more efficient performance by the state-owned enterprises (fully or partially owned) is of strategic importance to the future economic development of the nation, the performance of these companies needs to be under consideration of the government and society.

Keywords: *state-owned enterprise, partially state-owned company, state ownership, better performance, efficiency, economy, state, society.*

ցածր կենսամակարդակով և սոցիալական բազմաթիվ հիմնախնդիրների առկայությամբ: Եվ պատահական չէ, որ սոցիալական ներդրումների իրականացմամբ ավելի շատ շահագրգռված են այն ընկերությունները, որոնց սեփականատերերի կազմում ընդգրկված են նաև աշխատակիցները: Քանի որ սոցիալական ներդրումները նպաստում են արտադրողականության բարձրացմանը և, միաժամանակ, հանդիսանում են ընկերությանն աշխատակիցների նվիրվածության երաշխիք, ապա այս տեսակի ներդրումների խթանումն օբյեկտիվ անհրաժեշտություն է թե՛ ընկերությունների գործունեության բարելավման, և թե՛ երկրի տնտեսության զարգացման համար: Որպես սոցիալական ներդրումների իրականացման վրա ազդող հիմնական գործոններ կարող ենք նշել օրենսդրական դաշտը, գործատուների կողմից իրենց սոցիալական գործառույթների և պարտավորությունների կատարման աստիճանը, գործարարության սոցիալական դերի վերաբերյալ հասարակության կարծիքը, կորպորատիվ սոցիալական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ մեթոդների և որակյալ մասնագետների առկայությունը, ոչ առևտրային կազմակերպությունների գործունեության ակտիվությունը և այլն:

Ընդհանուր առմամբ, սոցիալական ներդրումները հանդես են գալիս որպես այնպիսի վնասների փոխհատուցման մեխանիզմներ, որոնցով հղի է ընկերության գործունեությունն իր աշխատակիցների և բնակչության համար: Բացի այդ, կարևոր ենք համարում նաև նշել, որ տնտեսության տարբեր ճյուղերում պահանջվող սոցիալական ներդրումների ծավալները կարող են լինել տարբեր: Այսպես, տնտեսության «ծանր» ճյուղերին պատկանող ընկերություններն իրենց աշխատակիցների սոցիալական խնդիրները հոգալուց բացի ստիպված են իրականացնել նաև բնապահպանական և այլ ծախսեր (համեմատության համար կարող ենք նշել քիմիական արդյունաբերությունը և բանկային ոլորտը):

Բիզնեսի սոցիալական պատասխանատվության բարձրացման պայմաններում ընկերությունների կառավարման համակարգի հիմնական բաղադրիչներն են հանդիսանում¹.

1. ինովացիոն գործունեության խթանումը,
2. արտադրանքի որակի վերահսկողությունը,
3. ֆինանսական, սոցիալական և տնտեսական կայունության ապահովումը,
4. արտադրական ծախսերի օպտիմալ մակարդակի պահպանումը,
5. սպառողների պահանջների բավարարումը,
6. մարքեթինգային հետազոտությունների արդյունքների վերահսկողությունը,
7. սոցիալապես կողմնորոշված բիզնես միջավայրի ստեղծումը,
8. սոցիալական բրենդի և ենթակառուցվածքի ստեղծումը,
9. աշխատակիցների սոցիալական պահանջմունքների բավարարումը,
10. կորպորատիվ սոցիալական ծրագրերի մշակումը և իրագործումը,
11. գովազդային նպատակներով լրատվամիջոցների օգտագործումը,
12. կորպորատիվ մշակույթի ներմուծումը և այլն:

Ինչպես հայտնի է, ընկերությունների և հասարակության միջև հարաբերությունների կառուցման հիմնական միջոցներն են հանդիսանում.

- **Բարեգործությունը:** Բարեգործական միջոցառումները կարևոր նշանակություն ունեն ինչպես հասարակության անդամների, այնպես էլ ընկերությունների համար: Բարեգործական միջոցառումներում ներդրումների իրականացման համար անհրաժեշտ միջոցները կարող են ստացվել անմիջապես ընկերությունից կամ օգնության ներգրավման և աշխատակիցների կամավոր մուծումների հաշվին: Հասարակության զարգացմանն ուղղված նախագծերի օգտին աշխատակիցների կամավոր գործողությունները բարձրացնում են ընկերությանն աշխատակիցների նվիրվածության մակարդակը և կարող են նպաստել նրանց անձնական զարգացմանը:

- **Սոցիալական բնույթի ներդրումները:** Ինչպես հայտնի է, ընկերություններն աջակցում են կրթության ոլորտի և սոցիալական հիմնախնդիրների (օրինակ՝ գործազրկության, մեկուսացվածության, անօթևանության և այլն) հաղթահարմանը, հաճախ կառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների հետ համատեղ:

¹ <http://rudocs.exdat.com/docs/index-270375.html>

- **Գործընկերությունները:** Ընկերությունները հասարակության մեջ ավանդ են ներդրում նաև այնպիսի գործունեության անմիջական աջակցության միջոցով, որը նպաստում է նրանց տնտեսական գործունեության հաջողություններին, այդ թվում՝ որոշակի նպատակային նախագծերի հետ կապված:

- **Քիզնեսի կազմակերպումը:** Եվ վերջապես, ամենակարևորը՝ ընկերություններն ավանդ են ներդրում հասարակության զարգացման մեջ իրենց հիմնական խնդրի՝ հասարակությանն անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների առաջարկման միջոցով, որոնք ստացվում են ընկերությունների արդյունավետ, էթիկական կանոններին համապատասխանող և բոլոր շահագրգիռ կողմերի շահերը հաշվի առնող ու հավասարակշռող գործունեության իրականացման արդյունքում:

Անշուշտ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացումը ընկերությունների համար ստեղծում է որոշակի առավելություններ, որոնք ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացման առավելությունները¹


Առավելությունը	Արդյունքը
Իմիջի ձևավորումը և հեղինակության բարձրացումը	Պահպանում է հաճախորդների խումբը և բարձրացնում է ընկերության եկամտաբերության աճի տեմպերը
Աշխատանքների (ծառայությունների) որակի բարձրացումը և տեխնիկական նորամուծությունների ներդրումը	Մեծացնում է հաճախորդների նվիրվածությունը
Ընկերության հուսալիության և պատասխանատվության մասին իրազեկումը	Մեծացնում է գործընկերների վստահությունը և աշխատակիցների նվիրվածությունը
Տեղեկատվական թափանցիկությունը	Մեծացնում է վարկային ռեսուրսների մատչելիությունը
Կորպորատիվ կառավարման սկզբունքների պահպանումը	Մեծացնում է կապիտալի մատչելիությունը և ներդրումների ծավալները, ռիսկերի կրճատման հետևանքով նվազում են կապիտալի ներգրավման ծախսերը
Կառավարման համակարգերի արդիականացումը և ռեսուրսների օգտագործման հանդեպ ներքին վերահսկողության իրականացումը	Կանոնակարգում է քիզնես-գործընթացները և ապահովում է գործառնական արդյունավետության աճը
Սոցիալ-էկոլոգիական աուդիտի իրականացումը և նրա հիման վրա քիզնես-գործընթացների կարգավորումը	Նվազեցնում է ռիսկերը և նպաստում է գործարար ակտիվության աճին
Շահագրգիռ կողմերի հետ երկխոսությունը և խնդիրների յուրաժամանակ լուծումը	Զարգացնում և պահպանում է մտավոր կապիտալը
Պարբերական սոցիալական հաշվետվությունները և քիզնեսի թափանցիկությունը	Որոշում է քիզնեսի իրական արժեքը

Ինչպես տեսնում ենք, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացումը ընկերությունների համար իսկապես ստեղծում է մի շարք առավելություններ, որոնք կարող են էապես բարելավել ընկերությունների գործունեությունը և նպաստել նրանց հետագա զարգացմանը:

Ընկերությունների սոցիալական պատասխանատվության կարևորությանն անդրադարձել է նաև Ա. Կերոլլը իր հայտնի սոցիալական պատասխանատվության բուրգի միջոցով, որը ներկայացված է ստորև:

¹ А.В. Бусыгин, Эффективный менеджмент: Учебное пособие.-М.:ИНФРА-М, 2007, с. 106.

Ա. Կերուլի սոցիալական պատասխանատվության բուրգը¹



Ա. Կերուլը կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ներկայացրել է բուրգի տեսքով, որի մակարդակներն են հանդիսանում բիզնեսի **տնտեսական, իրավական, էթիկական և բարեգործական** պատասխանատվությունները: Բուրգի հիմքում ընկած տնտեսական պատասխանատվությունը կապված է ընկերության կողմից ապրանքների և ծառայությունների արտադրության, սպառողների պահանջմունքների բավարարման և դրա հիման վրա եկամտի ստացման հետ: Իրավական պատասխանատվությունը ենթադրում է բիզնեսի օրինապահության անհրաժեշտություն: Էթիկական պատասխանատվությունը կապված է ընկերության կողմից այնպիսի գործունեության իրականացման հետ, որը համահունչ է ընդունված բարոյական նորմերի վրա հիմնված հասարակության սպասումներին: Բարեգործական պատասխանատվությունը ենթադրում է հասարակության բարեկեցության բարձրացում, սոցիալական ծրագրերի իրագործմանն ընկերության կամավոր մասնակցություն:

Հասկանալի է, որ սոցիալական ներդրումների իրականացումը Հայաստանի Հանրապետությունում ներկայումս նույնպես հրատապ խնդիր է և, բարեբախտաբար, մեր երկրում կան սոցիալապես պատասխանատու վարքագիծ դրսևորող մի շարք ընկերություններ (*Viva Cell MTS, Orange Armenia, Beeline Armenia, Multi Group, Grand Holding և այլն*), որոնք տարիների ընթացքում իրականացրել են բազմաթիվ բարեգործական ծրագրեր: Հուսանք, որ նշված ընկերությունների փորձը օրինակ կծառայի նաև այլ ընկերությունների համար:

Այժմ անդրադառնանք մասնավորեցված ընկերությունների կողմից ստանձնված սոցիալական պարտավորությունների իրականացմանը՝ ստորև բերված աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 2

ՀՀ-ում մասնավորեցված ընկերությունների սոցիալական պարտավորությունների իրականացման արդյունքները (2008-2013թթ.)²

Անվանումը	2008	2009	2010	2011	2012	2013
Պարտավորություններ ստանձնած գնորդների քանակը	89	62	38	25	13	15
Նախատեսված աշխատատեղերի թիվը	4289	1150	1150	2694	357	91
Պարտավորությունները փաստացի իրականացրած գնորդների քանակը	74	46	30	18	5	8
Փաստացի ապահովված աշխատատեղերի թիվը	3171	1547	1124	459	84	32


¹ <http://www.rae.ru/monographs/139-4586>

² Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013թթ. գործունեության հաշվետվությունները:

Վերոբերյալ աղյուսակի տվյալները վկայում են, որ 2013թ. 2008թ. համեմատությամբ նախատեսված աշխատատեղերի թիվը նվազել է 4168-ով, իսկ փաստացի ապահովված աշխատատեղերի թիվը՝ 3139-ով: Պարտավորություններ ստանձնած գնորդների քանակը նույնպես նվազել է 74-ով, իսկ պարտավորությունները փաստացի իրականացրած գնորդների քանակը՝ 66-ով: Միաժամանակ, կարևոր ենք համարում նշել, 2008թ. 89 գնորդներից միայն 74 են ժամանակին կատարել իրենց սոցիալական պարտավորությունները (15-ը թերացել են): Իսկ 2013թ. 15 գնորդներից իրենց սոցիալական պարտավորությունները ժամանակին են կատարել 8-ը (թերացել են 7-ը): Ինչպես տեսնում ենք, 2013թ. 2008թ. համեմատությամբ իրենց սոցիալական պարտավորությունները ժամանակին չկատարած գնորդների քանակը նվազել է 8-ով: Սոցիալական պարտավորությունները ժամանակին չկատարած գնորդների թվաքանակի կրճատման մասին են վկայում նաև ստորև բերված գծապատկերները:


Գծապատկեր 2

Հայաստանի Հանրապետությունում մասնավորեցման պայմանագրով պարտավորություններ ստանձնած գնորդների քանակը (2008-2013թթ.)¹



Գծապատկեր 3

Հայաստանի Հանրապետությունում պարտավորությունները փաստացի չիրականացրած գնորդների² քանակը (2008-2013թթ.)³



Հասկանալի է, որ սոցիալական պարտավորությունների կատարումից խուսափող ընկերությունների թվաքանակի կրճատումը կարևոր նշանակություն ունի ՀՀ տնտեսության զարգաց-

¹ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013թթ. գործունեության հաշվետվությունները:

² Այստեղ ընդգրկված չեն այն գնորդները, որոնց կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը դեռ չի լրացել:

³ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Պետական գույքի կառավարման վարչության 2008, 2009, 2010, 2011, 2012, 2013թթ. գործունեության հաշվետվությունները:

ման համար: Եվ քանի որ սոցիալական ներդրումներն իրենց բազմաբնույթ դրական ազդեցությունից բացի կարող են նպաստել նաև բաժնետիրական ընկերությունների դրական գործարար համբավի ձևավորմանը, ապա արդյունավետ ենք համարում ԲԸ-ների կողմից ներդրումային քաղաքականության մշակման ժամանակ պատշաճ ուշադրություն դարձվի նաև այս տեսակի ներդրումներին:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ կարող ենք առաջարկել բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման հետևյալ ուղիները.

1. Արդյունավետ սոցիալական ծրագրերի մշակում և իրագործում:
2. Աշխատակիցների մասնագիտական որակավորման բարձրացում:
3. Աշխատակիցների սոցիալական պահանջմունքների հնարավորինս բավարարում:
4. Սպառողների պահանջմունքների բավարարում:
5. Արհմիությունների հետ համագործակցության ակտիվացում:
6. Բնապահպանական միջոցառումների իրականացում:
7. Արտասահմանյան երկրների սոցիալական ոլորտի կայուն զարգացման առաջատար փորձի ուսումնասիրություն և աստիճանական ներմուծում:

Այսպիսով, ՀՀ-ում գործող բաժնետիրական ընկերությունների մեծամասնության համար կարևորվում է սոցիալական ներդրումների իրականացումը, որը կարող է նպաստել ինչպես նրանց գործունեության որոշակի բարելավմանը, այնպես էլ ՀՀ տնտեսության զարգացմանը:

Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով

Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով

Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով

Սույն հոդվածը նվիրված է ՀՀ-ում սոցիալական ներդրումների միջոցով բաժնետիրական ընկերությունների գործունեության բարելավման հիմնախնդրին: Հաշվի առնելով բաժնետիրական ընկերությունների մեծամասնությունում առկա գործունեության բարելավման հիմնախնդիրը, հոդվածում փորձ է արվել բացահայտել այն հիմնական գործոնները, որոնք կարող են նպաստել բաժնետիրական ընկերություններում սոցիալական ներդրումների արդյունավետության բարձրացմանը: Հատուկ ուշադրություն է հատկացվել կորպորատիվ սոցիալական պատասխանատվության իրականացմանը:

Քանի որ բաժնետիրական ընկերությունների մեծամասնության գործունեության բարելավման համար սոցիալական ներդրումների իրականացումն ունի ռազմավարական նշանակություն, ապա վերջինս պետք է գտնվի բաժնետիրական ընկերությունների և պետության մշտական ուշադրության կենտրոնում:

Հոդվածի հիմնական գաղափարները ներկայացված են հետևյալ կերպ: «Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով», «Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով», «Գնահատման և մրցակցային հարցազրույցի համակարգի միջոցով»:

СОЦИАЛЬНЫЕ ИНВЕСТИЦИИ КАК СРЕДСТВО УЛУЧШЕНИЯ ДЕЯТЕЛЬНОСТИ АКЦИОНЕРНЫХ ОБЩЕСТВ

АРМИНЕ ЗАКАРЯН, *к.э.н.*

*преподаватель Международного
научно-образовательного центра НАН РА*

Аннотация

Настоящая статья посвящена проблеме улучшения деятельности акционерных обществ в РА посредством социальных инвестиций. Учитывая наличие проблемы улучшения деятельности в большинстве акционерных обществ, в статье сделана попытка выявить основные факторы, способствующие повышению эффективности социальных инвестиций в акционерных обществах. Особое внимание уделено осуществлению корпоративной социальной ответственности.

Так как социальные инвестиции имеют стратегическое значение для улучшения деятельности большинства акционерных обществ РА, то они должны постоянно находиться в центре внимания как акционерных обществ, так и государства.

Ключевые слова: социальные инвестиции, акционерные общества, социальная ответственность, улучшение деятельности, эффективность, экономика, государство, общество.

SOCIAL INVESTMENTS AS A MEAN TO IMPROVE THE PERFORMANCE OF JOINT-STOCK COMPANIES

ARMINE ZAKHARYAN, *Candidate of Sciences (Economics)*

*Lecturer
International Scientific - Educational Center
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

The article presents the issues on improving performance of the joint-stock companies in the Republic of Armenia through social investments. Taking into account the issue of improving the performance of the majority of joint-stock companies, the article attempts to identify those main factors that could increase the efficiency of social investments made by companies. A special attention is paid to implementing effective corporate social responsibility.

Since social investments are of strategic importance to improving the performance of the majority of joint-stock companies, these investments need to be of a constant concern to joint-stock companies and the government

Keywords: social investments, joint-stock companies, social responsibility, improvement of performance, efficiency, economy, state, society.

«ՀՀ Կառավարության կողմից 2013 թ. 12 ամսվա դրությամբ հաստատված 2014 թ. հունվարի 1-ից»

ՀՀ Կառավարության կողմից 2013 թ. 12 ամսվա դրությամբ հաստատված 2014 թ. հունվարի 1-ից

ՀՀ Կառավարության կողմից 2013 թ. 12 ամսվա դրությամբ հաստատված 2014 թ. հունվարի 1-ից

ԼՂՀ-ում զբաղվածությանն ու գործազրկությանն առնչվող հիմնախնդիրների ուսումնասիրությունները հեռանկարային են: Բնակչության զբաղվածության ապահովման և սոցիալական պաշտպանության մեխանիզմների ամփոփեքությունը, սոցիալական գործընկերային հարաբերությունների բացակայությունը, թաքնված զբաղվածության և քողարկված գործազրկության մեծ ծավալների առկայությունը և այդ բնագավառում տեղ գտած բացասական այլ երևույթներ հիմնականում պայմանավորված են զբաղվածության կարգավորման ոլորտում առկա հիմնախնդիրներով:

Ջբաղվածության կարգավորման հիմնական նպատակն է՝ բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը, ինչը ենթադրում է աշխատաշուկայի պահանջներից ելնելով գործազուրկների և հաշմանդամների աշխատաշուկայում մրցունակության բարձրացում, երիտասարդների և կանանց զբաղվածության խթանում, աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի միասնական կարգավորում, քաղաքացիների և գործատուների համար զբաղվածության պետական ծառայությունների առավել գրավչության և ֆանցիկության ապահովում:

ԼՂՀ-ում զբաղվածությունը կարգավորող հիմնական իրավական ակտը «Ջբաղվածության մասին» ԼՂՀ օրենքն¹ է: Այն կարգավորում է հանրապետությունում բնակչության զբաղվածության խթանման տնտեսական և կազմակերպական դրույթներն ու իրավական հիմքերը, սահմանում զբաղվածության բնագավառում քաղաքացիների իրավունքների իրացումը, պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները, գործազրկության դեպքում սոցիալական աջակցության ձևերը, ինչպես նաև պետական-մասնավոր համագործակցության իրավական հիմքերը: Բացի հիշյալ օրենքից, երկրում զբաղվածության կարգավորման համար հիմք է ընդունվում ԼՂՀ Սահմանադրությունը, ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը, ԼՂՀ աշխատանքային օրենսգիրքը, «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» օրենքը, ԼՂՀ միջազգային պայմանագրերը և իրավական այլ ակտեր:

Երկրում զբաղվածության արդյունավետությունը պայմանավորվում է առաջին հերթին ըստ տնտեսության հատվածների զբաղվածության բաշխմամբ և ճյուղային կառուցվածքի վերլուծությամբ: Հանրապետությունում զբաղվածության ճյուղային կառուցվածքը 2010-2012թթ. տրվում է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ի տվյալներից կարելի է արձանագրել, որ հանրապետությունում 2012թ. 2011թ. համեմատությամբ զբաղվածության աճ է դիտվել արդյունաբերության, առևտրի, կառավարման և գյուղատնտեսության ճյուղերում, իսկ նվազեցում՝ շինարարության, կապի, առողջապահության և գիտության ոլորտներում: Ընդհանուր առմամբ տնտեսությունում զբաղվածությունը աճել է 2.2%-ով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրում զբաղվածության վերոհիշյալ աճը հիմնականում պայմանավորված է 2012թ. «Արտոնագրային վճարների մասին» ԼՂՀ օրենքի կիրառմամբ և ԼՂՀ հարկային մարմնի կողմից իրական վարձու աշխատողների և աշխատավարձերի հայտարարագրման ուղղությամբ տարված վարչարարությամբ:

¹ «Ջբաղվածության մասին» ԼՂՀ օրենք, 26.12.2013թ., ՅՕ-114, գործում է 2014թ. հունվարի 1-ից:

Ջրաղվածների միջին ցուցակային թվաքանակը ըստ տնտեսության ճյուղերի 2010-2012թթ.¹

	2010թ.	2011թ.	2012թ.	Բացարձակ աճը (նվազումը «-» նշանով)	Աճի տեմպը, %
1	2	3	4	5	6
Ընդամենը	46891	47949	48980	1031	102.2
Արդյունաբերություն	5371	5459	5795	336	106.2
Գյուղատնտեսություն	3865	4018	4037	19	100.5
Անտառտնտեսություն	200	200	200	0	100
Շինարարություն	4183	4212	4176	-36	99.1
Տրանսպորտ	746	789	827	38	104.8
Կապ	1275	1235	1227	-8	99.4
Առևտուր	4560	4814	4925	111	102.3
Բնակկոմունալ և կենցաղսպասարկում	2204	2342	2450	108	104.6
Առողջապահություն	2457	2520	2515	-5	99.8
Սոցիալական ապահովություն և ապահովագրություն	105	111	113	2	101.8
Ֆինանսավարկում և սպորտ	171	210	214	4	101.9
Կրթություն	8761	9235	9456	221	102.4
Մշակույթ և արվեստ	1821	1494	1506	12	100.8
Գիտություն և գիտական սպասարկում	135	173	164	-9	94.8
Ֆինանսներ և վարկ	503	572	676	104	118.2
Կառավարում և պաշտպանություն	9356	9532	9674	142	101.5
Հասարակական կազմակերպություններ	756	614	587	-27	95.6
Այլ ճյուղեր	422	419	438	19	104.5

Համաշխարհային տնտեսական զարգացումները ձևավորել են այնպիսի իրավիճակ, որ աշխարհում զբաղվածության աճի տեմպերը մնում են ցածր, և շարունակում է աճել գործազրկության մակարդակը: Արդյունքում մեծաթիվ հիասթափված աշխատուժ դուրս է մնում աշխատաշուկայից: Իսկ գործազրկությունը բացասաբար է անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա, խաթարում հասարակության տնտեսական անվտանգությունը, սոցիալական ոլորտի զարգացումը, արգելակում տնտեսական աճը, կրճատում հարկման դաշտը:

ՄԱԿ-ի Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) ս.թ. հունվարի 21-ին հրապարակած՝ «Ջրաղվածության համաշխարհային միտումները 2014-ին» (Global Unemployment trends 2014) զեկույցի համաձայն՝ 2013թ. աշխարհում հաշվվել է մոտ 202 մլն գործազուրկ, որը 2012թ. համեմատությամբ աճել է 5 միլիոնով: Ընդհանուր առմամբ աշխատաշուկայից դուրս է մնացել մոտ 23 մլն մարդ: Կանխատեսվում է, որ մինչև 2018թ. աշխատանք փնտրողների թիվը կավելանա 13 միլիոնով²: Չնայած համաշխարհային տնտեսության շատ հատվածներում ստացվում է շահույթ, այնուամենայնիվ դրա գերակշիռ մասն ուղղվում է ակտիվների շուկա և ոչ թե տնտեսության իրական հատված, ինչը նկատելիորեն վատթարացնում է զբաղվածության ոլորտում երկարաժամկետ հեռանկարները:

ԼՂՀ-ում 2012թ. գործազրկության մակարդակը կազմել է 4.6%³: Սակայն իրականում փաստացի և գրանցված գործազրկությունների միջև եղած տարբերությունը զգալի է, ինչը

¹ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին, Ստեփանակերտ, 2013, էջ 57:

² http://armef.com/news/category/comment/article/article_1390481263

³ ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին, Ստեփանակերտ, 2013, էջ 56:

էականորեն դժվարացնում է երկրում գործազրկության զսպումը: Դրա համար պատճառ է նաև այն, որ զբաղվածության ծառայությունների միջոցով աշխատանքի տեղավորման իրական հնարավորությունները այնքան ցածր են, որ ոչ մի կերպ չեն տրամադրում գործազուրկին «համագործակցել» իրենց հետ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ համաաշխարհային կտրվածքով գործազրկությունը մեծ է հատկապես երիտասարդների շրջանում: Պատճառը հիմնականում մասնագիտական կողմնորոշման համակարգի և աշխատանքային փորձի բացակայությունն է, երիտասարդների մասնագիտական կրթության և որակավորման անհամապատասխանությունն աշխատաշուկայի ներկայիս պահանջներին: Ըստ ԱՄԿ-ի հետազոտությունների՝ 2013թ-ին 15-24 տարեկանների շրջանում աշխատանք չի ունեցել մոտ 74.5 մլն մարդ, ինչը մեկ միլիոնով գերազանցում է 2012թ. ցուցանիշը: Արդյունքում, երիտասարդության գործազրկության մակարդակն աշխարհում ավելի քան 13,1% է, ինչն ավելի քան կրկնակի անգամ բարձր է աշխարհում գործազրկության ընդհանուր մակարդակից¹:

Երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրը առանցքային է նաև ԼՂՀ-ում: Այդ հիմնախնդիրը էապես կարևորում են պետական ու ոչ պետական ինստիտուտները և դիտում որպես գերակա խնդիր: Հանրապետությունում երիտասարդները աշխատաշուկա մուտք գործելիս առնչվում են ստորև բերվող խնդիրներին.

- գործատուների պահանջների մասին թույլ պատկերացումներ,
- ձեռնարկություններում աշխատանքային միջավայրի փորձի բացակայություն,
- աշխատանքային պայմանների, Աշխատանքային օրենսգրքի և աշխատանքի վերաբերյալ անտեղյակություն:

Երիտասարդության զբաղվածության ցածր մակարդակի մասին են փաստում նաև վիճակագրական տվյալները, ըստ որոնց՝ 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ գրանցված գործազուրկների 1.3%-ը պատկանում է 18-22 տարիքային խմբին, 34.0%-ը՝ 22-30 տարիքային խմբին, 50.3%-ը՝ 30-50 տարիքային խմբին, 14.3%-ը՝ 50-ից բարձր տարիքային խմբին²:

Երկրում երիտասարդների աշխատանքային վարքագծի վրա բացասական ազդեցություն է թողնում նաև նրանց մեծամասնության ամուսնության տարիքը (21-29 տարեկան), և աշխատաշուկայում առաջանում է գենդերային տարբերություններ: Կանայք ամուսնանալով սովորաբար ընդհատում են իրենց աշխատանքային գործունեությունը և վերադառնում միայն 35 տարեկանից հետո: Այդ է պատճառը, որ մինչև 39 տարեկան կանանց զբաղվածությունը տղամարդկանց զբաղվածությունից ցածր է:

2009թ. ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայության անցկացրած ընտրանքային հետազոտությունները ապացուցում են, որ աշխատանք որոնելիս դժվարություններ են կրում հիմնականում մինչև 30 տարեկան միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ երիտասարդները: Երկրում բարձրագույն կրթությամբ գործազուրկների մեծ թվաքանակը «ուղեղների արտահոսքի» պատճառ է դառնում. որակյալ մասնագետները գաղթում են այլ երկրներ՝ հանգեցնելով մարդկային և տնտեսական ներուժի կորստի: Ուսանողները նույնպես չունեն բավարար հնարավորություններ գործատուների հետ համագործակցելու համար:

Երիտասարդության գործազրկության խնդիրն ունի մեկ այլ կողմ ևս՝ հոգեբանական կողմ: Նրանք ուզում են աշխատել, բայց չգիտեն՝ որտեղ: Կարևոր հանգամանք է նաև երիտասարդների՝ սեփական բիզնես ունենալու ցանկությունը: Մինչև 2013 ժամանակ ինքնուրույն կյանքի սկիզբը հանդիսանում է դժվար ժամանակահատված, քանի որ բացվող հնարավորությունների բանալի է ծառայում աշխատողի ծառայողական ցուցակը՝ աշխատանքի հմտությունների, մաս-

¹ http://armef.com/news/category/comment/article/article_1390481263

² ԼՂՀ Ազգային վիճակագրական ծառայություն, ԼՂՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2012թ. հունվար-դեկտեմբերին, Ստեփանակերտ, 2013, էջ 59:

նագիտական որակավորման վերաբերյալ տեղեկատվությունը: Դա ևս փաստում է երիտասարդության շրջանում գործազրկության բարձր մակարդակի մասին:

Թեև երիտասարդների փորձն ու հմտությունները քիչ են, սակայն նրանք պատրաստ են առաջարկել նոր գաղափարներ ու տեսակետներ: Այդ տնտեսական ներուժը չկիրառելու դեպքում տնտեսությունը մեծ վնասներ է կրում: Հետևաբար, երիտասարդ մարդկանց զարգացման ներկայիս այս փուլում համապատասխան հնարավորությունների և խթանների ստեղծումը կարևորվում է ոչ միայն նրանց անձնական բարեկեցության, այլև, ընդհանուր առմամբ, երկրի զարգացման, ավելի մեծ ազգային հարստության ստեղծման առումով:

Հանրապետությունում, հաշվի առնելով մայրաքաղաքում աշխատանքի տեղավորման պայմանները, այն է՝ համակարգչի և օտար լեզուների պարտադիր իմացություն, մայրաքաղաքի երիտասարդության մասով մշակվել է աջակցության ծրագիր, սակայն ոչ թե աշխատանքի տեղավորման, այլ անվճար դասընթացների, որին կարող են մասնակցել ուսանողները, սոցիալապես անապահով երիտասարդները, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և բանակից զորացրված երիտասարդները, որոնք հիմնականում բանակից վերադառնալով կանգնում են գործազրկության խնդրի առջև: Կարծում ենք, որ ոչ միայն մայրաքաղաքում, այլև մարզերում ևս անհրաժեշտ է կազմակերպել նման դասընթացներ: Բացի այդ, կարևորվում է այնպիսի միջոցառումների ձեռնարկումը, որոնք կնպաստեն շրջաններում բնակվող երիտասարդների և երիտասարդ ընտանիքների համար տնտեսությունների ձևավորմանը և հայրենի բնակավայրերի պահպանմանը:

Երիտասարդության զբաղվածության հիմնախնդիրներից է նաև թաքնված զբաղվածությունը. շատերն են բարձր աշխատավարձով չգրանցված աշխատանքը գերադասում ցածր վճարվող գրանցված աշխատանքից: Բացի այդ, երիտասարդների զգալի մասը աշխատում է տնտեսության ստվերային հատվածներում, և այդ պատճառով վիճակագրական ծառայությունները ստույգ տեղեկություն չեն տալիս երիտասարդության զբաղվածության մասին: Ընդգծենք, որ 2015թ. հունվարի 1-ից ԼՂՀ-ում նախատեսվում է սկսել կենսաթոշակային նոր՝ բազմաստիճան համակարգի գործարկումը, որի հիմնական նպատակը ինքնաֆինանսավորվող համակարգի ձևավորումն է: Հայտնի է, որ կենսաթոշակային բարեփոխումների հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ քաղաքացին ինքն է պատասխանատու իր ապագայի համար, ինչը համահունչ է ժամանակակից աշխարհի իրողություններին: Կարծում ենք, որ կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում զբաղված քաղաքացիները կցանկանան աշխատել պայմանագրային հիմունքներով, ինչը կհանգեցնի հանրապետությունում աշխատաշուկայում ստվերի կրճատմանը: Երկրում երիտասարդների զբաղվածության հիմնախնդրի լուծմանը կնպաստի նաև երիտասարդներին վարձելու համար գործատուների համար խթանների ստեղծումը և աշխատանքի շուկային երիտասարդներին լիարժեք ինտեգրումը:

Վերոնշյալ բոլոր խնդիրները անհետևանք չեն մնում և բացասական ազդեցություն են թողնում երկրի ժողովրդագրական պատկերի վրա: Աշխատանք չունեցող երիտասարդը չի համարձակվում մտածել ընտանիք ստեղծելու մասին, ինչն էլ ծնելիության անբավարար մակարդակի պատճառ է դառնում: Այդ ամենը պահանջվում է երիտասարդների զբաղվածության կարգավորման և դրա արդյունավետ մակարդակի հասնելու հիմնավորված քաղաքականություն:

ԼՂՀ աշխատանքային ներուժի ոչ արդյունավետ օգտագործմանը նպաստում է պետականության գոյությանը սպառնացող ահավոր վտանգը՝ արտագաղթը, որը բացատրվում է ոչ միայն շուկայական հարաբերությունների բացասական հետևանքներով, այլև սոցիալական անարդարությամբ, ապագայի նկատմամբ հավատ ու երաշխիք չունենալու հուսահատությամբ: Արդյունքում աշխատանքի շուկան արժեզրկվեց՝ պահանջարկային մասնագիտությունների, բարձր որակավորման մասնագետների արտագաղթի հետևանքով: Այն ընդհատեց որակյալ աշխատուժի վերարտադրության բնականոն ընթացքը, խաթարեց աշխատանքային տարիքի սերնդափոխության շղթայի օղակները:

Այսօր արհմիություններին անհրաժեշտ է վերականգնել իրենց դերը հասարակության մեջ: Արհմիությունները ի վիճակի չեն՝

- բարձրացնել կամ պահպանել իրենց անդամների իրական եկամուտները,
- ապահովել նրանց աշխատանքով,
- ներագդել պետական քաղաքականության վրա:

Ջբաղվածության պետական կարգավորման քաղաքականության արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ է նաև վերափոխել մարդկանց հոգեբանությունը, որպեսզի պետությունից նվազագույն սոցիալական օգնություն հայցողներից վերածվեն աշխատանքային ոլորտում ակտիվ գործունեություն ծավալողների: Առաջնահերթ խնդիր պետք է համարել նաև հասարակության կողմնորոշումը դեպի իրական արժեքներ, դեպի նոր և երկրորդային հարցերի սահմանազատում, դեպի նոր մտածողություն: Բազմաթիվ ընտանիքներ, հաճախ իրենց զրկելով նվազագույն նյութական հնարավորություններից, երեխաներին պարտադրում են ընդունվել բուհ՝ երբեմն միայն ավարտական վկայական ստանալու մղումով, ինչը հաճախ երիտասարդ մարդու կյանքի լավագույն տարիների կորուստ է և, ամենագլխավորը, հակումներն առավել լիարժեք իրացնելու հնարավորության սահմանափակում:

Անհրաժեշտ է իրատեսորեն գնահատել ԼԳՅ առկա աշխատուժի և մասնագետների պատրաստվածությունը ժամանակակից պահանջների տեսանկյունից: Կարծում ենք, որ մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման համար կարևորվում է կադրերի բարձրակարգ որակավորումը և բավարար քանակությամբ աշխատատեղերի ստեղծումը: Կրթված հասարակությունը, մարդկային կապիտալի որակն այն հենարաններն են, որոնք վերջին հաշվով թույլ են տալիս ապահովել երկրի զարգացումը բոլոր ուղղություններով:

Այսպիսով՝ ժամանակակից տնտեսական պայմաններում, ԼԳՅ-ում զբաղվածության պետական կարգավորման հիմնախնդիրը պետք է համարել աշխատուժի առաջարկի և պահանջարկի հավասարակշռության և կառուցվածքային համապատասխանության ապահովումը՝ աշխատանքի և աշխատավարձի, ձեռնարկատիրական, ֆինանսավարկային, ներդրումային, հարկային, տարածքային զարգացման, կրթական, ժողովրդագրական և աշխատուժի տեղաշարժի քաղաքականությունների միջոցով:

èáŌ¼²ŪŪ² Ō²Ū¶²è²ŌŪ²Ū, i. .Á.
 ²ñáÐ iÝi»è³.ÇiáŌÁŪ³Ý i»èáŌÁŪ³Ý &
 Î³è³îŪ³Ý ³ŪµÇáÝÇ 'áŌ»Ýi

Ð³Ū³éái³.Çñ

Հողվածում դիտարկվում են ԼՂՀ-ում զբաղվածության կարգավորման նպատակը, հիմնախնդիրները և առանձ-նահատկությունները: Ձբաղվածության կարգավորման հիմնական նպատակն է բնակչության լրիվ և արդյունավետ զբաղվածության ապահովման համար պայմանների ստեղծումը: Ելնելով ԼՂՀ աշխատաշուկայի պահանջներից անհրաժեշտ է բարձրացնել գործազուրկների և հաշմանդամների մրցունակությունը աշխատաշուկայում, խթանել երիտասարդների և կանանց զբաղվածությունը, միասնական կարգավորել աշխատուժի ներքին և արտաքին տեղա-շարժը: Մարդկային կապիտալի արդյունավետ օգտագործման համար կարևորվում է կադրերի բարձրակարգ որակա-վորումը և բավարար քանակությամբ աշխատատեղերի ստեղծումը: Կրթված հասարակությունը, մարդկային կապի-տալի որակն այն հեներացներն են, որոնք վերջին հաշվով թույլ են տալիս ապահովել երկրի զարգացումը բոլոր ուղղություններով: Կարևորվում է նաև հասարակության մեջ արհմիությունների դերի վերականգնումը: Առաջարկվում են մշակել տնտեսական աճի համալիր ծրագրեր, որոնք բնակչության զբաղվածության կարգավորման և կենսամա-կարդակի բարձրացման ելակետային պայմանն են:

³ÝÉÇ µ³éñ. ½µ³Ōi²IáŌÁŪáŌÝ, Îñ-¹IáñáŌŪ, ³ΒÉ³IáŌÁ, ³ΒÉ³³áŌÎ³, ŪñŌáŌÝ³IáŌÁŪáŌÝ, áñ³Ý¹IáñáŌŪ, áñÎ³/ñIáŌÁŪáŌÝ, ³ç³IáŌáŌÁŪáŌÝ£

ПРОБЛЕМЫ РЕГУЛИРОВАНИЯ ЗАНЯТОСТИ В НКР

РУЗАННА МАНГАСАРЯН, к.э.н.
*доцент кафедры экономической теории и
 управления Арцахского государственного университета*

Аннотация

В статье рассматриваются проблемы занятости населения, цель и особенности ее регулирования в НКР. Основная цель регулирования занятости – создание условий для обеспечения полной и эффективной занятости населения. Исходя из требований рынка труда НКР, необходимо повысить конкурентоспособность безработных и инвалидов, поощрять молодежную и женскую занятость, обеспечить единое регулирование внешней и внутренней миграции рабочей силы. Для эффективного использования человеческих ресурсов важное значение имеет высокая квалификация кадров и создание достаточного количества рабочих мест. Образованное общество и качество человеческого капитала - это базисы, позволяющие в конечном счете обеспечить развитие страны во всех направлениях. Важно также восстановление роли профсоюзов в обществе. Предлагается разработать программы комплексного экономического развития, являющиеся исходным условием регулирования занятости и повышения уровня жизни населения.

Ключевые слова: занятость, регулирование, рабочая сила, рынок труда, конкурентоспособность, квалификация, безработица, содействие.

EMPLOYMENT REGULATION ISSUES IN THE NAGORNO KARABAKH REPUBLIC

RUZANNA MANGASARYAN, Candidate of Sciences (Economics)
*Associate Professor
 Economic Theory and Management Department
 Artsakh State University*

Abstract

The article reviews the objective, issues and peculiarities of the employment regulation in the Nagorno Karabakh Republic (NKR). The main objective of the employment regulation is to ensure required conditions/opportunities for full and efficient employment. Taking into account the requirements of the labor market of the NKR it is required to make the unemployed, people with disabilities more competitive in the labor market; to promote youth and female employment; and to have a unified/common approach to regulating external and internal migration. High skills and job availability are of high importance to efficient utilization of human capital. Educated society and the quality of human capital are the pillars that would ultimately ensure the development of the nation. The role of the trade unions needs to regain its importance as well. The author proposes to design complex economic development programs that could ensure employment regulation and improve quality of life.

Keywords: employment, regulation, labor force, labor market, competition, qualification, unemployment, promotion.

Ի՞նչ է Ի՞նչ Ժամանակահատվածներում
Ի՞նչ է Ի՞նչ Օրենքը և Ի՞նչ է Ի՞նչ

և՛ լինում է Ի՞նչ Ի՞նչ, և՛ չլինում է Ի՞նչ Ի՞նչ»

ԸՄ ԳԼՉ Օ. Ժամանակահատվածների փոփոխությունը
և՛ լինում է Ի՞նչ Ի՞նչ և՛ չլինում է Ի՞նչ Ի՞նչ
և՛ լինում է Ի՞նչ Ի՞նչ և՛ չլինում է Ի՞նչ Ի՞նչ

ԸՄ ԳԼՉ և՛ լինում է Ի՞նչ Ի՞նչ

Վերջին երկու տասնամյակների ընթացքում պարբերաբար անդրադարձել են արդի հայ տնտեսագիտական մտքի կացությանը, փորձել «տեսություն» կոչված ակնարկների ձևով ուրվագծել կատարվող տեղաշարժերը: Բնականաբար ժամանակի հոսքի մեջ փոխվել են նրանում կատարվող արձարժումների շրջանակները:

Սույն հոդվածը խմբագրի իմ խոսքն է ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակված Գ.Է.Յարությունյանի «ՀՀ արտաքին առևտրի հետազոծող համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» (Ե., 2013) և Ս.Ա.Մկրտչյանի «Տնտեսական աճ. Կայուն զարգացում» (Ե., 2013) մեկնադրությունների վերաբերյալ:

1

Եվ նորից տնտեսական աճի մասին: Պոլ Յեյնեն նկատում է, թե «Զափազանց մեծ թվով մարդիկ «գիտեն», թե ինչպես պետք է լուծել հասարակության անհետաձգելի խնդիրները: Տնտեսագիտությունը նրանց պատկերաճանձն է որպես շատ պարզ կառուցված մի աշխարհ, որտեղ կարելի է շատ հեշտությամբ իրացնել մտադրությունները, իսկ լավ հասարակություն ստեղծելու ճանապարհի միակ խոչընդոտը բարի մտադրությունների անբավարարությունն է: Բայց հասարակությունում իրականացնող ցանկացած գործողություն իր հետևից բերում է չնախատեսված և անկանխատեսելի հետևանքներ»¹: Տասնամյակներ առաջ թվում էր, թե որոշակիացված են տնտեսական աճի հետ կապված հարցերը, հստակեցված այն պայմանավորող գործոնների շրջանակները, որը բովանդակային հավասարություն էր գծում տնտեսական աճ-զարգացում հասկացությունների միջև: Մինչդեռ, ժամանակ առ ժամանակ խնդրի վերաբերյալ արձարժումները վկայում են չլուծված հանգույցների մասին հատկապես ապագա կտրվածքների առումներով:

Հայտնի է, որ Հռոմեական կայսրությունը, բացի տարածական աճից, այլ պատկերացում չի մշակել, որը և դարձել է նրա կործանման պատճառը:

Անցյալ դարի 70-ական թվականներին ոչ առանց հիմքի մի հռոմեական «գլոբալ աղետ» էին կանխագուշակում հռոմեական ակումբի ներկայացուցիչները՝ կապված արդյունաբերության տեմպերով պայմանավորված հունքային ռեսուրսների ծավալների արագ աճի և աճող բնակչության աճող պահանջումների հետ: Դիպուկ արված այն դիտողությունը, թե «Աշխարհը բավականաչափ մեծ է՝ ցանկացած մարդու կարիքները բավարարելու համար, բայց չափազանց փոքր է, որ բավարարի մարդկային ազահությունը» (Մահաթմա Գանդի), կարծես անհրաժեշտություն է դարձել անցումը տնտեսության «գրոյական աճի» մոդելին: Ոչ իրատեսական այդ գաղափարին պիտի հաջորդեր տնտեսական աճի իրատեսական հայացքը, փորձելով տնտեսական առաջընթացը կառուցել «կայուն զարգացման» տեսության պոստուլատներին համապատասխան:

¹ Պոլ Յեյնեն, Տնտեսական մտածելակերպ, Ե., 2008, էջ 675:

Ինչպես նկատում է Ս.Սկրտչյանը, գրականության մեջ կարելի է հանդիպել «կայուն զարգացման» շուրջ հարյուր տարբերակների, որոնք ի վերջո հանգում են ռեսուրսների արդի և ապագա ժամանակների օգտագործման որոշարկմանը: Բնորոշումների այդ նստվածքների մեջ էլ նա կայուն զարգացումը բնութագրում է որպես արդյունքների արդարացի բաշխմամբ շարունակական տնտեսական աճ ռեսուրսների գումարային չնվազող ներուժի և շրջակա միջավայրի որակի բարելավման պայմաններում:

Ս.Սկրտչյանի հետազոտության մեջ այն, ինչ ամենից շատ արժանի է ուշադրության, դա խնդրի առնչումն է հանրապետության տնտեսությանը, ավելի ստույգ որոշակիացնել լեռնամետալուրգիական արտադրության կայուն զարգացման էությունը, որը կարևորագույն նշանակություն ունենալով տնտեսական աճի գործոնների համակարգում և ցուցադրելով առաջանցիկ աճ ՅՆԱ-ի, հարկային մուտքերի և արտահանման մեջ, միաժամանակ շրջակա միջավայրի որակի վատթարացման մեջ ամենամեծ բացասական ազդեցություն ունեցող ճյուղն է: Հեղինակը հարցի նշված դրվածքում վկայակոչում է այն կողմնորոշումը, որը ցուցադրում է համաշխարհային փորձը, երբ բարեկեցության որոշակի մակարդակի հասնելուց հետո այդ բացասական ազդեցությունը սկսում է նվազել: Իսկ, քանի որ Հայաստանը, որպես զարգացող երկիր «դեռևս հեռու է էկոլոգիական բարելավման կետից, և տեխնածին աճը ուղեկցվում է շրջակա միջավայրի կազմալուծման պայմաններում», ուստի կարևորություն է ստացել «բարելավման կետի ցածր մակարդակի ապահովումը», այլապես ստիպված ենք լինելու զուգահեռ գծելու զարգացած երկրների այն օրինակները «երբ թվացող տնտեսական զարգացման գործընթացում երկիրը զրկվում է բնական ռեսուրսներից և կենսաբազմազանությունից»¹: Սոցիալական առաջընթացը վաղուց պարտադրում է այն տրամաբանությունը, թե օրակարգի հարց է դարձել տնտեսական աճի և առաջընթացի ցուցանիշների ճշգրտումը՝ այդ գործոնը մտցնելով սոցիալ-տնտեսական հիմնական ցուցանիշների համակարգում: Հետևապես, ժամանակն է ինդիկատորների և ինդեքսների կիրառությամբ մշակել մի համընդհանուր ինտեգրալ ցուցանիշ, այն ընդունել որպես առաջընթացի իմացության ճիշտ մեկնակետ, որը, ինչպես նկատում է Ս.Սկրտչյանը, «կարող է լինել տնտեսական աճը և տնտեսական բարեկեցությունը բնութագրող ՅՆԱ-ի, ՅԱԱ-ի, ազգային եկամտի ցուցանիշների առավել տարողունակ համարժեքը»²: Ինչ խոսք, ազգային տնտեսությունների կտրվածքով դրանք կունենան չափումների անհամապատասխանություն, սակայն դա ոչ թե հակասություն է, այլ բովանդակային առումով համամարդկային անհրաժեշտություն:

Ս.Սկրտչյանն իրականացնում է ինտեգրալ ինդիկատորով ՀՀ տնտեսության և լեռնամետալուրգիական արդյունաբերության կայուն զարգացման վերլուծություն, համաձայն որի ոլորտը զարգանում է «պաշարների արագացված հյուծմամբ անկայուն աճով», որն ինքնին ի հայտ է բերում «կայունացնող տնտեսական քաղաքականության շարունակական գործընթացի իրականացման» անհրաժեշտությունը: Հրապարակվող շատ հողվածներում առաջարկությունները հաճախ կրում են հանձնարարականների բնույթ: Կիրառելով տնտեսական աճի նեոդասական Դասգուպտա-Հիլ-Սոլոու-Ստիգլից թույլ կայունության մոդելը, Ս.Սկրտչյանը կոնկրետ նյութի փաստարկված վերլուծության արդյունքում գնահատել է ՀՀ տնտեսության պոտենցիալ կայունությունը և ստացել քանակական գնահատականներ, մտադրությ ռենենալով հատկապես մետաղական ռենտայի ներդրման և հարկային նոր մեխանիզմների կիրառման միջոցով այն դարձնելու պոտենցիալ գոյատևող և պոտենցիալ կայուն:

Իմ խորհուրդը Ս.Սկրտչյանին՝ շարունակել վերը նշված հարցերի վերլուծական խորացումները:

Փոխվել են մարդու, երկրների և բնության միջև փոխհարաբերության բանաձևերը, վերափնաստավորելով զարգացում ենթադրող կատեգորիաների ֆունկցիոնալ նշանակությունը, հաստատելով այն հայտնի իմաստությունը, թե աշխարհում ամեն ինչ փոխկապակցված է:

¹ Տե՛ս Ս.Սկրտչյան, Լեռնամետալուրգիական արդյունաբերությունը ՀՀ տնտեսական աճի հիմնահարցում (ատենախոսության սեղմագիր), Ե., 2013, էջ 11:

² Տե՛ս Ս.Սկրտչյանի թեկնածուական ատենախոսությունը, էջ 68:

Վերը նշված հարցերի առումով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գ.Յարությունյանի «ՀՀ արտաքին առևտրի հետազոծող համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում» (2013) մենագրությունը: «Անցման» շրջանի տնտեսագիտական միտքը բազմիցս անդրադարձել է արտաքին առևտրի խնդիրներին, առաջադրել լուծումներ, դրանք հիմնավորել համապատասխան փաստարկներով: Նշված աշխատությունը նպատակ ունի «Ընդհանրացնել նշված բոլոր մոտեցումները և համակարգել ՀՀ արտաքին առևտրի կառուցվածքի բարելավմանն առնչվող հիմնական տեսանկյունները՝ հեռանկարային զարգացման հնարավոր ուղիների բացահայտման նկատառումներով»¹: Իսկ, քանի որ տեղի են ունեցել համակարգային փոփոխություններ, պայմանավորելով նոր լուծումների հետ կապված դժվարությունները, ուստի հեղինակն իրավացիորեն դիտարկումներ է կատարում ելակետի՝ Հայաստանի խորհրդային շրջանի տնտեսական պատմության առանձնահատկությունների վերաբերյալ, ոչ թե համաձայնելով առանձին հեղինակների մոտ հանդիպվող նախորդ համակարգը միագիծ ժխտելու սահմանափակ հայեցողյանը, այլև փոխանցման գծի վրա դնելով այն, որ «Այնուամենայնիվ, խորհրդային Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերում մասնագիտացման արդյունքում ձևավորվել են որոշակի արտադրական ավանդույթներ, և այս առումով, Հայաստանն այդ ոլորտներում, որոշակի առավելություններ ունի», հատկապես նկատի ունենալով «բարձրորակ մարդկային կապիտալը»²:

Համաշխարհային շուկան, որին սկսեց ինտեգրվել հանրապետությունը, առաջադրում էր նոր չափանիշներ: Հիմնական խնդիրներից է դառնում արտաքին շուկայում պահանջարկ ներկայացնող ապրանքների արտադրությունը, փոխում արտադրության ճյուղային և արտաքին առևտրի աշխարհագրական կառուցվածքը: Գ.Յարությունյանը ճիշտ է կարդում անցման շրջանի տնտեսական պատմությունը, կատարում տրամաբանական դիտարկումներ: Սակայն, ավելի, քան երկու տասնամյակ անց, ազգային տնտեսության թուլությունը մնում են համագործակցության սահմանափակ ոլորտները՝ համաշխարհային շուկային ներկայանալով սակավաթիվ հունքային ռեսուրսներով, գյուղատնտեսական որոշ մթերքներով և էժան աշխատուժով, ինչը վտանգավոր է թե՛ տնտեսական անվտանգության, թե՛ երկրի արտադրական հզորությունների ոչ արդյունավետ օգտագործելու, և թե՛ երկրի ապագա բարօրության տեսանկյունից: Դրանցում, կարծես, իրացվում են աշխատության նպատակադրումը համեմատական առավելությունների տեսության դիտակետից բացահայտել հանրապետության տնտեսության զարգացման հնարավորություններն ու գտնել դրանց նպատակային օգտագործման ոլորտները: Իսկ դա այն տարողունակ տեսությունն է, որում, ըստ էության, բեկվում են ինչպես նախորդ, այնպես էլ հետագա տեսությունների բոլոր սկզբունքները: Այս իմաստով առաջինն անդրադարձ է կատարվում մերկանտիլիստների մասին գրականության մեջ տեղ գտած՝ «էժան գնել, թանկ վաճառել» պարզունակ ըմբռնմանը: Մինչդեռ Կ.Մարքսը հասուն մերկանտիլիզմը դիտում է «գիտության լուրջ ձեռքբերումներից», իսկ Ջ.Մ.Քեյնսը գտնում էր, որ մերկանտիլիզմի առաջադրույթն էր՝ մեծացնել փողի առաջարկը, նվազեցնել տոկոսադրույթը և խթանել ներդրումներն ու զբաղվածությունը: Իսկ նախորդ հարյուրամյակների ընթացքում զարգացած ու զարգացող երկրների տնտեսության կարգավորման միջոցառումների մեջ կարելի է կարդալ մերկանտիլիզմի պատմական փորձի իմաստությունը:

Տնտեսական կյանքի հետագա զարգացումը լայն հայացքի տակ է դնում ազգային հարստության ստեղծման վերաբերյալ ընկալումների շրջանակները, գտնել հարստության և միջազգային առևտրի միջև կապի հարաբերակցությունը՝ ծնունդ տալով ազատ առևտրի քաղաքականության դոկտրինային, սկզբում՝ Ա.Սմիթի բացարձակ առավելության, իսկ ավելի ուշ Դ.Ռիկարդոյի հարաբերական ծախսերի կամ հարաբերական առավելությունների տեսությանը: Վերջինիս

¹ Գ.Յարությունյան, ՀՀ արտաքին առևտրի հետազոծող համեմատական առավելությունների բազմաչափ համակարգում, Ե., 2013, էջ 84:

² Նույն տեղում, էջ 187:

նորոգության փորձերը սկսեցին շուրջ մեկ դար հետո՝ XX դարասկզբին, ի դեմս Յեքշեր Օհլինի տեսության, ըստ որի երկրների միջազգային մասնագիտացման հիմքում պետք է լինի արտադրության գործոններով ապահովվածության աստիճանը, այդ մոդելը ստուգաբանող Վ.Լեոնտևի պարադոքսի, Մ.Պոզների տեխնոլոգիական խզման տեսության, ապրանքի կենսացիկլի, Մ.Պորտերի երկրի մրցունակության որոշակի գործոնների համախմբի վրա կառուցված «ազգային մրցակցային առավելությունների» տեսությունը և այլն: Գ.Յարությունյանը նշված բոլոր տեսությունների համար իբրև սուբստանց դիտում է հարաբերական առավելությունների տեսությունը:

Աշխատության սույն բաժնի շարադրանքը կառուցված է տեսակետների տեսության, էքսկուրսների և վերլուծության սկզբունքների վրա, որն ամփոփվում է տնտեսական առավելությունների գնահատման հեղինակի այն հայեցողյան մեջ, որի հիմքում ուսումնասիրության պլուրալիստական մեթոդն է, որը ենթադրում է երևույթների բազմատարբերակ գնահատման հիման վրա ձևավորված ինտեգրալ հայացք: Վերջինս էլ թույլ է տալիս հասնելու ինտեգրալ համեմատական առավելության «որպես արտաքին առևտրում այս կամ այն ապրանքի գծով երկրի տնտեսական առավելությունների ամբողջություն, որն ապահովում է մրցունակություն համաշխարհային շուկայում»: Աշխատության մեջ տրվում են այն յոթ գործոնների (աշխատուժ, արտադրության այլ գործոններ, համաշխարհային շուկայի պահանջարկ, այլընտրանքային ծախսեր, ապրանքի կենսացիկլի առանձնահատկություններ, գների մակարդակի փոխարժեք, ներքին շուկայի մրցունակություն և ինստիտուցիոնալ այլ պայմանների առկայություն) բնութագրիչներն ու առանձնահատկությունները, որոնց ազդեցությամբ ձևավորվում է երկրի ինտեգրալ համեմատական առավելությունը: Սակայն, Գ.Յարությունյանը գտնում է, որ վերջինիս գնահատման համար հաճախ օգտագործող Բ.Բուլասսայի «բացահայտված համեմատական առավելությունների» ինդեքսը ճշգրտման կարիք ունի: Ուշագրավ է հեղինակի նկատումը. «Ինդեքսը հնարավորություն է տալիս հետևել արտահանման դինամիկային և դրա վերլուծության արդյունքում կառուցել արտահանման հետագա բարելավման ճիշտ ռազմավարություն, բայց չի դիտարկում արտահանման կառուցվածքը պայմանավորող գործոնները, արտահանման պոտենցիալ ունեցող, բայց չարտահանվող ապրանքները, անտեսում է տնտեսական արդյունավետության հարցը: Այնինչ, արտահանման կառուցվածքի կատարելագործումը ենթադրում է պոտենցիալ համեմատական առավելությունների բացահայտում, վերակողմնորոշում ռեսուրսահետևանքով ոլորտներից դեպի գիտատար, մեծ ավելացած արժեք պարունակող ապրանքների արտադրության ոլորտ»¹:

Վերը նշված գործոնների տեսանկյունից էլ հեղինակը իրականացնում է հանրապետության ճյուղերի ինտեգրալ համեմատական առավելությունների վերլուծությունը, փորձելով ոչ միայն նախանշել արտաքին առևտրի կառուցվածքի բարելավման հնարավոր ուղղություններն, այլ նաև բացահայտել արտադրական ոլորտում այդ առավելությունների դրսևորմանը խոչընդոտող հիմնական պատճառները²:

Յանրապետության տնտեսության ճյուղերի համեմատական առավելությունների առաջարկվող լուծումները, ինչպես ասում է հեղինակը, կարող են նաև «նվազ իրատեսական թվալ», բայց կարևորն այն է, որ աշխատությունը միտք է շարժում և հարցերի դրվածքով փորձ է հանրապետության տնտեսական տարածքը դարձնել համահունչ համեմատական առավելությունների սկզբունքներին:

Գ.Յարությունյանի նշված աշխատությունը հեղինակի ինքնահաստատման սկիզբն է: Նա դեռ ասելիք ունի:

¹ Գ.Յարությունյան, նշվ. աշխ., էջ 84:

² Սույն տեղում, էջ 187:

èà´°ðí ê²ðÆÛÛ²Û, i. . . , áñáy»éáñ

ÐÐ¶²² Ø. øáÃ³ÝÛ³ÝÇ³Ýí³Ý
íÝí»è³·ÇíáðÃÛ³Ý ÇÝèíÇíáðíÇ
·ÉË³íáñ·Çí³βË³íáð

Ð³Û³éáí³·Çñ

Տնտեսական աճի և արտաքին առևտրի հարցերը մշտապես շարունակել են զբաղեցնել տնտեսագետներին: Եթե Ս.Սկրտչյանն առաջադրում է ինդիկատորների և ինդեքսների կիրառությամբ մի համընդհանուր ինտեգրալ ցուցանիշի մշակումը, որը կարող է լինել ՀՆԱ-ի, ՀԱԱ-ի, ազգային եկամտի ցուցանիշների առավել տարողունակ համարժեքը, ապա Գ. Հարությունյանն իրականացնելով հանրապետության ճյուղերի ինտեգրալ համեմատական առավելությունների վերլուծություն, փորձում է երկրի տնտեսական տարածքը դարձնել համահունչ վերը նշված սկզբունքներին:

³ÝÉÇµ³é»ñ. Ñ³Û»Û³í³Ý³é³í»ÉáðÃÛáðÝÝ»ñ, µ³½Û³á³= Ñ³Û³í³ñ, ÇÝí»ñ³É Ñ³Û³óù, íÝí»è³í³Ý³×, í³ÛáðÝ³½³ñ³óáðÛ:

МОЕ СЛОВО РЕДАКТОРА

РОБЕРТ САРИНЯН, *д.э.н., профессор*

*главный научный сотрудник
Института экономики
им. М. Котаяна НАН РА*

Аннотация

Экономисты продолжают постоянно заниматься вопросами экономического роста экономики и внешней торговли. Если С.Мкртчян предлагает разработать единый интегральный показатель с применением индикаторов и индексов, который может быть наиболее всеобъемлющим эквивалентом показателей валового внутреннего продукта (ВВП), валового национального продукта (ВНП), национального дохода, то Г.Арутюнян на основе выполненного интегрального анализа сравнительных преимуществ отраслей республики пытается экономическое пространство страны сделать созвучным вышеуказанным принципам.

Ключевые слова: *сравнительные преимущества, многомерная система, интегральный взгляд, экономический рост, стабильное развитие.*

MY WORD OF EDITOR

ROBERT SARINYAN, *Doctor of Sciences (Economics)*

*Chief Research Associate
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

Issues on economic growth and foreign trade have been constantly of interest to economists. If Mkrtychyan, S., proposes design of a composite index that relies on indicators and indexes that could be broader equivalent to GDP, GNP, and national income, Harutyunyan, G., by analyzing integral comparative advantages of industries of the economy of the Republic attempts to make economic space in line with the above-stated principles.

Keywords: *comparative advantages, multidimensional system, integral approach, economic growth, sustainable development.*

Տասնամյակներ շարունակ տնտեսագիտության պոստուլատները մնացել են նույնը, իսկ ավանդական տեսությունը խնամքով ուսումնասիրում է միայն հավասարակշիռ, միջին, ընդհանուր իրավիճակներն ու դեպքերը, հնարավորություն չունենալով նկարագրել, ինչպես նաև համեմատել տնտեսական սուբյեկտների տարբերակված իրավիճակների մասնակի դեպքերը: Այսօր մարդկությունը կանգնած է համակարգային և արմատական փոփոխությունների առջև՝ նոր առաջադրույթներ թելադրելով տնտեսագիտության տեսությանը: Պահանջվում են տնտեսական կյանքի նոր լուծումներ, նոր կանխադրույթներ ու սկզբունքներ: Հավասարակշռության մաթեմատիկական մոդելներն ու մտահայեցական գրաֆիկները չեն արտահայտում երևույթների իրական վիճակը: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում մակրոտնտեսագիտության միկրոտնտեսագիտական հիմքերի հետ կապերի խնդիրը: Հարկ է նկատել, որ մակրոտնտեսագիտությունն ըստ էության, օրգանապես սկիզբ է առնում միկրոտնտեսագիտության դրույթներից ու պոստուլատներից: Ինչպես նկատում է ամերիկյան տնտեսագետ Պ.Հաուլիթը. «Լուկասը և Սարջենթը պնդում են, որ քայնայան մակրոտնտեսագիտության «հիմնարար» թերությունը ամուր միկրոհիմքերի բացակայությունն է: Անթիվ-անհամար ուսանողներ և գործնական մարդիկ դժգոհում էին առարկայի «տարօրինակ» բնույթի համար, որի երկու հիմնական ճյուղավորումները աշխարհին ուղղված արմատապես տարբերվող հայացքներ են: Միասնության այս բացակայությունը պետք է անհանգստացներ տնտեսագետներին: Ցանկացած գիտական շարադրանքում ֆրանգմենտար մեկնաբանումները ինտելեկտուալ առումով բավարար չեն և արդարացիորեն կոչվում են ad hoc մեկնաբանություններ: Տեսությունները, որոնք կիրառման մի ոլորտից մյուսին անցնելիս կարիք ունեն փոփոխությունների, նոր կիրառումների կամ նոր սովորների ի հայտ գալու դեպքում համընդգրկուն օրենքներ չեն տալիս և հղի են կործանման»¹:

Եվ իրոք, ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ միկրո- և մակրոտնտեսագիտությունների միջև գոյություն չունեն հստակ մեթոդական կապեր ու կախվածություններ: Այդպիսիք չկան նաև այդ երկու մակարդակներում կառավարման գործընթացներում: Բանն այն է, որ թե մեկ, թե մյուս մակարդակներում հաշվարկների մեթոդիկաներն ունեն սկզբունքային տարբերություններ: Մասնավորապես, մակրոցուցանիշները չեն ներառում միկրոցուցանիշների կարևորագույն բաղադրիչներից մեկը՝ ինքնարժեքը, հետևապես անտեսվում է տնտեսության արդյունավետության այնպիսի մի շատ կարևոր ցուցանիշ, ինչպեսին նյութատարության ցուցանիշն է: Ի վերջո, արդյունավետության ցուցանիշները մակրոտնտեսագիտության մեջ հաշվարկվում են բոլորովին այլ եղանակով. այստեղ գլխավորը տնտեսական աճի ցուցանիշներն են, ինչպես օրինակ աճի տեմպը (ընթացիկ տարվա ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա ՀՆԱ-ին) և տնտեսական հավելածի տեմպը (ՀՆԱ-ի տարբերությունը հարաբերած բազային տարվա ՀՆԱ-ին): Իրականում դրանցով բնութագրվում է ազգային տնտեսության գործունեության արդյունավետությունը: Հարց է առաջանում՝ իսկ եթե ՀՆԱ-ի հավելած գոյություն չունի: Արդյո՞ք դա նշանակում է, թե տնտեսությունը չի զարգանում: Մինչդեռ այդ դեպքում տնտեսությունը կարող է զարգանալ որակապես, ինչը ենթադրում է նյութա-, ֆոնդա-, աշխատատարության իջեցում, որն ըստ էության կնշանակի ոչ այլ ինչ, քան տնտեսական զարգացման արդյունավետության հա-

¹ Хауитт П. Макроэкономика: отношения с микроэкономикой//Экономическая теория/ под ред. Дж.Итуэлла, М. Милгейта, П. Ньюмена: Пер. с англ./Науч. ред.чл.-корр. РАН В.С.Автономов.-М.:ИНФРА-М, 2004,- с.485.

մակցված արժեքային ցուցանիշի, կամ որ նույնն է ինքնարժեքի իջեցում: Այնուամենայնիվ այս ցուցանիշները, ինչպես նաև արտադրության շահութաբերության մակարդակը մակրոտնտեսագիտության մեջ չեն հաշվարկվում: Ամեն դեպքում ոչ միկրոցուցանիշների հաշվառման մեթոդիկայով:

Անհրաժեշտություն է դառնում հստակեցնել կապը տարբեր հարթությունների ցուցանիշների միջև, տալ տնտեսական սուբյեկտների տարբերակված վիճակները, որի արդյունքում նշանակալի չափով մեծանա տնտեսության ցանկացած մակարդակի, սկսած միկրոմակարդակից մինչև միջերկրային մեզամակարդակների վերլուծությունների և կանխատեսումների հնարավորությունները:

Ընդհանրապես հավասարակշռվածության խնդիրը նոր լուսաբանումների կարիք ունի հենց տնտեսագիտական մտքի զարգացման տրամաբանությամբ: Հաճախ տնտեսական երևույթների վերլուծությունների ժամանակ ավելի շատ գործ ենք ունենում պայմանական չափորոշիչների հետ, որոնք հստակ պատկերացում չեն տալիս տնտեսական համակարգի իրական վիճակի մասին: Ժամանակի ու տարածության մեջ արտաքուստ պարզ թվացող տնտեսական ցուցանիշները իրենց խորքային շերտերում նոր տեսանկյուններ ու մոտեցումներ են ենթադրում, որոնք դժվարությամբ են տեղավորվում հավասարակշռության տեսության քառակուսու սահմաններում: Այս առումով, հաշվի առնելով տնտեսական բազմաթիվ պարամետրերի ազդեցությունը (գների ինդեքս, տեղեկատվական համաչափություն, ինստիտուցիոնալ գործոնների հաշվառում, տեխնոլոգիական պարամետրեր, սպառողական ճաշակներ և այլն), ապա որպես շահույթի աղբյուր ներկայանում է հասարակական ինտելեկտն իր ամբողջական և մասնակի դրսևորումներով¹: Թերևս հենց այսպես կարելի է բացատրել մարդու զարգացման պատմությունը, տնտեսական աճը, հիմք ընդունելով անկենդան և կենդանի բնության բաղադրիչների, ինտելեկտով կարգավորման օրենքի գործողությունը: Նկատենք, որ մարդու զարգացման պատմությունը ճանաչողության զարգացման պատմություն է, և այդ ճանապարհին մարդը փորձում է իր վարքագիծը իրագործել ինտելեկտի հենքի վրա: Այլ խոսքով, ռեսուրսների, հատկապես բնական, ցանկացած միավորի օգտակար գործողության գործակիցը մարդու ինտելեկտի շնորհիվ մեծանում է՝ իր արտահայտությունը գտնելով արտադրված ապրանքի արտադրողականության բարձրացման մեջ: Եշմարիտ է այն, որ տնտեսության մեջ տարբեր արտադրողների մոտ գոյություն չունեն նույնատեսակ ապրանքների արտադրության հավասար ծախքեր, որ շուկայական գինը ամբողջական պահանջարկի և ամբողջական առաջարկի համընկման արդյունք չէ, այլ տվյալ ապրանքի վաճառողի ու գնորդի միջև փոխանակման անհատական ակտի արդյունք, որն ի վերջո հետևանք է երկկողմանի օգուտի համաձայնության: Տնտեսության մեջ, ինչպես հայտնի է, գոյություն ունեն անհատական շուկայական գների անվերջ, դինամիկ բազմազանություններ, որոնք ոչ մի կերպ չեն ձգտում միասնական մակարդակի, այսինքն հավասարակշռության, այս պատճառով էլ շուկայում չի կարող գործել միասնական շուկայական հավասարակշիռ գին: Ինչ վերաբերում է ապրանքների արտադրությանը, ապա վերարտադրության յուրաքանչյուր շրջապտույտի դեպքում մարդու ինտելեկտի շնորհիվ օգտագործված ռեսուրսների միավորի հաշվով ապրանքային թաղանթի մեջ ծագում է ինչպես նյութաիրային, այնպես էլ էներգետիկ հավելում (լրիվ մեխանիկական էներգիայի ձևով), որոնք հասարակական շուկայական մեխանիզմի շնորհիվ արժեքային ձևով իրացվում են իբրև շահույթ (հավելյալ արժեք): Փաստորեն շահույթի ծագումն անհրաժեշտ է ներկայացնել ոչ միայն արժեքային, այլ նյութաիրային տեսանկյուններից, հիմք ընդունելով մարդկային ինտելեկտը: Այլ խոսքով, շահույթի բնույթը կանխորոշող ֆիզիկական, էներգետիկ և արժեքային գործոնները տրամաբա-

¹ Социально-экономические проблемы формирования и расширенного воспроизводства интеллектуального капитала в современной России: Материалы международной научно-практической конференции, 10 ноября 2006 г. – М.: РГСУ, 2007. – С. 27.

նորեն համադրվում են էներգիայի պահպանման համընդհանուր օրենքի հետ: Նկատենք, որ այս օրենքի գործողությունը չի խախտվում, քանի որ ապրանքի միավորի վրա բնական զանգվածի նվազագույն ծախքերի դեպքում վերջինիս պոտենցիալ էներգիան տնտեսության մեջ ավելի ու ավելի շատ է օգտագործվում՝ ի հաշիվ ցանկացած նոր ապրանքի բաղադրիչների կանոնակարգման: Իսկ վերջինս իր հերթին բավարար հիմք է նոր արժեքի, տվյալ դեպքում հավելյալ արժեքի կամ շահույթի համար: Բնականաբար, այստեղ իր զգալի դերակատարությունն ունի մարդկային ինտելեկտն ընդհանրապես: Թվում է, թե գործ ունենք դիալեկտիկայի համընդհանուր օրենքի հետ, որն, ըստ էության, պայմանավորում է ողջ մարդկային հասարակության զարգացման գործընթացը: Այն իր մեջ ներառում է հակադրությունների պայքարի և միասնության, քանակական փոփոխություններից որակականին անցման և հակառակը, բացասման բացասումի օրենքները: Իսկ այս օրենքները, ինչպես գիտենք, «բացահայտում են համապատասխանաբար զարգացման աղբյուրը, մեխանիզմը և ուղղությունը»¹:

Ի վերջո, մարդն իր տնտեսական գործունեության ընթացքում՝ հիմք ընդունելով ելակետային բաղադրիչների ծախսերի տնտեսումը, հետամուտ է առավելագույն շահույթի ստացման: Այս գործում, բնականաբար, մեծ է մարդկային ինտելեկտի դերը: Վերջինս հանդես գալով որպես գիտատեխնիկական առաջընթացի հոգևոր ինտելեկտուալային հենք՝ վերարտադրության ողջ գործընթացում ձևավորում է նոր հասարակական հարաբերություններ, որակային նոր մակարդակ ունեցող հասարակարգ:

Նոր մեկնություններով կարելի է բացատրել նաև համաշխարհային տնտեսության ռենտային բնույթը. այստեղ առկա է տարբեր երկրների շերտավորում ըստ միջին շնչին ընկնող եկամտի և բարեկեցության մակարդակների: Համաշխարհային տնտեսությունը ներկայացնող առանձին երկրներ իրարից տարբերվում են նույնանուն արտադրանքի տարբեր ինքնարժեքներով՝ պայմանավորված օբյեկտիվ բնակլիմայական, տարածաշխարհագրական պայմաններով, զարգացող երկրների տնտեսությունների ցածր տեխնոլոգայնությամբ: Համաշխարհային տնտեսության կառուցվածքը այնպիսին է, որ այն խթանում է շահույթի բարձր նորմա ունեցող տնտեսությունների զարգացմանը: Ընդ որում, համաշխարհային տնտեսության ժամանակակից կարգը՝ ելնելով «անտեսանելի ձեռքի» սկզբունքի գործողությունից, բոլորովին չի ապահովում տնտեսության օպտիմալ սոցիալական կացութաձև: Շնորհիվ արդյունավետ տնտեսության, կյանքի որակը բարձր է այն երկրներում, որտեղ արտադրվում է առավել արդյունավետ արդյունք: Եվ համաձայն մեծ թվերի օրենքի, համաշխարհային շուկայական գինը ձգտում է դեպի նմանատիպ երկրների արտադրության գներին, ավելի ու ավելի հեռանալով համաշխարհային արտադրության գնից, միաժամանակ մեկուսացած, փակ երկրների ազգային տնտեսությունները նետելով դեպի սնանկացման որոգայթը: Թերևս սրանով պիտի բացատրել Հյուսիսի և Հարավի պետությունների եկամուտների միջև առկա ճեղքվածքի ուժեղացող միտումը: Եվ, եթե հիմք ընդունենք համաշխարհային տնտեսության ռենտային բնույթը, ապա դժվար թե ճշմարիտ դիտվի տնտեսական աճի հիմնահարցի միանշանակ ընկալումը (ինչն արվում է տնտեսագիտության ավանդական հավասարակշռության տեսության կողմից): Բանն այն է, որ տարբեր երկրներում, որոնք գտնվում են տարբեր տնտեսական պայմաններում, օբյեկտիվորեն ձևավորվում են ապրանքների ու ծառայությունների արտադրության տարբեր ծախքեր, շահույթի տարբեր նորմաներ և տոկոսներ, արտադրական կապիտալի, հետևաբար նաև ինվեստիցիաների տարբեր արդյունավետություններ: Չի բացառվում, որ առանձին երկրներում առանձին ժամանակահատվածներում միջին ազգային շահույթ ընդհանրապես չձևավորվի: Ահա թե ինչու շահույթի ցածր նորմա ունեցող երկրներում առկա է աշխատավարձի ցածր մակարդակ, որն ըստ

¹ Кириленко Г.Г.,Шевцов Е.В. Философский словарь.Справочник студента.-М.:Филологическое общество “Слово”, ООО, “Изд-во АСТ”, 2002-с.172.

ելության աշխատանքային ռեսուրսների ավելցուկի առկայության դեպքում հետևանք է արտադրանքի արտադրության ծախքերի ամեն գնով տնտեսման: Ուստի նման երկրներում ինվեստիցիաները չեն վերածվում երկկողմանի երթևեկության ֆինանսական փողոցի: Այս իմաստով անիմաստ է դառնում համաշխարհային ճգնաժամից դուրս գալու միասնական դեղատոմսի մասին խոսելը կյանքի տարբեր որակներ ունեցող երկրների համար: Եվ, չնայած ժամանակակից պայմաններում «արևմտականացված» տնտեսագիտության տեսության մեջ գերիշխում է տնտեսական աճի լիբերալ կոնցեպցիան, տարբեր երկրներում ի հայտ են գալիս տնտեսական աճի ամենատարբեր տեսություններ, որոնք հաճախ չունենալով վերջնական ձևակերպումներ, այնուամենայնիվ ազգային տնտեսությունների համար որոշակի լուծումներ ու մոտեցումներ են ենթադրում: Բնականաբար, ցածր ծախքեր և շահույթի բարձր նորմա ունեցող երկրների համար ձեռնտու են համաշխարհային տնտեսության ազատականացումը, ազատ տնտեսական սահմանները:

Ընդհանրացնելով, կարող ենք ասել, որ արդի պայմաններում տնտեսագիտության տեսության դասական, մարքսիստական, նեոդասական, քեյնսյան, մոնետարիստական և այլ ուղղություններն ավելի շատ հարցեր են առաջադրում, քան պատասխաններ: Այսօր շատ դրույթներ ու փաստարկներ կարիք ունեն վերանայման՝ վերստուգվելով նոր մեթոդոլոգիական սկզբունքների ու հետազոտական նոր արդյունքների չափանիշներով:

ՕՊԵՐԱՏԻՎՈՒՄ, Ի. Մ.

ՃԻՆՏԻՎԱԿԱՆ ՊԵՐՈՒՄՆԱԿԱՆ ԿԱՎԱՐԿՄԱՆ ԿՐԻՑՈՒՄ
ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ

ՏՊԵՐԱԿԱՆ ԿՐԻՑՈՒՄ

ժամանակակից տնտեսագիտության տեսության մեջ միկրո- և մակրոտնտեսագիտությունների միջև գոյություն չունեն հստակ մեթոդական կապեր ու կախվածություններ: Ժամանակի ու տարածության մեջ արտաքուստ պարզ թվացող տնտեսական ցուցանիշներն իրենց խորքային շերտերում նոր մոտեցումներ են ենթադրում, որոնք դժվարությամբ են տեղավորվում հավասարակշռության տեսության քառակուսու սահմաններում: Հավասարակշռության խնդիրը նոր լուսաբանումների կարիք է զգում հենց տնտեսագիտական մտքի զարգացման տրամաբանությամբ՝ կապված տնտեսագիտության տեսության տարբեր հարթությունների միջև ցուցանիշների կապի հստակեցման առումներով:

ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, Ի. Մ.
ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, Ի. Մ.ՔԻՉԻՆՍԻ
ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, Ի. Մ.ՔԻՉԻՆՍԻ, ՆՈՒՆԱԿԱՆ ԿԱՎԱՐԿՄԱՆ ԿՐԻՑՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ, ՕՊԵՐԱՏԻՎԱԿԱՆ ՎԵՐՎԱՐՎԱԾՈՒՄ:

ЭКОНОМИЧЕСКАЯ ТЕОРИЯ ПЕРЕД НОВЫМИ ЗАДАЧАМИ

МАРИНЕ АГАЯН, *к. э. н.*

доцент кафедры общей экономики

Государственного инженерного университета Армении

Аннотация

В современной экономической теории нет четких методических связей и зависимостей между макро- и микроэкономикой. Экономические показатели, внешне кажущиеся простыми во времени и в пространстве, в своих глубинных слоях предполагают новые подходы, которые с трудом укладываются в рамках квадрата теории равновесия. Задача равновесия нуждается в новых пояснениях с точки зрения именно логики развития экономической мысли в связи с уточнением взаимосвязей между показателями различных уровней экономической науки.

Ключевые слова: макроэкономика, микроэкономика, равновесие, себестоимость, экономический рост, человеческий интеллект, качество жизни, норма прибыли.

NEW CHALLENGES THE ECONOMIC THEORY FACES

MARINE AGHAYAN, *Candidate of Sciences (Economics)*

Associate Professor

Department of General Economics

State Engineering University of Armenia

Abstract

In the contemporary economic theory clear methodological relations and linkages between micro-and macroeconomics are lacking. Seemingly easy economic indicators (from the point of view of space–time) require new approaches, since they don't completely describe equilibrium theory: list of variables used in the system of equations is not complete. The issues on equilibrium require new methods reflecting the logic behind new developments in the contemporary economic thought that builds linkages between micro-and macroeconomic processes to clarify the set of variables in the system of equations.

Keywords: macroeconomics, microeconomics, equilibrium, per-unit cost, economic growth, human intellect, quality of life, rate of profit.

ԱՅԹԸ ԾՃՈՒՄՆԵՐ

ԸՄ ՊՅԹ. թՎՅՄՅՅ ՅՅՅ
ԻՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ
ՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ

ԸՄԹԵՃԸՄՆԵՐ ԵՄՆԱԿԱՆ ԵՄՆԱԿԱՆ ԵՄՆԱԿԱՆ
ԻՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ

Մարդկության զարգացման պատմության ամբողջ ընթացքում նրան ուղեկցել են ճգնաժամերը: Վերջիններս շուկայական տնտեսության անխուսափելի ուղեկիցն են և տնտեսական կոնյուկտուրայի մաս են կազմում, այդ իսկ պատճառով էլ օբյեկտիվ իրողություն են:

Չեռևար, միանգամայն կարևոր է ուսումնասիրել տնտեսական ճգնաժամերի առաջացման, տարբեր երկրներ փոխանցման մեխանիզմները, հիմնախնդիրները, որոնց բախվում են տնտեսությունները ճգնաժամային իրավիճակներում, և այն մեխանիզմները, որոնք պետք է ուղղված լինեն դրանց հակազդմանը:

Չարկ ենք համարում նշել, որ եթե մինչև 20-րդ դարը ճգնաժամերն ունեին ավելի փոքր մասշտաբներ և տեղի էին ունենում միայն մեկ, առավելագույնը երկու-երեք երկրներում, ապա միջազգային տնտեսական կապերի ընդլայնման հետևանքով նրանց բնույթն աստիճանաբար փոխվեց. դրանք ձեռք բերեցին համաշխարհային բնույթ՝ պայմանավորված երկրների տնտեսությունների զլորբալացման մեծ մակարդակով:

Պատմական տվյալների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ 19-20-րդ դարերում խոշոր ֆինանսական ճգնաժամերը տեղի էին ունենում հաճախ՝ 1825թ., 1836-1838թթ., 1857թ., 1873թ., 1893թ.: 1900-1901թթ. տեղի ունեցավ մինչև այդ ամենախոշոր ֆինանսական ճգնաժամը, որը, սկսվելով ԱՄՆ-ում և Ռուսաստանում, տարածվեց եվրոպական խոշոր երկրներում և վերածվեց համաշխարհային ճգնաժամի: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը տեղի ունեցան մի քանի ճգնաժամեր ևս՝ 1907-1908թթ., 1914թ., ինչպես նաև 1920-1921թթ. և 1929-1933թթ., որոնք էլ պատճառ դարձան ինչպես Առաջին, այնպես էլ երկրորդ համաշխարհային պատերազմների առաջացման համար:

1825թ. Անգլիայում¹ սկսած ճգնաժամը մասնագետների կողմից համարվում է առաջին համաշխարհային տնտեսական ճգնաժամը: Ֆինանսական կապիտալի ներհոսքը Մեծ Բրիտանիայից Լատինական Ամերիկա, որտեղ 19-րդ դարի սկզբին անկախության համար պայքարի արդյունքում ստեղծվել էին նոր պետություններ, ոսկու և արծաթի հանքերի ֆինանսավորումը, հանգեցրեցին արտահանման բունի առաջացմանը: Այս ամենի և դրամական զանգվածի ավելացման արդյունքն եղավ առևտրային անհավասարակշռությունը: Անգլիայի բանկի ոսկու պաշարները վերջացան, և 1825թ. ամռանը ֆոնդային բորսան փլուզվեց:

1907թ. սկսվեց մի ճգնաժամ, որն իր չափերով աննախադեպ էր մինչև այդ տեղի ունեցած ճգնաժամերի մեջ: Ամեն ինչ սկսվեց, երբ 1906թ. Անգլիայի բանկի հաշվարկային դրույթաչափը բարձրացվեց ոսկու պաշարների ավելացման համար: 1907թ. օտարերկրյա կապիտալի արտահոսքի պատճառով փլուզվեց Նյու Յորքի ֆոնդային բորսան, և նույն թվականի նոյեմբերին ճգնաժամը տարածվեց ԱՄՆ-ի բոլոր առևտրային բանկերի վրա: Երկիրն ընկավ երկարատև ռեցեսիայի մեջ: ԱՄՆ-ից ճգնաժամն արագ տեղափոխվեց նաև Եվրոպա, որտեղ ամենաշատը տուժեցին Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի տնտեսությունները:

Իր մասշտաբներով և հետևանքներով ամենահայտնի համաշխարհային տնտեսական ճգնաժամը տեղի ունեցավ 1929-1933թթ., որը ստացավ Մեծ ճգնաժամ անվանումը: 1930-ական թթ. Մեծ ճգնաժամը մեր ժամանակների ամենամեծ տնտեսական անկումն էր: 1929-1932թթ.

¹ Կիրակոսյան Գ. Ե., Տնտեսագիտության տեսություն (ուսումնական ձեռնարկ), «Տնտեսագետ», Երևան, 2000, էջ 377:

ամբողջ աշխարհում կրճատվեց արդյունաբերական արտադրությունը՝ ԱՄՆ-ում՝ համարյա 50%-ով, Գերմանիայում՝ 40%-ով, Ֆրանսիայում՝ 30%-ով և, միայն Միացյալ Թագավորությունում՝ 10%-ով, որտեղ տնտեսության անկումը սկսվել էր դեռևս 1920թ.-ին: Արդյունաբերական երկրներում տեղի ունեցավ դեֆլյացիա, մոտ 25%-ով գներն իջել էին Անգլիայում, մոտ 30%-ից ավել՝ Գերմանիայում և ԱՄՆ-ում և ավելի քան 40%-ով՝ Ֆրանսիայում: Սակայն, ամենամեծ մարդկային ծախսերն արտացոլված էին գործազրկությամբ, որը զարմանալիորեն բարձրացավ վերածվելով իսկական աղետի: 1933թ. ԱՄՆ-ում գործազուրկների թիվն աճեց միջին աշխատուժի 1/4-ը: Գերմանիայում 1930-ական թթ. տեղի ունեցավ գործազրկության աղետալի աճ¹:

Մեծ ճգնաժամը բարդացրեց այն դասական տնտեսագետների տեսությունները, ովքեր կանխատեսում էին, որ նորմալ շուկայական ուժերը կկանխեն լայնամասշտաբ և ձգձգվող գործազրկությունը, որը կար ամբողջ աշխարհում 1930-ականներին: Այս իրադարձությունը հարցականի տակ դրեց մինչ այդ եղած տնտեսագիտական հիմնական գաղափարները: Քեյնսն առաջարկեց Մեծ ճգնաժամի նոր տեսական բացատրություն և ճգնաժամի հակազդման համար կառավարության հատուկ քաղաքականություն²:

Որո՞նք էին այս մեծ և տարածական տնտեսական ճգնաժամի պատճառները: Նոբելյան մրցանակակիրներ Միլթոն Ֆրիդմենը և համահեղինակ Աննա Շվարցը Մեծ ճգնաժամի իրենց մեկնաբանությունը բացատրեցին 1929-33թթ. ԱՄՆ-ում գործող զսպող դրամական քաղաքականությամբ: Իրենց դասական աշխատության մեջ Ֆրիդմենը և Շվարցը պնդում էին, որ 1930-ականների սկզբներին ԱՄՆ-ում բանկերի սնանկացման շարունակվող ալիքին դիմակայելու դրամական քաղաքականությունը լիովին ձախողվեց՝ դրանով ձախողելով տնտեսական պարբերաշրջանի անկման կանխարգելումը, որը տանում էր աղետալի ճգնաժամի³: Մինչեռ Միչիգանի տեխնոլոգիական ինստիտուտի տնտեսական պատմաբան Չարլզ Քինդլբերգերը հակափաստարկեց ավելի շուտ միջազգային մեկնաբանությամբ: Նրա կարծիքով հիմնական երկրները չդիմակայեցին տնտեսական անկմանը, որը սկսվել էր դեռ 1920-ական թթ., որովհետև ամբողջ աշխարհում չկար տնտեսական առաջատարություն: Հետևաբար, անկումը վերածվեց ճգնաժամի⁴:

Մեկ այլ բացատրություն առաջարկվեց Միչիգանի տեխնոլոգիական ինստիտուտի գիտաշխատող Փիթեր Թեմինի կողմից, ով պնդում էր, որ Մեծ ճգնաժամն Առաջին համաշխարհային պատերազմի և դրանից հետո շարունակվող հակասությունների ձգձգման արդյունք էր: Սակայն որո՞նք էին այն մեխանիզմները, որ փոխանցեցին, քարոզեցին ճգնաժամը երկրից երկիր՝ սկզբում արդյունաբերական երկրներ և հետո մնացյալ աշխարհ: Թեմինի կարծիքով այդ ժամանակվա միջազգային դրամական համաձայնագիրը՝ ոսկու ստանդարտը, տնտեսական անկման քարոզման գլխավոր ուժն էր: Հետագայում, ինչպես ցույց տվեցին Բարի Էյչենգրինը և Ջեֆրի Սաքսը, այն երկրները, որոնք տուժել էին ոսկու ստանդարտից, առաջինն էլ դուրս էին եկել ճգնաժամից⁵:

Սակայն ինչպես տնտեսագիտության շատ սկզբունքների դեպքում, այստեղ ևս, Մեծ ճգնաժամի պատճառների և փոխանցման մեխանիզմների մասին չկա համընդհանուր տեսակետ: Ավելին՝ մնացել են որոշ տարբեր բացատրություններ, յուրաքանչյուրը տալով իր բնորոշումը ճգնաժամի փոխանցման տարբեր ասպեկտների վերաբերյալ:

Մյուս խոշոր տնտեսական ճգնաժամը տեղի ունեցավ 1973թ.: ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում և ճապոնիայում արտադրության ծավալները կրճատվեցին, ֆոնդային բորսայում հանկարծակի արժեզրկվեցին բաժնետոմսերը, սնանկ ձեռնարկությունների թիվը գրեթե հասավ 1929-1933թթ. մակարդակին: Բնակչության եկամուտները կտրուկ

¹ Սաքս Դ., Լարրեյն Բ., Սակրոտնտեսագիտությունը գլոբալ տնտեսությունում, «Տնտեսագետ», Երևան 2002, էջ 7:

² Նույն տեղում, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 7-8:

⁴ Նույն տեղում, էջ 8:

⁵ Նույն տեղում:

նվազեցին: 1973թ. ճգնաժամը պատմության մեջ մտավ որպես առաջին էներգետիկ ճգնաժամ, որի առաջացման հիմնական պատճառներից մեկը OPEC (ՆԱԵԿ՝ Նավթ արդյունահանող երկրների կազմակերպություն) անդամ պետությունների կողմից արդյունահանվող նավթի ծավալների կրճատումն էր:

Վերջին երկու տասնամյակների ճգնաժամերի թվին կարելի է դասել Մեքսիկայի (1994-95թթ.), Հարավարևելյան Ասիայի երկրների (1997-98թթ.) ֆինանսական ճգնաժամերը, Ռուսաստանի պարտատոմսերի շուկայի անվճարունակությունը (1998թ.), ինչպես նաև Թուրքիայի բանկային համակարգի (2000թ.) և Արգենտինայի ֆինանսական ճգնաժամը (2000-2002թթ.):

2007թ. կարծես ֆինանսական ճգնաժամի նկատմամբ ուշադրությունն ավելացավ, իսկ տվյալ հարցում նշանակալի ներդրում կատարեցին Կարմեն Ռեյնհարթը և Կեննետ Ռոզոֆֆը “The aftermath of financial crises” («Ֆինանսական ճգնաժամերի հետևանքը») աշխատությունում, որտեղ ներկայացվեցին շուրջ 800 տարվա ֆինանսական ճգնաժամեր աշխարհի բոլոր պտություններում¹: Նրանց կարծիքով ճգնաժամն արդյունք է բնակարանային գների շուրջ 35%-ով նվազման, որը տեղի է ունենում 6 տարիների ընթացքում, մինչև գործազրկությունն աճում է 7%-ով 4 տարիների ընթացքում, իսկ կառավարության պարտքն աճում է 86%-ով՝ համեմատած նախաճգնաժամային իրավիճակի հետ²:

Ճգնաժամերի առաջացման պատճառների, փոխանցման մեխանիզմների և հետևանքների վերաբերյալ տեսական և էմպիրիկ աշխատանքներն 1990-ական թթ. անհրաժեշտություն առաջացրեցին դրանց դասակարգման: Այսպես. արտարժույթային ճգնաժամի ամենատարածված մոտեցումն այն դիտարկելն է որպես անվանական փոխարժեքի շարժ: Ֆրանկելն (Frankel) ու Ռոուզը (Rose, 1996) նշում են, որ այս դեպքում փոխարժեքի տատանումները կազմում են տարվա ընթացքում ոչ ավել քան 25%³: Արժույթային ճգնաժամը կարելի է դիտարկել նաև տեղաշարժ սպասումներում՝ դեալվացիայի արդյունքի նկատմամբ, որը դարձնում է արժույթային կուրսի պաշտպանությունը բավականին թանկ⁴: Արժույթային ճգնաժամերի հասկացության առաջացման, հետևանքների, ինչպես նաև կանխատեսման վերաբերյալ լայնածավալ աշխատանքներ են իրականացրել Սաքսը (Sachs, 1996), Կամինսկին (Kaminsky, 1998), Կամինսկին ու Ռեյնհարթը (Kaminsky & Reinhart, 1998)⁵: Արժույթային ճգնաժամի նշանակալի օրինակ է Բրազիլիան, որտեղ 20-րդ դարի ընթացքում փողի արժեզրկման պատճառով միայն 1986-1994թթ. չորս անգամ արժույթի փոփոխություն է գրանցվել:

Արժույթային ճգնաժամերի ուսումնասիրությամբ հիմնականում զբաղվել են Կամինսկին (Kaminsky, 1998), Բուստելոն (Bustelo, 2000), Բուկարտը (Bukart) և Կոդերտը (Coudert, 2002), ինչպես նաև Աբյադը (Abiad, 2003): Գոնսալես-Հերմոսիլոն (Gonzalez-Hermosillo, 1996), Դեմիրգուս-Կունտը (Demirgus-Kunt) և Դետրաիաչե (Detragiache) (1997, 2005) հիմնականում կենտրոնացել են բանկային ճգնաժամերի ուսումնասիրման ուղղությամբ, մինչդեռ Քլայնը (Cline, 1995) և Մարչեսին (Marchesi, 2003)՝ պարտքային ճգնաժամերի:

Կապրիոն և Կլինգելը (Caprio & Klingebiel, 1996)⁶ բանկային ճգնաժամը դիտարկում են որպես ֆինանսական գործունեություն իրականացնելու անկարողություն, երբ բանկային ոլորտի էական մասը համարվում է ոչ վճարունակ, որը բերում է դրանց սնանկացմանը,

¹ Սանամյան Է. Ս., Հակաճգնաժամային միջոցառումները և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ-ում, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013, էջ 13:

² Franklin Allen, University of Pennsylvania, Ana Babus, Cambridge University, Elena Carletti, European University Institute, Financial Crises: Theory and Evidence, June 8, 2009, p. 1.

³ Susan Pozo, Catalina Amuedo-Dorantes, “Statistical distributions and the identification of currency crises”, Journal of International Money and Finance 22 (2003) 591-609, p. 592.

⁴ Paolo Pesenti and Cedric Tille, “The Economics of Currency Crises and Contagion: An Introduction”, FRBNY Economic Policy Review / September 2000, p. 6.

⁵ Susan Pozo, Catalina Amuedo-Dorantes, “Statistical distributions and the identification of currency crises”, Journal of International Money and Finance 22 (2003) 591-609, p. 593.

⁶ IMF Working Paper, Systemic Banking Crises, A New Database, November 2008, Prepared by Luc Laevan and Fabian Valencia, p. 5.

կլանմանը կամ էլ դրանց պետականացմանը, ինչպես օրինակ պատահել է 1993թ. Վենեսուելայում կամ 2001թ. Արգենտինայում:

Ստորև ներկայացնենք ֆինանսական ճգնաժամերը բնութագրող հիմնական ցուցանիշներն ըստ մի քանի հեղինակների:

Աղյուսակ 1

Ֆինանսական ճգնաժամերը բնութագրող առաջնային ցուցանիշները¹

Սաքս և ուրիշներ (1996)	Ֆրանկել և Ռոուզ (1996)	Կամինսկի և ուրիշներ (1998)
իրական փոխարժեք	իրական փոխարժեք	իրական փոխարժեք
M2/արտաքին պահուստներ	M2/արտաքին պահուստներ	M2/արտաքին պահուստներ
ներքին վարկերի աճ	ՕՈՒՆ/ համախառն պարտք	ներքին վարկային աճ
քաղաքական փոփոխականներ, ինչպիսիք են ընտրություններ, ընտրական արդյունքների փոփոխականություն	արտաքին տոկոսադրույքներ	արտահանում
	պետական պարտքի աճ	M1-ի ավելցուկային զանգված
	տնտեսության կեղծ բացության ցուցանիշ՝ արտահանում+ներմուծում/ՅՆԱ	ընթացիկ հաշիվ /ՅՆԱ
		կեղծ բանկային ճգնաժամեր

Այժմ աղյուսակի տեսքով ներկայացնենք այն հիմնական հեղինակների գաղափարներն ըստ ժամանակագրության, ովքեր զբաղվել են ճգնաժամերի ուսումնասիրությամբ՝ ըստ ճգնաժամի տեսակավորման՝ յուրաքանչյուրը տալով իր մոտեցումը:

Աղյուսակ 2

Ճգնաժամին տրված տարբեր մեկնաբանություններ²

No	Հեղինակ	Ճգնաժամային հիմնական ցուցանիշներ	Տվյալների աղբյուր
1.	Կալոմիրիս և Գորթոն (Calomiris & Gorton, 1991)	Բանկային ճգնաժամը դիտարկում են որպես ֆինանսական խուճապ, երբ բանկի պարտատերերը հանկարծակի պահաջում են, որ բանկը փոխի իրենց պարտքային պարտավորությունները կանխիկի որոշակի չափի: Ճգնաժամային հիմնական ցուցանիշներն են՝ ներքին վարկավորում/ՅՆԱ, ավանդի տոկոսադրույք, վարկի տոկոսադրույք և այլն:	1970-1995թթ. 20 երկրների շուրջ 76 բանկային ճգնաժամերի ուսումնասիրություն
2.	Էյչենգրին, Ռոուզ, Վիպլոշ (Eichengreen Rose, Wyplosz, 1996)	Ըստ նրանց տնտեսական ճգնաժամերի արագ բացահայտման հիմնական ցուցանիշներն են՝ վարակի էֆեկտ, գնաճ և գործազրկություն:	20 զարգացած երկրների 1959-1993թթ. եռամսյակային տվյալների ուսումնասիրություն
3.	Գոլդֆայն, Վալդես (Goldfaya, Valdes, 1997)	Անվանական փոխարժեքի արժեզրկում >1.96* փոխարժեքի ստանդարտ շեղում կամ փոխարժեքի արժեզրկումը >2%+1.5* նախորդ ամսվա արժեզրկում:	26 երկրների 1984-1997թթ. ամսական տվյալների ուսումնասիրություն
4.	Կամինսկի, Լիզոնդո, Ռեյնհարթ (Kaminsky, Lizondo, Reinhart 1998)	Նրանք առաջինն էին, որ առաջարկեցին արժույթային ճգնաժամերի ազդեցության գնահատման նոր ինդեքսի՝ արժույթային շուկայի ճնշման ինդեքսի հաշվարկը՝ $I = \frac{\Delta \sigma}{\sigma} / \frac{\Delta r}{r} > \mu + 3.0 * \sigma_1$, ինչպես նաև տվեցին ճգնաժամային հիմնական ցուցանիշների դասակարգումը: Դրանք են՝ իրական փոխարժեքի շեղում հավասարակշիռ վիճակից, բանկային ճգնաժամեր, արտահանման կրճատում, արժեթղթերի գներ, միջազգային պահուստներ, M1-ի ավելցուկ, M2 բազմարկիչ:	20 երկրների 1970-1995թթ. ամսական տվյալների ուսումնասիրություն

¹ Jens Michael Rabe, "The efficiency of early warning indicators for financial crises", Februar 2000, universitat Konstanz fakultat fur wirtschaftswissenschaften und statistic, p. 53.

² Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:

No	Չեղիմակ	Ճգնաժամային հիմնական ցուցանիշներ	Տվյալների աղբյուր
5.	Հաթթորի (Hattori, 2002)	Առաջարկել է հաշվարկել ճգնաժամի խորության ինդեքսը՝ $I = \frac{\Delta \sigma_e}{\sigma_r} \Delta r$, ինչպես նաև առանձնացրել է ճգնաժամի բացահայտման հիմնական ցուցանիշները՝ ներքին մասնավոր վարկեր/ՅՆԱ ցուցանիշի 4-ամյա փոփոխություն, կարճաժամկետ արտաքին պարտք/ պահուստներ, ֆինանսական ազատականացում:	22 զարգացող երկրների 1990-1996թթ. ամսական տվյալների ուսումնասիրություն
6.	Վոն-Ամ Պարկ (Won-Am Park, 2002)	Ճգնաժամային իրավիճակի բացահայտման համար ևս դասակարգման է ենթարկել առաջնային ցուցանիշները՝ առևտրի պայմաններ, արժեթղթերի գներ, արտահանում, ներքին վարկեր/ՅՆԱ, M2 բազմարկիչ:	Հարավային Կորեայի 1990-1997թթ. ամսական տվյալների ուսումնասիրություն
7.	Կամինսկի (Kaminsky, 2003)	Առաջարկել է ճգնաժամային իրավիճակի բացահայտման համար կիրառել ռեգրեսիոն ծառի մեթոդը, հետևյալ ցուցանիշների հիման վրա՝ համաշխարհային տոկոսադրույքներ, արտաքին պարտք/արտահանում, բյուջեի պակասուրդ, M2/ պահուստներ:	20 երկրների 1970-2001թթ. ամսական տվյալներ
8.	Շարդաքս (Schar dax, 2003)	Անվանական փոխարժեքի առնվազն 20% արժեզրկում 10 առևտրային օրերի ընթացքում: Հիմնական բնութագրիչ ցուցանիշներն են՝ M2/համախառն պահուստների փոփոխություն, արտահանման փոփոխություն, իրական փոխարժեքի շեղում նորմայից, բյուջեի պակասուրդ/ՅՆԱ:	1992-2002թթ. Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների տվյալների ուսումնասիրություն
9.	Ռեյնհարթ և Ռոգոֆֆ (Reinhart & Rogoff, 2009, 2011)	Արժույթային ճգնաժամը բնորոշում են որպես փոխարժեքի անհամաչափ արժեզրկում, այն է, երբ տարեկան մաշվածությունը դոլարի կամ այլ արժույթի նկատմամբ գերազանցում է շեմը ոչ ավել քան 15%-ով: Որպես արժույթային ճգնաժամի սկիզբ են ընդունում տեղական արժույթի արժեզրկման որոշակի չափը (2009): Ըստ Ռեյնհարթի և Ռոգոֆֆի՝ տարբեր ճգնաժամների միջև մեկ ընդհանուր բան կա՝ մեծ չափի հասնող պարտքի կուտակում՝ պարտքի կոմուլյատիվ աճ (պարտք/ՅՆԱ հարաբերակցության փոխարեն):	1800-2010թթ. շուրջ 70 երկրների արժույթային ժգնաժամների տվյալների ուսումնասիրություն
10.	Լևի-Յեյատի և Պանիզա, Ռի (Levy-Yeyati & Panizza, Rhi, 2010, 2011)	Արժույթային ճգնաժամի սկիզբ են համարում այն պահը, երբ ԱՄՆ-ն օգնություն է տրամադրում որևէ երկրի՝ անկախ այն հանգամանքից ճգնաժամը սկսվել է այդ երկրում կամ էլ հիմնադրամը ճգնաժամը կանխելու համար վարկ է տրամադրում: Արժույթային ճգնաժամը բնութագրում են որպես փոխարժեքի անկայունություն, այսինքն՝ երբ փոփոխությունների միջին կշռված ցուցանիշը փոխանակային կուրսում և պահուստներում գերազանցում է որոշակի շեմը:	1995-2005թթ. 30 զարգացող և զարգացած երկրների արժույթային ճգնաժամների ուսումնասիրություն
11.	Լաեվեն և Վալենսիա (Laeven & Valencia 2008, 2010, 2012)	Արժույթային ճգնաժամը բնորոշում են որպես արտարժույթի անվանական արժեզրկում ԱՄՆ դոլարի նկատմամբ՝ նվազագույնը 30%-ով, որը սովորաբար 10%-ային կետով ավելի բարձր է, քան նախորդ տարվա արժեզրկումը:	1970-2011թթ. 218 երկրների արժույթային ճգնաժամների ուսումնասիրություն

Ամերիկյան ֆինանսատնտեսական ճգնաժամի առաջացման պատճառներից մեկն ամերիկյան տնտեսության առանձնահատկությունն էր՝ կապված պահուստային ոսկու և դոլարի կախվածությունը 1971թ. վերացնելու հետ, որին հաջորդեց դոլարի անընդհատ էմիսիան: Տպագրվող դոլարների ներդրման ամենահրապուրիչ ոլորտը հիփոթեքային շուկան էր, որը վարկավորման միջոցով հսկայական գումարներ էր ապահովում ներդրողների համար, քանի որ որքան աճում էր անշարժ գույքի շուկան, այնքան աճում էր հիփոթեքային արժեթղթերի առքուվաճառքից առաջացած եկամուտը, ինչն ԱՄՆ-ի ԴԴՅ կողմից վարվող ցածր տոկոսադրույքի քաղաքականության անմիջական հետևանքն էր: Հիփոթեքային գայթակղիչ պայմանները, ինչպես նաև անշարժ գույքի անընդհատ աճող արժեքը հավատ էին ներշնչել թե՛ վարկառուներին, թե՛ վարկատուներին: Այդ ամենի արդյունքում վարկատուները ստացան գերշահույթներ,

իսկ իրականացրած դրամավարկային քաղաքականությունը նպաստեց, որ ԱՄՆ-ում լուծվի բնակարանային խնդիրը՝ երկիրը գրավիչ դարձնելով էժան աշխատուժի համար: Սկսեցին աննախադեպ տեմպերով աճել բնակարանների գները, մինչդեռ բնակչության իրական եկամուտներն այդչափ չէին ավելանում, և ճեղքվածք էր առաջանում բնակչության եկամուտների ու կապիտալի գոյացման միջև, որը Կարլ Մարքսն անվանում էր իրական և ֆիկտիվ կապիտալի ճեղքվածք, իսկ ժամանակակից տնտեսագետներն ու քաղաքական գործիչները՝ շուկայական փուչիկներ, այսինքն՝ տեղի ունեցավ կազմակերպությունների ու բանկերի ակտիվների գերազնահատում, որի արդյունքում արդեն 2008թ. ողջ աշխարհում (իսկ մինչ այդ ԱՄՆ-ում) արժեթղթերի ու անշարժ գույքի գները սկսեցին նվազել, այսինքն՝ շուկայական փուչիկները սկսեցին առաջինը պայթել հենց անշարժ գույքի շուկայում և, առաջացնելով ու ձևավորելով անկայունությունների շղթա, ֆինանսական ճգնաժամի սկիզբը դրեցին: Այդ է պատճառը, որ առանձին մասնագետներ ճգնաժամի պատճառ են դիտարկում հիփոթեքային շուկան¹:

Թերևս սրանք էին այն հիմնական նախադրյալները, որպեսզի ամերիկյան ֆինանսական ճգնաժամի պատճառներից մեկը համարվի անշարժ գույքի շուկայում գների չարդարացված աճը:

Մինչև օրս էլ տնտեսագիտական մտքի ներկայացուցիչների միջև շարունակվում է բանավեճը տնտեսության զարգացման հայեցակարգային խնդիրների վերաբերյալ: Թերևս ֆինանսական ժգնաժամը մեկ անգամ ևս ապացուցեց որ շուկայական տնտեսությունը պետական ու չափավոր վերահսկողության կարիք ունի՝ տնտեսական նման տատանումներից ապահովագրված լինելու տեսանկյունից:

Փաստորեն, համաշխարհային տնտեսական ճգնաժամերի պատմությունը վկայում է, որ հնարավոր չէ ճիշտ կանխատեսել, ինչպես նաև խուսափել տնտեսական ցնցումներից: Շատ երկրների գործիչներ դեռևս այն կարծիքին են, որ տնտեսության վերականգնումն ընթանում է բավականին դանդաղ, և ամերիկյան հերթական, ֆինանսական ալիքը կառաջացնի մի շարք բացասական հետևանքներ: Իսկ թե ինչ է սպասվում համաշխարհային տնտեսությանը մոտ ապագայում, բավականին բարդ ու անկանխատեսելի է:

Չետևաբար, միանգամայն կարևոր ենք համարում դասեր քաղել ճգնաժամային իրավիճակներից, քանի որ դրանք ինչ-որ առումներով հանդիսանում են հնարավորություն տնտեսության հետագա զարգացման համար:

¹ Հարությունյան Դ. Վ., Բաղալյան Ա. Գ., Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 12-15:

ÈÆ²Ü² Ð²ðàðÁÚàðÜ²Ü

ÐäÖÐ ÁÝ¹Ñ³Ýáðñ ìÝì»è³·ÇìáðÃÛ³Ý

³ÛμÇáÝÇ ³èÇèì»Ýì, ì. . .Ã.

Ð²Ü ìÛì²Æ²Æì²²Ü ØìøÆ ä²ìØàðÁÚàðÜÆð

Հասարակության անցած 200-ամյա տնտեսական պատմությանը բնորոշ առանձնահատկություններից է ճգնաժամերի պարբերական կրկնությունների երևույթը: Տնտեսական տարբեր դպրոցների կողմից այն ստացել է տարբեր մեկնություններ՝ դրանց հիմքում դնելով տարբեր պոստուլատներ. մի դեպքում դրանք դիտվել են որպես պատահական շեղումներ տնտեսության հավասարակշռված վիճակից, մի այլ դեպքում պատճառը փնտրվել է բնակչության թերսպառման մեջ, մի երրորդ կարծիք այն կապում էր արտադրության հանրային բնույթի և յուրացման մասնավոր ձևի միջև առկա հակասության հետ, մի չորրորդ բացատրության համար ելակետ է դիտվել «էֆեկտիվ պահանջարկի» բացակայությունը, այլ կարծիքներ դրանք կապում էին հոգեբանական գործոնի, դրամաշրջանառության ոլորտի խախտումների, տնտեսության ճյուղերի անհամամասնական զարգացման և բազմաթիվ այլ պատճառների հետ:

«ճգնաժամ» բառը հունարենից թարգմանվում է որպես «լուծում, շրջադարձային կետ», այսինքն՝ դա այն ելակետն է, որը փորձում է տնտեսությունը կողմնորոշել դեպի զարգացում: Դա նշանակում է, որ յուրաքանչյուր քիչ թե շատ նշանակալի ճգնաժամ պահանջում է տնտեսական հարաբերությունների ամբողջ համակարգի որակապես մի նոր մակարդակի անցման անհրաժեշտություն: Այս պարագայում բացառություն չէ նաև մտածողության ձևը¹: Առանձին մեկնություններում կարևորվում են տվյալ ժամանակահատվածին բնորոշ մտածողության միօրինակ և ստանդարտ մոտեցումները: Այս իմաստով որոշակի հետաքրքրություն է ներկայացնում անցյալ դարասկզբի հայկական մամուլի որոշ պարբերականներում հարցի վերաբերյալ արծարծումները:

Այսպես, 1909թ. «Սուրհանդակը» տպագրում է Ս.Ղալաշյանի տնտեսական ճգնաժամերին նվիրված հոդվածաշարը:

Հեղինակը, անդրադառնալով տնտեսական ճգնաժամերին՝ որպես «կապիտալիստական կյանքի համար անխուսափելի չարիքների» կարևորում է դրանց տեսական վերլուծության անհրաժեշտությունը:

Ճգնաժամերի ժամանակ ավելի խորն են արտահայտվում հասարակության սոցիալական հակասությունները, ուստի Ղալաշյանը կարևոր ֆունկցիա է վերապահում գիտությանը՝ դրանցից խուսափելու և «հավասարության և արդարության սկզբունքների» վրա հիմնված «մարդկանց նոր հարաբերությունների ստեղծման»² հարցում:

Ճգնաժամերի ամենաեական և գլխավոր պատճառ Ղալաշյանը համարում է պատերազմը, նշելով որ այն «իր հետ միշտ բերում է կրիզիսներ», իսկ քաղաքակիրթ երկրների՝ «կորչի՝ պատերազմը» կոչերը, բխում են ոչ թե մարդասիրական զգացմունքներից, այլ գլխավորապես տնտեսական պայմաններից: Վերջինս «ազգերի գոյության խնդրում ամենակարևոր և անհրաժեշտ» գործոնն է:

Հենց այս առումով էլ նա պատկերավոր է դիտում 1860թ. ԱՄՆ-ում կապիտալիստական հյուսիսի և ստրկատիրական հարավի միջև քաղաքացիական պատերազմի ժամանակ բռնկված ճգնաժամը. «Այն տևեց ամբողջ հինգ տարի և սոսկալի հարված հասցրեց Անգլիայի և Եվրոպական մայրցամաքի բամբակի արդյունաբերությանը»:

Եվ իրոք, ինչպես հայտնի է ԱՄՆ-ը 1860 թվականին բավարարում էր Եվրոպայի բամբակի պահանջարկի 85 տոկոսը: Իսկ 1862-1864թթ. ամերիկյան բամբակի ներմուծումը Եվրոպա

¹ Journal of institutional studies (Журнал институциональных исследований), 2010, т.2, N4.

² «Սուրհանդակ», 1909, N 11:

արդեն կազմում էր 1860թ. մակարդակի 3-6 տոկոսը¹: «Պատերազմի պատճառով, –նկատում է Ղալաչյանը,– Եվրոպան գրկվում է ԱՄՆ-ի մեծ շուկայից և չի կարողանում արտահանել և սպառել արտադրանքը: Գործարաններում դադարում է ապրանքարտադրությունը, աճում է գործազուրկների թիվը, արդյունաբերությունը և առևտուրը անկում են ապրում, և սկսվում է ընդհանուր տնտեսական ճգնաժամ: Այդ պատերազմից ոչ պակաս չափով վնասվեց նաև ամերիկյան արդյունաբերությունը: Վերջինս, հիմնականում կենտրոնացված լինելով Յուտսիսում, քաղաքացիական պատերազմի հետևանքով նույնպես կտրվել էր հումքի աղբյուրներից: Անգլիական արդյունաբերության պատմության այս ժամանակաշրջանը Մ.Տուգան-Բարանովսկին համեմատում է նապոլեոնյան պատերազմների ժամանակշրջանի հետ, երբ ամբողջ աշխարհի առևտուրը և արդյունաբերությունը ենթարկված էր քաղաքական իրադարձությունների ազդեցությանը»²:

Ըստ էության, պատերազմի՝ որպես տնտեսական ճգնաժամերի պատճառի վերաբերյալ նույն զուգահեռն է գծում Արշ. Զոհրաբյանը. «Պատերազմները շատ անգամ կրիզիսների առիթ են լինում: ... Եվրոպական խոշոր բուրժուազիան, որ կանգնած է կառավարությունների ղեկի մոտ, միշտ աշխատում է հեռացնել պատերազմների ուրվականը, թեև միևնույն ժամանակ դրանցից յուրաքանչյուրը շարունակում է գինվել, որովհետև միջազգային սրվող մրցումն օտարազգի շուկաներ ձեռք բերելու գործում կարող է միշտ պահանջել ջարդել թշնամուն, եթե ոչ արդյունագործության մրցման խաղաղ միջոցներով, գոնե զենքով, ուժով»³:

Տնտեսական ճգնաժամերը իրենց տնտեսական ու սոցիալական հետևանքներով հանդերձ, ունենում են նաև «խրատական դասեր», որոնց շնորհիվ գիտական կամ այլ միջոցներով հնարավոր է դառնում խուսափել պատահական ճգնաժամերից: Որպես ապացույց, Ղալաչյանը բերում է Ֆրանսիայում գինու արդյունաբերության ճգնաժամի օրինակը՝ կապված խաղողի ֆիլօքսերա հիվանդության հետ, որը չէր կարելի նախատեսել: Այդ ճգնաժամը կործանարար էր, բայց իր հետևանքների մեջ ունեցավ նաև օգտակար նշանակություն: Հայտնաբերեցին այդ հիվանդությունը կանխող անհրաժեշտ միջոցներ: Հայ հեղինակի կողմից սա կարևոր դիտարկում է, որը եզրեր է որոնում Ի.Շունմպետերի ցիկլերը «ստեղծագործական ավերվածություններ» դիտելու գաղափարի հետ:

Միաժամանակ տնտեսական ճգնաժամերի պատճառների բացատրության նրա հայեցողությունը, մի այլ մասով աղերսներ է որոնում Սիսմոնդու թերսպառման տեսության, իսկ մյուս կողմից՝ Սեյի գերարտադրության անհնարիմության ուսմունքի հետ: Այսպես՝ մի տեղում նա գրում է. «Մի՞թե մարդկությունը իրապես շատ է արտադրում, քան հարկավոր է իր պահանջների համար...: Կբավի նայել մեր շուրջը և կտեսնենք ..., որ նույնիսկ ամենապտղաբեր երկրները լեցուն են թշվառների և աղքատների բանակով», որոնք գերարտադրության պայմաններում անկարող են իրենց կենսական պահանջները բավարարել և «գոյության պայքարի ճիրաններում տանջվում ու հուսահատ մեռնում են»,⁴ իսկ մի այլ տեղում նկատում է, թե հաճախ գերարտադրությունը կարող է վերաբերել միայն առանձին ապրանքներին, երբ տվյալ ապրանքի պահանջարկը սահմանափակ է, կամ թանկարժեքության պատճառով անմատչելի սպառողների բոլոր խավերի համար, և կամ հակառակը՝ երբ տվյալ ապրանքի գինը մատչելի է, սակայն ժողովրդի պահանջից շատ է: Իսկ մեկ այլ դեպքում, խոսելով այնպիսի ապրանքների մասին, որոնք ունեն շատ տարբեր գործադրություններ, ինչպես մանվածքը, երկաթը, հացը և այլն, ընդհանրացնում է, թե «գերարտադրությունը չենք կարող կրիզիսների էական պատճառներից մեկը համարել, նա արտաքին և ժամանակավոր, երբեմն շատ կարճ՝ պատճառներից մեկն է»⁵:

Առևտրական և արդյունաբերական ճգնաժամերի գլխավոր պատճառներից մեկն էլ Ղալաչյանը համարում է շահադիտումը (սպեկուլյացիան): Այն սկսվում է երկրի արդյունաբերության վերելքի ժամանակ, երբ «ամեն տեղ քնած կապիտալները արթնանում են», որի հետևանքով իջնում է կապիտալի տոկոսը, արտադրությունների ծավալները մեծանում են, և դյուրին եղանա-

¹ Л. А. Мендельсон, Экономические кризисы и циклы XIX века, М., 1949, с.370.

² М.И.Туган-Барановский, Периодические промышленные кризисы, СПб., 1914, с.121.

³ «Տարագ», 1899, N 43:

⁴ «Սուրհանդակ», 1909, N15:

⁵ Նույն տեղում:

կով շահույթ ձեռք բերելու մարդկային շահամոլությունը զարկ է տալիս սպեկուլյացիային, որն իր հերթին խրախուսում է ապրանքատառադրության աճին, արտադրվում է պահանջարկից ավել ապրանք, և սկսվում է առևտրաարդյունաբերական ճգնաժամ:

Սիսմոնդին, կարևորելով բաշխման հարաբերությունների կատարելագործումը՝ գործազրկության աճը, բնակչության պահանջարկի կրճատումը մի մեծ մասով էլ կապում էր մեքենաների կիրառման հետ: «Մի քանի մեքենաները սկսել են կատարել հազարավոր մարդկանց աշխատանքը», իսկ տեխնիկական կատարելագործությունները մինչև այժմ ազգին հսկայական վնասներ են բերել՝ կրճատելով եկամուտները, հետևապես նաև սպառումը, տանելով բանվորների միջև մրցակցության ուժեղացմանը¹: Ճիշտ է, Ղալաչյանը չէր իդեալականացնում մանր արտադրությունը, բայց Սիսմոնդու ոգով գտնում էր, թե նոր մեքենաների, նոր գյուտերի շնորհիվ արտադրությունը էժանանում է, փոքր գործարանատերերը չեն դիմանում մրցակցությանը և սնանկանում են. «երկրի բոլոր արդյունաբերողները կանգնում են անխուսափելի տագնապի մրցության առաջ»:

Ակներև է, որ XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի հայ տնտեսագետների մեկնություններում ավելի շատ խոսք է գնում ոչ թե տնտեսական ցիկլի, այլ նրա միայն ճգնաժամի փուլի մասին: Այս իմաստով, տնտեսական ճգնաժամերի վերաբերյալ որոշակի դիտողությունների կարելի է հանդիպել նաև հայ մարքսիստական մտքի ներկայացուցիչների՝ Ս.Սպանդարյանի, Գ.Ղարաջյանի, Ս.Կասյանի և այլ տեսաբանների մոտ, որոնցում հարցը վերլուծվում է մարքսիստական քաղաքատնտեսության դիտակետից, սակայն դրանք բոլորն էլ հանգում են արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր ձևի միջև գոյություն ունեցող հակասության հայեցողությանը:

¹ Ж.Симонд де Сисмонди, Новые начала политической экономии, т.1, М.,1937, с.139, 312.

ՃԵՄՉ ԾՉՏԱԴԱՍՈՍՍՉՍՍ, Ի.Ա.
ՃԻՕՃ ԱՅՎՆՅԱԾՆ ԻՅՎԵՉ. ՇԻԾՃԱՍՅ
ՅՍՄՇԱՅՇ ՅՉՇԻՅՅ

ՃՍՅԵԱՐՅ. ՇՆ

Տնտեսագիտական տարբեր դպրոցներ տնտեսական ճգնաժամերի երևույթին տվել են տարբեր մեկնություններ, մի դեպքում դրանք կապելով արտաքին գործոնների հետ, իսկ մի այլ դեպքում դրանք դիտելով որպես բնական ու անցողիկ երևույթներ: Հարցը հետաքրքրել է նաև հայ հեղինակներին: Հոդվածում դիտարկվում են անցյալ դարասկզբին հրատարակվող «Սուրհանդակ» օրաթերթի հեղինակների հայացքները, որոնցում թեև նկատելի է տվյալ ժամանակահատվածին բնորոշ մտածողության միօրինակ և ստանդարտ մտեցումներ, այնուհանդերձ այն որոշակի հետաքրքրություն է ներկայացնում ժամանակի հայ տնտեսագիտական մտքի շառավիղների բնութագրության առումով:

ՅՅԵՇ ՄՅՅՆ. ԻՅՎԵՉՅՅ Յ.ՅՅԱՅՍ, ԱՅՎՆՅԱԾՆ, ԱՎՆՅԵՅԵՍԾՍ, ԵՄՆՅԾՅՅՅՅՍ, ԵՄՆՅԾՅՅՅՍ, ԻՅՎԵՉՅՅ ՆՅՆՅՍՆՅԿՆՅԾՃԱՍՅՅՅՅՅՅՅ, ԲՇՇԻՅ, ՆՅՆՅՅԻՅԱԾՃԱՍՅՅՅ, ՍՆՅՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОЙ ЭКОНОМИЧЕСКОЙ МЫСЛИ

ЛИАНА АРУТЮНЯН, к.э.н.

ассистентка кафедры общей экономики
Государственного инженерного университета Армении

Аннотация

Различные экономические школы явлению экономических кризисов давали неоднозначное толкование, в одном случае связывая их с внешними факторами, а в других случаях рассматривая их как естественные и преходящие явления. Этим вопросом интересовались также армянские авторы. В статье рассматриваются взгляды авторов газеты «Сурандак», изданной в начале прошлого века, в которых хотя и заметны однотипные и стандартные подходы к мышлению, присущего данному периоду времени, тем не менее это представляет определенный интерес с точки зрения характеристики различных направлений армянской экономической мысли.

Ключевые слова: *экономический кризис, война, недопотребление, спекуляция, экономические отношения, капитал, перепроизводство, конкуренция.*

FROM THE HISTORY OF ARMENIAN ECONOMIC THOUGHT

LIANA HARUTYUNYAN, Candidate of Sciences (Economics)

Assistant Professor
Department of General Economics
State Engineering University of Armenia

Abstract

The meaning/essence of an economic crisis was interpreted differently by various economic schools: in one case the crises had been attributed to external factors, and in the other case they had been considered natural and transitory phenomena. This issue was of interest to Armenian authors as well. The article discusses the views of authors published in “Surhandak” daily newspaper at the beginning of the last century that somehow reflect common and standard approaches typical to the mindset of that period, and, however, are of some interest of Armenian current economic thoughts.

Keywords: *economic crisis, war, under-consumption, speculation, economic relations, capital, overproduction, competition.*

ê²ê² ØîðîáÚ²Ü, î. .Ã.
 Ð³Ú³è³ÝÇ á»i³Ý
 ×³ñ³ñ³.Çi³Ý Ñ³Ú³Éè³ñ³Ý

ÎÚàðÜ ¼²ð¶²Ø²Ü ê²ÐØ²ÜØ²Ü Ðàððæ

Տնտեսագիտական գրականության մեջ առկա են տարակարծություններ ինչպես Sustainable Development տերմինի թարգմանության, այնպես էլ նրա բովանդակության մեկնաբանության առումներով: Աղյուսակ 1-ում ներկայացված են աշխարհի մի շարք լեզուներով այդ տերմինի պաշտոնապես ընդունված թարգմանությունները: Հայերեն լեզվով Sustainable Development տերմինի թարգմանությունը հանդիպում է երկու՝ «կայուն զարգացում» և «ինքնահարատ զարգացում» տարբերակներով: Հայ գիտնականների մեծ մասի կողմից կիրառվում է կայուն զարգացում (ԿՁ) տերմինը:

Աղյուսակ 1

**Sustainable Development տերմինի պաշտոնապես ընդունված թարգմանությունները
 աշխարհի մի շարք լեզուներով**

Աշխարհի լեզու	Sustainable Development տերմին-բնօրինակի պաշտոնապես ընդունված թարգմանությունը	Աշխարհի լեզվից հայերեն բառացի թարգմանությունը
Ֆրանսերեն	Developpment durable	Երկարաժամկետ զարգացում
Իտալերեն	Sviluppo sostenibile	Աջակցման արժանի զարգացում
Գերմաներեն	Nachhaltige Entwicklung	Շարունակական զարգացում
Շվեդերեն	En stadig utveckling	Կայուն զարգացում
Նորվեգերեն	En holdbar utvikling	Ամուր զարգացում
Ճապոներեն	Jizoki-tekina kaihatu	Շարունակական զարգացում
Ռուսերեն	Устойчивое развитие	Կայուն զարգացում

Ռուս գիտնականների շրջանում արդեն մի քանի տասնամյակ է, ինչ այդ տերմինի թարգմանության շուրջ բանավեճեր են ընթանում: Առաջարկվում են թարգմանության բազմաթիվ տարբերակներ՝ «թուլատրելի զարգացում», «չհյուժող զարգացում», «զարգացում, որը պահպանում է ամբողջականությունը», «հավասարակշռությունն ապահովող զարգացում», «ինքնաաջակցող զարգացում» և այլն¹:

Կայուն զարգացման խնդրի էությունը տերմինի թարգմանությունից չի փոխվում, քանի որ կարևորը հասկացության բովանդակությունն է: Ն.Ն. Մոխսեղը նշում է, որ Sustainable Development տերմինի թարգմանությունը իրենից ներկայացնում է որոշակի լեզվական անհեթեթություն, քանի որ կայուն զարգացում պարզապես չի կարող լինել. եթե կա զարգացում, ապա չկա կայունություն²:

Կայուն զարգացման հիմնախնդիրը լայնորեն հասկանալու համար անհրաժեշտ է կանգ առնել հենց «կայունություն» հասկացության վրա: Տեսականորեն կայունությունը կարող է որոշվել միայն գործընթացի իմաստով: Գործընթացը կոչվում է կայուն, եթե այն կարող է շարունակվել որոշակի ժամանակահատվածում: Տվյալ գործընթացի ընդհատման հավանականության աճի դեպքում նրա կայունությունը ֆունկցիոնալ կախվածության մեջ իջնում է: Այդպիսով, գործընթացը կարելի է բնութագրել որպես կայուն, եթե այն շարունակվելու է ժամանակի ընթացքում, նվազագույնը՝ սկզբնական մակարդակից ոչ ցածր:

¹ Розенберг, Г. С. Крутые ступени перехода к устойчивому развитию / Г. С. Розенберг, Д. Б. Гелашвили, Г.П. Краснощеков // Вестник РАН. – Т.66. – 1996. – № 5. – С. 436-440.
² Моисеев Н.Н. Судьба цивилизации. ПутьРазума. – М.: Языки рус. Культуры. – 2000. – 224 с.

Հարկ է նկատել, որ մինչ այժմ բացակայում է կայուն զարգացման համընդհանուր ընդունված գիտական սահմանումը, այնուամենայնիվ այդ հասկացության բովանդակության «դասական» ձևակերպումը համարվում է «Մեր ընդհանուր ապագան» զեկուցման մեջ Գ.Խ. Բրունդտլանդի տված սահմանումը. «**Կայուն զարգացումը այնպիսի զարգացում է, որը բավարարում է արդի ժամանակաշրջանի պահանջումները՝ առանց վտանգի տակ դնելու գալիք սերունդների սեփական պահանջումներին բավարարման հնարավորությունները**»¹: Կայուն զարգացման սահմանումը ներառում է երկու արմատական հասկացություններ.

- պահանջումների հասկացությունը, այդ թվում՝ գերակա (բնակչության աղքատ խավերի զոյության համար անհրաժեշտ),
- սահմանափակումների հասկացությունը (պայմանավորված տեխնոլոգիայի և հասարակության կազմակերպման մակարդակով), որով որոշվում է մարդկության արդի և գալիք պահանջումների բավարարման շրջակա միջավայրի հնարավորությունը:

Վերը նշված սահմանման շուրջ եղել են բազմաթիվ տարակարծություններ և քննադատական դիտողություններ: Համաձայն մի տեսակետի՝ այն կրում է զուտ «մարդկային» բնույթ և ոչինչ չի ասում բնության և մարդու փոխհարաբերությունների բնույթի մասին². մի երկրորդ կարծիք գտնում է, որ հիմնախնդիրը ներկայացված է կենցաղային մակարդակով, անորոշ է և երկիմաստ, բացակայում է գիտական բովանդակությունը, բավականաչափ ստույգ և կոնկրետ չէ գիտական խնդիրների դրվածքի և վերլուծության նպատակների առումով³. մի երրորդ մեկնաբանությամբ նրանում կասկածելի է «գալիք սերունդների սեփական պահանջումներին» իմաստը (պարզ չէ՝ ինչպիսին կլինեն պահանջումներին բավարարման ձևերը, եթե նույնիսկ ընդունենք պահանջումներին անփոփոխությունը)⁴ և այլն:

Գրականության մեջ կարելի է հանդիպել ԿԶ սահմանման ավելի քան 100 տարբերակների, որոնք իրարից տարբերվում են որոշակի հիմնախնդրի շեշտմամբ, սակայն Բրունդտլանդի սահմանման առանցքային տարրերը (ռեսուրսների հավասար բաշխում արդի և գալիք սերունդների միջև և դրանց այն չափով օգտագործում, որը կարող է վերարտադրել էկոլոգիական համակարգը), որպես կանոն, մնում են անփոփոխ :

Ստորև ներկայացված են ԿԶ առաջարկվող սահմանումներից մի քանիսը:

- Վ. Ի. Դանիլով-Դանիլյան, Կ.Ս. Լոսև. «Կայուն զարգացումն այնպիսի զարգացում է, որի դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունը մնում է կենսոլորտի տնտեսական հզորության սահմաններում այնպես, որ չեն քայքայում մարդու կյանքի վերարտադրության համար բնական հիմքերը»⁵:
- Օ. Դրեյեր, Վ. Լոսև. «Կայուն զարգացումը տնտեսական աճ է, որն ապահովում է ներկայիս և ապագա սերունդների նյութական և հոգևոր պահանջումներին բավարարումը պատմականորեն ձևավորված էկոհամակարգերի հավասարակշռության պահպանման պայմաններում»⁶:
- Ն.Ն. Մոսկով. «Sustainable Development-ը զարգացում է, որը թույլատրելի է կամ համաձայնեցված բնության վիճակի և նրա օրենքների հետ»⁷:

Կայուն զարգացումը սոցիալ-տնտեսական մեկնաբանությամբ օրինաչափ է բնորոշել որպես արտադրական հնարավորությունների շահագործում այնպիսի մակարդակով, որը ծայրահեղ դեպքում չի բերում նրանց կրճատմանը, իսկ հաջորդող սերունդները կարող են

¹ «Наше общее будущее»: Доклад Международной комиссии по окружающей среде и развитию (МКОСР)»: Пер. с англ. / Под ред. и с послесл. С. А. Евтеева и Р. А. Перелета. – М.: Прогресс, 1989. – С. 50.

² Голубев В. С. Как перейти к устойчивому развитию // Вестник РАН. – 1995. Т.65. – № 3. – С. 239-241.

³ Левашов В. К. О социальной сущности концепции устойчивого развития. // Социологические исследования. – 1997. – № 4. – С. 3-14.

⁴ Писарев, В. Д. Стратегия устойчивого выживания человечества, экологический императив и международное сотрудничество / В. Д. Писарев // США: экономика, политика, идеология. – 1995. – № 10. – С. 63–73.

⁵ Данилов-Данильян В. И. Экологический вызов и устойчивое развитие / В. И. Данилов-Данильян, К. С. Лосев. – М.: Прогресс-Традиция, 2000. – С. 416.

⁶ Дрейер О. К., Лось В. А. Экология и устойчивое развитие: Учеб. Пособие. – М.: Изд-во УРАО. – 1997. – 224 с.

⁷ Моисеев Н.Н. Судьба цивилизации. Путь Разума. – М.: Языки рус. Культуры. – 2000. – 224 с.

դրանք օգտագործել ոչ նվազ արդյունավետությամբ, քան նախորդները: Տ. Տիտենբերգը նշում է, որ կայունության հիմնական չափանիշ պետք է համարել այն պայմանի պահպանումը, ըստ որի՝ ապագա սերունդների միջին վիճակագրական անձը պետք է գտնվի ոչ ավելի վատ պայմաններում, քան ժամանակակից սերնդի ներկայացուցիչը¹:

Տարբեր հայացքների համեմատական վերլուծության հիման վրա հեղինակը փորձել է սահմանել կայուն զարգացումը, որի մեջ արտացոլված են կայուն զարգացման հիմնարար սկզբունքները և երեք բաղադրիչները՝ տնտեսական, էկոլոգիական և սոցիալական:

Կայուն զարգացումը արդյունքների արդարացի բաշխմամբ շարունակական տնտեսական աճ է՝ ռեսուրսների գումարային չնվազող ներուժի և շրջակա միջավայրի որակի բարելավվող պայմաններում:

Առաջարկվող սահմանման մեջ.

- կայուն զարգացման տնտեսական և սոցիալական բաղադրիչները ներկայացված են «արդյունքների արդարացի բաշխմամբ շարունակական տնտեսական աճ» ձևակերպման մեջ, որն արտացոլում է տնտեսական աճի երկարաժամկետ բնույթը և նրա արդյունքների արդարացի բաշխումը՝ բավարարելով արդի և գալիք սերունդների պահանջմունքները,
- «ռեսուրսների գումարային չնվազող ներուժը» արտացոլում է կայունությունն ապահովող տնտեսական պայմանը թույլ կայունության հայեցողության շրջանակներում (որի դեպքում ենթադրվում է բնական կապիտալի փոխարինման հնարավորությունը կապիտալի այլ տեսակներով), որի տակ հասկանում ենք մարդկային, ֆիզիկական և բնական ռեսուրսների գումարային չնվազող ներուժի պահպանում և աճ երկարաժամկետ հատվածում, որը թույլ կտա չփոքրացնել գալիք սերունդների պահանջմունքների բավարարման հնարավորությունները՝ ապահովելով սերունդների իրավահավասարության սկզբունքը,
- «շրջակա միջավայրի որակի բարելավվող պայմանները» ներկայացնում է ԿՁ-ի էկոլոգիական բաղադրիչը, ըստ որի՝ տնտեսական աճը չպետք է ուղեկցվի բնության կազմալուծմամբ, այն պետք է լինի բնադաշնեցված (էկոլոգիազացված):

Հարկ է նկատել, որ սահմանելով կայուն զարգացումը որպես շարունակական տնտեսական աճ՝ կայուն զարգացման հայեցակարգի սկզբունքներին և չափանիշներին համապատասխան, կարելի է կայուն զարգացում և կայուն տնտեսական աճ հասկացություններն օգտագործել համարժեք իմաստներով: Դա հիմնավորված է այն հանգամանքով, որ տվյալ դեպքում խոսքը վերաբերում է որակական տնտեսական աճին, որն ապահովում է իրական զարգացում: Իսկ տնտեսական աճի տեխնածին մոդելի դեպքում տնտեսական զարգացում և տնտեսական աճ հասկացությունները տարբերվում են. տեխնածին տնտեսական աճը ենթադրում է նյութական և էներգետիկ հոսքերի ծավալների և արագության մեծացում, բնակչության քանակական աճի և մարդկային աշխատանքի արդյունքների պաշարների ծավալի ավելացում, մինչդեռ տնտեսական զարգացումը ենթադրում է որակական բարելավումներ ֆիզիկական ծավալների և հոսքերի կառուցվածքում: Եթե տեխնածին տնտեսական աճը՝ հիմնված քանակական ցուցանիշների վրա, ի վերջո հանգեցնում է ինքնառչնչացման (և այդպիսով «անկայուն» է), ապա կայուն տնտեսական աճը երկարաժամկետ հատվածում հենց կայուն զարգացումն է:

¹ Tietenberg, T. Environmental and Natural Resource Economics / 4th ed. Harper Collins College Publishers. –New York, 1996.

Է՞նչ է ՍՍՀՄ-ում, ինչպե՞ս
Ի՞նչ է ՍՍՀՄ-ում
× ինչպե՞ս ՍՍՀՄ-ում զարգացումը

Ի՞նչ է ՍՍՀՄ-ում

Այս փոխադրված անցյալ դարի 70-ական թվականներին, կայուն զարգացման հայեցակարգը դարձել է ամենատարած զարգացող և կիրառություն գտնող տեսություններից մեկը: Չնայած դրան, մինչ այժմ բացակայում է կայուն զարգացման համընդհանուր ընդունված գիտական սահմանումը և շարունակվում են գիտական վեճերը ինչպես Sustainable Development տերմինի թարգմանության, այնպես էլ նրա բովանդակության մեկնաբանության առումներով: Աշխատանքում ներկայացվել են կայուն զարգացման տերմինի և սահմանման շուրջ տարբեր մոտեցումներ: Տարբեր հայացքների վերլուծության արդյունքում առաջարկվել է կայուն զարգացման նոր սահմանում, որն իր հիմքում ունի Հայաստանի տնտեսության թույլ կայունության մոդելը:

«ՍՍՀՄ-ում» ինչպե՞ս զարգացումը, ինչպե՞ս ՍՍՀՄ-ում զարգացումը, ինչպե՞ս ՍՍՀՄ-ում զարգացումը, ինչպե՞ս ՍՍՀՄ-ում զարգացումը & ինչպե՞ս ՍՍՀՄ-ում զարգացումը:

ОБ ОПРЕДЕЛЕНИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ

ՏԱՐԱ ՄԿՐՏՉԻԱՆ, Կ.Յ.Ո.

Государственный инженерный университет Армении

Аннотация

Концепция устойчивого развития, появившаяся в начале 70-х годов прошлого века, стала одной из самых быстро развивающихся и нашедших широкое применение теорий. Несмотря на это, до сих пор не существует универсального научного определения понятия устойчивого развития и продолжают научные споры как относительно перевода термина «Sustainable Development», так и толкования его содержания. В работе представлены различные подходы к термину и определению понятия «устойчивое развитие». В результате анализа различных взглядов предложено новое определение устойчивого развития, в основе которого лежит модель слабой устойчивости экономики Армении.

Ключевые слова: устойчивое развитие, экономический рост, ресурсы, потребности поколений, экономические, экологические и социальные компоненты устойчивого развития.

ON DEFINITIONS OF SUSTAINABLE DEVELOPMENT

SARA MKRTCHYAN, Candidate of Sciences (Economics)

State Engineering University of Armenia

Abstract

From the beginning of the 1970s of the last century, the concept of the sustainable development has become one of the most rapidly developing and applied theory. However, till now there is no precise and common academic definition of sustainable development and currently the arguments on both the translation of the term “Sustainable Development” and the interpretations regarding its meaning are still going on. The article presents different approaches to the term and definition of sustainable development. Based on the results of analysis of different views the author proposes a new definition of sustainable development that reflects the weak sustainability model of the Armenian economy.

Keywords: sustainable development, economic growth, resources, needs of generations, economic, environmental and social components of sustainable development.

**ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ - 2014

ԳԻՐՔ 1

**СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ
В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ - 2014

Книга 1

**THE CONTEMPORARY ISSUES OF SOCIOECONOMIC DEVELOPMENT
IN THE REPUBLIC OF ARMENIA**

SCIENTIFIC JOURNAL OF ARTICLES - 2014

Volume 1

Հրատարակչության խմբագիր՝
Նյութերի հավաքագրող՝
Համակարգչային ձևավորումը՝

Ա. Հովակիմյան
Ա. Մարկոսյան
Մ. Համբարձումյանի

Редактор издательства
Собрание материалов
Компьютерная верстка

А. Овакимян
А. Маркосян
М. Амбардзумян

Publishing House Editor:
Collection of Articles:
Text Design and Electronic Composition:

Armen Hovakimyan
Anahit Makrosyan
Marietta Hambardzumyan

Հրատ. պատվեր № 521

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84 1/8:
Ծավալը՝ 31 պայմ. տպ. մանր: Տպաքանակը՝ 100 օրինակ:

Տպագրվել է ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարանում:

Заказ № 521

Печать офсетная. Формат 60x84 1/8.
Усл. печ. л. 31. Тираж 100 экз.

**Отпечатано в типографии издательства “Гитутюн”
Национальной академии наук Республики Армения**

Printing Order № 521

Printing: Offset. Size: 60x84 1/8
Conventional Offset Press: 31 printing units. Number of copies printed: 100.

**Printed by the print house of “Gitutyun”
Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia**